

ISSN 1829-2984



**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**

**КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ
И ТЕХНОЛОГИИ**

**CRISIS MANAGEMENT
AND TECHNOLOGIES**

N 2(23)

ISSN 1829-2984

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ТЕХНОЛОГИИ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES
SCIENTIFIC JOURNAL

№ 2 (23)

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

YEREVAN

2023

Երաշխավորված է տպագրության Հայաստանի Հանրապետության ներքին գործերի
նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի
կողմից

Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Գիտ. հանդես. - Եր.:
ՀՀ ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ,
2023. - 211 էջ:

ISSN 1829-2984

© ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, 2023

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Գլխավոր խմբագիր՝ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հ.Շ.

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ ՂԱՐԻԲՅԱՆ Հ.Պ.

Պատասխանատու քարտուղար՝ ԿՐԲԵԿՅԱՆ Վ.Գ.

**ԱԹԱԲԵԿՅԱՆ Ռ.Ա.
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Գ.Շ.
ԴԱՎԹՅԱՆ Վ.Ս.
ՂԱՄԲԱՐՅԱՆ Ա.Ս.
ՄԱՆԱՍՅԱՆ Մ.Գ.
ՄԿՐՏՉՅԱՆ Մ.Ա.
ՄՈՒՐԱՎՅՈՎԱ Ե.Վ.
ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Ս.Ն.
ՆԱՐԻՄԱՆՅԱՆ Մ.Զ.
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.
ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Ն.Ն.
ՍԱՀԱԿՅԱՆ Ա.Կ.
ՍԱՀՐԱԴՅԱՆ Ա.Ի.
ՍՈԿՈԼՈՎՍԿԻ Մ.
ՎԱՐԴԱՆՅԱՆ Կ.Ե.
ՔՈՉԱՐՅԱՆ Տ.Տ.
ՕՐԴՅԱՆ Է.Հ.
ԲԱԳԻՅԱՆ Վ.Ա.
ԳՍՊՈՅԱՆ Գ.Մ.
ԽԱՉԱՏՐՅԱՆ Գ.Հ.
ԽՈՆԴՎԱՐՅԱՆ Վ.Ս.**

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.Ռ. ՇԻՎԱԿՈՒ Ք. Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր միջավայրի գիտությունների թեկնածու

ISSN 1829-2984

© **ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**, 2023

**ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЯ КРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ
КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ТЕХНОЛОГИИ
РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

Главный редактор - Матевосян Г.Ш.

Заместитель главного редактора - Карибян А.П.

Ответственный секретарь - Крбемян В.Г.

АЛАВЕРДЯН Г.Ш.	Доктор технических наук, профессор
АТАБЕКЯН Р.А.	Доктор технических наук, профессор
ВАРДАНЯН К.Е.	Доктор психологических наук, профессор
ГАМБАРЯН А.С.	Доктор юридических наук, профессор
ДАВТЯН В.С.	Доктор политических наук, профессор
КОЧАРЯН Т.Т.	Доктор политических наук, профессор
МАНАСЯН М.Г.	Доктор географических наук, профессор
МКРТЧЯН М.А.	Доктор педагогических наук, доцент
МУРАВЬЕВА Е.В.	Доктор педагогических наук, профессор
НАЗАРЕТЯН С.Н.	Доктор геологических наук, профессор
НАРИМАНЯН М.З.	Доктор медицинских наук, профессор
ОРДЯН Э.А.	Доктор экономических наук, профессор
ПЕТРОСЯН Г.А.	Доктор педагогических наук, профессор
ПОКРОВСКАЯ Н.Н.	Доктор социологических наук, профессор
СААКЯН А.К.	Доктор социологических наук, профессор
САГРАДЯН А.И.	Доктор технических наук, профессор
СОКОЛОВСКИ М.	Доктор социологических наук, профессор
АРУТЮНЯН А.Р.	Кандидат политических наук, доцент
БАГИЯН В.А.	Кандидат биологических наук, доцент
ГСПОЯН Г.М.	Кандидат географических наук, доцент
ХАЧАТРЯН Г.Г.	Кандидат экономических наук, доцент
ХОНДКАРЯН В.С.	Кандидат геолого-минералогических наук
ШИВАКУ К.	Кандидат наук глобальной среды

CRISIS MANAGEMENT STATE ACADEMY
CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES
EDITORIAL COUNCIL

Editor-in-chief – Matevosyan H.Sh.

Editor-in-chief deputies– Gharibyan H.P.

Responsible secretary – Krbekyan V.G.

ALAVERDYAN G.SH.	Doctor of tech. sci., professor
ATABEKYAN R.A.	Doctor of tech. sci., professor
DAVTYAN V.S.	Doctor of polit. sci., professor
GHAMBARYAN A.S.	Doctor of jurid. sci., professor
KOCHARYAN T.T.	Doctor of polit. sci., professor
MANASYAN M.G.	Doctor of geog. sci., professor
MKRTCHYAN M.A.	Doctor of ped. sci., docent
MURAVEVA Y.V.	Doctor of ped. sci., professor
NARIMANYAN M.Z.	Doctor of medic. sci., professor
NAZARETYAN S.N.	Doctor of geol. sci., professor
ORDYAN E.A.	Doctor of econ. sci., professor
PETROSYAN H.H.	Doctor of ped. sci., professor
POKROVSKAYA N.N.	Doctor of soc. sci., professor
SAHAKYAN A.K.	Doctor of soc. sci., professor
SAHRADYAN A.I.	Doctor of tech. sci., professor
SOKOLOVSKI M.	Doctor of soc. sci., professor
VARDANYAN K.E.	Doctor psych. sci., professor
BAGIYAN V.A.	PhD, biol. sci., docent
GSPOYAN G.M.	PhD, geog. sci., docent
HARUTYUNYAN A.R.	PhD, polit. sci., docent
KHACHATRYAN G.H.	PhD. econ. sci., docent
KHONDKARYAN V.S.	PhD, geol.-mineral. sci.
SHIWAKU K.	PhD, global environment

ISSN 1829-2984
ISSN 1829-2984

© **КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ТЕХНОЛОГИИ**, 2023
© CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES, 2023

ՀՏԴ 351/354

Լ. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ.Շ. Մաթևոսյան, Կ.Մ. Սարաֆյան, Հ.Պ. Ղարիբյան

**ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՊԵՐԱՏԻՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

*Սպասելը փանջալի է,
Մոռանալը՝ ցավ է պարճառում,
Սակայն վարագույն փառապանքը՝
Զիմանալ ի՞նչ որոշում կայացնել:*

Պաուլո Կոելյո՝ բրազիլացի արձակագիր և բանաստեղծ

Սույն հոդվածում ուսումնասիրված են ինժեներատեխնիկական կառույցների մի քանի հասկացությունների սահմանումներ (մեկնաբանություն, բառակազմություն և այլն), հիմնավորված է ամբարտակ և պարավար եզրույթների ճշգրիտ կիրառության անհրաժեշտությունն օպերատիվ կառավարման գործընթացում:

Առանցքային բառեր. տեխնաժին արտակարգ իրավիճակ, վրանգ, ջրհեղեղ, սելավ, ջրածածկում, ջրաբերուկ, վրանգավոր ազդեցություն, խոցելիություն, բնակչության պաշտպանություն, հիդրոտեխնիկական կառույց, ամբարտակ, պարավար, ջրամբար, ջրահոսք, օպերատիվ կառավարում:

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության գործընթացների արդյունավետ իրականացումը սերտորեն կապված է արտակարգ իրավիճակներ առաջացնող վտանգների և այդ վտանգների ազդեցությունից բնակչության խոցելիության առկայությունից: Սույն հոդվածում դիտարկվում են հիդրոտեխնիկական կառույցների՝ որպես տեխնաժին արտակարգ իրավիճակներ առաջացնող վտանգներ, հետ կապված որոշակի եզրույթներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս հիդրոտեխնիկական կառույցների, մասնավորապես պարավարների, ամբարտակների եզրույթների ճշգրիտ կիրառման կարևորությունը: Փաստորեն, այստեղ արդեն իսկ ընդգծեցինք այն միտքը, որ հիդրոտեխնիկական կառույցների վթարներից, փլուզումներից առաջացած արտակարգ իրավիճակները կրում են տեխնաժին բնույթ:

Դիտարկենք ուսումնասիրվող հասկացությունների մի շարք սահմանումներ:

Ռուսաստանի Դաշնության արտակարգ իրավիճակների ոլորտին վերաբերող հանրագիտարանում [9] մասնավորապես նշված է՝

Հիդրոտեխնիկական կառույցը, դա ջրային ռեսուրսների օգտագործման, կամ ջրերի ավերիչ ազդեցություններից պաշտպանելու համար ճարտարագիտական կամ բնական կառույց է [9]: Այս սահմանումից բխում է, որ հիդրոտեխնիկական կառույցը ճարտարագիտական կամ բնական կառույց է և ունի երկու հիմնական նպատակ.

1. ջրային ռեսուրսների օգտագործում.
2. ջրերի ավերիչ ազդեցություններից պաշտպանություն:

Պետք է նշել, որ հիդրոտեխնիկական կառույցը չի կարող լինել բնական կառույց, քանի որ «Հիդրոտեխնիկական» բառի վերջին մասը՝ «տեխնիկական» հատվածը խոսում է նրա արհեստական լինելու մասին: Ուշադրության է արժանի այն փաստը, որ նույնիսկ մասնագիտական գրականության մեջ կարող են լինել, առաջին հայացքից, փոքրիկ անճշտություններ, սակայն դրանք եզրահանգումներում կարող են բերել լուրջ շեղումների:


Գրեթե նույն կերպ է սահմանված «ՎԻՔԻՊԵԴԻԱ» ազատ հանրագիտարանում [15]՝ «Ջրատեխնիկական կառույցներ»-ը՝ ջրային պաշարների օգտագործման կամ ջրային տարերքի քայքայիչ ազդեցության դեմ պայքարելու նպատակով նախատեսված կառույցներ: Այստեղ չի շեշտվում կառույցի բնական կամ արհեստական լինելու փաստը, սակայն օգտագործված

«նախատեսված» բառն արդեն իսկ հուշում է, որ կարելի է ենթադրել դրանց միայն արհեստական լինելու մասին:

ՀՍՀ հանրագիտարանում բերված է հետևյալ սահմանումը. «Հիդրոտեխնիկական կառույցներ»-ը՝ ջրային պաշարների (գետեր, լճեր, ծովեր, գրունտային ջրեր) օգտագործման կամ ջրային տարերքի քայքայիչ ազդեցության դեմ պայքարի համար նախատեսված կառույցներ [17]: Այս սահմանումը գրեթե կրկնում է [15]-րդ գրականության սահմանումը՝ պարզապես բերված են նաև ջրերի աղբյուրները՝ գետեր, լճեր, ծովեր, գրունտային ջրեր և այլն: Փաստենք, որ գետերը, ծովերը, լճերը, գրունտային ջրերի ավազանները և այլն ջրային բնական օբյեկտներ են: Իսկ դրանց օգտագործման, կամ դրանցից պաշտպանության նպատակով կառուցված կառույցները հիդրոտեխնիկական կառույցներ են, ինչը ևս փաստում է վերջիններիս ոչ բնական լինելու մասին: Բացի այդ, Էդ. Աղայանի բացատրական բառարանում «կառույց» բառը ներկայացված է որպես նոր կառուցվող շենք, շինություն, կառուցվածք, հորինվածք և այլն, ինչը նույնպես խոսում է նրա արհեստական լինելու մասին:

Այսպիսով, հիդրոտեխնիկական կառույցները կարող են լինել միայն արհեստական՝ կառուցված «մարդու» կողմից:

2014 թ. ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից հաստատված շինարարական նորմերում [14] նշված է՝ «**Հիդրոտեխնիկական կառուցվածքներ**»-ը կառուցվածքներ են, որոնք ենթարկվում են ջրային միջավայրի ազդեցությանը, նախատեսված են ջրային ռեսուրսների օգտագործման ու պահպանման, ջրերի վնասակար ազդեցության (այդ թվում՝ աղտոտված հեղուկ թափոններով) կանխարգելման համար, ներառյալ ամբարտակներ, հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) շենքեր, ջրնետ և ջրթող կառուցվածքներ, թունելներ, ջրանցքներ, պոմպակայաններ, նավարկելի անցախցեր, նավամբարձիչներ, նավաշինարաններ, ջրհեղեղներից ու ավերածություններից ջրամբարների ափերի և գետերի հունների հատակի պաշտպանության համար նախատեսված կառուցվածքներ, շիթուղղորդող և սահմանազատող կառուցվածքներ, արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների մոխրա-խարամաթափոնատեղերն ու հեղուկ թափոնների պահպանման տեղերը պաշտպանող կառուցվածքներ (պատնեշներ), առափնյա կառույցներ, նավամատուցներ, նավահանգիստների կայանման կառուցվածքներ, տեխնիկական ջրամատակարարման համակարգերի, թափոնների ու հոսքերի հիդրոտրանսպորտի համակարգի և պարզեցված ջրի մղման կառուցվածքներ, ջրանցքների ողողմանը հակազդող կառույցներ: Այս սահմանման մեջ ներկայացված են հիդրոտեխնիկական կառույցների երկու տասնյակից ավելի տեսակներ: Ինչպես նշված է այստեղ, բոլոր այդ կառույցները ենթարկվում են ջրային միջավայրի ազդեցությանը: Ներկայացված գրականության բոլոր աղբյուրներում [5, 6, 9, 14, 15, 16, 17] հիդրոտեխնիկական կառույցների սահմանումների, տեսակների, նշանակության վերաբերյալ նյութերի ուսումնասիրության արդյունքներն ընդհանրացված և ամփոփված է գծ. 1-ում:



Գձ. 1. Հիդրոտեխնիկական կառույցների տեսակները

Այսպիսով, եթե հիդրոտեխնիկական կառույցները բնական չեն կարող լինել, ապա դրանք միայն տեխնաձին արտակարգ իրավիճակներ առաջացնող վտանգների աղբյուրներ են:

Պետք է նշել, որ թե՛ ամբարտակը, թե՛ պատվարը հիդրոտեխնիկական կառույցներ են: Դա երևում է վերոգրյալ մի շարք աղբյուրներում այդ հասկացությունների սահմանումներից: Նշենք նաև, որ հիդրոտեխնիկական առանձին վերցրած կառույցը, օրինակ՝ ամբարտակը, կարող է ունենալ մի շարք հիդրոտեխնիկական այլ կառույցներ (ջրթող, ջրմուղ, ջրթափ և ջրամբարում ջրի մակարդակը կարգավորող տարբեր տեխնիկական հանգույցներ): Այլ կերպ ասած, հիդրոտեխնիկական կառույցը հիդրոտեխնիկական այլ կառույցներից կազմված համալիր է:

Ինչպես երևում է գձ. 1-ից հիդրոտեխնիկական կառույցների նպատակներից մեկը ջրի վնասակար ազդեցությունից պաշտպանությունն է: Իսկ այդ նպատակը սերտորեն կապված է արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության հետ, քանի որ ջրի վնասակար ազդեցություններից առաջանում են արտակարգ իրավիճակներ (ջրհեղեղներից, սելավային հոսքերից, ջրածածկումներից, թունավոր կամ վարակված ջրերից և այլն): Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության տեսանկյունից շատ կարևոր է այդ հասկացությունների ճշգրիտ կիրառումը: Շատ դեպքերում դրանք, որպես հոմանիշներ կիրառվում են միևնույն հիդրոտեխնիկական կառույցի համար, սակայն միշտ չէ, որ այդպիսի կիրառումն արդարացված է: Ցավոք, այդպիսի ոչ արդարացված կիրառումներ կան նույնիսկ մասնագիտական որոշ գրականության մեջ: Փորձենք հիմնավորել նման կիրառումների արդարացված չլինելը:

Տարբեր հեղինակների կողմից ամբարտակի և պատվարի վերաբերյալ մի շարք ցուցանիշներով տեղեկատվությունն ամփոփված է աղ. 1-ում: Ընդ որում, օգտագործված են նաև դիտարկվող եզրույթների, որպես բառեր, ռուսերեն, հայերեն բառային բացատրական նյութեր, այդ թվում նաև՝ դրանց համար կիրառվող հոմանիշներ.

Աղյուսակ 1.


Տեղեկատվություն ամբարտակի և պատվարի վերաբերյալ

Գրականության համարը	Եզրույթը	Նպատակը	Հոմանիշները	Դիմակայման ճնշումը
[1]	Ամբարտակ	Ջրհոսքի պատնեշում, ջրի մակարդակի բարձրացման	Պատվար	Ջրի ճնշման առկայություն

Գրականության համարը	Եզրույթը	Նպատակը	Հոմանիշները	Դիմակայման ճնշումը
		ապահովում		
	Պատվար	Ոչ մեծ ջրավազանների ստեղծում, ափերի պաշտպանություն	Պատնեշ, արգելապատ, ամբարտակ	Տեղեկություն չկա (տրամաբանորեն՝ ցածր ճնշման առկայություն)
[2]	Ամբարտակ	Ափերի ամրացում և հեղեղումից պաշտպանություն	Պատվար, բարձրակառույց շենք, աշտարակ	Տեղեկություն չկա
	Պատվար	Մուտքի արգելում	Պարիսպ, Տախտակամած պաշտպանություն	Տեղեկություն չկա
[3]	Ամբարտակ	Ջրի հեղեղումից պաշտպանություն	Պատնեշ, թումբ, պատվար, լրիկ, արգելք, բարձրաբերձ շենք, աշտարակ	Տեղեկություն չկա
	Պատվար	Որևէ բանից պաշտպանություն	Պատնեշ, հենարան, արգելք, անջրպետ, շիրմա, պարիսպ	Տեղեկություն չկա
[4]	Плотина-ամբարտակ	Պաշտպանություն	Ամբարտակ	Բարձր ճնշման առկայություն
	Дамба-պատվար		Պատնեշ, ջրաթումբ	
[5]	Плотина	Поднятие уровня воды, образование водохранилищ		Испытывает давление воды
	Дамба	Оградительная, регулировочная		
[7]	Պատվար	Որևէ տեղի մուտքի արգելում, պաշտպանություն, Ջրհոսքի պատնեշում, ջրի մակարդակի բարձրացում	Հենարան, արգելք, անջրպետ, խոչընդոտ, շիրմա, պարիսպ	
[8]	Ամբարտակ	Ջրի հեղեղումից պաշտպանություն, ջրի ամբարում, ջրի ավերիչ ուժի կանխում	Պատնեշ, պատվար, արգելք, բարձրակառույց շենք, աշտարակ	
[9]	Плотина	Реограждение речных русел и создание разницы уровней по руслу реки		
	Дамба	Отгораживание территории предотвращение затопления		
[10]	Ամբարտակ		Աշտարակ, կոթող, թումբ	
	Պատվար		Պատ, պատնեշ, որմարգել, պարիսպ,	

Գրականության համարը	Եզրույթը	Նպատակը	Հոմանիշները	Դիմակայման ճնշումը
			քարապատվար	
[11]	Ամբարտակ	Հեղեղումից պաշտպանություն	Թումբ, պատվար, լրիկ, բարձրակառույց շենք, աշտարակ, արգելք	
	Պատվար	Վստահելի պաշտպանություն	Պատնեշ, հենարան, արգելք, անջրպետ, շիրմա, պարիսպ	
[12]	Ամբարտակ		Պատվար, պատնեշ, որմնարգել, ջրբանդ, աշտարակ	
	Պատվար		Ամբարտակ, պատվարաթումբ, հողաբլուր, թումբ, ջրբանդ, բանդ	
[13]	Плотина-ամբարտակ	Ջրամբարում, ջրանետում, ջրառում, նավարկման ապահովում		Բարձր ճնշման առկայություն
	Дамба-պատվար	Պաշտպանություն, ուղղորդում, ջրի ուժի կարգավորում	Պատնեշ, ջրաթումբ	


Պատվարը աղ. 1-ում բերված թվով 11 գրական աղբյուրներից 6-ում, որպես ամբարտակի հոմանիշ կիրառված է թվով 6 աղբյուրում, իսկ ամբարտակը որպես պատվարի հոմանիշ կիրառված է ընդամենը 2 աղբյուրում: Բացի այդ, ամբարտակի համար թվով 4 աղբյուրում նշված է ճնշման առկայություն, երբ պատվարի դեպքում աղ. 1-ում դիտարկված որևէ աղբյուրում նման նշում չի բերված: Շատ կարևոր է նաև այն, որ վերոգրյալ աղյուսակում ամբարտակի համար որպես հոմանիշ թվով 5 աղբյուրում նշված է՝ բարձրաբերձ շենք, աշտարակ, կոթող բառերը: Ընդ որում, աղ. 1-ից երևում է, որ ամբարտակի այնպիսի հոմանիշներ, ինչպիսիք են բարձրաբերձ շենք, աշտարակ, կոթող բառերը օգտագործված են միայն ամբարտակների համար:



Ինչ վերաբերում է ճնշման առկայության մասին որպես ցուցանիշի, դարձյալ առկա է միայն ամբարտակի դեպքում: Գծ. 2-ում ընդհանրացված է [1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13] աղբյուրներում դիտարկված եզրույթների կիրառման նպատակների և հոմանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Նշենք, որ [6]-րդ աղբյուրում հստակ տրված է, որ ամբարտակները և պատվարները միմյանցից տարբերվում են կառուցման նպատակներով:

Ինչպես երևում է գծ. 2-ից ամբարտակի փոխարեն պատվարի կիրառում առկա է, սակայն պատվարի փոխարեն ամբարտակի կիրառում գրեթե չկա:

Գծ. 3-ում բերված է ամբարտակ և պատվար բառերի ծագման հետ կապված պատկերը [10]:



Գծ. 3. Ամբարտակ և պատվար բառերի ծագման գծապատկերը

Ինչպես երևում է գծ. 3-ից ամբարտակ բառը ծագում է ամբարել բառից, իսկ վերջինս կապված է ամբար գոյականի հետ, հետևաբար այն գոյականների հետ, որոնք արտահայտում են ամբարի իմաստ՝ մթերանոց, շտեմարան, ջրամբար, պոչամբար և այլն: Այստեղից հետևում է, որ ջրամբարների ստեղծման համար գետերի հունը փակելու կառույցը, որից վերև առաջանում է ջրի բարձր ճնշում, պետք է միանշանակ անվանվի ամբարտակ: Դա հիմնավորվում է նաև Հր. Աճառյանի կողմից բերված ամբարտակ բառի մեկ այլ բացատրությամբ [10], ինչը շեշտում է այդ կառույցի մեծածավալ, բարձր, հզոր լինելը, քանի որ կապված է ամբարտակաձողովաբար կանգնած բառակապակցությունների հետ (նկ. 1), և որպես հոմանիշ դիտվում է նաև կոթող բառը:



Հիդրոէլեկտրակայանների համալիրի հիդրոտեխնիկական կառույց (Հայաստան)



Կամարակապ ամբարտակ (Շվեյցարիա)



Հիդրոէներգետիկական նշանակության կամարակապ ամբարտակ (Չինաստան)

Իսկ ինչ վերաբերում է պատվարին, ապա այն, ըստ նույն աղբյուրի ծագում է պատ բառից՝ **պատ-վար**, այլ կերպ ասած **պատ-արգելք** և պատահական չէ, որ պատվար բառի հոմանիշներից մեկը որմարգելն է, որտեղ որմը պատն է: Որմարգելին կարելի է ասել նաև արգելապատ: Ահա թե ինչու ամբարտակ, կամ պատվար բառերի օգտագործման ժամանակ կարող են պատկերացվել այդ կառույցների տեսքը, մոտավոր չափերը, դերը և վերջապես դրանցից յուրաքանչյուրի վթարի դեպքում հնարավոր հետևանքները: Վերոգրյալը մեծ նշանակություն ունի արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության ոլորտում: Ջրային վտանգավոր ազդեցությունները պայմանավորված են համապատասխան ցուցանիշներով: Այսպես՝ ջրհեղեղների, սելավների վտանգավոր ազդեցությունները պայմանավորված են ջրահոսքի շարժման արագությամբ, ալիքի բարձրությամբ, ջրահոսքում ջրաբերովների տեսակների առկայությամբ և այլն: Բնականաբար այդ ցուցանիշներից էլ կախված են օպերատիվ կառավարման գործընթացները, հետևաբար և դրանց վերաբերյալ օպերատիվ որոշումների ընդունման գործընթացները: Ընդ որում, լեռնային երկրներում, որտեղ ծովի մակերևույթից բարձրությունների տարբերությունը նշանակալիորեն մեծ է, որոշումների կայացման օպերատիվության դերը շատ անգամ ավելին է, քան հարթավայրային տարածքներով երկրներում: Որպես օրինակ դիտարկենք մի ջրամբար, որի գտնվելու վայրը ծովի մակերևույթից ունի 1200 մետր բարձրություն, իսկ դրանից դուրս գետի հովիտը երկու տասնյակ կմ-ից հետո հասնում է մի դաշտավայրի, որի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 800 մետր: Այսինքն, բարձրությունների տարբերությունը կկազմի 400 մետր: Եթե դիտարկվող ջրամբարի ամբարտակի բարձրությունը լինի շուրջ 70 մ, իսկ ջրամբարում ջրի ծավալը շուրջ 70 մլն խոր. մետր, ապա դիտարկվող ամբարտակի փլուզման դեպքում ամենայն հավանականությամբ ջրի շարժման արագությունը 120 կմ/ժ-ից ավելին կլինի, իսկ կախված գետի վերին հովիտում ձորակի լայնությունից ալիքի բարձրությունը կտատանվի 10-15մ-ի միջակայքում: Այդ ջրահոսքում կլինեն հարվածող մարմիններ, այսինքն այն կլինի սելավային հոսք, ինչը շատ անգամ ավելի վտանգավոր է, քան մաքուր ջրային հոսքը: Եթե այդ հովիտի երկարությամբ գյուղերը տեղակայված լինեն ուղիղ գծով միմյանցից 5 կմ հեռավորության վրա, ապա պարզ կդառնան նման իրավիճակում բնակչության պաշտպանության վերաբերյալ որոշումների օպերատիվ կայացման կարևորությունը:

Եթե օրինակ, օպերատիվ կառավարման կենտրոնը ստանում է տեղեկություն ամբարտակի փլուզման մասին, ապա մտովի պատկերացվում է հզոր մի կառույցի փլուզում, որը գործում էր ջրի բարձր ճնշման պայմաններում, հետևաբար հետևանքը պատկերվում է ավերիչ և պատկերացվում է բնակչության պաշտպանության շատ ավելի բարդ գործընթացներ, քան այն դեպքում, երբ ստացվող տեղեկությունը վերաբերել պատվարի փլուզմանը, քանի որ պատվարները կարող են լինել ափապաշտպան կառույցներ, ջրի ուղղորդման կառույցներ, ջրի հոսքի կարգավորման և այլ կառույցներ: Պատվարի փլուզման վերաբերյալ տեղեկատվությունը պահանջում է ճշգրտումների ավելի մեծ շարք, ինչը բնականաբար բացասական է անդրադառնում որոշումների ընդունման օպերատիվության վրա: Իսկ ամբարտակների դեպքում գործունենք միանշանակ ջրամբարների հետ, ջրի բարձր ճնշման առկայության հետ և այլն:

Գրականություն

1. **Սարգսյան Հ., Սարգսյան Ռ.**, Երկրաբնական տերմինների եռալեզու հանրագիտական բառարան: Երևանի համալսարանի հրատարակչություն: Եր.: 2007. – 672 էջ:
2. **Մալխասյանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան: Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, Եր., 1944-1945թթ. - 2410 էջ:
3. **Աղայան Էդ. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան: Հայաստան հրատարակչություն, Եր., 1976. – 1462 էջ:
4. **Հացագործյան Զ.Ա., Դարբինյան Ա.Հ., Հովումյան Ն.Գ., Սրվանձոյան Գ.Հ., Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան:** Հայկական Սովետական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Եր., 1988. – 672 էջ:
5. <https://thedifference.ru/chem-otlichaetsya-damba-ot-plotiny/>. Դիտում՝ 23.08.2023.
6. [https://www.google.com/search?q=%D0%B4%D0%B0%D0%BC%D0%B1%D0%B0+%D0%B8+%D0%BF%D0%BB%D0%BE%D1%82%D0%B8%D0%BD%D0%B0&rlz=1C1GCEU_ruAM1053AM1053&sxsrf=APwXEdc-HXNKzHEYNOfi7bhs0ohMozxZUw%3A1687163237675&ei=ZRGQZJvoKJ-Exc8PsauGgAE&oq=%D0%BF%D0%BB%D0%BE%D1%82%D0%B8%D0%BD%D0%B0&gs_lcp=Cgxnd3Mt d2l6LXNlcnAQAARgDMGcllxCwAxAnMgoIABBHENYEELADMgoIABBHENYEE](https://www.google.com/search?q=%D0%B4%D0%B0%D0%BC%D0%B1%D0%B0+%D0%B8+%D0%BF%D0%BB%D0%BE%D1%82%D0%B8%D0%BD%D0%B0&rlz=1C1GCEU_ruAM1053AM1053&sxsrf=APwXEdc-HXNKzHEYNOfi7bhs0ohMozxZUw%3A1687163237675&ei=ZRGQZJvoKJ-Exc8PsauGgAE&oq=%D0%BF%D0%BB%D0%BE%D1%82%D0%B8%D0%BD%D0%B0&gs_lcp=Cgxnd3Mt d2l6LXNlcnAQAARgDMGcllxCwAxAnMgoIABBHENYEELADMgoIABBHENYEE.). Դիտում՝ 17.08.2023.
7. <https://hy.wiktionary.org/wiki/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D6%80>. Դիտում՝ 22.08.2023.
8. [Hy.wiktionary.org/wiki/ամբարտակ](https://hy.wiktionary.org/wiki/ամբարտակ): Դիտում՝ 14.08.2023.
9. **Гражданская защита.** Энциклопедия. Том 1. Под общей редакцией В.А. Пучкова. М., 2015. – 666 с.
10. **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան: Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Եր., 1926.- 2705 էջ:
11. [Bararanonline.com](https://bararanonline.com). 15.08.2023.
12. **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: Եր., 1967. – 685 էջ:
13. **Հացագործյան Զ.Ա., Ղարիբյան Ա.Հ., Ռուս Հայերեն պոլիտեխնիկական բառարան:** ՀՍՍՀ գլխավոր խմբագրատուն, Եր. 1988. – 672 էջ:
14. **Հիդրոտեխնիկական կառույցներ**, հիմնական դրույթներ: ՀՀՇՆ33-01-2014թ.: Հաստատված է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N64-Ն հրամանով:
15. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8B%D6%80%D5%A1%D5%BF%D5%A5%D5%AD%D5%B6%D5%AB%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80_ Դիտում՝ 16.08.2023
16. **Բաղդասարյան Ա.Բ.**, Հիդրոտեխնիկական կառուցվածքներ: Ուսումնական ձեռնարկ բուհերի հիդրոտեխնիկական մասնագիտության ուսանողների համար: Լույս, Եր.: 1986. – 480 էջ:
17. [https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_\(Soviet_Armenian_Encyclopedia\)_6.djvu/401](https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_(Soviet_Armenian_Encyclopedia)_6.djvu/401). Դիտում՝ 14.08.2023.

Г.М. Матевосян, К.М. Сарафян, А.П. Карибян

ИНТЕРПРЕТАЦИЯ ТЕРМИНОВ В ПРОЦЕССЕ ОПЕРАТИВНОГО УПРАВЛЕНИЯ

*Ожидание мучительно,
Забвение причиняет боль,
Однако, наихудшее страдание:
Незнание какое решение принять.*

Пауло Коэльо, бразильский прозаик и поэт

В данной статье рассмотрены несколько определений понятий инженерно-технических сооружений (интерпретация, словообразование и т.д.), обоснована необходимость точности применения терминов «дамба» и «плотина» в процессе оперативного управления.

Ключевые слова: техногенная чрезвычайная ситуация, опасность, наводнение, сель, затон, нанос, опасное влияние, уязвимость, защита населения, гидротехническое сооружение, запруда, плотина, водохранилище, водный поток, оперативное управление.

H.Sh. Matevosyan, K.M. Sarafyan, H.P. Gharibyan

INTERPRETATION OF TERMS IN OPERATIVE MANAGEMENT PROCESS

*Waiting is painful.
Forgetting is painful.
But not knowing which to do
Is the worst kind of suffering.*

Paulo Coelho- Brazilian novelist and poet

The definitions of several concepts of engineering and technical structures (interpretation, wording, etc.) are studied in the article, the necessity of the exact application of the terms dam and barrage in the operational management process is justified.

Key words: man-made emergency, danger, flood, mudslide, inundation, aquifer, hazardous effect, vulnerability, population protection, hydrotechnical structure, dam, barrage, reservoir, waterflow, operational management.

Մաթևոսյան Համլետ Շմավոնի – ռազմագիտության դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Սարաֆյան Կարապետ Մեսրոպի – դասախոս (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Ղարիբյան Հայկանդուխտ Պապինի – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Ներկայացման ամսաթիվը՝ 29.08.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 14.09.2023

J. Matsuo, G.S. Gevorgyan, K. Shiwaku, A.S. Chilingaryan

DEVELOPING FLOOD HAZARD ASSESSMENT SOFTWARE FOR ARMENIA

By 2050, a significant portion of the global population will reside downstream from thousands of large dams constructed during the 20th century. Many of these dams are currently operating at or beyond their intended lifespan, as indicated by an analysis conducted by the United Nations University. An illustrative case is the Sardoba reservoir in Uzbekistan, which ruptured at 05:55 on May 1, 2020. Although no fatalities were reported, but 56 persons were injured and hospitalized, and more than 70 thousand people were evacuated from around 22 villages to neighboring areas. The outflow water reached even to Kazakhstan, where around 30 thousand people were also evacuated. The outflow from the reservoir was stopped and the water was discharged to Arnasai lake on May 8. Given the existence of numerous similarly outdated reservoirs in Armenia, the Government of Armenia, in cooperation with UNDP, is actively considering mitigation measures for such reservoirs.

To carry out flood simulations, the authors have developed specialized training software, a modified version of the flood software developed earlier under the UN-Habitat project. Besides, it is suggested to create a database compiled from water reservoir data. Considering the water reservoir safety, comprehensive management including maintenance is necessary, but this paper mainly focuses on the development of simplified hazard maps.

Keywords: simplified flood simulation, flood hazard map, mudflow, flood.

The break of Sardoba reservoir in Uzbekistan occurred at 05:55 on 1st May 2020. There were no killed, but 56 persons were injured and hospitalized, and more than 70 thousand people were evacuated from around 22 villages to neighboring areas. Some residents of neighboring villages also provided shelter for the evacuees. The outflow from the reservoir was stopped and the water was discharged to Arnasai lake. However, the outflow water reached even to Kazakhstan, where around 30 thousand people were also evacuated.

By 2050, a significant portion of the global population will reside downstream of tens of thousands of large dams constructed during the 20th century, many of them currently operating at or beyond their intended lifespan, as indicated by an analysis conducted by the United Nations University [1]. According to that analysis, most of the 58,700 large dams worldwide are constructed between 1930 and 1970 with a design life of 50 to 100 years, adding that at 50 years a large concrete dam “would most probably begin to express signs of aging”. The report also mentions that dams that are well-designed, constructed, and maintained can “easily” reach 100 years of service, but predicts an increase in “decommissioning” — a phenomenon gaining pace in the USA and Europe — as economic and practical limitations prevent ageing dams from being upgraded or if their original use is now obsolete. Namely, the necessity of maintenance of the dams is increased. As concluding Worldwide, the huge volume of water stored behind large dams is estimated at 7,000 to 8,300 cubic kilometers.

Armenia also faces this problem. However, there have been no major floods caused by heavy rains or dam failures in Armenia recently. Hence, there is not enough reference data (such as hydraulic information, etc.) on floods. In this situation, it is necessary to implement flood simulation using only very limited information. The results of the simulation can be used for proper planning of downstream maintenance and evacuation of people.

To achieve the above goal, the authors simplified the simulation software developed under the UN-Habitat project, making it suitable for use also in Armenia, where flood data is limited. The simplified software can be used to compose simple hazard maps to be considered in evacuation plans.

UN-Habitat project

In 2008, UN-habitat launched a project “Development of Simplified Risk Mapping Tools to Facilitate and Optimize Emergency Response to Major Floods”. The goal of the UN-habitat was developing a simplified flood assessment tool for developing countries, which are prone to flood disasters. The probability of flood disasters is increased due to the effect of climate change. Compared to developed countries, it is difficult to build infrastructure, such as riverbanks, etc., in developing countries due to cost. Therefore, soft countermeasures, such as evacuation are applied. Thus, there was a necessity to develop a software to assess the flood flow. The purpose of the project was the development of a simplified flood risk assessment tool (FRAT) that can be used to produce a Shelter Response Plan and Strategy facilitating and maximizing emergency response and predictability [2].

A capacity development in Armenia is necessary, when considering mudflow/flood simulation due to water reservoir collapse. A modified FRAT software is proposed for this purpose.

Flood simulation by UN-Habitat

The FRAT simulation software developed by UN-Habitat is for educational purpose. It simulates flooding using only topography and hydrograph information. For the topography data a satellite digital elevation model (DEM) is used.

In fact, in detailed flood simulation, the target area needs to be divided into grids and information on each grid, such as roughness coefficient, water level, etc. needs to be entered. Besides, it is also important to get hydrograph data by means of observation. Therefore, the software should be used only for educational purpose.

However, the problem is not the calculation itself, but the initial conditions provided. Thus, the program is useful for developing evacuation plans in a situation where limited information is available.

Taisho mudflow

In Japan, volcanic mud generated as a result of eruption of Mount Tokachi on May 24, 1926, caused a disaster (called Taisho mudflow) that killed 144 people. This volcanic mudflow is one of the famous mudflows in Japan. Since, the source of the mudflow is known and there is no noise in the 50m scale DEM data of Japan with 50 meters spacing, we attempted to simulate the Taisho mudflow using the FRAT software.

Fig. 1 shows the actual situation of Taisho mudflow [3] and Fig. 2 shows the result of the simulation of the same mudflow by the use of FRAT software. The results of the simulation reproduce the reality with high accuracy.





Fig. 1. Actual situation of Taisho mudflow



As we know, topography data is necessary to implement simulation of floods. However, some noises due to high buildings, trees, dams, etc. are present in the satellite DEM data. These noises add elevated points on the river section, which blocks the flow of water during the simulation. In the original version of the software there was only the possibility to change the scale of the grids. However, in the modified version we added double Fourier filter to eliminate the noise.

Water reservoir

The target water reservoir is Geghi reservoir. This water reservoir was built during the Soviet Union era. Armenian experts point to the possibility of collapse due to problems related to the fact that it was built long ago (old age) and was constructed under old design standards (level of seismic evaluation). Comparison of some of the parameter of the discussed reservoirs is given in the table below.

Comparison of several water reservoirs

Water reservoir name	Location	Dam height (m)	Maximum capacity (m ³)
Geghi reservoir	Armenia	70	12,000,000
Sardoba reservoir	Uzbekistan	29	922,000,000
Kurobe reservoir	Japan	186	199,285,000

Speed of the flood

Some limitation is necessary to perform simulations. Otherwise, the accuracy of the results of the simulation will be low. In the case of Geghi reservoir, we limited the flood speed.

There is a statistical relationship between slope gradient and velocity of flow, as shown in Fig. 3. Based on this relationship, we can conclude that the velocity of flow in the case of Geghi reservoir (with 1/40 gradient) will be around 7.6km/h. That means that the flood will reach Kapan city in about 2 hours.




Fig. 3. Relationship of slope gradient and flow speed

Hydrographs show the change of water flow over time. Its vertical axis is the water flow rate and the horizontal axis is the time. The water flow is one of the most important parameters to analyze the floods. Actually, hydrographs are composed by the use of the data of past floods. However, no major floods have been observed in Armenia due to heavy rains. Therefore, it is necessary to carry out hydraulic measurements in Armenia.

In such a situation, where there is not enough data, we need to somehow estimate the hydraulic performance. Thus, we have assumed that 10 times the amount of reserved water will be discharged during the first 30 minutes. The reason why we estimated 10 times the amount of water is that in case of such simulations it is necessary to consider the worst-case scenario. Thus, we assumed that the level of water exceeded the maximum capacity of the reservoir and additional upstream water continues to flow into the reservoir. The corresponding hydrograph is shown in Fig. 4.





Fig. 4. Example of hydrograph ($66000\text{m}^3/\text{sec} \times 1800 \text{ sec} = 11,800,000 \text{ m}^3$)

Results of the simulation

Fig. 5 and Fig. 6 below show the flood situation 1 and 2 hours after the dam collapse, respectively. The color of each cell in the Figure reflects the depth of inundation. Our assessment



shows that the flood will reach Hamletavan village within an hour and Kapan city within two.




Fig. 6. Analysis of the flood for the first two hours

Discussion

Fig. 7. shows the estimated inundation data. Yellow to orange parts show that the deepest point is around 5m-6m. In case of Kapan city, there will be no much accumulation of water and it will flow downstream. The inundation depth will not be significant. However, two hours is very short to properly evacuate residents. Therefore, the decision to evacuate should be made by the resident themselves based on the data from the early warning system.

Regarding the critical water level, according to the questionnaire completed by the evacuees of Isewan typhoon [4], the evacuation becomes difficult if the water level exceeds 0.7m in case of males and 0.5m in case of females. Thus, it is assumed that floods can cause damages to buildings and people if the water level exceeds 0.5m. In this regard, appropriate officials should think ahead of time about how they will assist residents to evacuate effectively.



Fig. 7. Inundation data depicted on google map (Kapan city)

Conclusion

In this paper, we developed software for a simple assessment of hazards caused by break of dams of water reservoirs in Armenia by modifying the FRAT software developed under the UN-Habitat project. Topographical data available in Armenia were used for the assessment.

There are concerns all over the world about the existence of reservoirs with high probability of collapse due to lack of maintenance, including in Armenia there are many dilapidated dams that have not undergone proper maintenance and the possibility of their collapse is pointed out.

There have been no major floods caused by heavy rains or dam failures in Armenia recently. Hence, there is not enough hydraulic information on floods. Therefore, it is too early to talk about developing evacuation plans based on actual hydraulic data. However, even in the absence of hydraulic data, it is necessary to be prepare for dam failure.

To solve the above issue, in this paper we suggest the use of the modified FRAT software for the development of disaster management plans considering possible dam failures.

In the future, when sufficient hydraulic data is available, more accurate assessments can be made. It is strongly recommended that early warning systems be installed downstream of dams with a medium to high probability of failure.

We will be happy if our efforts are helpful in saving human lives and property in the event of disasters.

Acknowledgement

The project was carried out in cooperation with the Ministry of Emergency Situations of Armenia and UNDP. The authors would like to thank the experts of those organizations for fruitful

workshops and discussions, which contributed to the development of more user-friendly software. In addition, the authors express their gratitude to the Embassy of Japan in Armenia and JICA for financial support for the implementation of the climate change project in Armenia.

Reference

1. Duminda Perera, Vladimir Smakhtin, Spencer Williams, Taylor North, Allen Curry, **“Ageing Water Storage Infrastructure: An Emerging Global Risk”**, UNU-INWEH Report Series, Issue 11, 2021.
2. UN-habitat, Development of Simplified Risk Mapping Tools to Facilitate and Optimize Emergency Response to Major Floods (FRAT), 2008.
3. Kamifurano-cho, Tokachidake volcano disaster prevention map - melting snow lahar impact area map (1/25,000), 2016.
4. https://www.river.go.jp/kawabou/glossary/kwb_apend/html/reference.html.

Ջ. Մացուո, Գ.Ս. Գևորգյան, Բ. Շիվակու, Ա.Ս. Չիլինգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Մինչև 2050 թվականը աշխարհի բնակչության զգալի մասը կբնակվի 20-րդ դարում կառուցված հազարավոր մեծ ջրամբարներից ներքև: Ինչպես ցույց է տալիս ՄԱԿ-ի համալսարանի կողմից իրականացված վերլուծությունը, այս ջրամբարներից շատերը ներկայումս գործում են իրենց նախատեսված շահագործման ժամկետից դուրս: Որպես օրինակ կարելի է նշել Ուզբեկստանի Սարդոբա ջրամբարը, որի պարվարի փլուզումը տեղի է ունեցել 2020թ. մայիսի 1-ին ժամը 05:55-ին: Թեև զոհեր չեն գրանցվել, սակայն 56 մարդ վիրավորվել և հոսպիտալացվել է, իսկ շրջակա 22 գյուղի ավելի քան 70 հազար բնակիչ տարհանվել է հարևան շրջաններ: Արտահոսքը հասել է նույնիսկ Ղազախստան, որտեղ նույնպես տարհանվել է մոտ 30 հազար մարդ: Ջրամբարից արտահոսքը դադարեցվել է մայիսի 8-ին, և ջուրը բաց է թողնվել Արնասայի լիճ: Հաշվի առնելով Հայաստանում նմանատիպ բազմաթիվ հնացած ջրամբարների առկայությունը, Հայաստանի կառավարությունը, ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի հետ համագործակցությամբ, ակտիվորեն դիտարկում է նման ջրամբարների վրանգի մեղմացման միջոցառումներ:

Հեղեղումների մոդելավորում իրականացնելու համար հեղինակները մշակել են մասնագիտացված ուսուցողական ծրագիր, որն ավելի վաղ ՄԱԿ-ի Հարթաթ ծրագրի շրջանակներում մշակված ծրագրի փոփոխված տարբերակն է: Բացի այդ, առաջարկվում է ստեղծել ջրամբարների տվյալների բազա: Հաշվի առնելով ջրամբարների անվտանգությունը՝ անհրաժեշտ է համապարփակ կառավարում, ներառյալ սպասարկումը, սակայն սույն աշխատանքը հիմնականում կենտրոնանում է վրանգի պարզեցված քարտեզների մշակման վրա:

Առանցքային բառեր. սելավ, հեղեղում, հեղեղումների պարզեցված մոդելավորում, հեղեղումների վրանգի քարտեզ:

Дж. Мацуо, Г.С. Геворгян, К. Шиваку, А.С. Чилингарян

РАЗРАБОТКА ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ДЛЯ ОЦЕНКИ ОПАСНОСТИ НАВОДНЕНИЙ В АРМЕНИИ

К 2050 году значительная часть населения планеты будет проживать ниже по течению от тысяч крупных плотин, построенных в XX веке. Многие из этих плотин, как показал анализ, проведенный Университетом ООН, в настоящее время работают на пределе или за пределами запланированного срока службы. В качестве примера можно привести Сардобское водохранилище в Узбекистане, прорыв которого произошел в 05:55 1 мая 2020 года. Хотя погибших не было, но 56 человек получили ранения и были госпитализированы, а более 70 тыс. человек были эвакуированы из около 22 поселков в соседние районы. Поток дошел даже до Казахстана, где также было эвакуировано около 30 тыс. человек. 8 мая отток воды из водохранилища был прекращен, и вода была сброшена в озеро Арнасай. Учитывая наличие в Армении множества аналогичных устаревших водохранилищ, правительство Армении в сотрудничестве с Программой Развития ООН активно рассматривает возможность принятия мер по снижению воздействия подобных водохранилищ.

Для проведения моделирования наводнений авторами было разработано специализированное учебное программное обеспечение, представляющее собой модифицированную версию программы для моделирования наводнений, разработанной ранее в рамках проекта ООН-Хабитат. Кроме того, предлагается создать базу данных, составленную на основе данных о водохранилищах. Для обеспечения безопасности водохранилищ необходимо комплексное управление, включая техническое обслуживание, однако в данной работе основное внимание уделяется разработке упрощенных карт опасности.

Ключевые слова: наводнение, сель, упрощенное моделирование наводнения, карта опасности наводнения.

Jun Matsuo - Dr. of Science (OYO International Cooperation)
Gevorgyan Gevorg Samvel – Doctor of Physics (Yerevan State University)
Koichi Shiwaku - PhD, Global Environment, Engineer (OYO International Corporation)
Chilingaryan Armen Suren - PhD Candidate Doctor Programme in Climate Change and
Sustainable Development Policy (UNDP Armenia)

Presentation date: 22.09.2023

Review date: 30.09.2023

Հ.Հ. Պետրոսյան

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում քննարկված է կրթական քաղաքականության առաջնորդությունները, հաշվի առնելով առկա իրողություններն ու ժամանակակից մարտահրավերները, համաշխարհային զարգացման ընդհանուր միտումները՝ հիմնված լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված քաղաքացիների կրթության իրավունքների վրա: Վերլուծված են որակյալ կրթության հասանելիության պետական երաշխիքները, քննարկված է նաև հանրակրթական դպրոցների շրջանավարտների կրթության արդյունքների գնահատման օբյեկտիվությունը բարձրացնելու և միջնակարգ ու բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովման համար անհրաժեշտ հանրակրթական ուսումնական հաստատություններում ավարտական քննությունների և բուհերի ու քոլեջների ընդունելության քննությունների գործող համակարգը բարեփոխելու հրապարակությունը: Հիմնավորված է անկախ բնակության վայրից և ընդամենի եկամտի մակարդակից կրթության մատչելիությունն ընդլայնելու պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների համակարգի ներդրման անհրաժեշտությունը:

Առանցքային բառեր. քաղաքականություն, քաղաքականության առաջնահերթություն, սոցիալական ոլորտ, մանկավարժական համակարգ, մշակույթ, կրթության մատչելիություն:

Կրթական քաղաքականությունը պետական քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, անհատի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման, սոցիալ-տնտեսական և գիտատեխնոլոգիական զարգացման տեմպերի անշեղ աճի, հասարակության հումանացման և մշակույթի աճի գործիք: Կրթական քաղաքականությունը հանրային համաձայնության հիման վրա է սահմանում կրթության զարգացման հիմնարար նպատակներն ու խնդիրները, երաշխավորում դրանց իրականացումը պետության և հասարակության համակարգված գործողությունների միջոցով:

Արդի ժամանակաշրջանում կրթական քաղաքականության առաջնային խնդիրն է հասնել կրթության այնպիսի որակի, որ համապատասխանի անհատի կրթական պահանջմունքներին, հասարակության ու պետության ներկա և ապագա պահանջերին:

Կրթական քաղաքականությունն արտացոլելով ազգային շահերը կրթության ոլորտում և դրանք ներկայացնելով համաշխարհային հանրությանը, միաժամանակ պետք է հաշվի առնի համաշխարհային զարգացման ընդհանուր միտումները:

Համաշխարհային զարգացման հիմնական ժամանակակից միտումներով պայմանավորված կրթության համակարգի էական փոփոխությունները պետք է լինեն՝

- հասարակության զարգացման տեմպերի արագացում և, որպես հետևանք, փոփոխվող միջավայրում մարդկանց կյանքին արագ նախապատրաստելու անհրաժեշտությունը,
- անցում դեպի հետինդուստրիալ, տեղեկատվական հասարակություն, միջմշակութային փոխգործակցության մասշտաբի էական ընդլայնում, որի հետ կապված առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում մարդամոտության և հանդուրժողականության գործոնները,
- գլոբալ հիմնախնդիրների ի հայտ գալն ու աճը, որոնք հնարավոր է լուծել միայն միջազգային հանրության շրջանակներում համագործակցության արդյունքում, ինչը պահանջում է երիտասարդ սերնդի մոտ ժամանակակից մտածողության ձևավորում,
- հասարակության ժողովրդավարացում, քաղաքական և սոցիալական ընտրության հնարավորությունների ընդլայնում, ինչը նման ընտրություն կատարելու համար քաղաքացիների պատրաստակամության մակարդակը դարձնում է անհրաժեշտ,
- տնտեսության դինամիկ զարգացում, մրցակցության բարձրացում, ոչ հմուտ և ցածր որակավորում ունեցող աշխատուժի շրջանակի կրճատում, զբաղվածության ոլորտում կառուց-

վածքային խորը փոփոխություններ, որոնք պայմանավորվում են մասնագիտական զարգացմամբ, աշխատողների վերապատրաստմամբ և նրանց մասնագիտական աճի մշտական պահանջումներով, շարժունակությամբ,

- մարդկային կապիտալի կարևորության աճը, ինչը հանգեցնում է ինչպես երիտասարդների, այնպես էլ չափահաս բնակչության ինտենսիվ կրթության և ավելի արագ զարգացման:

Արտերկրում իրականացվող կրթական բարեփոխումներն ուղղված են հասարակության ներկա և ապագա պահանջումներին, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ներառյալ նաև՝ կրթության համակարգերը:

Կրթության դերը երկրի զարգացման ներկա փուլում որոշվում է Հայաստանի Հանրապետության՝ Ժողովրդավարական հասարակության, իրավական պետության, շուկայական տնտեսության անցնելու խնդիրներով և Հայաստանի Հանրապետության տնտեսության ու հասարակության զարգացման տեմպերը համաշխարհային միտումներից հետ մնալու պատճառների հաղթահարման խնդիրներով: Կրթությունը պետք է լինի Հայաստանի հասարակության և պետության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

Ժամանակակից աշխարհում մեծանում է կրթության նշանակությունը ոչ միայն տնտեսության, այլև որպես ամբողջ հասարակության նոր որակի ձևավորման կարևորագույն գործոն: Կրթության դերը մշտապես աճում է նաև մարդկային կապիտալի աճող ազդեցությանը զուգընթաց [2]:

Հայաստանի Հանրապետությունում կրթության համակարգն առաջադեմ երկրների կրթության համակարգերին համարժեք դարձնելու նպատակով իրականացվել և իրականացվում են մեծ ծավալի բարեփոխումներ: Սակայն, այդ բարեփոխումները կարող են արագ կորցնել իմաստը, եթե չձևակերպվի համազգային լայն աջակցություն վայելող կրթական քաղաքականություն, եթե պետությունը չվերականգնի իր պատասխանատվությունն ու ակտիվ դերն այդ ոլորտում, եթե չկատարի կրթության հիմնարար, բազմակողմանի և համապարփակ արդիականացում՝ դրա համար անհրաժեշտ ռեսուրսների հատկացմամբ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմների ստեղծմամբ:

Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի պետությունը: Այն որոշվում է օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշումներով [3]:

Կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության բնույթի, բովանդակության և առանձնահատկությունների ուսումնասիրությունը, և կրթական քաղաքականությունն ընդհանրապես, անհնար է առանց այդ հասկացությունների բովանդակության նախնական վերլուծության:

Փիլիսոփաների և քաղաքագետների մեծ մասը կրթության ոլորտի քաղաքականությունը չի դիտարկում որպես ինքնուրույն ուղղություն, լավագույն դեպքում այն ներառում է սոցիալական կամ մշակութային քաղաքականության կառուցվածքում: Այդ հանգամանքը կարելի է դիտարկել հասարակության մեջ կրթության և կրթական քաղաքականության դերի ակամա թերարժեք արտացոլում:

Ի հակադրություն դրա, Հայաստանի օրենսդրությունը ոչ միայն առանձնացրեց կրթական քաղաքականությունը որպես պետական քաղաքականության կարևոր ոլորտ, այլ դեռ 1999թ. ամրագրեց «Կրթության մասին» ՀՀ օրենքում, որն ըստ էության, կրթության ոլորտը հռչակեց առաջնահերթություն [1]:

Կրթական քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, կարելի է հասկանալ որպես պետության ներքին քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը, որի նպատակն է ստեղծել տնտեսական, ինստիտուցիոնալ և հոգևոր ու գաղափարական պայմաններ կրթության հիմնական գործառույթների իրականացման համար, ներառյալ անձի ընդունակության և ինքնիրացման կարողության ձևավորումը, հասարակության կադրային ներուժի վերարտա-

դրումը և քաղաքացիների դաստիարակությունը պետության ընդունված արժեհամակարգին համապատասխան:

Այլ գործոնների հետ մեկտեղ պետական քաղաքականությունն ընդհանրապես, և պետական կրթական քաղաքականությունը մասնավորապես սահմանում է ֆիզիկական ու իրավաբանական անձանց գործունեության շրջանակը և մեծապես որոշում նրանց գործունեության գերիշխող ուղղությունը [5]: Ներքին քաղաքականության մյուս ոլորտների նման, կրթական քաղաքականությունը սահմանում է քաղաքական տարածքի երեք հիմնական տեսանկյուն և, համապատասխանաբար, ազատ ընտրության երեք սահմանափակում.

- ֆինանսատնտեսական, որը որոշում է կրթության ֆինանսավորման մակարդակը և կառուցվածքը,
- իրավական, ուսումնական գործընթացում թույլատրվածի և արգելվածի սահմանների հստակեցում.
- մշակութային և գաղափարական՝ ընդգրկելով հասարակական գիտակցության վերաբերմունքն ու կողմնորոշումները, որոնք ազդում են ինչպես կրթության բովանդակության, այնպես էլ կառավարման որոշումների ընտրության վրա:

Տեղական ինքնակառավարմանը վերաբերող սահմանադրական նորմերի արմատական փոփոխությունը հանգեցրեց նրան, որ այս ինքնակառավարումը, և դրա հետ մեկտեղ նախադպրոցական ուսումնական հաստատությունները և հիմնական դպրոցներն անջատվեցին պետական իշխանությունից և հանձնվեցին համայնքներին:

Կրթական քաղաքականությունը պետք է վերաբերի՝

- կրթության մակարդակին՝ նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ,
- բաղադրիչներին՝ կրթության բովանդակություն, տնտեսական (կրթության բնագավառի աշխատողների վարձատրություն), դաստիարակության համակարգ, ուսումնական հաստատության կառավարում,
- կոնկրետ խնդիրներին. կրթության մատչելիության ընդլայնում՝ բարելավելով դրա որակը, մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացում:

Պետական քաղաքականությունը, և առավել ևս կրթական քաղաքականությունն էապես տարբերվում են ոչ միայն պետությունից պետություն, այլ կարող են էապես տարբերվել նույն պետության սահմաններում: Սա հատկապես բնութագրական է կոնֆեդերացիոն պետություններին (օրինակ՝ Շվեյցարիա) կամ դաշնային պետություններին (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Կանադա, Գերմանիա): Որպես կանոն, այդ տիպի պետություններում կրթության ոլորտում քաղաքականության և կրթական քաղաքականության հարցերը մտնում են դաշնային սուբյեկտների իրավասության մեջ: Ընդ որում, դաշնային պետությունների մեծ մասում կրթության ոլորտում պետական քաղաքականության հարցերը վերաբերում են նախադպրոցական, միջնակարգ և բարձրագույն կրթության մակարդակի կրթությանը: Օրինակ՝ ԱՄՆ-ում, Կանադայում և Գերմանիայում այս հարցերն ամբողջությամբ գտնվում են համապատասխանաբար նահանգների, երկրամասերի և հողերի իրավասությունների ներքո: Ռուսաստանի Դաշնությունում նախադպրոցական, ընդհանուր միջնակարգ և նախնական մասնագիտական կրթության բնագավառում տնտեսական և ֆինանսների հարցերը մտնում են ֆեդերացիայի սուբյեկտների իրավասության մեջ: Կրթության բովանդակությունը և կրթության այդ մակարդակների պետական կրթական չափորոշիչները որոշվում են դաշնային կրթական իշխանությունների կողմից: Բարձրագույն կրթության մակարդակում դրա կառավարման, ֆինանսավորման և բովանդակության հարցերը գտնվում են դաշնային իրավասության ներքո: Հայաստանի Հանրապետությունում կրթության բովանդակությունը և կրթության պետական կրթական չափորոշիչներ սահմանված են նախադպրոցական, հանրակրթական և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի համար:

Կրթությունը պետության սոցիալական ոլորտի, որը ներառում է նաև առողջապահությունը, մշակույթը, սպորտը, կենսաթոշակային ապահովումը, մեկ մասն է: Տարբեր երկրներում սոցիալական ոլորտում քաղաքականության իրականացումն ապահովվում է գործադիր իշխանության կառույցների տարբեր համակցություններով՝ կախված երկրի առջև ծառայած խնդիրներից և կադրային հնարավորություններից [4]:

Հայկական հասարակության մեջ պահպանվել է այն ըմբռնումը, որ կրթությունը հասարակության և արտադրության արդիականացման, ազգային անվտանգության ապահովման և շուկայական պայմաններում անձնական կարիերա իրականացնելու կարևորագույն գործոնն է: Մի շարք երկրներում փոփոխություններ են տեղի ունենում, երբ փոխվում են իշխող քաղաքական կուսակցությունները, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, որտեղ իշխում են երեք հիմնական քաղաքական ուժեր՝ լեյբորիստները, պահպանողականները և լիբերալները: Այս պարագայում, իհարկե, փոխվում է քաղաքականությունը կրթության ոլորտում:

Ներկայումս բարդ սոցիալական համատեքստում ծագում է մեկ այլ խնդիր՝ մանկավարժական համակարգի սոցիալական բնութագրերն ու տեղը: Այս նպատակով կարևոր է երեք հարց՝

1. Ի՞նչ սոցիալական խմբերի և սոցիալական պատվերի է ծառայում մանկավարժական համակարգը:
2. Ո՞ր մասնագիտական խմբերին և նրանց շահերին է ծառայում այդ համակարգը կամ մասնագիտական ո՞ր խմբերի ամրապնդմանն է ուղղված դրա պրակտիկան:
3. Ո՞րն է այդ գաղափարներն իրականացնող ուսուցիչների տեղը ժամանակակից հասարակության և տնտեսության մեջ:

Ըստ երևույթին, շատ շուտով, նույն արագությամբ, ինչպես ինտերնետը դարձավ հասանելի, կգարգանա մանկավարժական գործընթացի տեխնոլոգիականացման գաղափարը: Տեխնոլոգիականացման գործընթացում մասնագետները կբաժանվեն երկու անհավասար դասի: Ոմանք տեխնոլոգիաների ստեղծողներն են, մյուսները՝ դրանց տարրերը, թեկուզ շատ հմուտ:

Բայց արդյո՞ք պետք է համակերպվել ուսուցչության առկա կարգավիճակի հետ՝ որպես զանգվածային մասնագիտություն: Միգուցե պետք է լինի սոցիալապես և տնտեսապես մտածող կրթական քաղաքական գործիչների ընտրություն: Բոլոր դեպքերում, մշակույթային, տեխնոլոգիական և տնտեսական համատեքստի շուրջ քննարկումները պետք է լինեն կրթական քաղաքականության քննարկումների կարևոր բաղադրիչ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է քաղաքացիների կրթության իրավունքները: Պետությունն ամբողջությամբ ապահովում է դրանց իրականացումը, ստեղծելով իրավական և տնտեսական պայմաններ՝

- անվճար միջնակարգ կրթություն՝ պետական չափորոշի սահմաններում և այլ մակարդակների անվճար կրթություն՝ օրենքով որոշված սահմաններում,
- Հայաստանի բոլոր քաղաքացիներին տարբեր մակարդակների կրթության հավասար հասանելիություն,
- ուսումնական հաստատության և կրթական ծրագրերի ընտրություն՝ անկախ բնակության վայրից և ընտանիքի եկամտի մակարդակից,
- սահմանված պետական չափորոշիչներին համապատասխան կրթություն, որոնք երաշխավորում են հասարակության պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի որակ:

Որակյալ կրթության հասանելիությունը նշանակում է նաև պեպական երաշխիքներ՝

- ուսուցում ժամանակակից ուսումնանյութական բազայի վրա՝ օգտագործելով ժամանակակից սարքավորումներ և ուսումնական գրականություն,
- ուսուցում այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են ուսումնական գործընթացում սովորողի իրավունքների և անձի պաշտպանությունը, նրա հոգեբանական և ֆիզիկական անվտանգությունը,

- սոցիալ-մանկավարժական և հոգեբանամանկավարժական օժանդակություն ընտանիքին, երեխայի զարգացման ընթացքի վաղ ախտորոշում (ֆիզիկական և հոգեբանական),
- սովորողների կողմից պետական գրադարանային ֆոնդերի անվճար օգտագործում, այցելություններ պետական և քաղաքային մշակութային հաստատությունների թանգարաններ և ակումբներ:

Բայց և սովորողները պետք է իրազեկված լինեն աշխատաշուկայի վիճակի ու իրական պահանջարկի, կրթության համար պետության և հասարակության կողմից կատարվող ծախսերի, իրականացվող կրթության որակի և դրա պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության մասին:

Հանրակրթական դպրոցների շրջանավարտների կրթության արդյունքների գնահատման օբյեկտիվությունը բարձրացնելու և միջնակարգ ու բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հավասար հնարավորություններ ապահովելու համար զգացվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում ավարտական քննությունների և բուհերի ու քոլեջների ընդունելության քննությունների գործող համակարգը բարեփոխելու անհրաժեշտություն: Անհրաժեշտ է հաշվի առնել միասնական պետական քննությունների ընթացքում արձանագրված թերությունները: Միաժամանակ, պետք է պահպանվեն բուհերի և քոլեջների դիմորդների համար պահանջների բարձր մակարդակը: Բուհերի որոշակի կատեգորիաների ամենատաղանդավոր դիմորդներին ընտրելու համար կարող են լրացուցիչ պահանջներ մտցնել, մասնավորապես՝ հաշվի առնելով միջազգային օլիմպիադաների արդյունքները:

Միևնույն ժամանակ, հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում մշակվել և ներդրվել է մասնագիտացված ուսուցման (մասնագիտական կրթություն) համակարգ՝ կենտրոնացած կրթության անհատականացման և սովորողների սոցիալականացման վրա, այդ թվում՝ հաշվի առնելով աշխատանքի իրական պահանջարկը: Սակայն այս ոլորտում ևս զգացվում են բարեփոխման անհրաժեշտություն:

Անկախ բնակության վայրից և ընտանիքի եկամտի մակարդակից կրթության մատչելիությունն ընդլայնելու համար անհրաժեշտ է կրթության ոլորտում ներդնել պետական նվազագույն սոցիալական չափարոշիչների համակարգ, ինչպես նաև մշակել և ներդնել սոցիալ-տնտեսական մի շարք համակարգեր՝ ապահովելու կրթության մատչելիությունն իր բոլոր մակարդակներում և նպատակային սոցիալական աջակցություն ցածր եկամուտ ունեցող ընտանիքների, ծնողազուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին: Այդ թվում՝

- համայնքային հանրակրթական դպրոցների լիազորությունների մի մասը համայնքային մակարդակին պատվիրակելու հնարավորություն,
- ցածր եկամուտ ունեցող սովորողների համար պետական ֆինանսավորման չափանիշերը գերազանցող նպատակային վճարումների ներդրում, որպեսզի ընդլայնվի այլ ուսումնական հաստատություններում նրանց լրացուցիչ կրթական ծառայությունների և ուսումնառության հասանելիությունը, որոնք իրականացնում են պետական կրթական չափորոշիչները գերազանցող բարձր մակարդակի ծրագրեր,
- լրացուցիչ կրթություն ստանալու հնարավորություն տալու համար համայնքային մակարդակում հատուկ սոցիալական պաշտպանության կարիք ունեցող երեխաներին (ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաներին) աջակցության մեխանիզմների ստեղծում,
- պետական կրթական վարկերի համակարգի ստեղծում, ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաների միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնում, վարկերի մարման տարբեր ձևերի նախատեսում,
- կրթության ոլորտ արտաբյուջետային միջոցների ներգրավման և դրանց օգտագործման պայմանների հստակ նորմատիվ-իրավական կարգավորում՝ ապահովելով վճարովի կրթական ծառայությունների սպառողների իրավունքների պաշտպանությունը,
- ակադեմիական և սոցիալական կրթաթոշակների ընդհանուր արժեքի մոտարկումը կենսաապահովման նվազագույն մակարդակին,

- հիմնադրի բյուջեից ուսանողական հանրակացարանների պահպանման ապահովումը, դրանց ոչ նպատակային օգտագործման արգելումը,
- ուսանողների համար ոչ լրիվ բեռնվածությամբ աշխատատեղերի ֆոնդի ստեղծման խրախուսում:

Հանրակրթության մատչելիության ընդլայնման կազմակերպական-մանկավարժական միջոցառումներից առաջին հերթին անհրաժեշտ է կատարելագործել դպրոցահասակ երեխաների ժամանակակից տեխնիկական հիմունքներով հաշվառման համակարգը և ստեղծել պարտադիր հիմնական հանրակրթության ապահովման պետական-հասարակական համակարգ և իրականացնել դրա իրագործման մոնիտորինգ:

Երեխաների դպրոց չհաճախելու իրական պատճառները պարզելու նպատակով իրավիճակի մանրամասն վերլուծություն և գնահատում, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների ատեստավորման ընթացքում՝ աշակերտի դուրս մնալու բոլոր դեպքերը [5]:

Կրթության մատչելիության ընդլայնումն ուղղակիորեն պայմանավորված է դրա պահանջարկի և գրավչության աճով: Դպրոցական կրթության բովանդակության նորացումը, կողմնորոշումը դեպի կյանք հիմնական գործոններն են, որոնք ապահովում են հասանելիությունը:

Գյուղի դպրոցականների լիարժեք հանրակրթություն ստանալու հավասար հնարավորություններ ապահովելու համար անհրաժեշտ է միջգերատեսչական հատուկ միջոցառումներ իրականացնել գյուղական դպրոցի զարգացման, դրա արդիականացման ուղղությամբ, որոնք պետք է ուղղված լինեն սոցիալական զարգացման գործում դպրոցի դերի բարձրացմանը:

Գյուղի դպրոցների վերակազմավորումը չպետք է որոշվի բյուջետային միջոցների խնայողության միջոցով, քանի որ շատ գյուղական վայրերում հենց դպրոցն է գործում որպես սոցիալ-մշակութային կյանքի հիմնական կենտրոն:

Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին (հաշմանդամ) պետությունը պետք է տրամադրի բժշկական և հոգեբանական աջակցություն և բնակության վայրի հանրակրթական դպրոցում ստեղծի հատուկ պայմաններ և միայն բացառիկ դեպքերում՝ հատուկ գիշերօթիկ դպրոցներ:

Հակասոցիալական խնդիրներ ունեցող երեխաները պետք է ունենան պարտադիր անհատական հոգեբանական և մանկավարժական աջակցություն: Սա հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով, որ այդ պայմաններում դեռահասների և երիտասարդների շրջանում նման երեխաների թիվը հասել է գրեթե սոցիալական աղետի մասշտաբի:

Անօթևանության և հակասոցիալական վարք ունեցող երեխաների գոյության դեմ պայքարի համար անհրաժեշտ է ձեռնարկել արտակարգ իրավիճակների համապարփակ միջոցառումներ, այդ միջոցառումների իրականացմանը ներգրավելով բոլոր շահագրգիռ գերատեսչություններին: Այդ թվում՝

- Ա.Ս. Մակարենկոյի, Ս.Տ. Շացկու փորձի հիման վրա ուսումնական հաստատությունների ցանցի ստեղծում,
- մասնագիտացված խորհրդատվական կենտրոնների ստեղծում դեռահասների համար, որտեղ նրանք կլուծեն իրենց հոգեբանական, մանկավարժական և բժշկասոցիալական խնդիրները,
- երեխաների որդեգրման կարգի և ընթացակարգերի ռացիոնալացում, խնամատար ընտանիքների և ընտանեկան տիպի մանկատների համակարգի զարգացում,
- հատուկ կադրերի՝ սոցիալական մանկավարժների և հոգեբանների պատրաստում սոցիալական որբության կանխարգելման և ռիսկային խմբի երեխաների հետ աշխատելու համար,
- ուսուցչական կազմի պատրաստում և վերապատրաստում, ինչպես նաև ծնողների համար թմրամոլության և ալկոհոլիզմի կանխարգելման վերաբերյալ ընդհանուր կրթություն,
- պետական մակարդակներում երեխայի իրավունքների հատուկ հանձնակատարների ներդրում:

Այս միջոցները կարող են լինել արդյունավետ դեռահասների և երիտասարդների հակասոցիալական վարքի աճի պատճառ դարձած մի շարք պատճառների վերացման կամ առնվազն պարփակման համար: Այդ պատճառներից մեկը հանգստի ժամանակի և արձակուրդների ոչ ռացիոնալ կազմակերպումն է: Տոնական օրերին երեխաների անտեսումը դարձել է սոցիալական խնդիր: Հրատապ անհրաժեշտություն է ամառային արձակուրդների ընթացքում մեծացնել մանկավարժական ազդեցությունը երեխաների և դեռահասների վրա և ավելացնել նրանց զբաղվածությունը հանրօգուտ աշխատանքում:

Այսպիսով, վերոնշյալ առաջնահերթությունների ռազմավարական մշակումը հնարավոր կդարձնի կրթական քաղաքականության արդիականության ապահովումը:

Գրականություն

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքը:
2. **Պետրոսյան Հ.Հ.**, Ուսուցման ռազմավարություններ: Ուսումնական ձեռնարկ մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների համար: Եր., 2021. - 164 էջ:
3. **Амбарова П.А.,** Зборовский Г.Е., Политика российской федерации в сфере образования, Учебное пособие, Екатеринбург, 2021. - 216 с. С:/Users/ Rivenn/Downloads/978-5-7996-3382-0_2021.pdf. Դիտում՝ 29.08.2023.
4. **Булаев Н.И.**, Государственное управление развитием системы отечественного образования: Монография. СПб.: Изд-во РГПУ им. А.И. Герцена, 2006. - 261 с.
5. **Курдюмов С.П.**, Выбор стратегии и системный анализ, <http://spkurdyumov.narod.ru>. Դիտում՝ 28.08.2023.

Г.А. Петросян

ПРИОРИТЕТЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПОЛИТИКИ

В статье рассматриваются направления образовательной политики с учетом современных реалий и современных вызовов, общих тенденций мирового развития, основанных на гарантированных Конституцией Республики Армения правах граждан на образование.

Проанализированы государственные гарантии доступа к качественному образованию, обсуждена также срочность необходимости реформирования действующей системы повышения объективности оценки образовательных результатов выпускников общеобразовательных школ и необходимость реформирования действующей системы выпускных экзаменов в общеобразовательных учреждениях и вступительных экзаменов в вузы и колледжи, необходимость обеспечения равных возможностей получения среднего и высшего профессионального образования.

Обоснована необходимость внедрения системы государственных стандартов для расширения доступа к образованию для учащихся независимо от места проживания и уровня доходов семьи.

Ключевые слова: политика, приоритет политики, социальная сфера, педагогическая система, культура, доступ к образованию.

H.H. Petrosyan

PRIORITIES OF EDUCATIONAL POLICY

The article examines the directions of educational policy taking into account modern realities and modern challenges, as well as general trends in world development, based on the rights to education of citizens, guaranteed by the Constitution of the Republic of Armenia. State guarantees of access to quality education were analyzed, the urgency of the need to reform the current system, increasing the objectivity of assessing the educational results of graduates of general education schools and the need to reform the current system of final exams in general educational institutions and entrance exams to universities and colleges, the need to ensure equal opportunities for obtaining secondary and higher professional education.

The need to introduce a system of state standards to expand access to education for students, regardless of place of residence and family income level, is substantiated.

Key words: politics, policy priority, social sphere, pedagogical system, culture, access to education.

Պետրոսյան Հայկ Հմայակի - մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ, ԲՊՀ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ)

Ներկայացման ամսաթիվը՝ 22.09.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 06.10.2023

Մ.Գ. Մանասյան, Գ.Մ. Գսպոյան

ԱՅՈՒՆԻՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հոդվածում փաստական նյութերի հիման վրա ներկայացվում են ՀՀ-ի համար ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող մարզի՝ Սյունիքի ժողովրդագրական իրավիճակի և տարաբնակեցման առանձնահատկություններն ու փոփոխությունները վերջին տասնամյակներին: Բացահայտվել են ժողովրդագրության և տարաբնակեցման ոլորտներում առկա հիմնախնդիրները և դրանք գնահատվել են ազգային անվտանգության տեսանկյունից: Հոդվածում փորձվել են Սյունիքի մարզում պետության կողմից իրականացվելիք ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղությունները: Սյունիքի տարաբնակեցման և ժողովրդագրական իրավիճակի բարելավման կարևորագույն ուղին համարվում է բռնագաղթված արցախցիների կենտրոնացումն ու բնակեցումը մարզի որոշ քաղաքներում և գյուղական բնակավայրերի խմբերում: Դա հնարավորություն կտա նաև պահպանելու արցախցիների համայնքը և մշակութային - ազգագրական ինքնատիպությունը:

Առանցքային բառեր. ժողովրդագրական իրավիճակ, տարաբնակեցում, համայնք, բնական վերարտադրություն, միգրացիա, ժողովրդագրական քաղաքականություն, սահմանամերձ բնակավայր:

Սյունիքի մարզը բնութագրվում է յուրահատուկ աշխարհագրական դիրքով, տարածքի և սահմանների բնույթով և գծագրությամբ: Զբաղեցնելով ՀՀ տարածքի ծայր հարավարևելյան ելուստանման հատվածը, որը ՀՀ մնացած տարածքին միանում է ներկայիս Վայոց Ձորի մարզի հետ ունեցած 48 կմ լայնությամբ շփման տարածքի միջոցով, խորհրդային տարիներին ուներ փակուղային դիրք. մարզը երեք կողմերից սեղմված էր Ադրբեջանի, նրա կազմի մեջ մտնող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության և Իրանի միջև:

Հետխորհրդային տարիներին էապես փոխվել է տարածաշրջանի աշխարհագրական դիրքը: Մինչև 2020թ աշնանային հայ-ադրբեջանական պատերազմը, մարզն ամբողջ արևելյան մասով սահմանակցում էր Արցախի Հանրապետության Շահումյանի և Քաշաթաղի ազատագրված շրջաններին: Պատերազմից հետո մարզն ամբողջ արևելյան երկայնքով սահմանակցում է Ադրբեջանի հետ: Ներկայումս մարզի սահմանների հյուսիսային մասն անցնում է Սյունիքի բարձրավանդակի չբնակեցված բարձրադիր ջրբաժանով, իսկ կենտրոնական և հարավային հատվածները՝ բավականին խիտ բնակեցված ցածրադիր գոտիներով, որոնց սահմանամերձ տարածքներում տեղադրված են հայկական տասնյակ բնակավայրեր: Սյունիքի մարզի 42 կմ երկարությամբ հարավային սահմանն անցնում է Արաքս գետով (Մեղրու կիրճով) և հանդիսանում է ՀՀ պետական սահման Իրանի հետ: Մարզի արևմտյան մասում, Նախիջևանի հետ սահմանները հիմնականում անցնում են նույն բնակեցված Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրադիր գոտիով: Մարզի սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 472 կմ, որից 382 կմ – Ադրբեջանի հետ արևելքում և արևմուտքում, այդ թվում 110 կմ Նախիջևանի հետ, 42 կմ Իրանի հետ հարավում և 48 կմ ՀՀ Վայոց Ձորի մարզի հետ հյուսիսում:


Խորհրդային տարիներին Սյունիքի տրանսպորտային-աշխարհագրական դիրքը

խիստ անբարենպաստ էր. գլխավոր ճանապարհները մտնում էին փակուղի, բացառությամբ մեկի, որով Նախիջևանը կապվում էր Ադրբեջանին: Անկախության տարիներին, Արաքս գետի վրա նոր կամուրջի կառուցումով և Իրանի հետ առևտրատնտեսական կապերի զարգացումով **Սյունիքը խիստ կարևոր տարանցիկ նշանակություն է ձեռք բերել:** Նրա տարածքով Պարսից ծոցը և Իրանը կապվում են նաև Վրաստանին ու Սև ծովին, իսկ արևմուտք-արևելք ուղղությամբ Թուրքիան ու Նախիջևանը կարող են կապվել Ադրբեջանին ու Կասպից ծովին: Սյունիքի մարզի տարածքով էր անցնում ՀՀ-ն ԼՂՀ-ի հետ կապող հիմնական ավտոմայրուղին, որով և իրականացվում էր առևտրատնտեսական կապերը:

Այսպիսով, Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքը ձեռք է բերել աշխարհաքաղաքա-

կան և ռազմավարական կարևոր նշանակություն: Մի կողմից այն անմիջականորեն հարևան է Իրանին և Արցախի հետ կապող միջանցքին, իսկ մյուս կողմից՝ նեղ գոտիով տարանջատում և խախտում է Անատոլիայից մինչև Կենտրոնական Ասիա ձգվող թուրքական տարածքի անընդ- հատությունն ու միասնականությունը: ՀՀ-ից դեպի Իրան նախատեսվող երկաթուղու կառուցու- մից հետո նրա ռազմավարական-աշխարհագրական դիրքն է՝ լավելի բարենպաստ կդառնա: հայ-ադրբեջանական 2020թ պատերազմից հետո մի կողմից մեծացավ մարզի աշխարհաքա- ղաքական նշանակությունը տարածաշրջանի երկրների համար, իսկ մյուս կողմից առաջացան մարզի հայ-ադրբեջանական սահմանամերձ բնակավայրերի բնակչության կենսագործունեու- թյան հետ կապված անվտանգության բազում նոր խնդիրներ:

Սյունիքի մարզը գրավելով ռազմավարական-աշխարհագրական և տնտեսաաշխարհա- գրական կարևոր դիրքեր, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով ՀՀ ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է Երևանից ունեցած մեծ հեռավորությամբ, տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ, համեմատաբար հարթ տարածքների սակավությամբ:



Գծ. 1. Սյունիքի մարզի մի քանի հիմնական ցուցանիշների մասնաբաժինը ՀՀ-ում (2018թ.,%) [1]

Սյունիքի մարզը տնտեսական առումով ՀՀ ամենազարգացած մարզն է: Վերջին տարի- ներին, մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով զիջում է միայն Երևանին, զգալիորեն գերազանցելով ՀՀ մնացած մարզերին: 2021թ. տվյալներով Սյունիքի մարզին բաժին է ընկել ՀՀ արդյունաբերության արտադրանքի ծավալի 22,2%, գյուղատնտեսության արտադրանքի ծավալի 6,4%, շինարարության ծավալի 9,9%, ծառայությունների ծավալի 1,4% և մանրածախ առևտրի ծավալի 2,1% [1]:

Մարզի տարածքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Բնակչության ազգային կազմը և թիվը բազմիցս կտրուկ փոփոխություններ են կրել օտար գավթիչների արշավանքնե- րի ու ասպատակությունների հետևանքով, սակայն, չնայած դրան, ներկայիս մարզի տարածքը միշտ մնացել է հայաբնակ: Նրա բնակչության թվի արագ աճի և տնտեսության զարգացման համար բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորմամբ: Բնակչության կայուն աճ նկատվեց միայն 19-րդ դարի 30-ական թվականներից սկսած, երբ Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան ներգաղ- թած տասնյակ հազարավոր հայերի մի սովոր մասը բնակություն հաստատեց ներկայիս մարզի տարածքում, հատկապես Սիսիանում և նրա շրջակա գյուղերում (Անգեղակոթ, Շաղաթ և այլն):

Ներկայիս Սյունիքի մարզի տարածքում բնակչության թիվը 1831-1897թթ. ընթացքում աճել է մոտ վեց անգամ՝ 14.0 հազ.-ից հասնելով 87.3 հազ.-ի: Հիմնականում այդ ժամանակա- հատվածում է սկսել ձևավորվել բնակավայրերի ժամանակակից ցանցը, այդ թվում՝ տարածա-

շրջանի առևտրական և մշակութային կենտրոն Գորիսը և պղնձաարդյունաբերության կենտրոն Կապանը:

Այդուհանդերձ, մարզի ծայրամասային, փակուղային ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքը և լեռնային բարդ ռելիեֆը խոչընդոտել են տնտեսության զարգացմանը, բնակչության թվի աճին և խիտ բնակեցմանը:

Խորհրդային տարիներին ներկայիս մարզի սահմաններում գտնվող բնակավայրերից տեղի էր ունենում բնակչության արտահոսք դեպի Երևան և Սյունիքի նոր ստեղծված քաղաքային կենտրոններ, ինչի հետևանքով ուժեղացավ գյուղական բնակչության թվի նվազման միտումը, իսկ լեռնային տասնյակ գյուղեր ուղղակի դատարկվեցին ամբողջությամբ: Սակայն խորհրդային տարիներին բնակչության բնական աճն այնքան բարձր էր և կայուն, որ դրա հաշվին ավելանում էր ներկայիս մարզի տարածքում ապրող թե՛ քաղաքային, և թե՛ ամբողջ բնակչության թիվը:

Սյունիքի մեջ մտնող նախկին վարչական շրջանների բնակչությունը տասնյակ տարիներ շարունակ հանրապետությունում առանձնանում էր բնակչության բարձր ծնելիությամբ և բնական աճով: Սյունիքի մարզի ներկայիս տարածքում 1990թ. բնակվում էր 146.7 հազ. մարդ, որից քաղաքներում՝ 100.7 հազ., գյուղերում՝ 46.0 հազ.:

Հարկ է նշել, որ անկախության տարիներին Սյունիքի ինչպես նաև մյուս մարզերի լեռնային տարածքների բնակչության թիվը նվազել է առավել բարձր տեմպերով, չնայած նրան, որ անկախության առաջին տասնամյակում Սյունիքի բնակչության ընդհանուր թիվը, Ադրբեջանից բռնագաղթվածների հաշվին ավելացել է: Այսպես, Սյունիքի մշտական բնակչության թիվը 1990թ. եղել է 146.7 հազ., 1995թ.՝ 150.8 հազ., 2001թ. մարդահամարի տվյալներով՝ 152.7 հազ. մարդ: Սակայն, հետագայում բնակչության թիվն արագորեն սկսել է նվազել, որը բնական ռեսուրսներով ապահովված, նոսր բնակչություն և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մարզի համար միանգամայն արդարացված չէ: Այսպես, մշտական բնակչության թիվը 2005թ. եղել է 149.7 հազ., 2011թ. (մարդահամար)՝ 141.7 հազ., 2019թ.՝ 138.3 հազ., 2022թ. (մարդահամար)՝ 114,5 հազ. մարդ: Ինչպես ցույց են տալիս տվյալները, մշտական բնակչության թվի նվազումը (շուրջ 27,2 հազ. մարդով, կամ 1.24 անգամ) հատկապես զգալի է եղել 2011թ. և 2022թ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում, որն ամենաբարձր ցուցանիշն է բոլոր մարզերի մեջ և զգալիորեն (1,03 անգամ) գերազանցելում է ՀՀ միջին ցուցանիշին: Էլ ավելի տազնապալի են առկա բնակչության թվի տվյալները, որոնք ավելի ճշգրիտ են արտահայտում մարզի ժողովրդագրական իրական պատկերը: Բավական է նշել, որ մարզի առկա բնակչության թիվը մարդահամարների տարիներին ունեցել է հետևյալ պատկերը. 2001թ.՝ 134.1 հազ., 2011թ.՝ 119.9 հազ., 2022թ.՝ 106.9 հազ. մարդ, այսինքն 2001-2022թթ. մարզի առկա բնակչության թիվը նվազել է մոտ 1,25 անգամ, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է նույն ժամանակահատվածում ՀՀ բնակչության թվի նվազման տեմպերին:

Մարզի բնակչության թվի նվազումը զանգվածային արտագաղթի և բնակչության անընդհատ նվազող բնական վերարտադրության հետևանքով մեծ չափերի է հասել հատկապես վերջին հինգ տարիներին. միայն 2019-2022թթ. մշտական բնակչության թիվը նվազել է 23.8 հազար մարդով, որն այլ մարզերի համեմատությամբ բավականին ծանրակշիռ է:

Հետխորհրդային տարիներին նվազել են թե՛ քաղաքային, և թե՛ գյուղական բնակչության թվաքանակները, ընդ որում, քաղաքային բնակչության թվի նվազումը բացարձակ և հարաբերական ցուցանիշներով ավելի մեծ չափերով է եղել, որի արդյունքում մի փոքր նվազել է նաև մարզի ուրբանիզացման մակարդակը. 1990թ. այն կազմել է 68.6 %, 2001թ.՝ 68.2 %, իսկ 2022թ.՝ 67,3 %: Չնայած դրան, Սյունիքի մարզը շարունակում է մնալ ՀՀ ամենաքաղաքաբնակ մարզը: Քաղաքային բնակչության թիվը 1990թ. կազմել է 100.7 հազ., 2001թ.՝ 104.1 հազ., 2011թ.՝ 95.2 հազ., իսկ 2022թ.՝ 77.0 հազ. մարդ: Նույն տարիներին գյուղական բնակչության թիվը համապատասխանաբար կազմել է 46.0 հազ., 48.6 հազ. 46.6 հազ և 37.5 հազ. մարդ: 2011-2022թթ. քաղաքային բնակչության թիվը նվազել է 18.2 հազարով կամ 23,6 %-ով, իսկ

գյուղական բնակչությունը՝ 9.1 հազարով կամ 24,3 %-ով [1, 2]:

Մարզի բնակչության, հատկապես գյուղական բնակչության արտահոսքի աճի վերջին տարիներին նկատվող միտումները կապված են 2020թ. պատերազմի հետևանքով տեղի ունեցած պաշտպանական դիրքերի սահմանային փոփոխությունների և դրա հետ կապված բնակչության մոտ վախի և կյանքի անվտանգության ապահովման զգացումների տարածման հետ: Արտագաղթի հետևանքով, ուրբանիզացման բարձր մակարդակ ունեցող և նույն բնակեցված Սյունիքի մարզի գյուղական բնակչության բացարձակ թվի նվազումը սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական առումով լուրջ մարտահրավեր է ոչ միայն մարզի, այլ նաև ՀՀ համար:

Ինչպես ՀՀ այլ մարզերում, Սյունիքում ևս խորհրդային տարիների համեմատությամբ ավելի քան երկու անգամ նվազել են ծնելիության ցուցանիշները բացարձակ և հարաբերական թվերով: Հետխորհրդային տարիներին մարզի բնակչության ծնելիության և բնական աճի ցուցանիշները ցածր են եղել ՀՀ միջին ցուցանիշներից, իսկ մահացության ցուցանիշները եղել են գրեթե նույնը: Վերջին տարիներին ծնելիության գործակիցը էլ ավելի է նվազել և ունեցել է անկախության տարիներին գրանցված նվազագույն ցուցանիշը: Այսպես, 2017-2021թթ. Սյունիքի մարզի բնակչության ծնելիության գործակիցի միջին ցուցանիշը եղել է ընդամենը՝ 10% (ՀՀ՝ 12.4%), մահացությանը՝ 10,1 % (ՀՀ՝ 10.1 %), բնական աճը՝ 0,1 % (ՀՀ՝ 2.3 %) [1]:

Ընդհանրապես, վերջին տարիներին՝ Սյունիքը, Տավուշը և Լոռին համարվում են ՀՀ բնակչության ամենացածր ծնելիություն և բնական աճ ունեցող մարզերը: 2020թ. Սյունիքում մահացությունը 428-ով, իսկ 2021թ. 122-ով գերազանցում էր ծնելիությանը: Վերը նշվածը չափազանց մտահոգիչ է, մանավանդ, որ արտագաղթը մարզի բնակավայրերի մեծ մասից շարունակվում է: Այն պայմանավորված է ոչ այնքան սոցիալ-տնտեսական գործոններով, քանի որ Սյունիքի մարզը ՀՀ տնտեսապես առավել զարգացած մարզերից մեկն է, այլ ժողովրդագրական և բնակչության անվտանգության անբավարար ապահովման գործոններով, որոնցից են սեռատարիքային կառուցվածքի անհամասնությունները, մեծահասակ բնակչության բաժնի ավելացումը, աշխատունակ տարիքի տղամարդկանց արտահոսքի հետևանքով կանանց զգալի գերակշռությունը, ամուսնալուծությունների աճը և այլն: Մոտակա տարիներին մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի սպասվելիք տեղաշարժերի (բնակչության ծերացում, երիտասարդների թվի նվազում և այլն) հետևանքով ամենայն հավանականությամբ մարզի բնակչության բնական աճի բացասական ցուցանիշները շարունակական բնույթ են կրելու:

Այս պայմաններում առավել արդիական է դառնում ռազմավարական կարևոր դիրք ունեցող և նույն բնակեցված մարզի բնակչության թվի արտահոսքի կրճատումը և ներհոսքի ապահովումը: Բնակչության բնական աճի խրախուսմանն ուղղված ժողովրդագրական քաղաքականությունը պետք է զուգակցվի նոր աշխատատեղերի ստեղծման ու մարզի կայուն և հավասարակշռված զարգացման հետ:

Հարկ է նշել, որ դեռևս զգալի չափերի է հասնում բնակչության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին (միջմարզային և ներմարզային) միգրացիան: Ընդ որում, բնակչության զգալի արտահոսք տեղի է ունեցել ինչպես մարզի արդյունաբերական քաղաքներից (Կապան, Գորիս), այնպես էլ սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից: Այսպես, միայն 2017-2019թթ. ընթացքում մարզի բնակչության միգրացիայի բացասական մնացորդը կազմել է 2086 մարդ, որը հետագայում ավելի է մեծացել և 2020թ. կազմել է 1033, իսկ 2021թ.՝ 1387 մարդ: Հարկ է նշել, որ 2017-2021թթ. միգրացիայի բացասական մնացորդի բացարձակ և հարաբերական (1000 մարդու հաշվով) ցուցանիշներով բոլոր մարզերի մեջ Սյունիքն առաջինն է, և զգալիորեն գերազանցում է մյուս մարզերին:

Ի տարբերություն խորհրդային տարիների, անկախության տարիներին ներմարզային միգրացիաները շատ չեն եղել և ունեցել են ինչպես գյուղից քաղաք, այնպես էլ քաղաքից գյուղ ուղղություն: Վերջին տարիներին ակտիվացել է գյուղական բնակչության արտահոսքը մարզի սահմաններից, որը խիստ անցանկալի է նույնպես այս մարզի համար: Ընդ որում, մարզից արտագաղթող բնակչության մեծ մասը գնում է հանրապետությունից դուրս, իսկ ավելի փոքր

մասը հիմնականում ուղղվում է դեպի Երևան:

Հետխորհրդային ամբողջ ժամանակահատվածում նվազել է մարզի բնակչության ամուսնությունների թիվը, իսկ ամուսնալուծությունների թիվն ավելացել է, որը բացասաբար է անդրադարձել բնակչության բնական վերարտադրության վրա: Այսպես, 2008-2019թթ ժամանակահատվածում ամուսնությունների թիվը տարեկան 735-ից նվազել է 627-ի, իսկ ամուսնալուծությունների թիվը 122-ից հասել է 154-ի: Եթե 2008թ. մեկ ամուսնալուծությանն ընկնում էր 6 ամուսնություն, ապա 2019թ.՝ ընդամենը 4.1 ամուսնություն:

Մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքը կրում է բնակչության վերարտադրության և միգրացիայի անմիջական ազդեցությունը: Այստեղ, ինչպես և այլ մարզերում, մշտական բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք: Այսպես, 2022թ. դրությամբ Սյունիքի մարզում կանայք կազմել են մարզի ընդհանուր բնակչության 51,8 %-ը: Եթե հաշվի առնենք տղամարդկանց ակտիվ աշխատանքային միգրացիան, ապա առկա բնակչության թվում կանանց գերակշռությունն ավելի նկատելի է դառնում: Կանանց գերակշռությունը հատկապես մեծ է բարձր տարիքային խմբերում: Դա կապված է աշխատունակ տարիքի տղամարդկանց արտագաղթի և կանանց կյանքի ավելի բարձր միջին տևողության հետ: Բավական է նշել որ 60-ից բարձր տարիքային խմբերում կանանց մասնաբաժինը հասնում է 57,3 %, մինչդեռ, մինչև 14 տարեկանների տարիքային խմբում այն կազմում է ընդամենը՝ 47,8 % [1, 2]:

Մտահոգիչ է նաև վերջին տասնամյակում բնակչության տարիքային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները. բնակչության ընդհանուր թվում մեծացել են միջին և հատկապես բարձր տարիքային խմբերի բնակչության բաժինները, նվազել է ցածր տարիքի բնակչության բաժինը: 2022թ. 0-14 տարեկան երեխաների մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվում կազմել է՝ 17,3 %, իսկ 60 - ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը՝ 21,6 % [2]: Հատկապես Սյունիքի մարզում ակնհայտ են բնակչության ծերացման միտումները, որոնք առանձնապես սուր դրսևորումներ են ստանում մարզի բազմաթիվ սահմանամերձ և բարձրլեռնային փոքր բնակավայրերում: Ներկայումս Սյունիքի մարզում բնակվում է մոտ 5 հազ մարդ (բնակչության 4.7%-ը), որոնց տարիքը անցնում է 80-ից:

2022թ. [2] Սյունիքի մարզի կանանց ընդհանուր թվում 60-ից բարձր տարիքի կանանց մասնաբաժինը կազմել է 23,9 % (2015թ. եղել է 22,3 %), 15-59 տ.՝ 60,1 % (2015թ. եղել է 60,3 %), իսկ մինչև 14 տ.՝ 16,0 % (2015թ. եղել է 17,4 %): Նույն թվականին տղամարդկանց ընդհանուր թվում 60-ից բարձր տարիքի տղամարդկանց մասնաբաժինը կազմել է 19,1 % (2015թ. եղել է 17,4 %), 15-59 տ.՝ 62.1 % (2015թ. եղել է 62,5 %), իսկ մինչև 14 տ.՝ 18,8 % (2015թ. եղել է 20,1 %): Նշված փաստերը ևս մեկ անգամ վկայում են այն մասին, որ մարզում շարունակվում են ժողովրդագրական բացասական տեղաշարժերը (բնակչության տարիքային կառուցվածքում երեխաների բաժնի նվազում և մեծահասակների բաժնի ավելացում): Վերը նշված միտումներից դժվար չէ ենթադրել, որ մարզում բնակչության սեռատարիքային կառուցվածքի արդի տեղաշարժերի հետևանքով ապագայում կդիտվի բնակչության մահացության մակարդակի աճի և ծնելիության մակարդակի նվազման միտումներ: Այսինքն, խիստ հրատապ է դառնում ՀՀ-ում, և հատկապես Սյունիքի մարզում արդյունավետ ժողովրդագրական և սոցիալտնտեսական քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Ընդ որում, բնակչության ցածր վերարտադրության տեմպերը, կենսաթոշակային տարիքի բնակչության համեմատաբար մեծ մասնաբաժինը է՛լ ավելի են խորացնում մարզի ժողովրդագրական հիմնախնդիրները: Ուստի, ՀՀ ամենամեկուսացված, նոսր բնակեցված, միաժամանակ բնական բազմազան ռեսուրսներով հարուստ և կարևոր ռազմավարական դիրք ունեցող այս մարզի ժողովրդագրական հիմնախնդիրների լուծումը ոչ միայն խիստ հրատապ է, այլև պահանջում է առանձնահատուկ լուծումներ և մոտեցումներ:

Ժողովրդագրական հիմնախնդիրներն առավել մեծ սրությամբ են ներկայացված լեռնային փոքր գյուղական բնակավայրերում (մինչև 50 բնակիչ). դրանց մեծ մասում չկան դպրոցներ և բացակայում են բնակչության կենսագործունեության համար անհրաժեշտ այլ ծառայություններ:

րը, ինչը նպաստում է երիտասարդների և երիտասարդ ընտանիքների արտահոսքին, որի արդյունքում (ի լրումն վերը նշած պատճառների) տարեց բնակչությունը մեծամասնություն է կազմում: Դրանք ռիսկային բնակավայրեր են, և այդ միտումներն ու ժողովրդագրական իրադրությունը պահպանվելու դեպքում կարող են ապագայում լրացնել մարզի տասնյակ չբնակեցված բնակավայրերի ցանկը և գտնվում են Կապանի նախկին վարչական շրջանի Գեղիի հովտում, ինչպես նաև Գորիս-Կապան ավտոմայրուղու սահմանամերձ գոտում:

Ներկայումս ամենամեծ թվով չբնակեցված գյուղական բնակավայրերը գտնվում են **Քաջարան** համայնքում (Կարդ, Կիցք, Ներքին Գիրաթաղ, Վերին Գիրաթաղ, Ոչեթի, Վերին Գեղավանք, Քարուտ): Բացի դրանից, Քաջարան համայնքում ռիսկային են Գեղավանք, Աջաբաջ, Փոփսրուտ, Կաթնառատ և Նոր Աստղաբերդ բնակավայրերը, որոնք համապատասխանաբար ունեն 3, 12, 12, 19, 37 բնակիչ: Դրանք հիմնականում լեռնային և բարձրլեռնային գյուղեր են, տրանսպորտով և այլ ենթակառուցվածքներով վատ ապահովված և գտնվում են համայնքի կենտրոնից 15-20 կմ-ից ավելի մեծ հեռավորության վրա:

Կապան համայնքի մեջ մտնող 38 գյուղական բնակավայրերից չբնակեցված է Ըրկենանց գյուղը, իսկ ռիսկային են Խորձոր (5 բնակիչ), Շիշկերտ (37 բնակիչ), Գոմարան (42 բնակիչ), Դիցմայրի՝ (45 բնակիչ) և Բարգուշատ՝ (50 բնակիչ) գյուղական բնակավայրերը: Նշված բնակավայրերից Շիշկերտը լեռնային գյուղ է և գտնվում է համայնքի կենտրոնից 48 կմ հեռավորության վրա: Մնացած ռիսկային բնակավայրերը Կապանից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող սահմանամերձ գյուղեր են:

Բնագուրկ և ռիսկային բնակավայրերը շատ են նաև Գորիս և Մեղրի համայնքներում:

Գորիս համայնքում բնագուրկ են սահմանամերձ Ձորակ, Աղբուլաղ և Վանանդ գյուղական բնակավայրերը, ինչպես նաև տրանսպորտային վատ պայմանների և մեկուսացվածության պատճառով ռիսկային համարվող Բարձրավան (89 բնակիչ) բնակավայրը: Շուտնուխի ենթաշրջանի բնակավայրերի բնակեցման հիմնախնդիրն ավելի է բարդացել Կապան - Գորիս մայրուղու հարակից հատվածն Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո: Հարկ է նշել, որ բոլոր ռիսկային բնակավայրերը գտնվում են համայնքային կենտրոնից ավելի քան 30 կմ հեռավորության վրա:

Մեղրի համայնքում բնագուրկ է Այգեձոր բնակավայրը, իսկ ռիսկային են Գուդեմնիս (14 բնակիչ), Վահրավար (17 բնակիչ), Կուրիս (29 բնակիչ) և Թղկուտ (32 բնակիչ) բնակավայրերը: Դրանք հիմնականում սահմանամերձ բնակավայրեր են և գտնվում են համայնքի կենտրոնից մինչև 15 կմ հեռավորության վրա:

Միսիան համայնքում բնագուրկ բնակավայրեր չկան, սակայն այստեղ ռիսկային են Թանահատ (12 բնակիչ), Յղունի (30 բնակիչ) և Արևիս (45 բնակիչ) բարձրլեռնային գյուղական բնակավայրերը, որոնք, նաև տրանսպորտային առումով վատ են ապահովված և գտնվում են համայնքի կենտրոնից ավելի քան 20 կմ հեռավորության վրա:

Տաթև համայնքում ռիսկային է լեռնային գյուղական բնակավայր Քաշունին (11 բնակիչ), որի տրանսպորտային հասանելիությունը զգալիորեն լավացել է Տաթև-Կապան մայրուղու կառուցումից հետո:

Մարզի մնացած երկու համայնքներում բնագուրկ և ռիսկային բնակավայրեր թեև չկան, սակայն եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ **Տեղ** համայնքի բոլոր յոթ բնակավայրերը (Տեղ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կորնիձոր, Վաղատուր և Քարաշեն) սահմանամերձ են, իսկ **Գորայք** համայնքի բոլոր չորս գյուղական բնակավայրերը (Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան) բարձրլեռնային են, ապա կարելի է փաստել, որ այդ երկու համայնքների բնակավայրերի բնակչության պահպանման և ավելացման հիմնախնդիրը խիստ հրատապ է դառնում: Նշված երկու համայնքների սոցիալ տնտեսական և ժողովրդագրական զարգացումն ունի ոչ միայն մարզային, այլև համապետական նշանակություն: Դա բացատրվում է նրանով, որ Տեղ համայնքը Արցախի Հանրապետությանն ամենամոտ գտնվող համայնքն է, իսկ Գորայք համայնքը միակն է, որ գտնվում է Ադրբեջանը Նախիջևանից բաժանող 40-45 կմ լայնություն

ունեցող տարածքում: 2022թ. տվյալներով Գորայք համայնքի չորս բնակավայրերի բնակչության թիվը կազմել է ընդամենը 1450 մարդ, իսկ Տեղ համայնքի յոթ բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը՝ 5393 մարդ [2]: Հասկանալի է, որ բնակչության նշված թվերը խիստ հեռու են տարածքի ժողովրդագրական տարողունակության և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններից: ՀՀ-ի համար ռազմավարական նշանակություն ունեցող այդ համայնքների բնակեցումը և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը պետք է դասվի համագային զարգացման գերակայությունների շարքում:

Բնակեցման հիմնախնդիրը խիստ կարևոր է նաև **Շուռնուխի** ընդարձակ ենթաշրջանում, որտեղ 2022թ. բնակվում էր ընդամենը 520 մարդ: Նրա 6 գյուղական բնակավայրերից Զորակը, Վանանդը և Աղբուլաղը բնակեցված չեն, իսկ մյուս 3 բնակավայրերում բնակչության թվաքանակն ունի հետևյալ պատկերը. Շուռնուխ՝ 146 մարդ, Որոտան՝ 286 մարդ, Բարձրավան՝ 89 մարդ [2]: Ընդ որում, Գորիս-Կապան ավտոմայրուղու մոտ 20 կմ հատվածի անցումն Ադրբեջանի հսկողության տակ էապես վատթարացրեց ենթաշրջանի տրանսպորտա-աշխարհագրական դիրքը, և խիստ հրատապ դարձրեց նոր այրնտրանքային ճանապարհների անցկացման և այդ բնակավայրերի բնակեցման հիմնախնդիրների լուծումը:

Միաժամանակ հարկ է նշել, որ այս, ինչպես նաև վերը թվարկած ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող երկու ենթաշրջաններն ունեն գյուղատնտեսության, զբոսաշրջության և տեղական հումքի և աշխատուժի օգտագործման հիման վրա արտադրությունների զարգացման մեծ հնարավորություններ: Նշված ենթաշրջանների էկոլոգիական և ժողովրդագրական տարողունակությունը թույլ է տալիս ստեղծել քաղաքային տեղական կենտրոններ և մի քանի անգամ ավելացնել բնակչության թիվը: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել նշված տարածքների առաջնահերթ զարգացման ծրագրեր, սահմանել հարկային ու վարկային նոր, լրացուցիչ արտոնություններ՝ ինչպես բնակիչների, այնպես էլ ներդրողների և վարձու աշխատողների համար:

Մինչև համայնքների խոշորացման գործընթացի սկիզբը (2015թ.) մարզն ուներ 7 քաղաքային և 102 գյուղական համայնք: Գյուղական համայնքների միջին մարդաշատությունը կազմում էր ընդամենը 437 մարդ: Ակներև է, որ փոքր համայնքներն ի վիճակի չէին ունենալու ֆինանսական և տնտեսական բավարար հիմք՝ լուծելու իրենց սոցիալ-տնտեսական բազում խնդիրները, բնակչության համար հասանելի դարձնելու բազմազան ծառայությունները: Հաշվի առնելով այս ամենը, կարելի է պնդել, որ գյուղական համայնքների խոշորացումը Սյունիքում հրատապ էր և արդարացված:

Սակայն, իրականում համայնքների խոշորացումն ընթացավ ոչ թե մեկ լեռնային գոգավորությունում կամ գետահովտում տեղադրված և իրար մոտ գտնվող գյուղական բնակավայրերի տեղական խմբի կամ համակարգի՝ մեկ համայնքի մեջ միավորելու ճանապարհով, այլ նախկին վարչական շրջանների սահմաններում (Սիսիան, Կապան, Մեղրի) բոլոր բնակավայրերի՝ մեկ համայնքի, որպես կանոն՝ նախկին շրջկենտրոն համայնքի մեջ միավորելով: Այսպես, 2017թ. խոշորացման արդյունքում Սիսիանի նորաստեղծ բազմաբնակավայր համայնքն ընդգրկել է 32 բնակավայր, Կապանի բազմաբնակավայր համայնքը՝ 38 բնակավայր, Քաջարանի բազմաբնակավայր համայնքը՝ 20 բնակավայր: Մինչ այդ ստեղծվել էր Մեղրու բազմաբնակավայր խոշորացված համայնքը, որն ընդգրկել է նախկին Մեղրու վարչական շրջանի բոլոր 13 բնակավայրերը: Նշված համայնքներում մեծ թվով բնակավայրեր համայնքային կենտրոնից ունեն ավելի քան մեկ ժամյա տրանսպորտային մատչելիություն: Դա չափազանց դժվարացնում է լեռնային կտրտված մակերևույթ և տրանսպորտային ուղիների նոսր ցանց ունեցող մարզի բնակչության կենսագործունեության պայմանները, բնակչության ապահովումը տարբեր ծառայություններով:

Սյունիքի մարզում համայնքների խոշորացման, ավելի շուտ՝ գերխոշորացման արդյունքում նախկին 107 համայնքների փոխարեն ստեղծվել են 8 խոշորացված բազմաբնակավայր համայնքներ: Նման մոտեցում է ցուցաբերվել նաև ՀՀ այլ մարզերում (Տավուշ, Արագածոտն և

այլն), որի բացասական հետևանքները կարճ ժամանակ անց կարտահայտվեն տեղական ինքնակառավարման իրականացման, ծառայությունների հասանելիության ապահովման, գյուղերի համաչափ զարգացման և այլ գործընթացներում:

Համեմատաբար ճիշտ մոտեցումներով և սկզբունքներով են առանձնացվել Տաթև, Տեղ և Գորայք բազմաբնակավայրային համայնքները: Դրանց հիմքում ընկած են տարաբնակեցման տեղական կենտրոնի և տեղական մակարդակով համակարգաստեղծ գործընթացների առկայությունը:

Հարկ է նշել, որ 2020թ. պատերազմից հետո հայ-ադրբեջանական սահմանային նոր իրողությունների հետ կապված մարզի տասնյակ գյուղական բնակավայրերի բնակչության կենսագործունեության և տեղաշարժման անվտանգության հետ կապված բազմաթիվ խնդիրներ են առաջացել, որոնց օպտիմալ լուծման համար, ի թիվս այլ միջոցառումների, արմատական դերակատարում կունենա սահմանամերձ և հեռավոր տարածքներում նոր համայնքների ստեղծումը, ինչը կնպաստի տարածքի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանն ու բնակչության անվտանգության պատշաճ մակարդակի ապահովմանը:

Ներկայումս Սյունիքի մարզը ձեռք է բերել աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն ոչ միայն տարածաշրջանային երկրների, այլև աշխարհի գերտերությունների համար: Ուստի, ի թիվս առաջնահերթ համարվող այլ ծրագրերի և միջոցառումների, անհրաժեշտ է զարկ տալ նաև Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու առկա ժողովրդագրական հիմնախնդիրների լուծմանը: Այդ ռազմավարական ծրագրերի իրականացման համար Սյունիքն ունի ավելի քան բավարար բնառեսուրսային պոտենցիալ. մարզի բնառեսուրսային պայմանները՝ հանքային, հողային, ջրային, անտառային, ռեկրեացիոն-զբոսաշրջային զգալի ռեսուրսները մեծ հնարավորություններ են տալիս մարզի կայուն զարգացման համար: Դրա համար անհրաժեշտ է մարզի բնակչության թիվը մոտակա 10-15 տարիների ընթացքում առնվազն 2-2,5 անգամ ավելացնել: Բնակչության բնակեցման հնարավորությունները հատկապես մեծ են Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում: Հաշվի առնելով Սիսիան քաղաքի և մերձակա գյուղերի աշխարհագրական ոչ սահմանամերձ դիրքերը, տարածքային, հողային և ջրային ռեսուրսներով բավարար ապահովվածությունը, կարելի է նշված տարածքում բնակեցնել բռնագաղթված քաղաքաբնակ արցախցիներին՝ ստեղծելով տարածաշրջանային նշանակության կրթա-մշակութային և առևտրա-արդյունաբերական խոշոր կենտրոն 60-70 հազ. բնակչությամբ: Գյուղաբնակ արցախցիներին նպատակահարմար է բնակեցնել Գեղիի հովտի, Մեղրի համայնքի, ինչպես նաև մի շարք այլ նոսր բնակեցված բնակավայրերում կամ բնակավայրերի խմբում:

Այսինքն, բռնագաղթված արցախցիներին առավելապես Սյունիքի մարզում բնակեցնելով լուծվում են նաև համազգային և համապետական նշանակության երկու կարևոր խնդիր.

- 1) պահպանել արցախցիների համայնքն ու մշակութային-ազգագրական ինքնատիպությունը,
- 2) բարելավել Սյունիքի մարզի ժողովրդագրական իրավիճակը:

Գրականություն

1. ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ: Տարածքային վիճակագրություն: ՀՀ Սյունիքի մարզը թվերով: Աղբյուրը՝ <https://armstat.am/am/?nid=651>. Դիտում՝ 24.08.2023.
2. Մարդահամարի (2022թ.) արդյունքները: Սոցիալ-ժողովրդագրական հատված: Աղբյուրը՝ https://armstat.am/file/article/sv_07_23a_510.pdf. Դիտում՝ 25.08.2023.

М.Г. Манасян, Г.М. Гспоян

ОЦЕНКА ДЕМОГРАФИЧЕСКОЙ СИТУАЦИИ И РАССЕЛЕНИЯ СЮНИКА С ТОЧКИ ЗРЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

В статье на основе фактических материалов представляются особенности и изменения демографической ситуации и расселения Сюника, имеющего для РА важнейшее стратегическое значение. Были выявлены проблемы, существующие в сферах демографии и расселения, и они были оценены с точки зрения национальной безопасности. В статье даны основные направления демографической политики государства, которые должны быть осуществлены в Сюнике. Важнейшим путем улучшения расселения и демографической ситуации в Сюнике считается концентрация и заселение вынужденных переселенцев Арцаха в некоторых городах и сельских населенных пунктах области. Это также даст возможность сохранить общину арцахцев и культурно-этнографическую самобытность.

Ключевые слова: демографическая ситуация, расселение, община, естественное воспроизводство, миграция, демографическая политика, приграничное поселение.

M.G. Manasyan, G.M. Gspoyan

ASSESSMENT OF THE DEMOGRAPHIC SITUATION AND RESETTLEMENT OF SYUNIK FROM A NATIONAL SECURITY PERSPECTIVE

The article presents the specifics and changes in the demographic and resettlement situation of Syunik, which is of crucial strategic importance for the Republic of Armenia, on the basis of facts. The existing problems of the spheres of demography and resettlement assessed from the point of view of national security have been identified. The main directions of the demographic policy to be implemented by state in Syunik are given in the article. The most important way to improve the settlement and demographic situation in Syunik is considered to be the concentration and settlement of Artsakh internally displaced people (IDPs) in some cities and rural settlements of the region. This will also provide an opportunity to preserve the Artsakh community and cultural and ethnographic identity.

Key words: demographic situation, resettlement, community, natural reproduction, migration, demographic policy, border settlement.

Մանասյան Մաքսիմ Գառնիկի - աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Գսպոյան Գրիշա Մելիսակի - աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Ներկայացման ամսաթիվը՝ 11.09.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 19.09.2023

V.A. Bagiyani, S.H. Bakunts

COMMUNITY-BASED NATURAL DISASTER RESILIENCE: CHANCES AND CHALLENGES

The article discusses community participation recognition, as a supplementary element of natural disaster management in recent years, as well as the necessity to reverse the global trend of exponential increase in disasters and losses from small and medium scale disasters for building a culture of safety, ensuring sustainable development and disaster resilience.

Key words: community, vulnerable groups, disaster management, resilience, risk reduction, participatory governance.

Natural disasters pose significant threats to communities worldwide, necessitating proactive strategies to mitigate risks and enhance resilience. This paper explores the prospects and challenges associated with community-based approaches to natural disaster resilience.

There are few pillars of community-based natural disaster resilience building.

Building Local Confidence: engaging communities in resilience efforts instills a sense of confidence and empowerment.

Enhanced Preparedness and Mitigation: communities actively involved in resilience planning develop improved capacity for disaster preparedness and mitigation.

Development Roles at the Grassroots Level: community involvement leads to greater responsibilities at the local level, aligning disaster resilience efforts with broader community development goals. Empowering communities to take charge of their well-being contributes to sustainable, long-term resilience.

The establishment of community-based natural disaster resilience is predicated on recognizing the pillars that underpin its success. As this paper delves into the prospects and challenges associated with such approaches, it becomes evident that local engagement forms a crucial foundation. Building local confidence emerges as a key pillar, wherein communities actively participating in resilience efforts not only gain a heightened sense of confidence and empowerment but also foster a collective belief in their ability to withstand and recover from disasters. This foundational belief, rooted in localized knowledge and understanding, serves as a catalyst for developing targeted and effective mitigation strategies. Therefore, the interplay between building local confidence and fostering collective belief becomes a linchpin in the overarching framework of community-based natural disaster resilience.

Localized knowledge and understanding of vulnerabilities contribute to the development of targeted and effective mitigation strategies.

Local participation fosters a collective belief in the community's ability to withstand and recover from disasters.

The main benefits of involving communities in disaster resilience and risk management are seen to be building confidence, improved capacity for disaster preparedness and mitigation, greater development roles and responsibilities at the local level and pride in making a difference. In addition, the involvement of local communities provides an opportunity to develop a wide range of appropriate innovative and workable mitigation solutions in a cost-effective and sustainable manner [5, 10]. This last point of increased cost-efficiency is emphasized by Scully et al., (2022), who show that the integration and active participation of communities in disaster resilience and risk reduction has found to be a means of reducing costs and of incorporating important competencies, networks, etc. to make response and recovery more effective [3, 9, 12]. Likewise, Fischer (2012) describes an increase of efficiency and effectiveness of the provision and management of public services as one of the main goals and potential benefits of capacity building by community engagement [6]. Thereby,

participation is seen to bear the potential of combining efficiency with equity since it provides less powerful groups within a community with better chances for having a say in how resources are distributed instead of leaving this decision up to unaccountable administrators. This is also because empowering citizens to "reflect on normative principles that underlie the provision of public services" is a key objective of capacity building. According to Fischer, community involvement can successfully enhance how resources are used and distributed as well as how successful initiatives are in terms of the results they achieve and are intended to achieve. Additionally, community involvement can result in quicker emergency response times in industries like health care, forestry, education, or environmental protection. It can also increase program implementation commitment and motivation and increase public satisfaction with both policies and programs. Thus, increasing capacity can also have the benefit of strengthening people's sense of unity and belonging.

Participatory governance – as opposed to citizen participation – can help in gathering competent individuals who have sufficient social capital for joint problem-solving [6]. The UN Declaration of the Right to Development from 1986 claims a right to participate in development and sees this as an „inalienable human right by virtue of which every human person and all peoples are entitled to participate in, contribute to and enjoy economic, social, cultural and political development” [14]. **This right is not to be seen as the simple right to „enjoy”** the fruits of development, but also as a right to participate in the process of realizing them” [11]. **The declaration even claims that „all human beings have a responsibility for development, individually and collectively”**, whereby the rights and duties for formulating appropriate national development policies are attributed to the respective states [14]. The right to participate has quite universally and indisputably been accepted and the participatory approach – at least theoretically – certainly has the potential to contribute to greater equity and a fairer distribution of resources as well as a fairer design of decision-making processes. Yet, actual participatory processes often fail in enabling such a broad participation for all [11]. According to empirical research on the subject, it can be more challenging to achieve the purported benefits of involvement in environments where there is a lot of social and economic disparity. **As Fischer notes, „equitable outcomes more commonly occur in combination with other factors, such as those related to the distribution of power, motivation levels of the participants, and the presence of groups that can facilitate the process”** [6]. Since participation is neither an easy nor a straightforward task and needs to be carefully organized, facilitated and cultivated [5], its role is not viewed in an entirely positive light: while some call for more participation, others believe it should be restrained. Still others point out the limitations and difficulties of participation. Gustafson et al., (2017) for instance point out that despite a growing body of literature on participatory modes of governance, there is still very little knowledge available on the key players of such participatory approaches, namely the participants and their capabilities and motives for and expectations of **participation. This knowledge, however, would be urgently needed, since „the implementation of participatory governance depends on the voluntary and often continuous cooperation of committed participants”** [8]. At this juncture, Fischer continues, "people need an incentive to participate because engaging in public affairs is not free." The possible advantages of citizens' participation should exceed these expenses. What is more, people may not see an immediate relevance for their participation or it may seem more important to outsiders than to the relevant communities themselves, and people may also simply lack the motivation, time or resources to take part in participatory processes [6].

The identification of categories of challenges existing in the sector is equally crucial. Based on research findings, the following categories can be used to group the challenges.

Socioeconomic Disparities: environments with high levels of social and economic disparity face challenges in achieving broad and equitable community participation.

Complexity of Participation: meaningful participation requires careful organization, facilitation, and cultivation, which can be complex and resource-intensive. Motivating individuals to engage in public affairs may necessitate incentives to outweigh associated costs.

Measurement of Success: the success of community participation in resilience efforts is challenging to measure, especially regarding benefits and costs to households. Establishing a clear cause-effect relationship between efficiency and participation can be problematic.

Gaps in Capacity, Incentive, and Power: effective participation faces gaps in capacity, incentive, and power, necessitating skill-building, addressing opportunity costs, and rectifying power imbalances.

The challenges inherent in community participation in resilience efforts are multifaceted and encompass various dimensions. The identification of these challenges reveals a pattern that intersects with the struggles faced by vulnerable groups. Notably, socioeconomic disparities, a key category of challenges, can exacerbate systemic inequalities, making it difficult for vulnerable groups to engage meaningfully. Moreover, the complexity associated with participation, including the need for careful organization and facilitation, presents an additional hurdle for those already facing societal barriers. The difficulties in measuring the success of participation, particularly in terms of benefits and costs, echo the challenges highlighted in the second text regarding the reliability of information on these distributions. Furthermore, the gaps in capacity, incentive, and power underscore the broader issues of skill-building, addressing opportunity costs, and rectifying power imbalances, which are integral to ensuring that vulnerable groups can overcome these obstacles and participate meaningfully in community-based resilience efforts. Thus, understanding and addressing the identified challenges become pivotal not only for the overall effectiveness of community participation but also for fostering inclusivity and overcoming systemic barriers faced by vulnerable populations.

Vulnerable groups may struggle to engage meaningfully due to systemic inequalities.

Another related challenge with participation is that its success is often difficult to measure. On the one hand because „there is often no reliable information about the distribution of benefits and costs to households”. On the other hand, as Fischer contends, establishing a cause-effect relationship between efficiency and participation can be problematic, as „it is always possible that a positive association between efficiency and participation may only reflect a process of reverse causation—that is, community members had already chosen to participate in those projects which promised to be efficient” [6]. Furthermore, in the context of developing countries „in which community participation is related to external donor-funded projects participation can intentionally advance preferences that are seen to be more in line with the interests of the donors than local interests. The participants simply try to increase their chances of obtaining available resources by telling the donors what they want to hear” [6]. In such cases, participatory approaches – although they are aimed at the opposite effect – tend to reproduce existing social hierarchies instead of eradicating or at least mitigating them. Osmani states that a careful analysis of previous approaches to participatory governance “suggests that success depends largely on how well a society can deal with three distinct but inter-related gaps that stand in the way of effective participation” [11]. These may be called the capacity gap, the incentive gap and the power gap”. The capacity gap „arises from the fact that meaningful participation in the process of governance requires certain skills which common people, least of all the traditionally disadvantaged and marginalized segments of the society, do not typically possess. In order to bridge this gap, participation must be made more effective by training and practicing general skills such as working in heterogenous teams or articulating one’s view rationally and understandably over a longer period of time. Thereby it is important that „the transfer of knowledge must take place in a setting of fundamental equality and mutual respect between the providers and recipients of knowledge”. The Incentive gap refers to the

various types of costs of participation. These include an opportunity cost of the time and effort that people have to put into participative activities, which usually is especially high for women because of **their alleged „triple burden”**; the psychological cost of speaking out in public and the probable cost of retribution which refers to potential class hierarchies. The Power gap according to Osmani arises **from „systematic asymmetries of power that is inherent in unequal societies”**, i.e. due to gender, age, ethnicity, class, religion or other differences that may make a difference in certain situations. The author posits that in societies where dominant groups hold superior power to advance their own limited goals, participation is likely to be uneven as well. "Some countervailing power in favor of the subordinate groups" must be established in order to eliminate the power gap, or at least reduce it. **Osmani proposes the „theory of deliberative democracy”** as one way for creating such a countervailing power which should ensure a fair and equitable decision-making process by enabling all participants to effectively present their views and the actions, they consider necessary. A basic prerequisite therefore is that people have the necessary education and economic security, as “poor illiterate people, whose livelihoods are insecure and whose very survival depends on maintaining an obsequious humility in the context of patron-client relationships, are not very likely to participate independently or assertively in the conduct of public affairs”. In order for participation to contribute to increasing social equity, it must be ensured that poor and other vulnerable groups are able to act and advocate in their own interests, even though this may go against the interests of their donors [11]. While participation may significantly contribute to greater efficiency and equity, there are certainly no guarantees and especially large-scale disasters continue to expose weaknesses in the communitarian dimension of crisis-management policy. The design of policy around participatory concepts is often problematic because of its ambiguous nature and connected romanticism while some initiatives may reflect a neo-liberal agenda [13]. These are by no means arguments against citizen participation but rather for a careful design and implementation. Dibley et al. (2019) for **instance stress the government’s role in supporting community**-led approaches to recovery and argue that it is paramount to enable and support collective self-efficacy and already existing capacities and to understand the capacity of governments to devolve responsibility and power and to share it with the respective communities [4]. In a similar manner, Stark et al., (2014) propose a community decentralization model and argue that crisis management should remain in local state control. However, the resources should be moved out into the communities on a horizontal axis after being located at this lowest level on a vertical axis and being under government supervision. It is necessary to establish localized crisis-management teams that address the demands and dangers unique to each community. [13]. In contrast, Linnell (2013) suggests that instead of focusing on the potential risks and hazards, the focus should be on people and their capacity to act (see also UNDP 2022) since it is mainly the residents and first responders of areas that are affected by disasters who are the first to react to emergency events and quickly provide assistance and participate in the rescue of people [3, 9]. This is partly because they are the first to arrive on the scene, and partly because living in disaster areas has given them the necessary skills and experience to deal with disasters. Moreover, according to the authors, the response to crisis events is predominantly organized by kinship, family and neighborhood networks, each of which mobilize available resources [3, 9]. Linnell (2013) also highlights the effectiveness of established networks such as family, workplace, clubs, organizations, church congregations, which could and should be considered as important actors for emergency and disaster management. In order to being able to respond more effectively and efficiently to disaster events in the future [9], Beldyga (2022) recommends to develop emergency plans in collaboration with affected communities in an iterative process in order to enhance disaster resilience [3]. Yet, as already indicated above, including members of local communities in processes of building disaster resilience is not an easy task, and authors such as Alexander et al., [2014], Andharia et al. (2023) and Geekiyanage et al. (2020) criticize that current

disaster management plans and decision-making processes especially fail in sufficiently considering the views and needs of people with disabilities and other vulnerable groups, although they are often more severely affected by disasters than people with **no disabilities** and „they can suffer additional forms of discrimination or neglect” [1, 2, 7]. The authors plea for an inclusive approach in disaster management that adequately considers people with disabilities and implements their special needs. Andharia et al. (2023) propose a participatory mechanism for community feedback that is tailored to the special needs of people with disabilities [2]. The authors refer to a large-scale study that was conducted in Kerala in 2018 with people with disabilities/impairments after a major flood disaster. They present the work undertaken by the government and several partners using action research and methodological innovations during post-disaster recovery to implement the idea of AAP (“Accountability to affected and at-risk populations”) within government systems that included a large sample of people with disabilities. This approach, according to the authors “underlined the assumption that people with disabilities are not mere victims or beneficiaries but have the potential to be actors, active participants and agents of change and opportunities must be provided for them **to communicate**” [2]. **The whole design and setup of the data collection process ensured** that an app-based data collection platform was provided to people with disabilities that allowed them to give real-time feedback on their needs and concerns during disaster response and recovery. The research thus “created a reliable foundation for the government to understand the successes and shortcomings of its existing disaster management policies and their implementation. It also formed a rich source of reference for insights for future planning, preparedness and resilience building for the people with disabilities” [2]. While this is certainly an example of successful community involvement with special attention to vulnerable groups, there are numerous factors and hurdles that may significantly hinder the engagement of vulnerable groups. Geekiyana et al. (2020) for instance state that vulnerable populations are often not considered in urban development decision-making processes because of barriers to community access and challenges to their inclusion. This neglect of vulnerable groups can subsequently also affect the disaster resilience of cities and urban environments. In their literature review, Geekiyana et al. (2020) identify several challenges and barriers to collaborative decision-making, mainly in relation to the categories of context (community capacity, quality of existing relationships, organizational culture, attitudes and knowledge), infrastructure (investment in infrastructure and planning to support community engagement) and process (stakeholder engagement process, inclusive and accessible practice). These barriers include, first and foremost, communities' lack of knowledge about how best to engage in participatory decision-making and development processes, and a lack of awareness of the benefits they can gain from being involved in these processes. The second most frequently cited barrier was a lack of meaningful community involvement by decision-makers. Unclearly defined goals and purposes of civil society engagement, as well as a lack of clarity, lack of transparency and unclear expectations of current stakeholder engagement processes were cited as the third most important barrier to engaging vulnerable communities in urban development. Through a synthesis of current research, the study found that these barriers can be overcome by changing attitudes and building capacity of both community and professionals, investing in community engagement, and making changes to current stakeholder engagement processes and policies. This last aspect shall be achieved by “incorporating bottom-up dimensions instead of having dominant top-down governance” and by decentralising decision-making and management powers “with responsibilities spread over different stakeholder organisations” [7].

In conclusion, the exploration of community-based natural disaster resilience underscores the critical interplay between local engagement and the pillars that support resilience efforts. The identified pillars, including building local confidence, enhancing preparedness and mitigation, and promoting development roles at the grassroots level, collectively form the foundation of successful

community-based approaches. Empowering communities to actively participate not only instills confidence and a sense of empowerment but also fosters a collective belief in their capacity to withstand and recover from disasters.

In navigating the complexities of community-based natural disaster resilience, acknowledging and addressing challenges, fostering inclusivity, and promoting meaningful participation emerge as key imperatives. By doing so, communities can collectively build the capacity to respond effectively to disasters, ultimately contributing to a more resilient and equitable future.

Literature

1. Alexander D., Sagramola S., Major Hazards and People with Disabilities. European and Mediterranean Major Hazards Agreement (EUR-OPA), 2014.
2. Andharia J., Puri A., Namboothiripad A., Transforming Post-disaster Recovery: Participatory Mechanisms for Community Feedback and Responding to Government's Real-time Data Needs with a Focus on Persons with Disability. The International Journal of Community and Social Development, 5 (1) 2023. pp. 47–70.
3. Beldyga N.A., Review of Literature on Community Responses to Environmental Crises. FILOSOFIJA. SOCIOLOGIJA., 33 (4), 2022. pp. 397–406.
4. Dibley G., Mitchell L., Ireton G., Gordon R., Gordon M., **Government's role in supporting** community-led approaches to recovery. Department of Health and Human Services, Victoria. 2019.
5. Fischer F., Participatory Governance as Deliberative Empowerment: The Cultural Politics of Discursive Space. The American Review of Public Administration, 36 (1), 2006. pp. 19–40.
6. Fischer F., Participatory Governance: From Theory to Practice. Oxford University Press. 2012.
7. Geekiyana D., Fernando T., Keraminiyage K., Assessing the state of the art in community engagement for participatory decision-making in disaster risk-sensitive urban development. International Journal of Disaster Risk Reduction, 2020. - 51 p.
8. Gustafson P., Hertting N., Understanding participatory governance: An analysis of participants' motives for participation. The American Review of Public Administration, 47 (5), 2017. pp. 538–549.
9. Linnell M., Community approaches involving the public in crisis management A literature review. Mittuniversitetet. 2013.
10. Lorna V., Community based approaches to disaster mitigation. Asian Disaster Preparedness Center, 2003. - 176 p.
11. Osmani S.R., Participatory governance: An overview of issues and evidence. Participatory Governance and the Millennium Development Goals, 2008. pp. 1–45.
12. Scully J., Shaw D., International Models of Emergency Management Involving Civil Society. 2022.
13. Stark A., Taylor M., Citizen participation, community resilience and crisis-management policy. Australian Journal of Political Science, 49(2), 2014. pp. 300–315.
14. UN. Declaration on the Right to Development. General Assembly resolution 41/128, 1986.

Վ.Ա. Բագիյան, Ս.Հ. Բակունց

ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՇԵՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Հոդվածքը քննարկում է վերջին տարիներին համայնքի մասնակցության ճանաչումը, որպես տարերային աղետների կառավարման լրացուցիչ տարր, որն անհրաժեշտ է աղետների և փոքր ու միջին աղետներից կորուստների թվի էքսպոնենցիոնալ աճի համաշխարհային միտումը հակադարձելու,

անվտանգության մշակույթ ձևավորելու և կայուն զարգացում ու աղետների հանդեպ դիմակայունություն ապահովելու համար:

Առանցքային բառեր. համայնք, խոցելի խմբեր, աղետների կառավարում, դիմակայունություն, ռիսկի նվազեցում, մասնակցային կառավարում:

В.А. Багиян, С.Г. Бакунц

УСТОЙЧИВОСТЬ К СТИХИЙНЫМ БЕДСТВИЯМ, ОРИЕНТИРОВАННАЯ НА ОБЩИНЕ: ВОЗМОЖНОСТИ И ВЫЗОВЫ

Статья рассматривает признание участия общины дополнительным элементом управления стихийными бедствиями в последние годы, необходимым для обращения вспять глобальной тенденций экспоненциального увеличения числа бедствий и потерь от малых и средних бедствий, формирования культуры безопасности и обеспечения устойчивого развития и устойчивости к бедствиям.

Ключевые слова: община, уязвимые группы, управление бедствиями, устойчивость, снижение риска, совместное управление.

Bagiyan Valery Aleksandr – PhD, Biological Sciences, Associate Professor (CMSA MIA RA)

Bakunts Satenik Hrachik – PhD, Agricultural Sciences, Associate Professor (CMSA MIA RA)

Presentation date: 21.08.2023

Review date: 30.09.2023

Գ.Թ. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

ՀՀ-ում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրվում է անկայունությամբ, տնտեսության, գիտության և կրթության ոլորտում անբավարար ներդրումներով և բնակչության ցածր կենսամակարդակով: Վերջինս ավելի է սրում իրավիճակն ինչպես աշխատաշուկայում, այնպես էլ աշխատանքային միգրացիայի ոլորտում ճգնաժամի պայմաններում: Դրան զուգահեռ, անհրաժեշտ է սոցիալական և աշխատանքային հարաբերությունների դեֆորմացիայի նվազեցում (աշխատանքի մոտիվացիայի բարձրացում, աշխատողների սոցիալական երաշխիքների և իրավական պաշտպանության առկայություն, աշխատողների որակավորման բարձրացում), որը բերում է աշխատուժի շահագործման հնարավորության նվազեցում, մասնավորապես՝ ցածր աշխատավարձի, աշխատանքի պաշտպանության պահանջներին ու նորմերին չհամապատասխանելու և դրա օգտագործման պատճառով: Կարևոր է ուսումնասիրել գործազուրկների, գործազրույթյան դինամիկայի տնտեսական վերելքների և անկումների ժամանակաշրջաններում, ինչպես նաև օգտագործել այդ ցուցանիշները գործազրկության մակարդակը կանխատեսելու, բիզնես ցիկլերին հետևելու համար: Ավելին, գործազրկության հոսքերի վերլուծությունն աշխատաշուկայի այլ ցուցանիշների հետ միասին կարող է օգնել հասկանալու աշխատաշուկայի իրավիճակի պատճառները և նախապատրաստել քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ: Գործազրկության մակարդակի տարանջատներն ավելի ամբողջական ընկալելու համար կարևոր է գնահատել անցման մակարդակի տարանջատները՝ զբաղվածությունից գործազրկությանը և հակառակը:

Հողվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում գործազրույթյան առանձնահատկությունները Covid 19 պայմաններում, որը կարող է նպաստել աշխատաշուկային հավասարակշռության ապահովման համար առաջարկությունների ընդունմանը: Ուսումնասիրության համար տեսամեթոդական հիմք են մակրո-մակարդակում առնչվող աշխատությունները, գիտատեղիի հոդվածները, վիճակագրական հրատարակումները: Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել են ուսումնասիրության, վերլուծության և սինթեզի արդյունքները:

Առանցքային բառեր. ճգնաժամային իրավիճակ, աշխատանքային ռեսուրս, աշխատուժ, աշխատաշուկա, գործազուրկ, պաշտոնական գործազուրկ, գործազրկության մակարդակ:

Աշխատաշուկայի բոլոր մասնակիցների համար կարևոր է ընկալել առկա գլոբալ և ազգային մարտահրավերները և կառուցվածքային խնդիրները, որպեսզի ժամանակին ճիշտ որոշումներ կայացնեն ճգնաժամերը հաղթահարելուն և աշխարհի ամենազարգացած երկրներին միանալու նպատակին հասնելու ճանապարհին: Ժամանակակից աշխարհում աննախադեպ տեխնոլոգիական բեկումներով, հաճախակի ճգնաժամերի առակայության պայմաններում գործազրկությունը գործնականում չի նվազում, իսկ որոշ երկրներում և տարածաշրջաններում կմնա շատ բարձր:

Գործազուրկները սահմանվում են որպես աշխատունակ տարիքի բոլոր անձինք, ովքեր գործազուրկ են եղել, որոշակի վերջին ժամանակահատվածում աշխատանք փնտրելու համար գործողություն են իրականացրել և այժմ հասանելի են աշխատանքի ընդունվելու համար [1]:

Երկրում գործազրկության ընդհանուր մակարդակն աշխատուժի չօգտագործված առաջարկի խիստ պահանջված չափանիշ է: Աշխատուժի մասնակցության ցուցանիշի և զբաղվածություն-բնակչության հարաբերակցության հետ միասին գործազրկությունը տնտեսական ակտիվության և աշխատաշուկայի կարգավիճակի ամենալայն հասանելի չափումն է այն երկրներում, որոնք կանոնավոր կերպով կետրոնացվում են աշխատուժի մասին տեղեկատվություն:

Գործազրկության մակարդակը բխում է ընդհանուր աշխատուժից, ներառյալ զինվորական անձնակազմը: Մեթոդաբանության մանրամասն քննարկման տեղեկատվական աղբյուր է հանդիսանում Ֆ. Լեպերի աշխատությունը [2]:

Բնակչության որոշակի խմբերի շրջանում, առավել ևս ճգնաժամային իրավիճակներում գործազրկության, զբաղվածության վերաբերյալ տվյալները՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի, արդյունաբերության կամ մարզի, թույլ են տալիս բացահայտել գործազրկությունից առավել տուժած աշխատողները և ոլորտները, ավելի լավ հասկանալ գործազուրկ բնակչության կազմը, հետևաբար, պատշաճ կերպով նպատակաուղղել գործազրկության հաղթահարման, զբաղվածության ավելացման քաղաքականությանը: Գիտակցելով անգործության գինը՝ աշխարհի կառավարություններն առաջին պլան են մղում երիտասարդության գործազրկությունը և փորձում մշակել համապատասխան քաղաքականություն և ծրագրեր [1]:

Հիմնվելով հրապարակված հաշվետվությունների վրա [4], կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համաճարակի պայմաններում 2020-2021թթ.-ին 15+ տարիքային սահմանում գործազուրկների մասով 2021թ-ին 2020 թ-ի համեմատությամբ գործազուրկների թվաքանակը նվազել է 35.1 հազ-ով մոտ 15 %-ով աշխատուժի 0.1% աճի պայմաններում: Հիմնական գործազուրկները 25-34 տարիքում են, դրանց տեսակարար կշիռն ընդհանուր գործազուրկներում 2021 թ-ին կազմել է 26.8%, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 2.6 տոկոսային կետով: 2020-2021թթ.-ին գործազուրկների 97% կազմում է՝ 15-64 տարիքը: Տարիքային կազմով, գործազուրկների թվի առավելագույն նվազում 2021թ-ին 2020թ-ի հետ համեմատած նկատվել է երիտասարդ տարիքում՝ 25-34 տարիքային սահմանում 7.3 հազ-ով, հարաբերական մեծությամբ 12%-ով, ինչպես նաև 15-24 տարիքային սահմանում 5.6 հազ-ով հարաբերական մեծությամբ 15.5%-ով, իսկ գործազուրկների թվի ավելացում տեղի է ունեցել, ինչպես նաև մինչ կենսաթոշակային տարիք (55-64 տարեկան) մարդկանց շրջանում 5.3 հազ-ով հարաբերական մեծությամբ 14.4%-ով և 75 տարեկանից բարձր սահմանում: Այնուամենայնիվ, վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021 թ.-ի վերջին 55-64 տարեկան գործազուրկներն ամենաշատն են տուժել համաճարակի հետ կապված սահմանափակող միջոցներից: Տարիքային կազմով 2021-2020թթ.-ին ամենաբարձր տեսակարար կշիռն ունեցել են 25-34 տարիքային սահմանում գործազուրկները համապատասխանաբար 26.8% և 25.9%, ակնհայտ է, որ 2021թ-ին դրանց տեսակարար կշիռն ավելացել է 0.9 տոկոսային կետով: 25-34 տարիքային խմբում գործազուրկները շարունակում են բարձր մնալ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում: Հենց այս տարիքում է տեղի ունենում ինտենսիվ աշխատանքի որոնում, քանի որ երիտասարդներն առաջին անգամ են մտնում աշխատաշուկա: Այս խումբը, համեմատած մյուսների հետ, հաճախ փոխում է աշխատանքը, քանի որ փնտրում է իր համար ամենահարմար տարբերակը: 2021-2020թթ.-ին 15-24 տարիքային սահմանում գործազուրկների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 15.2% և 15.3%:

Մեր երկրում երիտասարդների շրջանում գործազուրկներն ավելի շատ են տղաների դեպքում, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր գործազուրկներում 2021-2020թթ.-ին 25-34 տարիքային սահմանում կազմել է 27% և 30.1%, կանանց շրջանում 23.4% և 25%, արձանագրելով դրանց տեսակարար կշիռների աճ, իսկ 15-24 տարիքային սահմանում տղաների տեսակարար կշիռը կազմել է 15.8% և 15%, կանանցը՝ 14.6% և 15%: Արտագաղթի ցուցանիշները չեն ներկայացվում տարիքային կազմով, սակայն, հաշվի առնելով այն միտումը, որ ամբողջ աշխարհում արտագաղթում են երիտասարդները և աշխատունակ բնակչությունը, կարելի է ենթադրել, որ երկու գործոններն էլ նպաստել են երիտասարդների թվի կրճատմանը:

Սեռային առումով, 2021թ-ին գործազուրկների 55.4% կազմում են տղաները, որը 1.4 տոկոսային կետով ցածր է 2020թ.-ի համեմատ, իսկ կանանց մոտ ավելացել է 2.5 տոկոսային կետով կազմելով 45.6%: Տղամարդիկ գործազուրկներում ավելի շատ են բոլոր տարիքային խմբերում, քան կանայք, բացառությամբ 2021թ-ի 45-54 տարեկան տարիքային խմբում:

Տարածքային առումով՝ 2021թ-ին գործազուրկների 76% գտնվել է քաղաքում, որը 3 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը, ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում հիմնական գործազուրկները 25-34 տարիքային խումբն է: Այդ տարիքի գործազուրկ-

ների տեսակարար կշիռը քաղաքում մնացել է անփոփոխ 24%, իսկ գյուղում աճել է 5 տոկոսային կետով կազմելով 35%:

2018-2021թթ-ին 15-74 տարիքային մակարդակում գործազուրկների դինամիկան ունեցել է նվազման միտում, բացարձակ գումարով միջին տարեկան գումարը կազմել է 15.4 հազ, իսկ հարաբերական մեծությամբ մոտ 2.1%: 2021թ-ին 2018թ-ի հետ համեմատած գործազուրկները նվազել են 46.4 հազ-ով, հարաբերական մեծությամբ 18.9 %, այն դեպքում, երբ աշխատուժը նվազել է 2.2%: 2019թ-ի հետ համեմատած 2020թ-ին գործազուրկների թիվը նվազել է 2.6 %-ով, իսկ 2021թ-ին նախորդ տարվա հետ համեմատած նվազել է 15%-ով, հետևաբար ըստ պաշտոնական տվյալների համաճարակի պայմաններում ՀՀ-ում գործազուրկների թիվը հատկապես 2021թ-ին նվազել է: Սեռային առումով կին գործազուրկների դինամիկան ունեցել է նվազման միտում, նման միտում է ունեցել տղամարդ գործազուրկների դինամիկան, բացառությամբ 2020թ-ին արձանագրելով 3.9%-ով աճ 2019թ-ի հետ համեմատած: 2019թ-ի հետ համեմատած 2020-2021թթ-ին կին գործազուրկների թիվը նվազել է համապատասխանաբար 10.1%-ով և 12.6%-ով, այն դեպքում, երբ ընդհանուր գործազուրկների թիվը համապատասխանաբար նվազել է 2.6%-ով և 15%-ով: Բնակավայրի առումով, 2021թ-ին 2018թ-ի հետ համեմատած, ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում գործազուրկների քանակը նվազել է բացարձակ գումարով համապատասխանաբար 29.8 հազ-ով, և 16.5 հազ-ով, իսկ հարաբերական մեծությամբ՝ 16.4%-ով և 25.6%-ով: Կառուցվածքային առումով քաղաքային գործազուրկների տեսակարար կշիռն ընդհանուր գործազուրկներում 2018-2021թթ-ին կազմել է 73.7-75.9 %, սակայն 2021 թ-ին 2018թ-ի հետ համեմատած ավելացել է դրանց տեսակարար կշիռը 2.2 տոկոսային կետով կազմելով 75.9%: 2020-2021թթ-ին գյուղական բնակավայրերում գործազուրկների թիվը նվազել է համապատասխանաբար 7%-ով և 23%-ով, ինչը գերազանցում է այդ ժամանակահատվածում ընդհանուր գործազուրկների նվազման տեմպը համապատասխանաբար 2.6 և 1.5 անգամ [4]:

2020-2021թթ-ին 15+ տարիքային խմբի գործազուրկների հիմնական մասը կազմում են միջին կրթություն ունեցողները, որոնց տեսակար կշիռն ընդհանուր գործազուրկներում 2021թ-ին նվազել է 2 տոկոսային կետով և կազմել է 68 %, այն դեպքում երբ այդ կարգավիճակի գործազուրկների թիվը հարաբերական մեծությամբ նվազել է 13.1%-ով: 2021թ-ին 2020թ-ի հետ համեմատած բարձր կրթություն ունեցողների տեսակարար կշիռը 2 տոկոսային կետով ավելացել է, և կազմել 30%, այն դեպքում, երբ դրանց թիվը բացարձակ գումարով նվազել է 6.7 հազ-ով, հարաբերական մեծությամբ 10%-ով: 2021թ-ին 20-34 տարիքում գործազուրկների 45%-ը ունեն բարձր կրթական մակարդակ, որը նախորդ տարվա հետ համեմատած ավելացել է 9 տոկոսային կետով, իսկ միջին կրթական մակարդակ ունեցողներինը նվազել է 6 տոկոսային կետով, կազմելով 53%: 2021թ-ին 35-64 տարիքային սահմանում գործազուրկների 76.4% կազմել են միջին կրթություն ունեցողները և դրանց տեսակար կշիռն ավելացել է մոտ 5.1 տոկոսային կետով նախորդ տարվա հետ համեմատած այն դեպքում, երբ դրանց թվաքանակը հարաբերական մեծությամբ նվազել է 10.5%-ով: Բարձր կրթություն ունեցողների տեսակարար կշիռը նվազել է մոտ 3.3 տոկոսային կետով և կազմել է 21.1%, միաժամանակ դրանց թվաքանակը նվազել է 27%-ով: 2021թ-ին սեռային առումով 20-34 տարիքում բարձր կրթությունով գործազուրկ տղամարդկանց տեսակարար կշիռն ավելացել է 8 տոկոսային կետով կազմելով 34%, նույն միտումն է ունեցել կանանց մոտ և դրանց տեսակարար կշիռն ավելացել է 7 տոկոսային կետով կազմելով 58% [4]:

2018-2020թթ-ին բարձրագույն, հետբուհական կրթությամբ գործազուրկները բացարձակ գումարով ունեցել են աճի միտում, 2021թ-ին նվազել է նախորդ տարվա հետ համեմատած մոտ 6.7 հազ-ով և կազմել 59.6 հազ, ինչը մոտ է 2018թ-ի ցուցանիշին: Համադրելիության առումով 2019թ-ին բարձրագույն, հետբուհական գործազուրկները նախորդ տարվա հետ համեմատած ավելացել է 4.9 հազ-ով: 2021թ-ին 2020թ-ի հետ համեմատած բացարձակ գումարով նվազել են բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցող գործազուրկները, սակայն կառուցվածքային

առումով գործազուրկներում բարձրագույն, հետբուհական գործազուրկների տեսակարար կշիռն ունեցել է աճի միտում՝ 2021թ-ին կազմել է մոտ 30%, որը 1.7 տոկոսային կետով գերազանցում է 2020թ-ի ցուցանիշը, իսկ 2019թ. ցուցանիշը 2018թ-ի հետ համեմատած գերազանցում է 3.2 տոկոսային կետով: Միջին մասնագիտական, նախամասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների քանակն ունեցել է նվազման միտում և դրանց տեսակարար կշիռն ընդհանուր գործազուրկներում 2021թ-ին կազմել է 25.6%, ինչը 2.8 տոկոսային կետով զիջում է 2018թ-ի ցուցանիշը: Միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող գործազուրկների թիվն ունեցել է նվազման միտում, սակայն գործազուրկների 41-42 % ձևավորում է դրանց բանակը: 2021 թ-ին գործազուրկների մոտ 55.6% (2020թ-ին կազմել է 54.3%) բարձրագույն, հետբուհական և միջին մասնագիտական, նախամասնագիտական կրթություն ունեցողներն են: Վերջինս ունեցել է աճի միտում՝ 2018թ-ի հետ համեմատած բարձր է 3 տոկոսային կետով [4]: Հետևաբար երկրում գործազրկությունն ավելի կիրթ է դարձել: Դրա համար կարևոր է ոչ միայն պայմանների ստեղծումը սովորելու համար, այլև սերմանելու շարունակական կրթության կարևորությունը:

2018-2021թթ-ին գործազրկության մակարդակը կայուն նվազել է և 2021 թ-ին կազմել է 15% (գործազուրկների թվի և աշխատուժի համապատասխանաբար 18.9% և 0.5% նվազման պայմաններում), որը 4 տոկոսային կետով ցածր է 2018թ-ի ցուցանիշից, միջին տարեկան նվազումը կազմել է 1.3%, հետևաբար գործազուրկների քանակի 1 % նվազման արդյունքում գործազրկության մակարդակը նվազել է 0.6 %-ով: Գործազրկության էական նվազում արձանագրվել է 2021թ-ին, որը 2019-2020թթ-ի ցուցանիշը զիջում է մոտ 2.8 տոկոսային կետով [4]: Գործազրկության կրճատում տեղի է ունեցել նոր աշխատատեղերի ստեղծման, աշխատուժի քանակի նվազման պայմաններում: Նոր աշխատատեղերի ավելացմանը նպաստել է սովորից աշխատատեղերի դուրս բերումը, վարչարարության ակտիվացումը, աշխատուժի քանակի նվազումը, վերջինիս նպաստող գործոններից է արտագաղթը: Երբ ցուցանիշի արժեքը բարձր է, երկիրը կարող է հայտնվել անկման մեջ (կամ ավելի վատ), տնտեսությունը կարող է վատառողջ լինել:

Ուսումնասիրության ընթացքում մեր կողմից հաշվարկվել և վերլուծվել է գործազրկության դինամիկան 15-24 և 25-34 տարիքային սահմաններում: 2021թ-ին 2011թ.-ի հետ համեմատ 15-24 տարիքային սահմանում գործազուրկների թիվը կրճատվել է 58%-ով, այն դեպքում, երբ այդ տարիքի աշխատուժը նվազել է 46.3%-ով, որի արդյունքում 15-24 տարիքային սահմանում գործազուրկների և այդ տարիքի աշխատուժի հարաբերակցությունը կայուն նվազել է 2019-2021թթ-ին 32.6%-ից 30.4% (էական նվազում արձանագրվել է 2021թ-ին 1.8 տոկոսային կետով, 2020թ-ին 0.4 տոկոսային կետով), այդ խմբի գործազուրկների 29.3% նվազման և աշխատուժի 24.2% նվազման պայմաններում: 15-24 տարիքային սահմանում գործազուրկների և ընդհանուր գործազուրկների հարաբերակցությունը 2019թ-ի հետ համեմատ 2020-2021թթ-ին նվազել է մոտ 2.5 տոկոսային կետով 2021թթ.-ին կազմելով 15.2%, այն դեպքում երբ այդ ժամանակահատվածում այդ խմբի գործազուրկները նվազել է 29.3%-ով, իսկ ընդհանուր գործազուրկները՝ 17.1%-ով¹:

2011թ-ի հետ համեմատ 2021թ-ին 15-24 տարիքային սահմանում աշխատանքային ռեսուրսների 32% և այդ գործազուրկների թվի 58%-ով նվազման պայմաններում այդ տարիքի գործազուրկների և այդ տարիքի աշխատանքային ռեսուրսի հարաբերակցությունը 14.5%-ից նվազեց 8.8%: Այդ հարաբերակցությունը կայուն նվազել է 2019-2021թթ-ին 12.2%-ից 8.8%, այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածում այդ խմբի գործազուրկները նվազել են 29.3%-ով, իսկ աշխատանքային ռեսուրսները 2.7%-ով: 15-24 տարիքային սահմանում գործազուրկների և

¹Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից հիմք ընդունելով Աշխատանքի շուկան Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2020-2022թթ.-ի հրապարակումների փվյալները


այդ տարիքի աշխատանքային ռեսուրսի հարաբերակցության միջին արժեքը 2011-2013թթ-ին կազմել է 13.3%, 2014-2017թթ-ին 13.2%, 2019-2021թթ-ին՝ 10.5%²:

25-34 տարիքային սահմանում գործազուրկների դինամիկան 2014-2017թթ-ին դրսևորել է վեր ի վայր բնույթ, իսկ 2019-2021թթ-ին կայուն նվազել է: 2021թ-ին 2011թ.-ի հետ համեմատ այդ գործազուրկների թիվը կրճատվել է 15%-ով, այն դեպքում, երբ այդ տարիքի աշխատուժը նվազել է 0.5%-ով, որի արդյունքում 25-34 տարիքային սահմանում գործազուրկների և այդ տարիքի աշխատուժի հարաբերակցությունը 20.9%-ից նվազել՝ 17.7%:

Այդ հարաբերակցությունը 2020թ-ին 2019թ-ի հետ համեմատ ավելացել է 2.7 տոկոսային կետով, կազմելով 21.4%, իսկ 2021թ-ին նախորդ տարվա հետ համեմատ նվազել է 3.7 տոկոսային կետով: 2011-2021 թթ.-ին 25-34 տարիքային սահմանում գործազուրկների և ընդհանուր գործազուրկների հարաբերակցության դինամիկան հիմնականում ունեցել է աճի միտում: Այդ հարաբերակցությունը 2019-2021թթ-ին աճել է՝ 25.6%-ից 26.8%, այն դեպքում, երբ այդ խմբի գործազուրկները նվազել են 12.8%-ով, իսկ ընդհանուր գործազուրկները՝ 17.1%-ով:

25-34 տարիքային սահմանում գործազուրկների և այդ տարիքի աշխատանքային ռեսուրսի հարաբերակցության դինամիկան կայուն նվազել է 2011-2013թթ-ին, 2014-2021 թ-ին դրսևորել է վեր ի վայր բնույթ, մասնավորապես 2021թ-ին 2018թ-ի հետ համեմատ աճել է 1.2 տոկոսային կետով, կազմելով 14.5%, իսկ 2021թ-ին նվազել է կազմելով 12.4%: Այնուամենայնիվ, 2021թ-ին 2011թ-ի հետ համեմատաձ այդ հարաբերակցությունը նվազել է 2.6 տոկոսային կետով կազմելով 12.4%, այն դեպքում, երբ գործազուրկները նվազել են 18.6%, իսկ աշխատանքային ռեսուրսներն աճել՝ 1.4%-ով: Այդ տարիքային սահմանում գործազուրկների և աշխատանքային ռեսուրսի հարաբերակցության միջին արժեքը 2011-2013թթ-ին կազմել է 14.2%, 2014-2017թթ-ին՝ 14.5%, 2019-2021թթ-ին՝ 13.4% (գծ. 1):

Գծ. 1. 15-24 և 25-34 տարիքային սահմանում գործազրկության դինամիկան 2011-2021թթ-ին³



Երիտասարդների գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրի համար, որտեղ գործազուրկ երիտասարդների և գործազուրկ չափահասների հարաբերակցությունը մոտ է մեկին, կարելի է եզրակացնել, որ գործազրկության խնդիրն ազդում է ողջ երկրի վրա, և ոչ

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից հիմք ընդունելով Աշխատանքի շուկան Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2012-2022թթ.-ի հրատարակումների փյուլները

³ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից հիմք ընդունելով Աշխատանքի շուկան Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2012-2022թթ.-ի հրատարակումների փյուլները


միայն երիտասարդության վրա: Այնուամենայնիվ, երիտասարդների գործազրկության մակարդակը հակված է ավելի բարձր լինել, քան մեծահասակների մակարդակը:

Գործազուրկ կամ թերզբաղված երիտասարդներն ավելի քիչ հավանական է, որ արդյունավետորեն մասնակցեն ազգային զարգացմանը և իրացնեն իրենց քաղաքացիական իրավունքները: Որոշ դեպքերում այն առաջացնում է սոցիալական լարվածություն և հանգեցնում է մերժման գործող սոցիալ-տնտեսական համակարգի երիտասարդական միջավայրը: Ընկերության և երկրի երիտասարդության շրջանում տարածված գործազրկության և թերզբաղվածության պատճառով չի կարող նորամուծություններ անել և մրցակցային առավելություններ ստանալ մարդկային կապիտալում ներդրումների հիման վրա՝ խաթարելով ապագա հեռանկարները:

Միջազգայնորեն ընդունված աշխատունակ տարիքի (15-64 տարիք) գործազրկության մակարդակը 2021թ-ին 2020թ-ի համեմատությամբ նվազել է 2.7 տոկոսային կետով և կազմել է 15.9%: Համեմատաբար գործազրկության մակարդակի նվազում եղել է սեռային, բնակավայրի առումով, էական նվազել է տղամարդկանց առումով 3.4 տոկոսային կետով կազմելով 15.6%, ավելի քիչ նվազել է գյուղական բնակավայրում գործազրկության մակարդակը՝ մոտ 1.2 տոկոսային կետով և կազմել է 8.8% [4]: Եթե ավելի խորքային դիտենք, խնդիրը, ոչ թե գործազրկության, այլ կայուն եկամտի ապահովման հետ է կապված: Քանի որ կարող են լինել մարդիկ, ովքեր պաշտոնապես գրանցված են որպես գործազուրկ, սակայն արտերկրից էական օգնություն են ստանում կամ զբաղված են գյուղատնտեսությամբ: Հետևաբար նպատակը ոչ թե գործազրկության մակարդակի նվազումն է, այլ վերջնական թիրախն աղքատության ցուցանիշի կրճատումն է:


Բարձրագույն, հետբուհական, միջին մասնագիտական, նախամասնագիտական կրթությամբ գործազուրկության մակարդակը 2014-2017թթ-ին հիմնականում աճել է, իսկ Covid-19 պայմաններում, 2021թ.-ին 2019թ.-ի հետ համեմատ բարձրագույն, հետբուհական, գործազրկության մակարդակը նվազեց 1.6 տոկոսային կետով կազմելով 14%, իսկ միջին մասնագիտական, նախամասնագիտական գործազուրկության մակարդակը նվազել 4.2 տոկոսային կետով կազմելով 15.8%: Covid-19 պայմաններում գործազուրկության մակարդակի էական նվազում արձանագրել է միջնակարգ ընդհանուր կրթությամբ և հիմնական ընդհանուր, տարրական կրթությամբ գործազրկության մակարդակը [4]:

Մեր կողմից կատարված հաշվարկներից պարզվել է, որ բարձրագույն, հետբուհական կրթությամբ գործազուրկների և աշխատուժի հարաբերակցությունը 2014-2021 թթ-ին, բացառությամբ 2017թ-ին և 2020թ-ին ունեցել է նվազման միտում՝ 5.4%-ից նվազել է մինչև 4.6%, միջին մասնագիտական, նախամասնագիտական գործազուրկների և աշխատուժի հարաբերակցությունը վայրի վեր բնույթ է կրել և 2021 թ-ին 2014թ-ի հետ համեմատ նվազել է 0.3 տոկոսային կետով կազմելով 3.9%:



Գծ. 2. Մեկ փարուց ավելի գործազուրկների և աշխարուծի դինամիկան 2011-2021թթ-ին⁴

որ և փորձադիպարի, աշխարուծի հարաբերակցությունը 2011-2021թթ-ի դինամիկան ևս նախընտրելու նպատակով կազմվել է գծ. 2 և գծ. 3-ը:



Գծ. 3. Մեկ փարուց ավելի գործազուրկների և գործազուրկների, աշխարուծի հարաբերակցության դինամիկան 2011-2021թթ-ին⁴

2014-2017թթ-ին երկարաժամկետ գործազուրկների թիվը նվազել է հարաբերական մեծությամբ, այն կազմել է 17.1%, իսկ դրանց տեսակարար կշիռը գործազուրկներում 2014թ-ի հետ համեմատ նվազել է 4.3 տոկոսային կետով, կազմելով 55.8 %, իսկ աշխատուծում՝ 0.8 տոկոսային կետով կազմելով 9.9 %: 2018-2021թթ-ին 2018թ-ի հետ համեմատ երկարաժամկետ գործազուրկների թիվը բացարձակ գումարով նվազել է 8.6 հազ-ով հարաբերական մեծությամբ 6.7%-ով, սակայն դրանց տեսակարար կշիռը գործազուրկներում 2018թ-ի հետ համեմատ ավելացել է 7.7 տոկոսային կետով կազմելով 59.6 %,, իսկ աշխատուծում՝ 0.6 տոկոսային կետով կազմելով 9.2 %: Համաճարակի պայմաններում 2020 - 2021թթ-ին երկարաժամկետ գործազուրկների թիվը (նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճը կազմել է 7.3% և 2.8%), գործազուրկներում դրանց տեսակարար կշիռը (նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է 4.6 և 10.8 տոկոսային կետով), գործազուրկներ ու աշխատուծ հարաբերակցությունը (նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է 0.8 և 0.3 տոկոսային կետով) ունեցել է աճի միտում: Սովորաբար ընդունում են, որ որքան գործազրկության միջին տևողության արժեքը մոտ է

⁴ Աղյուսակի ցուցանիշները հաշվարկվել են Աշխարանքի շուկան Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2012-2022թթ.-ի հրապարակումների հիման վրա

գրոյին, այնքան ավելի արդյունավետ է գործում աշխատաշուկան⁵: Գործազրկության կարճ ժամանակահատվածներն ավելի քիչ մտահոգիչ են, հատկապես, երբ գործազուրկները ծածկված են գործազրկության ապահովագրությամբ կամ աջակցության համանման ձևերով, կարճաժամկետ գործազրկությունը կարող է նույնիսկ ցանկալի համարվել, երբ գործազուրկները ժամանակ ունեն օպտիմալ աշխատանք փնտրելու:

2018-2021թթ-ին մարզային մակարդակով գործազրկության տարբերությունը պայմանավորված է տարբեր գործոններով, այդ թվում՝ կլիմայական պայմանների տարբերություններով, ապրանքների և ծառայությունների արտադրության զարգացման մակարդակով, բնակչության թվով, կրթության մակարդակով: Գործազրկության ամենաբարձր մակարդակը, որը ունեցել է հիմնականում նվազման միտում գրանցվել է Երևանում 21.6%, որը 7.5 տոկոսային կետով զիջում է 2018թ.-ի ցուցանիշը: Հարկ է նշել, որ այնուամենայնիվ Երևանում առկա է ապրանքների և ծառայությունների լայն տեսականի, այդ թվում՝ բարձր տեխնոլոգիաներով, արտադրության զարգացածվածություն, բնակչության կրթական բարձր մակարդակ, ինչի արդյունքում բարձր որակավորում ունեցող կադրերի պակաս չի զգացվում: Երկրորդ հորիզոնականը գործազրկության բարձր մակարդակով աչքի է ընկել Լոռին, որտեղ այդ ցուցանիշը բացառությամբ 2021թ-ին ունեցել է աճի միտում: Ամենացածր գործազրկության մակարդակ արձանագրվել է Գեղարքունիքում, որն ունեցել է վայի և վեր բնույթ և 2021թ-ին 5.6 տոկոսային կետով ավելի ցածր է եղել 2018թ-ի ցուցանիշից: Համաճարակի պայմաններում 2020-2021թթ գործազրկության մակարդակը նվազել է Արարատում, Կոտայքում, Շիրակում, Սյունիքում, Վայոց ձորում, Տավուշում, իսկ մնացած մարզերում և ք. Երևանում 2020թ-ին նվազել է, իսկ 2021թ-ին աճել:

2018-2020թթ-ին աշխատանք առաջարկողների դինամիկան աճել է (2020թ-ին նախորդ տարվա հետ համեմատ ավելացել է 3.5%-ով), իսկ 2021թ-ին նվազել է, սակայն 2021թ-ին 2018թ-ի համեմատ գերազանցում է 4713-ով կամ 5.7%, իսկ ամենաբարձր արդյունք ապահովված 2016թ-ի ցուցանիշին զիջում է 9389-ով [4]: Պաշտոնապես գրանցված գործազրկության կրճատումն ուղեկցվում է աշխատանք փնտրողների թվաքանակի աճով: Նման հակասությունն արդյունք է նրան, որ պաշտոնական վիճակագրությունը հաշվառում է մի կողմից վերապատրաստվող գործազուրկներին և մյուս կողմից աշխատանքային թափուր տեղերը: Այն այսպես կոչված «թափուր աշխատատեղերի» մասին է:

2018-2021թթ.-ին աշխատանք փնտրողների կազմում գործազուրկների տեսակարար կշիռն ունեցել է նվազման միտում 79 %-ից մինչև 67%, 2020-2021թթ.-ին դրանց տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 69% և 67%: 2018-2021թթ.-ին ոչ պաշտոնական և պաշտոնական գործազրկության միջև առկա է էական տարբերություն՝ սակայն դրա դինամիկան ունեցել է նվազման միտում: 2018թ-ին ոչ պաշտոնական և պաշտոնական գործազրկության հարաբերակցությունը կազմել է 3.7, իսկ 2021 թ-ին՝ 3.4: Նման տարբերությանը կարող է նպաստել.

- նյութական շահագրգռվածության բացակայումը: Այն գործազուրկը, ով ունի համեմատաբար բարձր եկամուտով աշխատանք գտնելու մեծ հնարավորություն շահագրգռված չէ աշխատանքի կորստի սոցիալական նպաստներով՝ ցածր չափի, կարճ տևողության և նշանակման խիստ չափանիշների պատճառով:
- Ինքնուրույն աշխատանք գտնելու ուղղվածությունը տարբեր միջոցներով, այդ թվում գովազդի, ինտերնետի, ընկերների միջոցով:
- Գրանցման և հետագա ընթացակարգերի հնարավոր դժվարությունները՝ բացասաբար վերաբերմունք պետական կառույցներին, վախ բյուրոկրատիայից, զբաղվածության ծառայություններում գրանցվելիս որոշակի պահանջների կատարման անհրաժեշտություն և այլն:

⁵ Հաշվարկները կատարվել են Աշխատանքի շուկան Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2012-2022թթ.-ի հրապարակումների հիման վրա

- Մատուցվող ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը: Զբաղվածության կենտրոններում բացակայում են աշխատանքի միասնական չափանիշների կատարելագործման անհրաժեշտությունն ազդում է մատուցվող ծառայությունների որակի վրա:
- Տեղեկատվության բացակայությունը, որը հանգեցնում է քաղաքացիների անտեղյակությանն աշխատաշուկայում պետական աջակցության հնարավորությունների մասին: 2016-2021թթ-ին, բացառությամբ 2018թ.-ին, պաշտոնական գործազուրկների մեջ գնալով նվազել է 16-29 տարեկան երիտասարդների տեսակարար կշիռը: Վերջինս 23.7 %-ից նվազել է մինչև 14%: Բարձր որակավորում ունեցող մասնագետները նախընտրում են ինքնուրույն աշխատանք փնտրել, հետևաբար գրանցված գործազուրկների կառուցվածքում առավել տարածված են դպրոցական կրթություն ունեցող անձինք:

2018-2021թթ-ին պաշտոնական գործազուրկների և աշխատուժի հարաբերակցությունը բացառությամբ 2020թ-ին (4.7%), ունեցել է նվազման միտում: 2021թ.-ին 2018թ.-ի հետ համեմատ այն նվազել է 0.4 տոկոսային կետով կազմելով 4.5%⁶: 2021 թ.-ին իրական գործազուրկների ընդամենը 29%-ն է դիմել գործակալություն՝ պետական աջակցության նպատակով: Նման ցածր մակարդակը պայմանավորող գործոններից են զբաղվածության պետական ծրագրերի թերակատարումը, աջակցության ոչ էական արդյունքները կապված գործակալության միջոցով աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորման հետ: Հարկ է նշել, որ գրանցված գործազուրկության մակարդակի փոփոխությունները, որոնք սովորաբար ավելի են ուշադրության սևեռաման արժանանում, քան ընդհանուր ցուցանիշները, կապված են աշխատաշուկայում իրավիճակի լավացման հետ: Գրանցված գործազուրկության մակարդակի փոփոխությունների վրա իր ազդեցությունն է ունենում գործազուրկության նպաստների փոփոխությունները, դրանց ստացման հասանելիության ընդլայնումը: Գործազուրկության նպաստների ցածր մակարդակը նույնպես աշխատաշուկայի բնորոշ հատկանիշներից է:

Աշխատուժի պահանջարկը 2011-2015թթ-ին, բացառությամբ 2013թ-ին ունցել է աճի միտում, 2016թ-ին նվազել է, այնուհետև դրսևորել է աճի միտում մինչև 2019թ-ը: 2021թ-ին աշխատուժի պահանջարկն աճել է, որը գերազանցել է 2011թ-ին ցուցանիշը 1022-ով կամ 86%-ով, սակայն զիջում է 2018թ-ի ցուցանիշը 960-ով, հարաբերական մեծությամբ 14%-ով: 2017-2021թթ-ին կառուցվածքային առումով աշխատուժի պահանջարկում միջին հաշվով 42% կազմում են բանվորները, մասնագետները՝ 27% [4]: Դրանց մեջ ամենամեծ խումբը որակավորում չպահանջող բանվորական աշխատատեղերն են: Ակնհայտ է, որ հիմնականում թափուր մնում ցածր աշխատավարձով աշխատատեղերը:

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ առկա է մասնագիտությունների և հմտությունների զգալի անհավասարակշռություն աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև:

Աշխատանքի շուկայում զբաղվածության լարվածությունը բնութագրելու համար նշենք, 2016-2019թթ-ին թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածության դինամիկան ունեցել է նվազման միտում՝ 75-ից նվազել է մինչև 24 մարդ, որի արդյունքում աշխատանքի շուկայի լարվածությունը թուլացել է, 2021թ-ին նվազել է 2020թ-ի հետ համեմատ, սակայն 2019թ-ի ցուցանիշը գերազանցել է 15-ով: 2019թ-ի հետ համեմատ 2021թ-ին աշխատանքի շուկայի լարվածությունը մեծացել է⁷:

Երկրում գործազուրկության մակարդակն աշխատուժի չօգտագործված առաջարկի պահանջված չափանիշ է: Այն տնտեսական ակտիվության և աշխատաշուկայի կարգավիճակի ամենալայն հասանելի չափումն է երկրում, որը կանոնավոր կերպով կետրոնացվում է աշխատուժի մասին տեղեկատվություն:

Covid 19 պայմաններում 2019թթ.-ի հետ համեմատ 2020թ-ին գործազուրկների թիվը նվազել է 2.6 %-ով, իսկ 2021թ-ին նախորդ տարվա հետ համեմատ նվազել է 15%-ով, սեռային առումով 2019թ-ի հետ համեմատ 2020-2021թթ-ին կին գործազուրկների թիվը նվազել է համա-

⁶ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից

⁷ Աշխատանքի շուկայի Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2012-2022թթ.-ի հրապարակումների տվյալներ

պատասխանաբար 10.1%-ով և 12.6%-ով, այն դեպքում: 2020-2021թթ.-ին գյուղական բնակավայրերում գործազուրկների թիվը նվազել է համապատասխանաբար 7%-ով և 23%-ով, ինչը գերազազում է այդ ժամանակահատվածում ընդհանուր գործազուրկների նվազման տեմպը համապատասխանաբար 2.6 և 1.5 անգամ:

Այսպիսով կատարված վերլուծությունների արդյունքում կարող ենք փաստել, որ երկրում գործազրկությունն ավելի կիրթ է դարձել: Դրա համար կարևոր է ոչ միայն պայմանների ստեղծումը սովորելու համար, այլև սերմանելու շարունակական կրթության կարևորությունը:

15-24 տարիքային սահմանում գործազուրկների և այդ տարիքի աշխատուժի հարաբերակցությունը, գործազուրկների և ընդհանուր գործազուրկների հարաբերակցությունը և գործազուրկների և այդ տարիքի աշխատանքային ռեսուրսի հարաբերակցությունը կայուն նվազել է 2019-2021թթ.-ին: 25-34 տարիքային սահմանում գործազուրկների և այդ տարիքի աշխատուժի հարաբերակցությունը հարաբերակցությունը ևս կայուն նվազման միտում դրսևորել է:

Երկրի երիտասարդության շրջանում տարածված գործազրկությունը և թերզբաղվածությունը չի կարող նպաստել նորամուծություններին և մարդկային կապիտալում ներդրումներով մրցակցային առավելությունների ստանալուն, որը՝ խաթարում է ապագա հեռանկարները:

Համաճարակի պայմաններում 2020 - 2021թթ.-ին երկարաժամկետ գործազուրկների թիվը (նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճը կազմել է 7.3% և 2.8%), գործազուրկներում դրանց տեսակարար կշիռը (նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է 4.6 և 10.8 տոկոսային կետով), գործազուրկներ ու աշխատուժ հարաբերակցությունը (նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է 0.8 և 0.3 տոկոսային կետով) ունեցել է աճի միտում: Պաշտոնապես գրանցված գործազրկության կրճատումն ուղեկցվում է աշխատանք փնտրողների թվաքանակի աճով: Նման հակասությունն արդյունք է նրան, որ պաշտոնական վիճակագրությունը հաշվառում է մի կողմից վերապատրաստվող գործազուրկներին և մյուս կողմից աշխատանքային թափուր տեղերը: Այն այսպես կոչված «թափուր աշխատատեղերի» մասին է:

2017-2021թթ.-ին հիմնականում թափուր է մնում ցածր աշխատավարձով աշխատատեղերը: Միաժամանակ նման աշխատատեղերի մի մասը պաշտոնապես համարվում է «կրկնվող աշխատատեղ», քանի որ այդ աշխատատեղերի մասին գործատուն հաշվետու ժամանակաշրջանից առաջ նույնպես հայտարարել է: Նման աշխատատեղերը տևական ժամանակ սովորաբար չեն հետքըքրում գործազուրկներին: Հետևաբար առավել իրական պատկերացում ձևավորելու համար ցանկալի է առանձնացնել նման աշխատատեղերը, որովհետև պահանջարկ գրեթե չկա:

Ոչ պաշտոնական և պաշտոնական գործազրկության հարաբերակցությունը կազմել է 3.7 իսկ 2021 թ.-ին 3.4: Նման տարբերությանը կարող է նպաստել նյութական շահագրգռվածության բացակայումը, ինքնուրույն աշխատանք գտնելու ուղղվածությունը տարբեր միջոցներով, գրանցման և հետագա ընթացակարգերի հնարավոր դժվարությունները, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը, տեղեկատվության բացակայությունը:

Գործազրկության հիմնական պատճառները.

- արտադրության ավտոմատացումը, որը դիտարկվում է որպես տեխնիկական գործազրկություն: Նման պայմանում լուծումը ստեղծագործական մասնագիտություններով օժտված մարդկանց համար ավելի շատ աշխատատեղերի ստեղծումն է:
- Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի բարձրացումը: Որոշ գործատուներ ստիպված են կրճատել աշխատատեղերը կամ դիմել սովերային զբաղվածության, վերջինս բացասաբար կազդի տնտեսության վրա, մասնավորապես կնվազի բյուջե մուտքագրվող հարկային մուտքերը, կսահմանափակվի օրենքով նախատեսված սոցիալական և բժշկական ապահովագրությունը:
- Սեզոնային գործազրկությունը պայմանավորված աշխատուժի պահանջարկի կանխատեսելի սեզոնային տատանումներով: Սեզոնային գործազրկությունը կարող է առավել

տարածված է լինի շինարարության, զբոսաշրջությունը ու գյուղատնտեսական ոլորտներում:

Ամենահեռանկարային ոլորտներում՝ նորարարական, տեխնոլոգիական և գիտատարարդյունաբերության ընդլայնման, սեփական որակյալ կադրերով ու մասնագետներով ապահովելու առումով անհրաժեշտ է համապարփակ ծրագրեր: Այս համատեքստում պետք է տրամադրել ներդրողներին ենթակառուցվածքներ, հատուկ հնարավորություններ ընձեռվեն տեխնոպարկերին և տեխնոպոլիսների բնակիչներին: Միաժամանակ պետության դերն ավելի պետք է կարևորվի գիտական հատվածի արդիականացմամբ սեփական որակյալ կադրերի պատրաստման ընդլայնման գործում, նոր մասնագիտությունների գծով համալսարանների և ընկերությունների համագործակցության մեխանիզմի ամրապնդմամբ:

2018-2021թթ-ին գործազրկության մակարդակը կայուն նվազել է Covid-19 պայմաններում գործազրկության մակարդակի էական նվազում է արձանագրվել միջնակարգ ընդհանուր կրթությամբ և հիմնական ընդհանուր, տարրական կրթությամբ գործազրկության մակարդակում:

Գրականություն

1. Global Employment Trends for Youth: Special issue on the impact of the global economic crisis on youth (Ջենեվա, 2010). http://www.ilo.org/empelm/pubs/WCMS_143349/lang-en/index.htm(Մուտք 15.09.2023)
2. Lepper F., Comparable annual employment and unemployment estimates, https://www.ilo.org/global/statistics-and-databases/publications/WCMS_087893/lang-en/index.htm (Մուտք 14.06.2023)
3. Report and proposed resolution of the committee on work statistics 19. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_223719.pdf
4. **Աշխատանքի շուկան** Հայաստանում, վիճակագրական ժողովածուի 2021-2022թթ.-ի հրապարակումների տվյալները:

Г.Т. Манукян

КОНТУРЫ БЕЗРАБОТИЦЫ В КРИЗИСНЫХ СИТУАЦИЯХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Текущая социально-экономическая ситуация в Республике Армения характеризуется нестабильностью, недостаточными инвестициями в сферу экономики, науки и образования и низким уровнем жизни населения. Последнее усугубляет ситуацию как на рынке труда, так и в сфере трудовой миграции в условиях кризиса. Наряду с этим необходимо снизить деформацию социально-трудовых отношений, что приводит к уменьшению возможности эксплуатации рабочей силы, в частности, из-за низкой заработной платы, несоблюдения требований и норм охраны труда, и его использования. Важно изучить динамику безработных и безработицы в периоды экономических подъемов и спадов, а также использовать эти показатели для прогнозирования уровня безработицы, отслеживания деловых циклов. Кроме того, анализ потоков безработицы вместе с другими показателями рынка труда может помочь понять причины ситуации на рынке труда и подготовить политические рекомендации. Чтобы более полно понять изменение уровня безработицы, важно оценить изменение уровня перехода от занятости к безработице и наоборот.

Цель статьи – изучить особенности безработицы в Республике Армения в условиях Covid 19, что может способствовать принятию рекомендаций по обеспечению баланса рынка труда.

Теоретико-методологический основой исследования являются работы, относящиеся к макроуровню, статьи конференций, статистические публикации. Результаты исследования, анализа и обобщения были использованы для формирования выводов об основных выводах исследования.

Ключевые слова: кризисная ситуация, трудовые ресурсы, рабочая сила, рынок труда, безработные, официально безработные, уровень безработицы.

G.T. Manukyan

OUTLINES OF UNEMPLOYMENT IN CRISIS SITUATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

The current socio-economic situation in the Republic of Armenia is characterized by instability, insufficient investments in the field of economy, science and education and low living standards of the population. The latter aggravates the situation both in the labor market and in the field of labor migration in crisis conditions. Along with that, it is necessary to reduce the deformation of social and labor relations, which leads to the reduction of the possibility of exploitation of the labor force, in particular, due to low wages, non-compliance with labor protection requirements and norms, and its use. It is important to study the dynamics of the unemployed, unemployment in periods of economic ups and downs, as well as use these indicators to predict the unemployment rate, follow business cycles. Furthermore, the analysis of unemployment flows together with other labor market indicators can help to understand the causes of the labor market situation and prepare policy recommendations. To more fully understand the variation in the unemployment rate, it is important to estimate the variation in the transition rate from employment to unemployment and vice versa.

The purpose of the article is to study the characteristics of unemployment in the Republic of Armenia under the conditions of Covid 19, which can contribute to the adoption of recommendations for ensuring labor market balance.

The theoretical and methodological basis for the study is the works related to the macro level, conference articles, statistical publications. Findings from the study, analysis, and synthesis were used to draw conclusions about the main findings of the study.

Key words: crisis situation, labor resource, workforce, labor market, unemployed, officially unemployed, unemployment rate.

Մանուկյան Գրիգոր Թաթուլի – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ)

*Ներկայացման ամսաթիվը՝ 03.10.2023
Գրախոսման ամսաթիվը՝ 19.10.2023*

Վ.Ս. Բուկանիկյան, Ա.Ա. Տերտերյան

ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղետների ռիսկերի գնահատումը կատարվում է տարբեր մակարդակներում՝ այդ թվում տեղական: Սույն հոդվածը վերաբերում է տեղական մակարդակում աղետների ռիսկերի գնահատման մեթոդաբանությանն ու ՀՀ-ում դրա կիրառման օրինակներին: Մասնավորապես, հոդվածի հեղինակների կողմից առաջարկվում է համալրել տեղական մակարդակում ռիսկերի գնահատման գործիքակազմը, վերանայել քարտեզների կազմման մեթոդաբանությունն ու հատկապես ուժեղացնել ֆինասատրնյութական գնահատման գործիքակազմերը, որպեսզի հնարավոր լինի աղետների ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ կազմված աղետների ռիսկերի նվազեցման կամ կառավարման պլանները կյանքի կոչել և հստակ հաշվարկել ռիսկերի նվազեցման ֆինանսական ներդրումների ծավալները և ուղղությունները:

Առանցքային բառեր. աղետների ռիսկերի գնահատում, մեթոդաբանություն, համայնք, վրանգ, խոցելիություն, կարողություն, ազդեցության բուֆերային գոտի, ԳՏՀ քարտեզագրություն:

Հայաստանում, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ երկրներում, տեղական մակարդակում աղետների ռիսկերի գնահատման (ԱՌԳ) նպատակով կիրառվում է Կարմիր Խաչի և Մահիկի միջազգային ֆեդերացիայի Եվրամիության հետ համատեղ մշակված աղետների ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը [4]: Այն իր մեջ ներառում է հետևյալ գործիքակազմը.

1. Երկրորդային աղբյուրներից տվյալների հավաքագրում
2. Ուղիղ դիտարկում (ակնադիտական զննում)
3. Կիսակազմակերպված հարցազրույցներ
4. Պատմական քրոնիկոն (ժամանակացույց)
5. Քարտեզագրում
6. Տրանսեկտ գծագրում (Transect Walk)
7. Սեզոնային օրացույց
8. Ռեսուրսների քարտեզագրում (կարողությունների քարտեզագրում)
9. Շահագրգիռ կողմեր
10. Կենսապահովման միջոցների վերլուծություն
11. Խնդիրների ծառ
12. Վարկանիշ և միավորների գնահատում:

Այս մեթոդաբանությամբ հիմնականում գնահատվում են համայնքային մասշտաբների աղետների ռիսկերը:

1. **Երկրորդային աղբյուրներից տվյալների հավաքագրում:** Տեղեկատվության հավաքագրումն է տարածքում, համայնքում տիրող իրավիճակի և պայմանների վերաբերյալ, տեղեկատվությունը ներառում է առկա հրապարակված և չհրապարակված հավաստի աղբյուրներ, քարտեզներ, լուսանկարներ, վիճակագրություն և հաշվետվություններ, հետազոտական ուսումնասիրություններ, տվյալների հավաքագրում կառավարման մարմիններից, գործակալություններից, մշակված ռազմավարություններ և քաղաքականություն, հաշվետվություններ, համայնքում ծրագրեր ունեցող կազմակերպությունների տվյալներ, զարգացման ծրագրեր, գիտական/տեխնիկական հետազոտություններ և այլն:
2. **Ուղիղ դիտարկում / ակնադիտական զննում** իրականացվում է, երբ աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) մասնագետները հայտնվում են հետազոտվող համայնքում, նրանք ակնադիտական զննման միջոցով փորձում են արձանագրել բոլոր այն ռիսկերն ու վտանգները, որոնք «սովորական» են դարձել տեղի բնակչության համար: Ակնադիտական զննման նպատակներն են՝ ենթակառուցվածքների վիճակի բացահայտումը՝ ճանա-

պարհների, շենք-շինությունների բնութագրերը, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի, աղբահանության համակարգերի վիճակը: Կենսական կարևոր օբյեկտների առկայությունը կամ բացակայությունը, դրանց տեխնիկական վիճակը՝ դպրոց, մանկապարտեզ, համայնքապետարան, բժշկական հաստատություն, տրանսպորտային, կապի միջոցներ, հասարակական վայրերի առկայություն կամ բացակայություն՝ սնման կետեր, առևտի խոշոր կետեր, խաղահրապարակ, մարզադաշտ և այլն: Սոցիալ-տնտեսական բնութագրեր՝ տների վիճակը (վթարային են, թե՞ բարվոք վիճակում), տնամերձ հողատարածքների առկայությունը, ընտանիքի անդամների թիվը և կառուցվածքը, կենսապայմանները, բնակիչների առօրյան, նրանց նյութական կարողությունները (տրանսպորտային միջոցներ, գյուղտեխնիկա, եկամուտներ, ընտանի կենդանիներ և այլն) [5]:

3. **Կիսակազմակերպված հարցազրույցներ:** Ըստ մեթոդաբանության հարցազրույցի ընթացքում շոշափվում են խոցելիության, կարողությունների գնահատման հիմնական թեմաները: Մասնավորապես, շոշափվում են վտանգների, խոցելիության, տեղական ինքնակառավարման մարմինների արձագանքման կարողությունների վերաբերյալ հարցեր: Այն ներառում է՝ հարցազրույց տեղական համակարգողի հետ, անհատական հարցազրույցներ, խմբակային հարցազրույցներ. այս հարցազրույցները չեն կրում պարտադիր բնույթ և վարվում են մասնագիտական ուղղորդվածություն ունեցող խմբերի հետ: Նշվում է, որ ԱՌՆ առնչվող խնդիրները սովորաբար խմբակային հարցազրույցների վարման կարիք չունեն, քանի որ ֆոկուս խմբերի հետ ունեցած քննարկումները լիովին բավարար են: Այս մեթոդը մասնագետները կիրառում են ոչ թե կոնկրետ հարցաշարով, այլ՝ թեմատիկ ազատ քննարկման և մտքերի փոխանակման եղանակով:

Քննարկումներ ֆոկուս խմբերում՝ այս գործիքը ներառվում է 3-րդ կետում, սակայն Հայաստանում ԱՌԳ գնահատման շրջանակում այն դիտարկվում է որպես առանձին գործիք: Ֆոկուս խմբերը ձևավորվում են համայնքի այն անդամներից, որոնք պատկանում են որոշակի մասնագիտական, տարիքային, սեռային կամ սոցիալական խմբերի (վարչական աշխատողներ, բուժանձնակազմ, ուսուցիչներ, ֆերմերներ, կանայք և այլն): Այս խմբերում քննարկումները նպաստում են առանձնահատուկ տեղեկությունների հավաքագրմանը՝ պայմանավորված այս կամ այն խմբին պատկանելությամբ և կոնկրետ խմբի մասնավոր շահերով:

Ձանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով՝ այս հարցումը ևս Հայաստանում ԱՌԳ գնահատման շրջանակում դիտարկվում է որպես առանձին գործիք: Հարցաթերթիկը ներառում է բազմաբնույթ հարցեր, որոնք թույլ են տալիս գնահատել համայնքի խոցելիությունը, վտանգները և կարողությունները: Նշվում է, որ արդյունքների քանակական (%) սանդղակը հիմնականում ձևավորվում է հարցաթերթիկների միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա:

4. **Պատմական ժամանակացույց՝** կազմվում է աղյուսակ, այն լրացվում է ըստ տասնամյակների, նշվում են, թե որ տասնամյակում համայնքում ինչպիսի իրադարձություններ են տեղի ունեցել: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստանալ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների պատկերը և անել համապատասխան եզրահանգումներ, որոնք կարող են օգտակար լինել համայնքային մակարդակով ռիսկերի նվազեցման ծրագրերի պլանավորման գործընթացի ժամանակ: Աղյուսակը ներառում է՝ ենթակառուցվածքների, առողջապահության, հողի և անասունների, անտառների և ծառերի, տների և շինությունների, բնակչության մասին պատմական տվյալներ՝ ըստ տասնամյակների: Աղյուսակի սյուները կարող են փոփոխվել ըստ անհրաժեշտության, իսկ դրանց լրացման համար կարող են կիրառվել ոչ միայն թվեր, այն նաև՝ սիմվոլներ:

5. **Քարտեզագրում:** Հետազոտության քարտեզագրման փուլում ձևավորվում են համայնքի աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի

հզորության (կարողությունների), ռեսուրսների ու խոցելիության, հողօգտագործման, հնարավոր տեղաշարժման հիմնական քարտեզները:

6. **Տրանսեկտ գծագրում՝** համակարգված քայլերի թեթև առանցքային, տեղեկացված մարդկանց ուղեկցությամբ: Քարտեզի վրա նշվում են տրանսեկտ գծերը և այդ ուղղություններով ուսումնասիրվում են տարածական տարբերությունները, հողօգտագործման գոտիները, մարդկանց տնտեսական գործունեությունը: Գործընթացը խմբի կողմից իրականացվում է դիտարկելով, հարցնելով, լսելով և կազմելով տրանսեկտիվ գծապատկեր: Այն ցույց է տալիս ֆիզիկական միջավայրի և մարդու գործունեության փոխազդեցությունները՝ տարածության և ժամանակի մեջ, բացահայտում է վտանգավոր գոտիները, տարհանման վայրերը, տեղական ռեսուրսների այդ թվում բնահողի կիրառումն արտակարգ իրավիճակներում, բացահայտում է խնդիրներ և հնարավորություններ:
7. **Սեզոնային օրացույց:** Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում ըստ ամիսների տեղի ունեցած վտանգավոր երևույթները, դրանց ազդեցությունը, ներառյալ կլիմայական փոփոխության հետ կապված ազդեցությունը, սոցիալ-տնտեսական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները, հիվանդությունների բռնկման ժամանակահատվածը և այլն: ԱՌՆ գնահատման թիմը սեզոնային օրացույցը լրացնում է համայնքային բնակչության տվյալների հիման վրա, ապա այն համադրում է պաշտոնական տվյալների հետ: Այն ներառում է սոցիալ-տնտեսական, առողջապահական իրադարձություններ, մասնավորապես.
 - *սոցիալ-տնտեսական՝* բարձր եկամուտներ, ցածր եկամուտներ, արտագաղթ, արտագնա աշխատանքներ, վերադարձ, բերքահավաք, պարապուրդ, անասունների մորթ, սերմնացան, առատ անձրևներ, գողություն և այլն,
 - *առողջապահություն՝* գրիպի համաճարակ, աղիքային վարակներ, տուբերկուլյոզ,
 - *վտանգներ՝* կարկուտ, ջրհեղեղ, երաշտ, քարաթափություն, անտառային հրդեհ, հրդեհ, ցրտահարություն, անասնահամաճարակ:Նշվում է, որ անհրաժեշտության դեպքում կարող են ներառվել կամ փոփոխվել սեզոնային օրացույցի բաղադրիչները:
8. **Ռեսուրսների քարտեզագրում** (կարողությունների քարտեզագրում): Ենթադրում է տեղական ռեսուրսների նկատմամբ հասանելիության և վերահսկողության հնարավորությունները ցուցադրող քարտեզի ստացում: Բացահայտվում են առկա տեղական կարողությունները և ռեսուրսները, որոնց մարդիկ ապավինում են, բնութագրվում են թե ո՞ր ռեսուրսներն են հեշտությամբ ենթարկվում վտանգի ազդեցությանը, բացահայտվում են համայնքին հասանելի և պատկանող ռեսուրսները, կենցաղային և համայնքային կարողություններն ու ռեսուրսները, տնային տնտեսությունների կամ անհատների կարողությունները և այլն:
9. **Շահագրգիռ կողմեր:** Արտացոլվում է ԱՌԿ հիմնական դերակատարների և հաստատութենական աղյուսակով: Այս աղյուսակում ներառվում են պետական և ոչ պետական կառույցները, մարդկանց խմբերը, անհատները, որոնք էական ազդեցություն ունեն համայնքի սոցիալական-տնտեսական կյանքի զարգացման վրա: Աղյուսակը ներառում է նրանց «ազդեցության» և «կարևորության» գնահատականը՝ 1-5 միջակայքում: Ազդեցությանն ու կարևորությանը տրված գնահատականները միջինացվում են և համեմատվում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս համայնքին կողմնորոշվել հիմնական շահագրգիռ կողմերի ընտրության հարցում ԱՌՆ միջոցառումներին հնարավոր մասնակցություն կամ աջակցություն ցուցաբերելու համար:
10. **Կենսապահովման միջոցների վերլուծություն:** Անհատական տնային տնտեսությունների հարցազրույցների տվյալների համակցում, որը թույլ է տալիս հասկանալ նրանց տարբեր եկամուտների և/կամ սննդի աղբյուրները, ներկայացնել դրանք գծապատկերների միջոցով: Այն թույլ է տալիս վերլուծել մարդկանց կենսապահովման

նագմավարությունները, վարքագիծը, որոշումները, տնային տնտեսությունների ռիսկերի, կարողությունների և խոցելիության ընկալումները՝ հաշվի առնելով մարդկանց տարբեր սոցիալ-տնտեսական վիճակը:

11. **Խնդիրների ծառ**՝ գծապատկերի ստացում, որը ցույց է տալիս կապերն՝ առկա խնդիրների, ազդեցությունների և պատճառների միջև: Բացահայտում է տեղական հիմնական խնդիրներն ու խոցելիությունները, ինչպես նաև հիմնական պատճառներն ու հետևանքները:
12. **Վարկանիշ և միավորների գնահատում**: Կազմվում է աղյուսակ, որը ցույց է տալիս մարդկանց ընկալումները աղետների ռիսկերի և առաջնահերթությունների վերաբերյալ, արտացոլում է նրանց գնահատման չափանիշները և ընտրությունը: Այս գործիքը կարող է կիրառվել տարբեր նպատակներով, ինչպիսիք են աղետների ռիսկերի, կոնկրետ խնդիրների, միջամտությունների բացահայտումը:

Ըստ միջազգային ԱՌԳ այս մեթոդաբանության նշված 12 գործիքների կիրառման արդյունքում ստացված բազմաշերտ տեղեկատվությունը վերլուծվում է, կազմվում են համապատասխան ռիսկի գնահատման մատրիցներ, վտանգների, խոցելիության, կարողությունների գնահատման աղյուսակներ, որոնց հիման վրա էլ արվում են եզրակացություններ, իսկ առաջարկությունները նախանշում են աղետների ռիսկերի կառավարման գործընթացները:

Մոդելը Հայաստանի Հանրապետությունում կիրառում է ստացել տեղական մակարդակում աղետների ռիսկերի գնահատման նպատակով: Այն կիրառող հիմնական մարմինն Աղետների ռիսկերի կառավարման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամն է: Հայաստանում ԱՌԳ նպատակով կիրառվում են նշված գործիքներից որոշները՝ տեղական մակարդակում աղետների ռիսկերի գնահատման (ՏՄՌԿ), այդ թվում նաև կլիմայական ռիսկերի գնահատման համատեքստում [1]: ՏՄՌԿ մեթոդաբանությամբ ուսումնասիրված շուրջ 120 բնակավայրի ԱՌՆ գործընթացները տեղադրված են ԱՌՆԱՊ հիմնադրամի պաշտոնական կայք էջում [3], որոնց հիմքում նշված ԱՌԳ մեթոդաբանությունն է:

Աղյուսակ 1.

Տեղական մակարդակում ԱՌԳ մեթոդաբանության կիրառությունը ՀՀ-ում

	Մեթոդաբանության բաղադրիչները	ՀՀ-ում ԱՌԳ ներածված բաղադրիչները
1.	Երկրորդական տվյալների վերանայում	կիրառվում է
2.	Ուղիղ դիտարկում (ակնադիտական գնում)	կիրառվում է
3.	Կիսակառուցվածքային հարցազրույցներ	կիրառվում է
4.	Պատմական պրոֆիլ (Ժամանակացույց)	կիրառվում է
5.	Քարտեզագրում	կիրառվում է
6.	Տրանսեկտ զճագրում (Transect Walk)	չի կիրառվում
7.	Սեզոնային օրացույց	կիրառվում է
8.	Ռեսուրսների քարտեզագրում (կարողությունների քարտեզագրում)	չի կիրառվում
9.	Շահագրգիռ կողմ	կիրառվում է
10.	Կենսապահովման միջոցների վերլուծություն	չի կիրառվում
11.	Խնդիրների ծառ	չի կիրառվում
12.	Վարկանիշ և միավորների գնահատում	չի կիրառվում

Ինչպես երևում է աղ. 1-ից ՀՀ-ում Կարմիր Խաչի և Մահիկի միջազգային ֆեդերացիայի Եվրոմիության հետ համատեղ մշակված աղետների ռիսկերի գնահատման մեթոդաբանության նշված 12 գործիքակազմից կիրառվում է ընդամենը 7-ը՝ 58 %, ինչն ապահովում է իրականացվող հետազոտության արդյունքի հավաստիության ցածր ցուցանիշ: Ինչ խոսք, մենք ընդունում ենք, որ միջազգային մեթոդաբանությամբ առաջարկվող ոչ բոլոր գործիքներն են ադապտացվել կամ կիրառական եղել մեր երկրում ԱՌԳ համար, սակայն ինչպես նկատում ենք

կիրառությունից դուրս են մնացել հիմնական վերլուծական բաղադրիչները՝ կենսաապահովման միջոցների վերլուծությունը, խնդիրների ծառի կազմումը, վարկանիշ և միավորների գնահատումը և տրանսելտ գծագրումը:

Կենսաապահովման միջոցների վերլուծությունը թույլ կտար ԱՌՆ պլաններում հաշվարկել համայնքի արտադրական, սոցիալ-տնտեսական հզորությունները, պլանավորել ռեսուրսների բաշխվածությունը թե՛ ռիսկերի կառավարման, արձագանքման և թե՛ հետևանքների մեղմացման փուլերում:

Խնդիրների ծառի կառուցման բացակայությունն ըստ մեզ խոչընդոտում է իրավիճակին համապատասխան կառավարչական որոշումների ընդունմանը, քանի որ խնդիրների ծառը թույլ է տալիս բացահայտել խոցելիության և դրա դրդապատճառների փոխադարձ կապերը, ուստի խոցելիության նվազեցմանն ուղղված որոշումների ընդունումը կարող է լինել առավել հիմնավորված և թիրախային:


Վարկանիշ և միավորների գնահատում գործիքը մասամբ կիրառվել է ԱՌԳ փուլում, սակայն այս տվյալները լիարժեք չեն համադրվել հետազոտական մյուս գործիքների արդյունքների հետ:

Տրանսելտ գծագրման դեպքում կարելի է բացահայտել համայնքի վտանգավոր գոտիները, տարհանման վայրերը, տեղական ռեսուրսների, այդ թվում բնահողի կիրառման հնարավորություններն արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև հատուկ գնահատել ռազմական վտանգների ազդեցությունը համայնքի վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ մարզերը բացառությամբ ՀՀ Կոտայքի մարզի սահմանամերձ են:

Այս գործիքների գործածությունը թույլ կտար հզորացնել հետազոտությունը չափելի ցուցանիշներով, կազմել առավել իրատեսական ԱՌԿ պլաններ և ունենալ ֆինանսատնտեսական հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են ծրագրեր իրականացնելու բոլոր փուլերում՝ ներդրումներից մինչև արձագանքում:

Հաջորդ մեր դիտարկումը վերաբերում է քարտեզագրմանը: ԱՌՆԱՊ հիմնադրամի ԱՌԿ մասնագետները գնահատման ընթացքում ներբեռնել են համացանցային տեղանքի առկա քարտեզներ (հիմնականում google maps հավելվածի քարտեզները), որոնց վրա մասնագետները կատարել են համապատասխան նշումներ [6]:

Քարտեզագրման մեթոդն ինչպես արդեն նշվեց թույլ է տալիս քարտեզագրել համայնքին բնորոշ վտանգները, կարողություններն ու խոցելի կողմերը: Այս գործիքն ունի համալրման, վերանայման կարիք, արդյունքում մենք առաջարկում ենք հետևյալ մոտեցումը, որը մշակվել է հողվածի հեղինակների մասնակցությամբ՝ մեկ այլ հետազոտության շրջանակներում, այն իր տեսակով նոր մոտեցում է աղետների ռիսկերի գնահատման դաշտում [2]:




Գծ. 1. Վրանգի, խոցել

ային գոտի [2]

Աղետների ռիսկերի գնահատման քարտեզ: Այսպիսի քարտեզներում արտացոլված են համայնքի կարողությունների, խոցելի տարրերի ու վտանգների ամբողջականությունը: Քար-

տեղերը կազմվում են ԳՏՀ (GIS) մեթոդաբանությամբ: Այն համապարփակ քարտեզ է, որտեղ մեկտեղված են ռիսկի բոլոր բաղադրիչները: Այս քարտեզների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հետազոտողների կողմից յուրաքանչյուր մարզի համար մշակվել և գնահատվել են հատուկ ռիսկային բուֆերային գոտիներ: **Ազդեցության ռիսկային բուֆերային գոտիների (ԱՌԲԳ) մշակման նպատակը՝** կոնկրետ վտանգի դեպքում տնտեսական նշանակության տարածքների հնարավոր խոցման շառավղի որոշումն է և ԱՌԿ կարողությունների ազդեցության որոշումը:

Ստորև բերված է ԱՌԳ քարտեզի 1 օրինակ, որը մշակված է բուֆերային գոտիների ստացման մեթոդաբանությամբ:



Գծ. 2. Աղետների ռիսկերի գնահատման քարտեզ (Սյունիքի մարզ) [2]

Քարտեզում ներկայացված են մարզին բնորոշ հիմնական վտանգները, կարողությունները և խոցելի տարրերը, որոնք կարող են հայտնվել ազդեցության գոտում՝ բուֆերային հատվածում: Քարտեզը հնարավորություն է տալիս միանգամից մեկտեղել տարբեր ցուցանիշներ և ամրագրել բուֆերային գոտիները: Ազդեցության բուֆերային տարածքների որոշման մեթոդաբանության հիմքում բնորոշ վտանգի, վտանգի կանխման կամ մեղմացման հիմնական կարողության (ների) և առավել խոցելի տարրերի համադրումն է: Օրինակ, քարտեզում արտացոլված ազդեցության բուֆերային գոտիներից է՝ **կարկտահարության (վտանգ), գյուղատնտեսական հողահանդակների (խոցելիություն), հակակարկտակայանների (կարողություն)** փոխազդեցության ռիսկային բուֆերային գոտիների որոշումը և քարտեզագրումը:

Այս մեթոդաբանության կիրառությունը թույլ կտա գնահատել ոչ միայն մարզի, այլև ցանկացած բնակավայրի աղետների ռիսկերի բոլոր բաղադրիչները, հաշվել հնարավոր կորուստ-

ների քանակը և մասշտաբները, պլանավորել կանխարգելման և մեղմացման միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Գրականություն

1. **ԱՌՆԱՊ**, Աղետների ռիսկերի կառավարումը տեղական մակարդակում կլիմայի բաղադրիչով հարստացած, կիրառական ուղեցույց, Եր., 2022. <https://drive.google.com/file/d/1kfERqbGXHPfjt7qcol0NDVG5T6sKosFX/view>. Մուտք՝ 15.09.2023.
2. **Բուլանիկյան Վ.Ս.** և ուրիշներ, «Մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ցուցիչների համակարգը որպես մարզի /երկրի համաչափ զարգացման ապահովման գործիք» թեմայով հետազոտություն: <https://msrf.aaa.am/files/2023/09/THE-SYSTEM-OF-INDICATORS-OF-THE-LEVEL-OF-SOCIO-ECONOMIC-DEVELOPMENT-IN-REGIONS-IN-ARMENIAN.pdf>. Մուտք՝ 17.09.2023.
3. **ՏՄՌԿ մեթոդաբանությամբ** ուսումնասիրված բնակավայրեր՝ http://www.arnap.am/?page_id=4203
4. EC & ICRC, Hazard, Vulnerability and Capacity Assessment <https://www.rcrc-resilience-southeastasia.org/wp-content/uploads/2016/06/3-HVCA-Manual-in-English.pdf>. Մուտք՝ 18.09.2023.
5. **Տեղական** մակարդակում ռիսկի կառավարում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2012. https://www.google.com/search?q=the+toolkit+of+risk+assessment+at+the+local+level&rlz=1C1IXYC_ruAM981AM981&oq=the+toolkit+of+risk+assessment+at+the+local+level&gs_lcrp=EgZjaHJvbWUyBggAEEUYOTIHCAEQIRigATIHCARigATIHCAMQIRigAdIBCTE2NjZqMGoxNagCALACAA&sourceid=chrome&ie=UTF-8&bshn=rimg/1. Մուտք՝ 18.09.2023.
6. **ԱՌՆԱՊ**, ԱՌՆ գործընթացները Արագածոտն մարզի Ազարակ համայնքում, 2016 թ. էջ 14. <https://drive.google.com/file/d/1IBTHOB7b-KKadOp0gjNjk1dBZqKGvSHZ/view?fbclid=IwAR3BNH84-mpbmUEFqYsdbN4qllIM-XNn6oTJsACDFSgqK4FtYxLaS-NVBuQ0>. Մուտք՝ 18.09.2023.

В.С. Буланикян, А.А. Тертерян

АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОЙ И АРМЯНСКОЙ МЕТОДОЛОГИИ ОЦЕНКИ РИСКА БЕДСТВИЙ НА МЕСТНОМ УРОВНЕ

Оценка риска стихийных бедствий проводится на двух уровнях: национальном и местном. В данной статье речь идет о методологии оценки риска стихийных бедствий на местном уровне и примерах ее применения в РА. В частности, авторы статьи предлагают дополнить инструментарий оценки рисков на местном уровне, пересмотреть методологию создания ГИС карт. Рекомендуются на этапе оценки особенно усилить инструменты финансово-экономической оценки, чтобы можно было реализовать планы снижения риска стихийных бедствий, подготовленные по методике оценки риска стихийных бедствий, и четко рассчитать объемы и направления финансовых вложений для снижения риска.

Ключевые слова. оценка риска стихийных бедствий, методология, сообщество, опасность, уязвимость, потенциал, буферная зона воздействия, ГИС картография.

V.S. Bulanikyan, A.A. Terteryan

ANALYSIS OF INTERNATIONAL AND ARMENIAN METHODOLOGY FOR LOCAL LEVEL DISASTER RISK ASSESSMENT

Disaster Risk Assessment is done at two levels: National and Local. This article refers to the methodology of Disaster Risk Assessment at the Local level and examples of its application in RA. In particular, the authors of the article suggest supplementing the toolkit of Risk Assessment at the Local level, revising the methodology of GIS map creation. It is recommended to especially strengthen financial and economic assessment tools during the evaluation stage, so that it is possible to implement the Disaster Risk Reduction or Management Plans prepared by the Disaster Risk Assessment methodology and to clearly calculate the volumes and directions of financial investments for risk reduction.

Key words. disaster risk assessment, methodology, community, hazard, vulnerability, capacity, impact buffer zone, GIS mapping.

Բուլանիկյան Վահե Սարգսի - տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոն).

Տերտերյան Անի Արամի - ասիստենտ, հայցորդ (ՀՊՏՀ, R5 Արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոն).

Ներկայացման ամսաթիվը՝ 03.10.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 19.10.2023

CRISIS MANAGEMENT AND TECHNOLOGIES. 2023. No 2 (23)

UDC 502

II. TECHNOLOGIES

V.S. Davtyan

THE MAIN TRENDS IN RENEWABLE ENERGY DEVELOPMENT IN ARMENIA: CHALLENGES FOR ENERGY TRANSITION⁸

The main trends in the development of renewable energy in Armenia are considered in the context of the challenges of sustainable development and energy transition. It is established that the development of renewable energy is one of the key directions of diversification of Armenia's energy security system. The main direction of development of the industry is identified. In particular, opportunities for the development of solar, wind, geothermal and bioenergy are analyzed. Special attention is paid to the potential of development of small hydropower in Armenia. It is shown that the full and systematic development of the mentioned industries is possible only in case of effective state-private partnership. External risks of solar and wind energy development in Armenia are considered separately.

Keywords: Armenia, renewable energy sources, energy transition, security, diversification.

One of the conditions for increasing the level of energy security and ensuring sustainable energy development of the state is the diversification of the energy system, which, first of all, involves the search and use of new sources of energy. Diversification of the energy system allows the state not only to protect itself from possible accidents and failures, but also creates conditions for reducing the sensitivity of the energy system towards external political issues. And although today it is impossible to imagine an absolutely independent energy system operating in autarchic conditions, and the concept of “**energy independence**” is rather of a journalistic nature, nevertheless, taking into account the geopolitical significance of energy resources, we can state that diversification allows increasing the level of energy sovereignty. This, in turn, leads to an increase in its geopolitical status.

In the case of the Republic of Armenia (RA), diversification solves a basic problem: it creates conditions for reducing the cost of produced electricity, which is one of the challenges to energy security. Reducing the cost of electricity will allow for a more flexible tariff policy, thereby stimulating economic development. Moreover, low cost may create additional conditions for the integration into the international electricity corridors in order to export the electricity generated in Armenia to foreign markets.

In order to reveal the diversification opportunities of the Armenian energy system, we will comprehensively consider the renewable energy sector (RES) in Armenia, identifying both the potential for its development and the risks that impede its formation.

Main directions of development of RES in Armenia

A necessary condition for the development of renewable energy is the presence of an appropriate regulatory and legislative framework. In Armenia, the main legislative act regulating this industry is the "Law on Energy Efficiency and Renewable Energy", adopted in 2004. The Law defines the principles of energy efficiency and state policy for the development of renewable energy, as well as the mechanisms for their implementation. These mechanisms are aimed at:

- strengthening the economic and energy independence of Armenia;
- increasing the degree of economic and energy security of Armenia, reliability of its energy system;

⁸ The work was supported by the Science Committee of Republic of Armenia, in the frames of the research project № 21T-2H107.

- creation of new production facilities and organization of services that stimulate energy efficiency and development of renewable energy;
- reducing the technogenic impact on the environment and human health [1].

Turning to RES in Armenia, the following sectors should be considered: solar, wind, bio-, geothermal and small hydropower.

Solar energy. During Soviet period, activity in the field of renewable energy development (without taking into account hydroenergy) began in the 1950s. Initially, that activity was of a purely research nature and, above all, related to the use of solar energy, which is quite natural, taking into account the sunshine duration in Armenia – about 2300-2500 hours per year.

The sun is the most widely used source of clean and endless energy. In the field of solar energy, Armenia has significant advantages: due to its close location to the tropical zone, a significant part of the country has favorable natural and climatic conditions that allow the widespread use of solar energy. The average annual value of solar energy in Armenia is 1720 kWh/sq.m per 1 sq.m of horizontal surface, while in Europe, it is about 1000 kWh/sq.m. During the warm period, the duration of sunshine in Armenia is 85% of the annual one, but on average, the duration of sunshine reaches 60%. These indicators allow us to confidently say that Armenia has all the necessary prerequisites for the full development of the industry [2].

In Armenia, the first photovoltaic installation with a peak power of 7.5 kW was installed in 1990 by BP (UK) in the Byron school [3].

Today, the total installed capacity of solar power plants (SPP) in Armenia is about 500 MWt (Fig. 1).




Fig. 1. Installed capacity of the Armenian energy system

In Armenia, it is planned to build the largest solar power plant in the region, "Masrik-1", with a capacity of 55 MW (commission date – 2024), which is expected to significantly change the structure of the domestic energy market. Together with the European Bank for Reconstruction and Development (EBRD), preparatory work has also begun for the construction of 5 solar power plants in Armenia with a total capacity of 120 MW. The government approved the investment program of "Masdar" company (UAE) for the construction of a solar power plant with a total capacity of 400 MW in the Aragotsotn and Kotayk regions of Armenia. Investments in this project will exceed \$300 million. Tariff

policy aimed at developing the industry is also of big importance: in the field of renewable energy, Armenia has a very competitive selling tariff for electricity - 4.19 cents per 1 kWh. This creates the necessary conditions for the implementation of new projects in the field of solar energy. Thus, the Armenian Renewable Energy and Energy Saving Fund, together with the French company "Trans Energy", received a grant from the French government for the construction of the first floating solar power plant in Armenia with a capacity of 151 kW. In general, it is expected that by 2030, the volume of planned investments in the field of solar energy in Armenia will reach 600 million US dollars, and in the field of wind energy - 500 million US dollars [4].

However, it is important to note that as a result of the war in Artsakh (Karabakh) in the fall of 2020, the prospects for the construction of some large solar power plants in Armenia became doubtful. Thus, the project of the mentioned solar power plant "Masrik-1" is planned to be implemented in the settlement of Mets Masrik in the Gegharkunik region, in close proximity to the Karvachar region that was transferred to Azerbaijan as a result of the war. The village of Mets Masrik is located 8 km from the interstate border and, as is known, was shelled by Azerbaijani drones during the war. It is obvious that repeated violations of the state border by the Azerbaijani armed forces in the same Gegharkunik region and shelling in the spring of 2021, as well as the process of including the issue of delimitation and demarcation on the official agenda of Yerevan and Baku creates quite tangible risks for business entities investing in solar energy in the region. The same problem exists in the field of wind energy, which will be discussed below.

Wind energy. In Armenia, according to available estimates, the cost of one wind power plant with a power of 1 kW is approximately 1000-1300 US dollars. To bring the total power to 100 MW. 100-130 million US dollars of investment are required. In general, the wind energy potential in Armenia is 5000 MW. Particularly noteworthy are such places of Armenia as the Pushkin Pass, Karakhachin, Semenov, Zod, Sisian, as well as the Charentsavan region.

Armenian power engineers already have some experience in the construction of wind plants. In 2005, the first wind plant in Armenia with a total capacity of 2.6 MW was put into operation. The wind power plant was built due to \$3.5 million grant from the Iranian government. The plant is located on the Pushkin Pass in the Lori region at an altitude of 2060 m above sea level and is equipped with four wind turbines. The average annual electricity generation is estimated at 5 million kWh, the service life is 20 years. It should be noted that the wind power plant installed at Pushkin Pass is the first in the South Caucasus [5].

Another important project in the field of wind energy is "Zod-Wind" - a wind power plant installed in Gegharkunik region in 2018. The station's capacity is 20 MW. Taking into account the inaccessibility of the most perspective points in terms of generation, the construction of wind power plants often runs into problems of transporting large-sized blades and other components to the station construction site [6].

Today, a number of European companies are involved in the process of monitoring the terrain and assessing the wind potential of Armenia in various regions and attracting investments for the construction of wind power plants, including the Italian company "Ar Energy", "Zod Wind", the Spanish company "Acciona Energia Global S.L." etc.

As noted above, the war in Artsakh (Karabakh) in the fall of 2020 caused serious threats to the development of RES, including the wind energy. At the end of May 2021, the "Zod-Wind" company filed a lawsuit against the Government of the Republic of Armenia demanding compensation for damages (\$5 million) incurred in November 2020, when, after the signing of a trilateral ceasefire agreement, the Azerbaijani Armed Forces invaded the territory village of Sotk, Gegharkunik region, with a threat to open fire. As a result, the company lost the opportunity to carry out economic activities on the territory transferred to it by the government until 2048 (200 hectares). The company has already built two wind turbines on 75 hectares. According to the business plan, it was planned to build 23 more [7]. Obviously, this situation creates some risks for the investment field in renewable energy in Armenia.

Bioenergy. Currently, in Armenia, the process of obtaining energy from biogas is at the initial stage of development. According to the USAID program (2007), in Armenia, the biogas potential for 2006-2020 estimated as follows: with 34.17 million US dollars of investment, 38.34 million cubic meters of biogas can be provided annually, which will prevent methane emissions into the atmosphere. In Armenia, one of the first installations for the production of biogas from farm animal manure in combination with a solar 75 water heating system was created on a small cattle farm in Aparan [5]. The largest biogas plant launched in Armenia is located at the Lusakert poultry farm where gas is mainly used to meet the needs of the poultry farm.

It is also important to dwell on the program for obtaining energy from biogas at the Nubarashen city landfill. In 2001, the Japanese company "Shamizu", together with the Government of the Republic of Armenia and the Yerevan City Hall, began developing a number of projects under the CDM (Clean Development Mechanism) scheme. One of them is a project aimed at obtaining methane from the Nubarashen landfill and its further use as an energy source. According to the document developed by the UNDP and UNFCCC in 2007, a 16-year repayment period for the targeted loan was established. Three Japanese companies were involved in the implementation of the program: "Shimizu", "Hokaido Electric Power" and "Mitsui". Investments in the program amounted to about 8 million US dollars [5]. Currently, the program is essentially frozen.

Geothermal energy. In 2009, the World Bank allocated 1.5 million US dollars to the government of Armenia to study the potential for the development of geothermal energy in the country. As a result of the research, it was revealed that in Armenia, there are perspective areas for the construction of geothermal power plants. It was revealed that electricity generation of 150-200 MW was quite realistic. Geological surveys in the central volcanic zone made it possible to discover promising geothermal and mineral deposits (Jermakhbyur, Sisian, etc.). The potential of the Jermakhbyur source is estimated at 25-30 MW. Compared to all other renewable energy resources, geothermal resources can be used for a long time, regardless of weather conditions [2].

Small hydropower. In the energy balance of Armenia, the share of hydroelectric power plants (HPPs) is more than 30%. In turn, the capacity of small hydroelectric power plants is 365 MW. At the same time, there is a noticeable decrease in the dynamics of the construction of new small hydroelectric power plants, which is, firstly, due to the unfavorable investment climate and, secondly, to the ineffective government policy in this

area. Currently, the small hydropower complex demonstrates some crisis tendencies. There is a trend: most of the problems in the field of water resource management in Armenia are traditionally attributed to small hydropower plants. Obviously, this cannot but affect investment activity in the industry. The result of this policy was the government's decision (2020) to fine small hydropower plants 64 million drams for using water more than the permitted volume [8].

Obviously, preventing the withdrawal of additional water volumes is a necessary condition for effective water resource management, but several factors must be considered in this case. Most rivers in Armenia have so called high water, and in the spring, the water flow increases significantly, which creates opportunity to produce additional volumes of electricity. This water flow to Azerbaijan and Turkey, where it is used for irrigation purposes. Thus, it is necessary to avoid an average approach, especially when monitoring small hydropower plants that are located near state borders.

As for any state, diversification is one of the main challenges to ensuring energy security in Armenia. The development of renewable energy is a key condition for diversifying the energy system. Armenia has great potential for the development of renewable energy. To use this potential most effectively, it is necessary to establish a public-private partnership, since the problems in the functioning of the industry are related not only to technical or financial issues, but also to issues of market regulation and, in general, energy policy of the state.

The analysis showed that the most promising areas for the development of RES in Armenia are solar, wind, bio-, geothermal and small hydropower. In turn, small hydropower and solar energy (the energy sectors with a number of successfully implemented projects), should be particularly highlighted. As for wind, geothermal and bioenergy, the assessed potential allows us to talk about the prospects for their development in the case of a well-structured and effective state energy policy and, in particular, improving the investment climate in the energy sector and in the economy as a whole.

References

1. "Law on Energy Efficiency and Renewable Energy", November 9, 2004/
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67719>.
2. 100 years of energy in Armenia / Ed. L.V. Yeghiazaryan and others - Yerevan: Media-Model Publishing House, 2003. - 192 p. (in Rus. And Arm.).
3. Panosyan Zh., Marukhyan V. New technological developments for the production of efficient and competitive solar power plants // First Congress of Renewable Energy. – Yerevan, 2003. – P. 96.
4. First floating solar power plant to be built in Armenia // https://finport.am/full_news.php?id=44072&lang=3.
5. Odabashyan V., Khachatryan S. Renewable energy in the Republic of Armenia // 21st century: Information and analytical journal. – Yerevan, 2007. – 2(6). – pp. 143-158. (in Rus.)
6. Davtyan V., Tevosyan O. Trends in the development of energy policy in Armenia. – Yerevan, Korad Adenauer Foundation, 2019. – 144 p. (in Arm.).
7. Zod Wind demands \$5 million from the Armenian government for not protecting business from Azerbaijanis // <https://ru.armeniasputnik.am/politics/20210527/27713395/Kompaniya-Zod-Wind-podala-isk-protiv-kabmina-Armenii-iz-za-proniknoveniya-azerbaydzhantsev.html>.
8. The decision to set a 64 million AMD compensation fee for small HPPs that use a lot of water is a direct blow to the state // <https://www.tert.am/am/news/2019/09/10/letter/3090150>.

Վ.Ս. Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՎԵՐԱՓՈՆԵՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման հիմնական միտումները դիտարկվել են կայուն զարգացման և էներգետիկ վերափոխման մարտահրավերների համատեքստում: Սահմանվել է, որ վերականգնվող էներգետիկայի զարգացումը Հայաստանի էներգետիկ անվտանգության համակարգի դիվերսիֆիկացման առանցքային ուղղություններից է: Վեր են հանվել ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները: Մասնավորապես, վերլուծվել են արևի, հողմային, երկրաջերմային և կենսաէներգետիկայի զարգացման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանում փոքր հիդրոէներգետիկայի զարգացման ներուժին: Ցույց է տրվել, որ նշված ճյուղերի լիարժեք և համակարգված զարգացումը հնարավոր է միայն պետության և մասնավոր հատվածի միջև արդյունավետ համագործակցության արդյունքում: Առանձին դիտարկվել են Հայաստանում արևային և հողմային էներգետիկայի զարգացման արտաքին վտանգները:

Առանցքային բառեր. Հայաստան, վերականգնվող էներգետիկա, էներգետիկ վերափոխում, անվտանգություն, դիվերսիֆիկացում:

В.С. Давтян

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ВОЗОБНОВЛЯЕМОЙ ЭНЕРГЕТИКИ В АРМЕНИИ: ВЫЗОВЫ ЭНЕРГЕТИЧЕСКОГО ПЕРЕХОДА

Рассмотрены основные тенденции развития возобновляемой энергетики в Армении в контексте вызовов устойчивого развития и энергетического перехода. Установлено, что развитие возобновляемой энергетики является одним из ключевых направлений диверсификации системы энергетической безопасности Армении. Выявлены главные направления развития отрасли. В частности, проанализированы возможности развития солнечной, ветряной, геотермальной и биоэнергетики. Особое внимание уделено потенциалу развития малой гидроэнергетики в Армении. Показано, что полноценное и системное развитие указанных отраслей возможно лишь при наличии эффективного государственно-частного партнерства. Отдельно рассмотрены внешние риски развития солнечной и ветряной энергетики в Армении.

Ключевые слова: *Армения, возобновляемые источники энергии, энергетический переход, безопасность, диверсификация.*

Vahe Davtyan Samvel – Doctor of political sciences, professor (Russian-Armenian University, Brusov State University)

Presentation date: 13.10.2023

Review date: 24.10.2023

Ա.Օ. Մարկոսյան, Ս.Ա. Հունանյան, Գ.Հ. Գասպարյան, Տ.Ա. Զհանգիրյան,
Ս.Կ. Բաղդասարյան

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ՀՈՂԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ՀԱԿԱԵՐՈՋԻՈՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային հասարակությանը սպառնացող մեծագույն աղետ է հողերի դեգրադացիան և անապատացումը: Կլիմայի համընդհանուր փոփոխությունը և երկրագործության վարման մշակույթում առկա բացթողումները զգալիորեն մեծացնում են այդ գործընթացների բացասական ազդեցությունը: Հողվածում ներկայացված է Լոռու մարզի էրոզացված անտառային դարչնագույն հողերում ընթացող դեգրադացման գործընթացների ուղղորդվածությունը, հողերի որակական հատկանիշները, հզորությունը, հումուսով և սննդաբարրերով ապահովվածության աստիճանը: Ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվել է հողերի էրոզիայի, դեգրադացիայի և անապատացման երևույթների մեղմացման համար երկրագործության վարման համակարգում ներդնել հողի ռեսուրսախնայողական մշակույթ, բույսերի խնամքի նոր տեխնոլոգիաներ ու մեթոդներ, մասնավորապես հողերի մշակույթի աշխատանքներն իրականացնել ըստ լանջի ուրվագծերի, կիրառել ցանքաշրջանառության արդյունավետ սխեմաներ և հողը պարարտացնել օրգանական պարարտանյութերի բարձր նորմաներով (25-30 տ/հա): Ուժեղ էրոզացված և մշակությունից դուրս մնացած վարելահողերում անհրաժեշտ է մշակել թիթեռնածաղկավոր և բազմամյա հացազգի խոտախառնուրդներ, որոնք էապես կնվազեցնեն էրոզիոն գործընթացները:

Առանցքային բառեր. դեգրադացիա, էրոզիա, մեխանիկական կազմ, ջրակայուն ագրեգատներ, հումուս, ռեսուրսախնայողական մշակույթ:

Հայաստանի Հանրապետությունում անտառային դարչնագույն հողերը հիմնականում տարածված են հյուսիս արևելյան գոտում և Զանգեզուրի հատվածում՝ ծովի մակերևույթից 500-1700 մ, իսկ հարավահայաց չոր լեռնալանջերին՝ մինչև 2400 մ բարձրությունների վրա և կազմում են հանրապետության հողային ծածկույթի 15,4% [4]: Ըստ Է.Ս. Հայրապետյանի [5] այս հողերը բաժանվում են երեք ենթատիպերի՝ լվացված, տիպիկ և կարբոնատային: Լվացված ենթատիպը ձևավորվել է սովետահայաց լանջերում՝ համեմատաբար ավելի խոնավ պայմաններում: Անտառային դարչնագույն հողերն ունենում են ընկուզանման կնձիկային ստրուկտուրա, գենետիկական հորիզոնները թույլ են արտահայտված [1, 3]: Ա հորիզոնն ունի դարչնագույն և մուգ դարչնագույն գունավորում, մինչև 10-14% հումուսի պարունակությամբ, որը խորությանը զուգընթաց նվազում է: Այս հողերը հիմնականում ունեն կավավազային մեխանիկական կազմ, որի պարունակությունը խորացմանը զուգընթաց աճում է և ստորին հորիզոններում հասնում է 55-70%-ի: Հողային լուծույթի ռեակցիան չեզոք կամ թույլ հիմնային է (pH=6,6-7.5), կլանման ունակությունը բարձր է (վարելաշերտում այն հասնում է 40- 45 մգէկվ 100գ հողում): Այս հողերի ընդհանուր տարածվածությունը կազմում է շուրջ 56 հազար, որոնց 70%-ից ավելին էրոզացված են: Էրոզացված հողերում հումուսի պարունակությունը նվազում է մինչև 2,0-2,5%-ի [1, 2, 3, 4, 5]: Անտառային դարչնագույն հողերի գոտում հողերի էրոզիան հանդիսանում է դրանց դեգրադացման և անապատացման գործընթացների զարգացմանը նպաստող հիմնական գործոններից մեկը է [5, 6, 7]:

Ուսումնասիրություններով պարզվել է, որ հողերի նվազագույն, գրոյական ռեսուրսախնայողական մշակույթի և բույսերի խնամքի նոր տեխնոլոգիաների ու

մեթոդների ներդրման շնորհիվ բարձրանում է հողի ֆերմենտատիվ ակտիվությունը, այն նպաստում է խոնավության կուտակմանը և կասեցնում գոլորշիացումը, նվազեցնում է հողերի էրոզիայի, դեգրադացիայի ու անապատացման գործընթացները [9, 10]:

Հողվածում նպատակ է դրվել ուսումնասիրել կլիմայի փոփոխության և մարդու գործունեության ազդեցությունն անտառային դարչնագույն հողերի էրոզացվածության աստիճանի և հողի որակական հատկանիշների վրա, որոնք էապես են ազդում երկրագործության վարման մշակույթի վրա: Վերոնշյալ հարցերի պարզաբանման համար համեմատական հետազոտություններ են կատարվել Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի անտառային դարչնագույն հողերի չմշակվող տարբերակների և վարելահողերի՝ չէրոզացված, թույլ և միջակ էրոզացված հողահանդակների վրա:

Հետազոտվող հողերից վերցված հողանմուշներում, լաբորատոր պայմաններում որոշվել են հողային լուծույթի ռեակցիան՝ էլեկտրոպոտենցիոմետրիկ եղանակով, ջրալույծ աղերը, փոխանակային կատիոնների կազմը՝ Ca^{2+} , Mg^{2+} , ինչպես նաև K^+ և Na^+ քանակը՝ Ե.Վ. Արինուշկինայի, կարբոնատների պարունակությունը՝ Ս.Ա. Կուրդինի, մեխանիկական կազմը՝ Ն.Ա. Կաչինսկու, մատչելի սննդատարրերից ազոտը՝ Տյուրին-Կոնոնովայի, ֆոսֆորը՝ Բ.Պ. Մաչիգինի, կալիումը՝ Ա.Լ. Մասլովայի մեթոդներով [8]:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ չմշակվող, չէրոզացված անտառային դարչնագույն հողերն ունեն բարձր ագրոարտադրական ցուցանիշներ՝ ստրուկտուրային են, ունեն հումուսի և շարժուն սննդատարրերի բարձր պարունակություն:

Աղ. 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ հետազոտված անտառային դարչնագույն հողերի հումուսակուտակիչ A+B հորիզոնների հզորությունը, կախված մշակության և էրոզացվածության աստիճանից, տատանվում է 0-27-ից 0-50 սմ սահմաններում: Հումուսակուտակիչ A հորիզոնն ունի միջին և ծանր կավավազային մեխանիկական կազմ: Ստրուկտուրան հատիկա-կնձիկային է, ծակոտկեն, կարբոնատներ չի պարունակում: Գրեթե համանման հատկանիշներով է բնութագրվում նաև B₁ հորիզոնը: Հետազոտությունների արդյունքները միաժամանակ վկայում են, որ պրոֆիլի խորությանը զուգընթաց նկատվում է հողի մեխանիկական կազմի ծանրացում, որն էապես կախված է հողի էրոզացվածության աստիճանից և մշակությունից: Այսպես չմշակվող, չէրոզացված տարբերակի B₁ հորիզոնում ֆիզիկական կավի պարունակությունը 7,24%-ով բարձր է A հորիզոնի համեմատ և կազմել է 50,73%, իսկ C հորիզոնում այն հասել է 60,04%-ի: Հետազոտվող մյուս տարբերակներում բացառությամբ անտառային դարչնագույն, չմշակվող, թույլ էրոզացված տարբերակի, այդ օրինաչափությունը ոչ ցայտուն, բայց պահպանվում է: Գրեթե նույնատիպ օրինաչափություն է արձանագրվել նաև հողում՝ <0,001 մմ մեծության մասնիկների պարունակության տեսակետից: Չմշակվող, չէրոզացված տարբերակում, եթե A հորիզոնում հողի <0,001 մմ մեծության մասնիկների պարունակությունը կազմել է 4,82%, ապա B₂ ավելանում է գրեթե 2,7 անգամ:

Ստացված արդյունքները (աղ. 1) վկայում են, որ հետազոտվող բոլոր տարբերակներում անտառային դարչնագույն հողերը հագեցած են հողալկալի մետաղներով, որտեղ գերակշռում է Ca^{2+} : Այսպես, չմշակվող, չէրոզացված տարբերակի 100 գ հողում կլանված կատիոնների գումարը կազմել է 47,7 մգէկվ, որի մեջ 41,38 մգէկվ կազմել է Ca^{2+} -ը, իսկ Mg^{2+} -ը՝ ընդամենը 6,32%-ը: Ca^{2+} -ի պարունակությունն

անմշակ չէրոզացված հողատեսքերում ավելի բարձր է (41.38 մգէկվ 100գ հողում) քան մշակելի տարբեր աստիճանի էրոզիայի ենթարկված հողերում, որտեղ թույլ էրոզացված հողատեսքերում այն կազմում է 23.01 մգէկվ 100 գրամ հողում, իսկ միջին էրոզացված հողերում՝ 22.09 մգէկվ 100 գրամ հողում: Ի հակակշիռ Ca^{2+} -ի, Mg^{2+} -ի պարունակությունը տարբեր աստիճանի էրոզիայի ենթարկված հողատեսքերում զգալիորեն ավելանում է:

Աղյուսակ 1.

Էրոզացվածության աստիճանից կախված անտառային դարչնագույն հողերի ֆիզիկա-քիմիական հատկությունները (Լոռու մարզ, Եղեգնուտ համայնք)

Էրոզացվածությունը, հողահանդակի վիճակը	Հորիզոնը, խորությունը, սմ	CO ₂ , %	Կլանված կալիոններ, մգէկվ 100գ հողում			0.001 մմ, %	<0.01մմ, %
			Ca ²⁺	Mg ²⁺	Գումարը		
Չմշակվող, չէրոզացված	A 0 - 14	-	41.38	6.32	47.7	4.82	42.49
	B ₁ 14 - 29	-	14.09	2.14	16.23	3.23	41.0
	B ₂ 29 - 50	-	16.38	0.93	17.32	12.32	50.73
	C 50 - 72	-	21.91	2.15	24.06	26.89	60.04
Չմշակվող, թույլ էրոզացված	A 0 - 21	5.38	28.08	5.90	33.17	9.01	50.24
	B 21 - 43	7.04	25.05	6.19	31.24	14.70	56.12
	C 43 - 54	10.8	-	-	-	13.0	50.18
Չմշակվող, միջին էրոզացված	A _δ * 0 - 13	0.32	18.07	12.0	30.07	8.52	36.07
	B 13 - 27	0.33	18.24	12.3	30.54	7.01	40.30
	C 27 - 49	0.83	-	-	-	3.72	49.79
Վարելահող, թույլ էրոզացված	A _վ ** 0 - 19	6.44	23.01	2.98	25.99	13.45	51.56
	B 19 - 35	6.49	34.31	2.13	36.44	25.90	50.12
	C 35 - 40	6.79	-	-	-	28.55	53.3
Վարելահող, միջին էրոզացված	A _վ ** 0 - 22	-	22.09	3.11	25.2	21.02	40.27
	B 22 - 38	-	23.97	4.05	28.02	31.11	58.04
	C 38 - 59	-	-	-	-	30.14	53.0

Ծանուցում՝

*** ճմաշերտ, ** վարելահող**

Դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունների հիման վրա ստացված տվյալները ցույց են տալիս (աղ. 2), որ կախված էրոզացվածության աստիճանից, հողահանդակի վիճակից, էական տարբերություն է արձանագրվել նաև հողերի ջրակայուն ագրեգատների, հողում հումուսի ու շարժուն սննդատարրերի պարունակության տեսակետից: Մասնավորապես՝ չմշակվող, էրոզիայի չենթարկված հողերում ջրակայուն ագրեգատների քանակությունը բավականին բարձր է, ինչն էլ ապահովում է այդ հողերի բարենպաստ ջրաֆիզիկական հատկությունները: Ջրակայուն ագրեգատների կազմում գերակշռում են 3-5 մմ, այնուհետև 1-3 մմ տրամագիծ ունեցող մասնիկները: Նշված չափսերի ագրեգատների գումարը կազմում է ջրակայուն ստրուկտուրայի կեսից ավելին, ապահովելով անտառային դարչնագույն հողերի բարձր ստրուկտուրայնությունը: Հողերի վերին հորիզոններում ջրակայուն

ագրեգատների պարունակությունը կազմում է 64.58-71.3%, ստորին հորիզոններում նկատվում է դրանց պարունակության նկատելի նվազում (աղ. 2):

Ջրակայուն ագրեգատների տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ այստեղ ևս մեծ տարբերություն է նկատվում անմշակ չերոզացված տարբերակների և մշակելի էրոզիայի ենթարկված հողատեսքերի միջև: Այսպես, եթե անմշակ հողերի A հորիզոնում նշված ցուցանիշը կազմում է 64.58 %, ապա թույլ էրոզացված հողերի վարելաշերտում այն կազմում է 54.92%, իսկ միջին էրոզացված տարբերակներում 38.32%:

Աղյուսակ 2.

Անտառային դարչնագույն հողերի ագրոքիմիական հատկությունները էրոզացվածության աստիճանից կախված (Լոռու մարզ, Եղեգնուտ համայնք)

Էրոզացվածությունը, հողահանդակի վիճակը	Հորիզոն, սմ	Հիգրոսկոպիկ խոնավություն, %	Ջրակայուն ագրեգատները, %	pH	Հումուս, %	Մգ/100գ հողում		
						N	P ₂ O ₅	K ₂ O
Չմշակվող, չէրոզացված	A 0-14	7.28	64.58	6.40	6.5	7.0	4.7	35.6
	B ₁ 14-29	4.12	71.30	6.65	4.36	4.04	3.9	33.2
	B ₂ 29-50	4.15	50.00	7.3	1.05	3.6	2.0	24.3
	C 50-72	6.24	-	7.4	0.98	1.3	1.8	22.3
Չմշակվող, թույլ էրոզացված	A 0-21	6.83	57.00	6.9	5.02	6.1	5.4	42.0
	B 21-43	5.96	74.60	7.3	2.11	3.2	3.0	20.5
	C 43-54	4.75	-	8.02	0.94	1.6	2.0	25.0
Չմշակվող, միջին էրոզացված	A _δ * 0-13	4.61	57.0	7.5	4.10	4.6	3.1	39.1
	B 13-27	5.71	74.60	7.6	2.33	3.0	2.9	30.4
	C ₂ 27-49	7.23	-	7.7	1.35	1.4	1.6	16.2
Վարելահող, թույլ էրոզացված	A _լ ** 0-19	4.03	54.92	7.45	4.58	5.9	3.7	39.8
	B 19-35	7.57	52.00	8.05	3.42	3.9	2.8	32.0
	C 35-40	7.55	52.0	8.00	1.60	1.9	1.2	23.1
Վարելահող, միջին էրոզացված	A _լ ** 0-22	4.64	38.32	7.21	3.48	4.7	3.4	36.6
	B 22-38	8.22	32.40	7.6	1.45	3.0	2.3	27.2
	C 38-59	6.36	-	7.8	0.70	1.06	0.85	21.2

Ծանուցում՝

*** ճմաշերտ, ** վարելահող**

Ուսումնասիրությունները փաստում են, որ հումուսի պարունակության տեսակետից կա որոշակի օրինաչափություն՝ բոլոր փորձարկվող տարբերակների վերին հորիզոնում հումուսի պարունակությունն ամենաբարձրն է, խորացմանը զուգընթաց այն նվազում է: Այսպես, չէրոզացված տարբերակի A հորիզոնում՝ 0-14 սմ, հումուսի պարունակությունը կազմել է 6,5%, խորացմանը զուգընթաց այն նվազել է և B₁ հորիզոնի 14-29 սմ խորությունում կազմել է 4.36, B₂ 29-50 սմ խորությունում կազմել է 1.05 %: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ զգալի տարբերություն է նկատվում անմշակ, էրոզիայի չենթարկված, թույլ և միջին էրոզացված հողատեսքերի

և մշակվող տարբերակների միջև: Այդ տարբերությունն ակնհայտ է, հատկապես հումուսի պարունակության առումով: Եթե չմշակվող հողերի վերին հորիզոնում այն կազմում է 6.5%, ապա թույլ էրոզացված հողերում նվազում է մինչև 5.02%, իսկ միջին էրոզացված տարբերակներում 4.10%: Նման օրինաչափություն է նկատվում նաև հողում շարժուն սննդատարրերի՝ ազոտ (N), ֆոսֆոր (P_2O_5) և կալիում (K_2O), պարունակության տեսակետից: Այսպես, չմշակվող, չէրոզացված տարբերակի A հորիզոնում արձանագրվել է այդ էլեմենտների ամենաբարձր քանակությունը՝ N-7,0, P_2O_5 -4,7 և K_2O -35,6-մգ/100գ հողում, որը խորացմանը զուգընթաց օրինաչափորեն նվազում է:

Ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ էրոզիայի հետևանքով նվազում է հումուսի պարունակությունը, քայքայվում է հողի ստրուկտուրան, պակասում է ագրոնոմիական տեսակետից բարձր արժեք ներկայացնող ջրակայուն ագրեգատների ընդհանուր քանակությունը, որոնք ի վերջո բերում են հողերի բերրիության անկման, հետևաբար նաև դեգրադացման և անապատացման:

Եզրակացություն.

1. Հողապաշտպան ագրոտեխնիկայի բացակայության հետևանքով տարեց տարի մեծանում է անտառային դարչնագույն հողերի էրոզացվածության աստիճանը, որը հանգեցնում է հողի որակական հատկանիշների վատացմանը: Անտառային դարչնագույն հողերի էրոզացվածության աստիճանի մեծացմանը զուգընթաց նվազում է հողային կտրվածքի հզորությունը, հումուսի և հիմնական սննդատարրերի (ազոտ, ֆոսֆոր, կալիում), ջրակայուն ագրեգատների (>0.25 մմ) քանակությունը, որը հանգեցնում է բերրիության անկման, էրոզիայի ինտեսիվության մեծացման և հետևաբար հողերի դեգրադացիայի ու անապատացման, ինչը վերջին հաշվով հանգեցնում է գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետության նվազմանը:
2. Հողի որակական հատկանիշների, նրա մեխորատիվ վիճակի բարելավման, հողերի էրոզիայի, դեգրադացիայի ու անապատացման երևույթների կանխարգելման և բերրիության բարձրացման նպատակով երկրագործության վարման համակարգում պետք է ներդնել հողի ռեսուրսախնայողական մշակության, բույսերի խնամքի նոր տեխնոլոգիաներ ու մեթոդներ: Հողերի մշակության աշխատանքներ իրականացնել ըստ լանջի ուղղաձեռի, կիրառել ցանքաշրջանառության արդյունավետ սխեմաներ և հողը պարարտացնել օրգանական պարարտանյութերի բարձր նորմաներով (25-30 տ/հա):
3. Ուժեղ էրոզացված և մշակությունից դուրս մնացած վարելահողերում անհրաժեշտ է մշակել թիթեռնաձաղկավոր և բազմամյա հացազգի խոտախառնուրդներ, որոնք էապես կնվազեցնեն էրոզիոն պրոցեսները, կվերականգնեն հողի քայքայված ստրուկտուրան, կմեծացնեն օրգանական նյութի պաշարները, կբարելավեն հողի ագրոֆիզիկական հատկությունները՝ հնարավորություն ստեղծելով այն կրկին գյուղատնտեսական շրջանառություն վերադարձնելու համար:

Գրականություն

1. **Դավթյան Գ.Ս.**, Բաբայան Գ.Բ., Հայկական ՍՍԴ հողաձածկի ագրաքիմիական բնութագիրը: Հայկական ՍՍԴ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: Եր., 1966. - 130 էջ:
2. **Էդիլյան Ռ.Ա.**, Մկրտչյան Գ.Ա., Հայաստանի հողային ծածկոցի բնագյուղատնտեսական շրջանացումը: Պոլիգրաֆիայի օպերատիվ արտադրամաս: Եր., 1990. - 55 էջ:

3. **Կրոյան Ա.**, Խոյեցյան Ա., Խաչատրյան Ս., Սանոսյան Գ., Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով, գիրք երկրորդ, հողերի աշխարհագրություն, ISBN 978 9939-893-0, Եր., Մեկնարկ 2022. - 178 էջ:
4. **Հայրապետյան Է.Մ.**, Հողագիտություն: «Աստղիկ» հրատարակչություն: Եր., 2000. - 456 էջ:
5. **Հայրապետյան Է.Մ.**, Պետրոսյան Հ.Պ., Մելիորատիվ հողագիտություն, «ԼՈՒՅՍ». Հրատարակչություն: Եր., 1988. - 430 էջ:
6. **Մաթևոսյան Հ.Շ.**, Տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտում: Առնապ, Եր., 2017. - 90 էջ:
7. **Միավորված** ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա», ՀՀ բնապահպանության նախարարություն, «Դար», Եր., 2000. - 142 էջ:
8. **Аринушкина Е.В.**, Руководство по химическому анализу почв, Изд-во МГУ, М., 1962. - 492 с.
9. **Григорян Ш.М.**, Возделывание сельскохозяйственных культур интенсивными, промышленными энергосберегающими и почвозащитными технологиями. Журнал, Агропром наука и производство, Ер., No 6, 1991. - СС. 65-74.
10. **Маркосян А.О.**, Эффективность минимальной и нулевой обработок почвы под озимую пшеницу в степной зоне республики Армения. Вестник Государственного аграрного университета Армении, международная конференция, Ер., No 3, 2007. СС. 77-79.

Ա.Օ. Մարկոսյան, Տ.Ա. Սանանյան, Գ.Ա. Գասպարյան, Թ.Ա. Ժանգիրյան, Տ.Կ. Բաղդասարյան

МЕЛИОРАТИВНОЕ СОСТОЯНИЕ КОРИЧНЕВЫХ ЛЕСНЫХ ПОЧВ И ЭФФЕКТИВНОСТЬ ПРИМЕНЕНИЯ КОМПЛЕКСНЫХ ПРОТИВОЭРОЗИОННЫХ МЕРОПРИЯТИЙ

Деградация земель и опустынивание являются величайшими бедствиями, угрожающими человеческому обществу. Глобальное изменение климата и пробелы в культуре земледелия значительно усиливают негативное влияние этих процессов. В статье представлена направленность деградиционных процессов в эродированных коричневых лесных почвах Лорийской области, качественные характеристики этих почв, мощность, степень гумусированности и обеспеченности питательными веществами. Для смягчения эрозионных процессов, деградации и опустынивания почв, на основании проведенных исследований предложено внедрить в систему ведения сельского хозяйства новые технологии и методы ресурсосберегающей обработки почвы и ухода за растениями. В частности, нужно обработку почвы осуществлять по контурам склона, применять эффективные схемы севооборотов и удобрять почву высокими нормами органических удобрений (25-30 т/га). На сильно эродированных и необрабатываемых пашнях необходимо возделывать травосмесь бобовых и злаковых трав, что значительно снизит эрозионные процессы.

Ключевые слова: деградация, эрозия, водопрочные агрегаты, гумус, ресурсосберегающее возделывание.

A.O. Markosyan, S.A. Hunanyan, G.H. Gasparyan, T.A. Jhangiryan, S.K. Baghdasaryan

THE MELIORATIVE CONDITION OF FOREST BROWN SOILS AND THE EFFECTIVENESS OF THE APPLICATION OF ANTI-EROSION COMPLEX MEASURES

Land degradation and desertification are the greatest scourges threatening human society. Global climate change and gaps in the culture of agriculture significantly increase the negative impact of these processes. The article presents the direction of degradation processes in the eroded forest brown soils of the Lori region, the qualitative characteristics of these soils, the thickness, the degree of humus content and the availability of nutrients. To mitigate erosion processes, degradation and desertification of soils, on the basis of the conducted research, it is proposed to introduce new technologies and methods of resource-saving tillage and plant care into the agricultural system. In particular, it is necessary to cultivate the soil along the contours of the slope, apply effective crop rotation schemes and fertilize the soil with high rates of organic

fertilizers (25-30 t/ha). On heavily eroded and uncultivated arable lands, it is necessary to cultivate a grass mixture of legumes and cereal grasses, which will significantly reduce erosion processes.

Key words: degradation, erosion, mechanical composition, water-stable aggregates, humus, resource-saving cultivation.

Մարկոսյան Ալբերտ Օվկիանոսի – գյուղատնտեսական գիտ. դոկտոր (ՀԱԱՀ)

Հունանյան Սուրիկ Ալեքսանի – գյուղատնտեսական գիտ. դոկտոր (ՀԱԱՀ)

Գասպարյան Գայանե Հարությունի – գյուղատնտեսական գիտ. թեկնածու (ՀԱԱՀ)

Ջհանգիրյան Տաթևիկ Արթուրի – գյուղատնտեսական գիտ. թեկնածու (ՀԱԱՀ)

Բաղդասարյան Սանասար Կոլիայի – գյուղատնտեսական գիտ. թեկնածու (ՀԱԱՀ)

Ներկայացման ամսաթիվը՝ 23.05. 2023

Գրախոսման ամսաթիվը՝ 25.05. 2023

Ա.Ա. Սարուխանյան, Պ.Հ. Բալթյան

ԱԶԱՏԻ ԶՐԱՄԲԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ազատի ջրամբարի տեխնիկական վիճակը գնահատելու համար կատարվել են ակնադիտական ուսումնասիրություններ, չափումներ և շահագործող անձնակազմի պատասխանատուների հետ քննարկումներ: Աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են գրունտային պատվարի մարմնի ֆիլտրացիոն պայմանները, գնահատվել իռիգացիոն ջրթողի և աղեպային ջրհեղի շահագործողական վիճակները, պարզել մեխանիկական սարքավորումների սարքինության աստիճանը: Կատարված ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկվել են այն առաջնահերթ միջոցառումները, որոնց իրականացումը հնարավորություն կտա էապես բարելավել Ազատի ջրամբարի շահագործման անվտանգությունն ու արդյունավետությունը, նվազեցնել հնարավոր վթարային ռիսկերը՝ նվազեցնելով աղետների ռիսկը տվյալ տարածքում:

Առանցքային բառեր. ջրամբար, գրունտային պատվար, ջրթող կառուցվածք, ֆիլտրացիա, մեխանիկական սարքավորում, տեխնիկական վիճակի գնահատում:

Որպես առաջին կարգի կառուցվածքներ, ջրամբարներին ներկայացվում են ամրության, անվտանգության և երկարակեցության ապահովման ամենաբարձր պահանջներ [1, 2]: Այդ տեսակետից, յուրաքանչյուր շահագործվող ջրամբարի տեխնիկական վիճակի պարբերական, համալիր և մանրամասն ուսումնասիրությունները կարևոր նշանակություն ունեն նշված պահանջներն ապահովելու համար: Հայաստանի Հանրապետությունում շահագործվում են ավելի քան ութ տասնյակ մեծ ու փոքր ջրամբարներ [3]: Բացի Ախուրյանի ջրամբարից մնացած բոլորի պատվարները գրունտային են: Զրային կոմիտեի մասնագետների կողմից ժամանակ առ ժամանակ կատարվել են առանձին ջրամբարների ուսումնասիրություններ, նշվել առկա թերությունները: Ինչպես ցույց են տալիս դրանց արդյունքները ջրամբարների մեծ մասում առկա են առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրներ: Դրանց համար պետք է կատարվեն մասնագիտական խորը հետազոտություններ, տրվեն նախագծային մշակումներ և իրականացվեն վերականգնման աշխատանքներ: Սակայն վերջին երեք տասնամյակի ընթացքում շատ քիչ միջոցառումներ են իրականացվել: Նկատի ունենալով նշված իրավիճակը ջրային կոմիտեի հանձնարարությամբ աշխատանքի հեղինակների կողմից վերջին տարիներին հանրապետության մեկ տասնյակ խոշոր ջրամբարներում կատարվել են ընդհանուր տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ:

Աշխատանքի նպատակն է վերլուծել Ազատի ջրամբարի պատվարի, դրա հանգույցների ու մեխանիկական սարքավորումների համար կատարված ուսումնասիրությանն արդյունքները, մշակել գրանցված թերությունների և անսարքությունների վերացմանն ուղղված միջոցառումների առաջարկներ:

Ազատի ջրամբարը (նկ. 1) ունի ռազմավարական կարևոր նշանակություն: Այն կարգավորելով Ազատ գետի հոսքերը, ապահովում է ինչպես հազարավոր հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ոռոգման, այնպես էլ հանրապետական նշանակության արտադրական օբյեկտների ջրամատակարարման պահանջարկը [4]: Այն հանգամանքը, որ Ազատի ջրամբարից ներքև տեղաբաշխված

են Արարատի մարզի տասնյակ մեծ ու փոքր բնակավայրեր, կարևոր հաղորդակցության ուղիներ և միջազգային նշանակության ավտոճանապարհներ, հիդրոհանգույցը առաջին կարգի նշանակության հետ մեկտեղ դարձել է նաև բարձր ռիսկայնության կառուցվածք [5]: Ուստի Ազատի ջրամբարի պատվարին և դրա հանգույցներին ներկայացվող անվտանգության պայմանների ապահովումը հանդիսանում է կենսական և ռազմավարական նշանակության խնդիր: Այս առումով, ջրամբարի տեխնիկական վիճակի բացահայտումը ձեռք է բերում առաջնային կարևորություն:

Ուսումնասիրության արդյունքները. Ազատի ջրամբարի տեխնիկական վիճակը գնահատելու համար իրականացվել են հետազոտություններ և դիտարկումներ: Առկա առանձին խնդիրներ քննարկվել են շահագործող անձնակազմի հետ: Ուսումնասիրությունների արդյունքները հիմք են տալիս ներկայացնել ջրամբարի տեխնիկական վիճակի հետևյալ պատկերը.

- 1) կավե միջուկով պատվարի մարմնից դուրս եկող ֆիլտրացիոն հոսքերը, որոնց նկատմամբ իրականացվում է պարբերական դիտարկումներ և չափումներ, կայուն են: Դրա հետ մեկտեղ չեն անցկացվում այդ ջրերի լաբորատոր հետազոտություններ: Նման հետազոտություն կատարելն անհրաժեշտ է պարզելու համար, արդյո՞ք գրունտային պատվարի մարմնից առկա է մանր մասնիկների լվացում,
- 2) պատվարի մարմնում տեղադրված այեզոմետրական ցանցը չի գործում (բացի երկու այեզոմետրերից, որոնց ցուցանիշները պարբերաբար գրանցվում են (նկ. 2): Անհրաժեշտ է ուսումնասիրել այեզոմետրական ցանցի տեխնիկական վիճակը և մշակել դրանց վերականգնման առաջարկություններ: Կարևոր է իրականացնել պատվարի գրունտի ֆիլտրացիոն վիճակի ուսումնասիրություններ և հոսքերի քանակական ու որակական ցուցանիշները համադրել նախագծային արժեքների հետ: Պատվարի գրունտի ֆիլտրացիոն վիճակի գնահատմամբ կարևոր եզրակացություններ կարելի է կատարել նրա ամրության մասին:



Նկ. 1. Ջրամբարի թասի ընդհանուր պատկերը



Նկ. 2. Պատվարի մարմնում տեղադրված այեզոմետրի արտաքին տեսքը

- 3) ջրամբարի բարձր հորիզոնների դեպքում աջ ափում առաջանում են չնախատեսված ֆիլտրացիոն հոսքեր: Դրանք նկատելի են ներքին բյեֆի միջնամասում՝ հարակից աղետային ջրհեռին: Անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ այդ հոսքերի առաջացման պատճառներն ուսումնասիրելու և այդ երևույթը հնարավորինս չեզոքացնելուն ուղղված ինժեներական միջոցառումներ մշակելու համար,

- 4) պատվարի մարմնի գրունտի ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշման նպատակով առաջարկվում է այդտեղ կատարել առնվազն 3 հորատանցքերի փորում և ստացված նմուշները ենթարկել լաբորատոր փորձարկումների: Դա հնարավորություն կտա գնահատել պատվարի կայունության պաշարը,
- 5) բավական մանրամասն ուսումնասիրվել են իրիգացիոն ջրթողի և աղետային ջրհեռի տեխնիկական վիճակները: Մասնավորապես, աղետային ջրհեռի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկաթբետոնե հատակը, իսկ առանձին տեղերում նաև պատերը բավականին քայքայված են (նկ. 3), որոշակի մերկացել են ամրանները: Պետք է կատարել մասնագիտական լուրջ հետազոտություն, ինչը հնարավորություն կտա գնահատել վերանորոգման անհրաժեշտ միջոցառումների ծավալները:



Նկ. 3. Աղետային բաց ջրհեռի միջնամասի և վերջնամասի տեսքերը

- 6) անհրաժեշտ է իրականացնել տարածքի միկրոշրջայնացում, ջրամբարի տեղանքի սեյսմիկության գոտին և հնարավոր սեյսմիկ բեռները որոշելու նպատակով: Հորատված փորձանմուշների լաբորատոր հետազոտման և միկրոշրջայնացման արդյունքներով կատարել պատվարի ամրության և կայունության հաշվարկներ,
- 7) ջրամբարում կուտակված ջրաբերուկների ծավալի և դրա տեղաբաշխման ձևի որոշման համար իրականացնել չափագրություններ: Դրա հիման վրա հնարավոր կլինի գնահատել ջրամբարի օգտակար և մեռյալ ծավալների փոփոխման պատկերը և կանխատեսել այդ գործընթացի հետագա զարգացումները,
- 8) հրատապ լուծում պահանջող խնդիրներ են առաջացել ջրամբարի դատարկման համակարգում (գլխամասային հանգույց, հեռացնող ջրհեռ խողովակաշար, սպասարկման թունել, հիդրոմեխանիկական սարքավորումներ) (նկ. 4 և նկ. 5): Անհրաժեշտ է կատարել այդ հանգույցների տեխնիկական վիճակի մասնագիտական մանրամասն ուսումնասիրություններ, ռիսկերի գնահատում և կապիտալ վերանորոգման միջոցառումների մշակում:



Նկ. 4. Ջրամբարի դատարկման խողովակաշարի և դրա վրա տեղադրված կարգավորման փականների վիճակը

- 9) իրականացնել ջրամբարի իռիգացիոն համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ, իռիգացիոն ջրթողի մուտքի կառուցվածքների (մոտեցող ջրանցք, աղբորսիչ ցանց, մուտքի հարթ փական և դրա կառավարման մեխանիզմներ), իռիգացիոն ջրատարի վերջում տեղադրված հիդրոմեխանիկական սարքավորումների տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ և մշակել առաջարկություններ (նկ. 5 և նկ. 6): Պետք է կատարել իռիգացիոն ջրթողի բաժանարար հանգույցի տարրերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և հիդրավլիկական ռեժիմի վերահաշվարկ, տալ առաջարկություններ հանգույցի աշխատանքը բարելավելու ուղղությամբ:



Նկ. 5. Իռիգացիոն ջրթողի սկավառակավոր և կոնական փականների տեսքերը

- 10) իրականացնել հետազոտություններ ջրամբարի դատարկման խողովակաշարի տեխնիկական վիճակի գնահատման վերաբերյալ և մշակել հնժեներական միջոցառումներ դրա հետագա անվտանգ շահագործումն ապահովելու համար (նկ. 7).



Նկ. 6. Իռիգացիոն ջրթողի բաժանարար հանգույցի և դրանում առկա հիդրոմեխանիկական սարքավորումների պատկերը



Նկ. 7. Դատարկման խողովակաշարի ընդհանուր տեսքը

- 11) ջրամբարի հատակով անցնող, դատարկման խողովակաշարի թունելի ուսումնասիրություններով բացահայտվել են դրա առավել վնասված և տեղ-տեղ քայքայված տեղամասերը (Նկ. 8): Անհրաժեշտ է կատարել մասնագիտական մանրամասն հետազոտություններ բետոնային երեսարկի տեխնիկական բնութագրերի գնահատման վերաբերյալ:



Նկ. 8. Սպորդեպոնյա թունելի վթարային հափվածները

Այսպիսով, Ազատի ջրամբարի տեխնիկական վիճակի ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ գրունտային պատվարի և դրա հանգույցների շահագործման անվտանգությունն ու արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր հանգույցների համար համապատասխան մասնագետների ընդգրկմամբ իրականացնել կառուցվածքի և դրա տարրերի գործիքային, լաբորատոր և հաշվարկային հետազոտություններ: Դրանց հիման վրա ջրամբարի բոլոր հանգույցների համար մշակել և կատարել վերականգնողական լայնածավալ միջոցառումներ: Ընդ որում, դրանց մի մասն ունի առաջնահերթություն (ջրթող խողովակաշարի քայքայվածության գնահատում, նրա մեխանիկական սարքավորումների վերանորոգում, բարձր հորիզոններում ֆիլտրացիոն ելքերի աճի պատճառների պարզում և դրա դեմ միջոցառումների իրականացում): Նշված միջոցառումների իրականացման արդյունքում էապես կնվազեն վթարային իրավիճակների առաջացման ռիսկերը, ինչը կբերի Ազատի ջրամբարից ներքև տեղաբաշխված տասնյակ մեծ ու փոքր բնակավայրերի, գյուղատնտեսական տարածքների և հաղորդակցության ուղիների անվտանգության ապահովմանը:

Գրականություն

1. Alicescu V., Tournier I., Yannobel P. Desing and construction of Nemiscau-1 Dam, dhe first asphalt core rockfill dam in North American //Proc. Of CDA 2008 Annual Conference, Canadian Dam Association, 2008, pp. 1-11.
2. **Орехов В.В.**, Устойчивость грунтовых плотин с вертикальной диафрагмой //Вестник НИУ МГСУ «Гидравлика, инженерная гидрология, гидротехническое строительство», №1, М., 2016. СС. 143-148.
3. Gabayan G., Baljyan P., Tokmajyan V., Martirosyan T. The Organisation of the Observation System in Dams as the Main Part of Safety of Reservuars Explotation /4th Inter. Scientific and Technical Conference on Modern Problems of Water Management and Construction, Sept. 27-30, Tbilisi 2014.- pp 65-73.
4. **Ազատի ջրամբար** - <https://hy.wikipedia.org/wiki>. Դիտում՝ 18.09.2023.
5. Շինարարական նորմեր ՀՀՇՆ 33-01-2022, Հիդրոտեխնիկական կառուցվածքներ. Հիմնական դրույթներ: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=89601>. Դիտում՝ 18.09.2023.

А.А. Саруханян, П.О. Балджян

**РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ ОБЩЕГО ТЕХНИЧЕСКОГО
СОСТОЯНИЯ АЗАТСКОГО ВОДОХРАНИЛИЩА**

Для оценки технического состояния Азатского водохранилища проведены наблюдения, измерения и обсуждения с персоналом по эксплуатации. В ходе работ исследованы фильтрационные условия через тело грунтовой плотины, оценены эксплуатационные состояния ирригационного водовыпуска и аварийного водоотвода, выяснена степень работоспособности механических устройств. На основе анализа результатов проведенных исследований предложены те первоочередные мероприятия, проведение которых даст возможность существенно улучшить эксплуатационную безопасность и эффективность Азатского водохранилища и уменьшить возможные аварийные риски

Ключевые слова: водохранилище, земляная дамба, дренажное сооружение, фильтрация, механическое оборудование, оценка технического состояния.

A.A. Sarukhanyan, P.H. Baljyan

RESEARCH FINDINGS ON THE OVERALL TECHNICAL CONDITION OF AZAT RESERVOIR

To assess the technical condition of Azat Reservoir, observations, measurements, and discussions with operational personnel were conducted. The study included an examination of filtration conditions through the body of the earthen dam, an evaluation of the operational status of the irrigation water discharge and emergency drainage, and an assessment of the functionality of mechanical devices. Based on the analysis of the research results, key measures have been proposed. Implementation of these measures is expected to significantly enhance the operational safety and efficiency of Azat Reservoir and reduce possible emergency risks.

Keywords: reservoir, earthen dam, drainage structure, filtration, mechanical equipment, technical condition assessment.

Սարուխանյան Արիստակես Արամայիսի - տ.գ.դ., պրոֆեսոր (ՃՇՀԱՀ)
Բալյան Պարզև Հովհաննեսի - տ.գ.դ., պրոֆեսոր (ՀԱՊՀ)

Ներկայացման ամսաթիվը՝ 17.10.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 24.10.2023

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ. 2023. № 2 (23)

Հ.Պ. Ղարիբյան, Ա.Ջ. Գասպարյան

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բնակչության պալատարումն իրականացվում է վերգերնյա, ստորգերնյա հատուկ շինություններում (ապաստարաններ, թաքստոցներ), ինչպես նաև բնակելի ֆոնդի փարածքներում: Հասկանալի է, որ վերգերնյա և ստորգերնյա հատուկ շինությունները քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ են, որոնք նախատեսված են բնակչության ու նյութական արժեքների պալատարման համար:

Պաշտպանական կառույցների օգտագործումը խաղաղ ժամանակ փորձարկման և հանրային ծառայությունների կարիքների համար հանդիսանում է արդիական խնդիր:

Առանցքային բառեր. պաշտպանական կառույց, բնակչության պալատարում, պարզագույն թաքստոց, վերգերնյա և ստորգերնյա հատուկ շինություն:

Հայտնի է, որ զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովումը համապատասխան շինությունների տարածքում կոչվում է պատասպարում, ինչը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության ձևերից մեկը [1]:

Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցները վերգետնյա և ստորգետնյա շինություններ են, որոնք նախատեսված են մարդկանց ու նյութական արժեքների պատասպարման համար: Այդ կառույցները կարող են օգտագործվել խաղաղ ժամանակ նաև տնտեսության և հանրային ծառայությունների կարիքների համար: Այս երկակի օգտագործման սկզբունքը թույլ է տալիս ոչ միայն արդյունավետ օգտագործել այդ կառույցները, այլև պահպանել դրանք լավ և պատասպարվողներին ընդունելու պատրաստ վիճակում:

Խաղաղ ժամանակաշրջանում կառույցի սպասարկման և պատասպարվողների առկայության պայմաններում դրա օգտագործման պատրաստականության ապահովման համար ստեղծվում են պաշտպանական կառույցների սպասարկման խմբեր:

Պաշտպանական կառույցների օգտագործումը խաղաղ ժամանակ տնտեսության և հանրային ծառայությունների կարիքների համար իրականացվում են **ՀՀՇՆ 31-10-2022** և այլ կարգավորող փաստաթղթերի պահանջներին համապատասխան, ինչը չպետք է նվազեցնի այդ կառույցների պաշտպանական հատկությունները և դրանք պատրաստության բերման ժամկետները, իրենց նպատակների համար օգտագործման պատրաստականությունը [3]:

Խաղաղ ժամանակներում պաշտպանական կառույցներն այլ նպատակներով օգտագործելու հնարավորությունները թույլատրվում է ՀՀ պաշտպանության և ՀՀ ներքին գործերի նախարարությունների տարածքային մարմինների համաձայնությամբ:

Խաղաղ ժամանակներում պաշտպանական շինությունները բնակչության սակավաշարժուն խմբերի կողմից օգտագործելու նպատակով, դրանց մուտքերն անհրաժեշտ է կահավորել հատուկ սարքավորումներով, համաձայն **ՀՀՇՆ 31-10-2022** և **ՀՀԿԿ 23-101-2017** նորմերի պահանջների [3, 4]:

Տարածքների ազատումը գույքից իրականացվում է պատասպարման ռեժիմի անցման ժամանակ 6 ժամից ոչ ավելի ժամանակում:

Քաղաքացիական պաշտպանության օբյեկտների և գույքի օգտագործման կարգի մասին կանոնակարգը և քաղաքացիական պաշտպանության օբյեկտների ու գույքի նկատմամբ իրավունքների և պարտականությունների օրինակելի պայմանագիրը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ:

Քաղաքացիական պաշտպանության օբյեկտների և գույքի նկատմամբ իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման վերաբերյալ կնքվում է պայմանագիր:

Պայմանագիրը ստորագրում են կազմակերպության ղեկավարը, որը պատասխանատու է արտադրության և հանրային ծառայությունների կարիքների (պաշտպանական կառույցների պահպանման, շահագործման ու օգտագործման) համար և պետական գույքի կառավարման մարմնի ներկայացուցիչը: Այն համաձայ-

նեցվում է տարածքային կառավարման մարմնի համապատասխան ներկայացուցչի և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ:

Բնակավայրերի տարածքում տեղակայված պարզագույն թաքստոցների տարածքները տնտեսական նպատակով օգտագործող իրավաբանական և ֆիզիկական անձինք համայնքի ղեկավարի հետ կնքում են պայմանագիր տվյալ տարածքներն, անհրաժեշտության դեպքում, բնակչության պատասպարման կազմակերպման համար օգտագործելու վերաբերյալ: Նշված պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը [2]:

Իսաղաղ ժամանակ պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով, որի ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից և իրականացվի դրանց ժամանակին պատրաստականության բերումը պատասպարվողների ընդունման համար: Որոշ դեպքերում, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հետ համաձայնությամբ, դրանք փոխանցվում են այլ կազմակերպություններին՝ արտադրական կարիքների համար:

Պաշտպանական կառույցների օգտագործումը տնտեսական նպատակով թույլատրելի է պաշտպանական կառույցների ծավալի 40 %-ի չափով և ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի, քան 6 ժամ [5]:

Պաշտպանական կառույցների օգտագործումը՝ ելնելով տնտեսության շահերից, որպես **Գ** և **Դ** դասի հրդեհավտանգության արտադրական ու տեխնոլոգիական սենքեր, պետք է բացառի դրանցում ընթացող տեխնոլոգիական գործառույթների զուգակցումը մարդու համար վնասարար հեղուկ, գոլորշային, գազային արտածումներով և չպահանջի բնական լուսավորություն: Պաշտպանական կառույցների օգտագործումը նպատակահարմար է որպես հերթապահ էլեկտրիկների, կապի սպասավորների, վերանորոգող աշխատախմբերի սենքեր, չիրկիզվող նյութերի և չիրկիզվող փաթեթավորմամբ հրկիզվող նյութերի պահեստարաններ:

Նախքան ապաստարանը կամ կացարանը վարձակալության հանձնելը, ապագա վարձակալից պահանջվում է կառույցի սենյակների օգտագործման նախագիծ կամ պլան: Դրանից հետո միայն կնքվում է պայմանագիր, որին կցվում են ընդունման վկայականը և պարտավորությունը:

Պաշտպանական կառույցի վարձակալություն ստացած անձն իրավունք չունի այն փոխանցել այլ ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ անձանց:

Վարձակալը պարտավոր է առնվազն երկու տարին մեկ անգամ իր միջոցներով վերանորոգել տարածքները, սարքավորումները և գույքը, ինչպես նաև դրանք պահել մաքուր ու միշտ պատրաստ: Եթե վարձակալները չեն պահպանում պահպանման ու շահագործման կանոնները, ապա նրանք ենթարկվում են պատասխանատվության և պայմանագիրը լուծվում է:

Ելնելով տնտեսության շահերից պաշտպանական կառույցները վարձակալության հանձնելու բոլոր դեպքերում պետք է պահպանվի մի անփոխարինելի պայման՝ կառույցի օգտագործման արդյունքում սարքավորումները չպետք է շարքից դուրս գան, կառուցատարրերը չպետք է վնասվեն, պաշտպանական հատկությունները չպետք է

վատթարանան և չպետք է նվազի կառույցի պատրաստությունը պատասպարվողներին ընդունելու համար: Նման կառույցներում խստիվ արգելվում է լվացքատների, քիմաքրման կետերի, խանութների տեղադրումը, դյուրավառ, թունավոր հեղուկների, քիմիական նյութերի պահեստավորումը, ինչպես նաև խցիկներում ծանր ու ծավալուն սարքավորումների տեղադրումը:

Պաշտպանական կառույցները՝ որպես պահեստ, ավտոկայանատեղեր, արտադրամասեր օգտագործելիս թույլատրելի է տարածքների զբաղվածությունն այդ կառույցների գնահատված հզորությունից պատասպարվողների 50 %-ի ապահովման չափով (առանց ազատելու պահեստավորված գույքը):



Նկ. 1. Խաղաղ ժամանակներում պաշտպանական կառույցի օգտագործումը որպես պահեստ

Ելնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների շահերից խաղաղ ժամանակներում պաշտպանական կառույցները կարող են օգտագործվել որպես՝

- սանիտարակենցաղային սենք (զգեստապահարաններով ցնցուղարան, լվացարան և այլն),
- ուսումնական պարապմունքների ու մշակույթային սպասարկման սենքեր,
- մարդատար ավտոտնակներ, ստորգետնյա ավտոկայանատեղեր,
- առևտրի և հասարակական սննդի սենքեր (խանութներ, ճաշասրահներ, սրճարաններ, խորտկարաններ),
- մարզական սենքեր (հրաձգարաններ, մարզասրահներ),
- բնակչության կենցաղային սպասարկման սենքեր (կենցաղային տներ, արվեստանոցներ, արհեստանոցներ, ընդունման կետեր, լուսանկարչարաններ և այլն),
- շենքերի սպասարկման կառավարման գրասենյակներ և ծառայություններ,
- տարբեր բնույթի ընդունելության կենտրոններ,
- առողջապահական հաստատությունների օժանդակ սենքեր [5]:



Նկ. 2. Խաղաղ ժամանակներում պաշտպանական կառույցի օգտագործումն ուսումնական պարապմունքների համար

Եթե շենքում տեղադրել են ցուցադրական սրահներ և ցուցահանդեսներ, որտեղ երկարատև կլինեն մեծ թվով մարդիկ, նպատակահարմար է դրանցում տեղադրել լրացուցիչ օդափոխիչներ և էլեկտրական տաքացուցիչներ: Հնարավոր է սարքավորել օդի բաշխման լրացուցիչ ցանց: Բացառիկ դեպքերում թույլատրվում է մասամբ փոխել դասավորությունը, օրինակ՝ բաժանմունքները բաժանել (բլոկ, մետաղական ցանց և այլն) թեթև հրակայուն միջնապատերով:



Նկ. 3. Խաղաղ ժամանակներում պաշտպանական կառույցի օգտագործումը որպես սպորտային դահլիճ

Այսպիսով՝

1. պաշտպանական կառույցների օգտագործումը խաղաղ ժամանակ տնտեսության և հանրային ծառայությունների կարիքների համար ՀՀՇՆ 31-10-2022 և այլ կարգավորող փաստաթղթերի պահանջներին համապատասխան, չպետք է նվազեցնի այդ կառույցների պաշտպանական հատկությունները և դրանք պատրաստության բերման ժամկետները, իրենց նպատակների համար օգտագործման պատրաստականությունը:
2. Խաղաղ ժամանակներում պաշտպանական կառույցներն այլ նպատակներով օգտագործելու հնարավորությունները թույլատրվում է ՀՀ պաշտպանության և ՀՀ ներքին գործերի նախարարությունների տարածքային մարմինների համաձայնությամբ:
3. Տարածքների ազատումը գույքից իրականացվում է պատասպարման ռեժիմի անցման ժամանակ 6 ժամից ոչ ավելի ժամանակում:
4. Քաղաքացիական պաշտպանության օբյեկտների և գույքի օգտագործման կարգի մասին կանոնակարգը և քաղաքացիական պաշտպանության օբյեկտների ու գույքի նկատմամբ

իրավունքների և պարտականությունների օրինակելի պայմանագիրը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ:

Գրականություն

1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը 05.03.2002թ.:
2. **Հայաստանի Հանրապետության** կառավարության 2000թ-ի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» № 592 որոշում:
3. **ՀՀԾՆ** 31-10-2022, «Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական շինություններ, նախագծման նորմեր», ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Եր., 2022. - 128 էջ:
4. **ՀՀԿՀ** 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» շինարարական նորմեր, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Եր., 2018. - 105 էջ:
5. **Գասպարյան Ա.Զ.**, Ղարիբյան Հ.Պ., Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցները և դրանց շահագործումն ու սպասարկումը: Ուսումնական ձեռնարկ: «Աստղիկ Գրատուն»: Եր., 2022. - 198 էջ:

А.П. Карибян, А.З. Гаспарян ИСПОЛЬЗОВАНИЕ ЗАЩИТНЫХ СООРУЖЕНИЙ В МИРНОЕ ВРЕМЯ

Укрытие населения осуществляется в надземных и подземных специальных зданиях (убежищах, тайниках), а также на территориях жилого фонда. Понятно, что упомянутые выше надземные и подземные специальные здания являются сооружениями гражданской защиты, предназначенные для укрытия людей и материальных ценностей.

Использование защитных сооружений для хозяйственных и общественных нужд мирного времени является актуальной задачей.

Ключевые слова: защитное сооружение, укрытие населения, простейшее укрытие, надземные и подземные специальные здания.

H.P. Gharibyan, A.Z. Gasparyan

USE OF DEFENSE STRUCTURES IN PEACEFUL CONDITIONS

Shelter of the population is carried out in above-ground and underground special buildings (shelters, caches), as well as in the territories of the housing stock. It is clear that the above-mentioned above-ground and underground special buildings are civil defense structures intended for the shelter of people and material values. The use of protective structures for economic and public needs in peacetime.

Key words: defense structure, population sheltering, simple shelter, aboveground and underground special building.

Ղարիբյան Հայկանդուխտ Պապինի – տեխ. գիտ. թեկն., դոցենտ (ՀՀ ՆԳՆ ԾԿՊԱ)

Գասպարյան Արայիկ Զավենի - դասախոս, ԷԿԱՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, կ/ծ գնդապետ (ՀՀ ՆԳՆ ԾԿՊԱ)

Ներկայացման ամսաթիվը՝ 12.09.2023
Գրախոսման ամսաթիվը՝ 28.09.2023

В.С. Хондкарян

РИСК-ОРИЕНТИРОВАННЫЙ ПОДХОД ПРИ ОБЕСПЕЧЕНИИ БЕЗОПАСНОСТИ ПЛОТИН

Целесообразность мер по обеспечению безопасности плотин должна быть обоснована в условиях жестких финансовых ограничений и социальных факторов. Риск-ориентированный подход к эксплуатации плотин требует переоценки представлений о сложившемся, как правило стихийно, соотношении затрат на превентивные меры по снижению рисков аварий и на смягчение их последствий. Ключевым компонентом процесса управления рисками является понимание вероятности отказа при заданных условиях нагрузок – гидрологических, сейсмических, фильтрационных и др. (например, вероятность отказа при пиковом ускорении грунта, вероятность отказа при определенной скорости фильтрации и др.). Построение сценария аварии методом анализа дерева событий и отказов, позволяет представить процесс перехода от одного события к другому, конкретизировать причины и последствия (детализировать процесс) и выявить связи между ними.

Ключевые слова: риск, авария, плотина, безопасность, отказ, модель, дерево событий.

В последние два десятилетия правительства многих стран пришли к выводу о необходимости проведения более эффективной политики для оценки различных рисков и реагирования на них наиболее адекватным образом. Разработка концептуальных основ и практическое внедрение риск-ориентированных подходов, стали одним из наиболее приоритетных направлений совершенствования государственного управления во многих странах. Эффективное управление рисками (риск-ориентированный подход) невозможен без материальных и финансовых ресурсов, а применение передового опыта достигается только при поддержке со стороны органов, принимающих руководящие административные решения. Использование риск-ориентированного подхода направлено не только на признание существования рисков, но и на их управление. На данную особенность неоднократно обращалось внимание в ряде публикаций [1, 2]. В рамках философской системно-деятельной концепции, риск выделяют как элемент управленческой деятельности, который представляет собой «совокупность вероятных экономических, политических, экологических и других положительных и неблагоприятных последствий, потерь и приобретений, которые могут наступить при выборе и реализации конкретных управленческих решений». Важно сознавать, что основной целью оценки риска является помощь структурам ответственным за безопасность в принятии более взвешенных решений. Управление рисками широко использовалось в различных областях жизнедеятельности, однако только с начала 1990-х годов, эта концепция была включена в процесс принятия решений, связанных с безопасностью плотин. Риск-ориентированный подход при обеспечении безопасности плотин в настоящее время объединяет большое количество разнообразных схем регулирования, основанных на систематической и упорядоченной оценке состояния плотин при их эксплуатации. Анализ статистики аварий плотин в период с 1900 по 2020 год свидетельствует о том,

что каждые два года происходит в среднем 3 аварии, учитывая только официально зарегистрированные и расследованные случаи.

Обеспечение безопасной эксплуатации плотин неразрывно связаны с риском, в этом трудно сомневаться, мнения расходятся в том, как оценить уровень риска на практике. Общеизвестно, что риск не может быть устранен – им необходимо управлять. Оценка риска может сыграть жизненно важную роль в интеграции всех мероприятий по обеспечению безопасности плотин, таких как техническое обслуживание, надзор, мониторинг, плановые проверки, обучение эксплуатационного персонала, а также планирование действий в чрезвычайных ситуациях.

Риск-ориентированный подход к безопасности плотин представляет собой метод организации и осуществления надзора-контроля, который определяется следующим рядом технических (инженерных) и социальных соображений и обстоятельств:

- с развитием наших знаний и ужесточением нормативно-технических документов выясняется, что подавляющее большинство эксплуатируемых плотин, как правило, не удовлетворяют текущим критериям нагрузок от землетрясений, наводнений и ряда других воздействий;
- с годами неизбежен процесс износа и старения плотин;
- происходит непрерывный рост затрат на соблюдение стандартов регулирования и безопасного управления;
- растет численность населения и продолжается развитие инфраструктур в зоне возможного затопления ниже плотин;
- нарастает уровень неприятия рисков среди населения, проживающего в зоне возможного затопления и уровень требований большей защиты от природных и техногенных опасностей.

Вопросы, связанные с безопасной эксплуатацией плотин, специфичны и зависят от шагов, которые необходимо тщательно анализировать и оценивать в течение всего срока службы сооружения. По мере старения плотин и ухудшения их эксплуатационной надежности, владельцы и органы ответственные за безопасность, сталкиваются с необходимостью принятия важных решений о том, как следует распределять ограниченные финансовые и человеческие ресурсы, чтобы обеспечить безопасную эксплуатацию.

Двадцатый век был отмечен стремительным ростом строительства плотин. К 1949 году в мире было построено около 5 тысяч больших плотин (высота плотины превышает 15 м), три четверти из них – в промышленно развитых странах. К концу века их насчитывалось свыше 45 тысяч, в более чем 140 странах.

Во многих европейских странах возраст плотины приближается к, так называемому, «среднему возрасту», при этом возраст плотин, например, в Великобритании, превышает 80 лет. По данным Американского общества инженеров-строителей, к 2025 году по крайней мере 70% плотин в США достигнут полувекового возраста.

В Армении большая часть из 84-х плотин находятся в эксплуатации 50 лет и более. Это означает, что они давно вошли в период «старения и повышенного риска» и нуждаются в особом внимании. Старение обычно проявляется в виде деградации и износа различных элементов плотины. Наблюдения над стареющими плотинами показывают, что механизмы старения практически не отличаются друг от друга –

различаются они лишь по интенсивности проявления. В соответствии с результатами наблюдений, негативные изменения на плотинах возникают раньше, чем их можно обнаружить по контрольно-измерительной аппаратуре. Это свидетельствует о фазе истощения компенсаторной способности элементов сооружения, когда силы сопротивления больше не могут компенсировать негативные структурные изменения на плотине. Рассмотрим некоторые характерные аспекты риск-ориентированных подходов в ряде стран мира. Во второй половине 1980-х годов Бюро мелиорации США представило рекомендации по включению результатов анализа рисков в процесс принятия решений (USBR, 1989). В 1992 году Инженерный корпус армии США (USACE) начал программу разработки компьютерных моделей, в которых использовался вероятностный подход в сочетании с подробными оценками состояния для поддержки решений о широких восстановительных работах. К середине 1990-х годов Австралийский комитет по большим плотинам (ANCOLD, 1994) опубликовал руководство по безопасности плотин, в котором четко рассматривались критерии допустимого риска гибели людей, основанные на практике управления рисками в ядерной энергетике. Методы, основанные на оценке рисков, становятся все более популярными в Северной Америке, Австралии, Европе и, в целом, во всем мире. Однако все признают, что эти методы не могут заменить традиционные инженерные оценки и конкретные инженерные решения для обеспечения безопасности плотин в обозримом будущем, а возможно, и никогда. На практике риск-ориентированный подход к безопасности плотин обычно не определяется легко предсказуемым единичным происшествием, из-за того, что отказ и последующая авария обычно происходят в результате сложно прогнозируемой цепочки событий, при этом вероятность отдельного события в цепочке, зависит от событий, предшествующих ему. Оценка рисков проводится в соответствии с рядом четко определенных шагов, как описано в Бюллетене Комиссии по большим плотинам [3].

В России и в странах ближнего зарубежья риск-ориентированный подход традиционно осуществляется на основании следующих общих требований [4]:

- 1) обеспечение допустимого уровня риска аварий гидротехнических сооружений;
- 2) представление деклараций безопасности гидротехнических сооружений;
- 3) разрешительный порядок осуществления деятельности;
- 4) непрерывность эксплуатации гидротехнических сооружений;
- 5) осуществление мер по обеспечению безопасности гидротехнических сооружений, в том числе установление критериев их безопасности, оснащение сооружений техническими средствами в целях постоянного контроля за их состоянием, обеспечение необходимой квалификации работников, обслуживающих гидротехническое сооружение;
- 6) необходимость заблаговременного проведения комплекса мероприятий по максимальному уменьшению риска возникновения чрезвычайных ситуаций на гидротехнических сооружениях;
- 7) достаточное финансирование мероприятий по обеспечению безопасности гидротехнических сооружений;
- 8) ответственность за действия (бездействия), которые повлекли за собой снижение безопасности гидротехнических сооружений ниже допустимого уровня.

Однако следует указать, что повсеместное ужесточение требований стандартов в нормативной документации в большинстве случаев не ведет непосредственно к более

безопасным плотинам. Простое наличие строгих стандартов еще не является достаточным условием для их достижения. Во многих случаях, лица принимающие решения не всегда убеждены в безоговорочной обоснованности инженерных стандартов, и в необходимости проведения дорогостоящих работ по обеспечению безопасности плотин. В зависимости от текущего экономического положения, многие страны просто не могут позволить себе соответствовать новым стандартам. В государственном секторе имеющиеся средства для обеспечения безопасности плотин, даже в таких странах как США, Бразилия, Франция и Италия, значительно отстают от тех, которые необходимы для достижения соответствия инженерным стандартам.

Разработка конкретных, подробных методологий анализа рисков еще не достигла уровня зрелости, который позволил бы успешно внедрять результаты оценки рисков в процесс принятия решений. Область безопасности плотин ничем не отличается от любой другой области инженерии, где прогресс является постоянным, а новые методы и подходы появляются и заменяют старые. Этот процесс будет продолжаться, и следует ожидать, что любая модель, которую мы сейчас можем построить, будет заменена более совершенной в будущем. Ключевым компонентом процесса управления рисками является понимание вероятности отказа при заданных условиях нагрузок – гидрологических, сейсмических, фильтрационных (например, вероятность отказа при пиковом ускорении грунтов, вероятность отказа при определенной скорости фильтрации и др.). Первым этапом построения моделей риска является построение дерева событий и отказов. Построение и анализ дерева событий и отказов, представляет собой метод графо-математического логического моделирования. Построение «дерева событий и отказов» является системой определения причинно-следственных взаимодействий. Следует отметить, что при проведении детального анализа риска аварий плотины, обязательным является совместное рассмотрение и анализ «дерева отказов» и «дерева событий».

Подобное комплексное рассмотрение позволяет строить логическую модель возникновения и развития процессов и явлений, приводящих к аварии плотины. До начала построения дерева отказов необходимо в первую очередь проанализировать инициирующее событие (для плотин этим событием может быть землетрясение, оползень, нерасчетный паводок и др.). Построение сценария аварии методом анализа дерева событий и отказов, позволяет графически представить процесс перехода от одного события к другому, конкретизировать причины и последствия (детализировать процесс) и выявить связи между ними [5, 6].

Синтез и анализ «дерева отказов» и «дерева событий», может осуществляться в двух аспектах: структурном, основанном на логических схемах взаимодействия элементов, входящих в систему, с точки зрения сохранения работоспособности системы в целом, «отказ - следствие» и физическом, отражающем причинно-следственные зависимости, характеризующие механические и физико-химические процессы, обуславливающие события, приводящие к отказу. При структурном анализе используют статистическую информацию о надежности плотины или ее отдельных частей, при физическом — информацию о физических свойствах основания и тела плотины, о внешних нагрузках и воздействиях, о физико-химических процессах, приводящих к аварийному состоянию плотины.

Общим во всех подходах к анализу рисков, было предположение о том, что анализ опасностей на плотине, и анализ реакции на это (дерево событий и дерево отказов) могут быть разделены и проанализированы независимо. Однако модели цепочки событий, которые хорошо работают для простых систем, не всегда подходят для таких сложных систем как плотины. Традиционные модели цепочки событий имеют низкую эффективность при работе с человеческими ошибками и с субъективными в большинстве случаев проблемами, связанными с принятием решений. Поведение человека не всегда может быть обоснованно включено в дерево событий, из-за наличия ряда трудно формализуемых обязанностей, которые в ряде случаев противоречат друг другу при принятии решений. Следует отметить, что ошибки эксплуатации в ряде случаев не поддаются анализу с использованием методов цепочки событий и легко упускаются из виду. Кроме того, системные причины более высокого уровня, такие как организационные и управленческие проблемы, не могут быть включены в аналитические подходы, основанные на цепочке событий.

Главная цель анализа «деревьев событий и отказов» заключается в обосновании необходимости затрат на меры обеспечения безопасности плотин, включая разработку и модернизацию систем оповещения населения при угрозе аварии, усовершенствование планов взаимодействия аварийно-спасательных служб, ответственных за безопасность населения, проживающего в нижнем бьефе, эксплуатационных служб плотины, региональной администрации и др.

Следует констатировать, что риск-ориентированный подход при эксплуатации плотин способствует следующим положительным результатам:

1. Способствует эффективному взаимодействию всех сторон, заинтересованных в обеспечении безопасности (население зоны возможного затопления, службы эксплуатации плотины, службы ЧС);
2. Способствует прозрачности процесса принятия решений;
3. Обеспечивает лучшее понимание значимости составных элементов безопасности плотин (состояние тела плотины, катастрофических водосбросов, дренажных устройств, контрольно-измерительной аппаратуры и др.);
4. Предоставляет информацию для оценки юридической ответственности сторон обеспечивающих безопасность плотин;
5. Обеспечивает основу для определения приоритетности мер по снижению риска.

Литература

1. **Дятлов Ю.А.**, Правореализующий риск (проблемы теории и практики): Владимир, 2006.
2. Kloman. H., Rethinking Risk Management, Geneva Pap. Risk Insur., Issues Pract. 17, 1992.
3. ICOLD Bulletin 130, Risk Assessment in Dam. Safety Management, 2004.
4. **О безопасности гидротехнических сооружений** / Федеральный закон РФ от 21 июля 1997 г. № 117-ФЗ.
5. **Елохин А.Н.**, Анализ и управление риском: теория и практика. М.: Страховая группа «Лукойл», 2000.
6. **Острейковский В.А.**, Швыряев Ю.В., Безопасность атомных станций. Вероятностный анализ. М.: Физматлит, 2008.

Վ.Ս. Խոնդկարյան

ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԻՍԿԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Պատվարների անվտանգության ապահովման միջոցառումների նպատակահարմարությունը պետք է հիմնավորվի ֆինանսական լուրջ սահմանափակումների և սոցիալական գործոնների պայմաններում: Ռիսկի վրա հիմնված պատվարների անվտանգ շահագործման մոտեցումը պահանջում է վթարների ռիսկերը նվազեցնելու և դրանց հետևանքները մեղմելու կանխարգելիչ միջոցառումների ծախսերի, որպես կանոն, փարերայնորեն ձևավորված հարաբերակցության մասին պատկերացումների վերազնահարում: Ռիսկերի կառավարման գործընթացի հիմնական բաղադրիչը փվյալ ծանրաբեռնվածության պայմաններում խափանման հավանականության ըմբռնումն է (հիդրոլոգիական, սեյսմիկ, ֆիլտրում և այլն) և այլն):

Իրադարձությունների և խափանումների ծառի վերլուծության մեթոդով վթարի սցենարի կառուցումը թույլ է տալիս պատկերացնել մի իրադարձությունից մյուսին անցման գործընթացը, կոնկրետացնել պարճառներն ու հետևանքները (մանրամասնել գործընթացը) և բացահայտել դրանց միջև եղած կապերը:

Առանցքային բառեր. ռիսկ, վթար, պատվար, անվտանգություն, խափանում, մոդել, իրադարձությունների ծառ:

V.S. Khondkaryan

RISK-BASED APPROACH TO DAM SAFETY

The feasibility of measures to ensure the safety of dams must be justified in the face of severe financial constraints and social factors. A risk-based approach to the operation of dams requires a reassessment of ideas about the prevailing, as a rule, spontaneous, ratio of the costs of preventive measures to reduce the risks of accidents and to mitigate their consequences. A key component of the risk management process is understanding the probability of failure under given loading conditions - hydrological, seismic, filtration, etc. (for example, the probability of failure at peak ground acceleration, the probability of failure at a certain filtration rate, etc.). Building an accident scenario by analyzing the tree of events and failures allows you to imagine the process of transition from one event to another, specify the causes and consequences (detail the process) and identify the links between them. Event and fault trees are tools used to inform decisions regarding dam safety. Like all other tools, they are imperfect and their potential value depends on the skill of the user.

Key words: risk, accident, dam, safety, failure, model, event tree.

Хондкарян Валерий Сергеевич – кандидат геолого-минералогических наук, преподаватель (ГАКУ МВД РА), эксперт (ТССЗ МВД РА)

Дата представления: 25.09.2023

Дата рецензии: 06.10.2023

К.М. Сарафян

ГЕОЛОГИЧЕСКАЯ ИНФОРМАЦИЯ О ГЕОЛОГИЧЕСКИХ ЯВЛЕНИЯХ, УГРОЖАЮЩИХ ГОРОДАМ

*“Не обвиняй Природу, она исполнила свой долг,
заботься об исполнении твоего”.*

Д. Мильтон

Статистически вычислено, что в целом на планете Земля каждый сотысячный человек погибает от воздействия опасных природных явлений. Стихийные бедствия, которые произошли в мире за последние 20 лет, привели к гибели 1,3 миллиона человек и нанесли материальный ущерб в размере свыше 2,9 триллиона долларов, говорится в докладе Управления ООН по уменьшению опасности стихийных бедствий (ЮНИСДР). Исследования последних лет показали, что в результате землетрясений люди в основном погибают по причине ошибок геологов, строителей, производителей стройматериалов и других погрешностей, сделанных проектировщиками, управленцами и другими участниками градостроительства.

Достоверность и объективность геологической информации, и изучение опасных геологических явлений можно считать основным звеном защиты населения от стихийных бедствий. Применение искусственного интеллекта (ИИ) в строительстве становится все более востребованным во всей строительной отрасли, от планирования до строительства, включая геологические изыскания и оценку риска геологического характера.

Ключевые слова: *опасные геологические явления, геологическая информация, инженерно - геологические исследования.*

За последние почти 97 лет в регионе Армянского нагорья было зарегистрировано около 23 сильных землетрясений: из них наиболее значимые следующие: Армения, 1926 г., погибло 1000 человек; Армения, 1931 г., 2890 смертей; Турция, 1939 г., Эрзинджанское землетрясение, погибло 50000 человек; Армения, 1968 г., зангезурское землетрясение - нет данных; Армения, 1988 г., Спитакское землетрясение, погибло 25000 человек; Иран, 1990 г., Рудбарское землетрясение, 50000 погибших; Турция, 1992 г., Эрзинджан, 498 человек погибших; Турция, 1999 г., погибло 15000 человек; Иран, 2003 г., землетрясение в Баме, 35000 жертв; Последнее землетрясение произошло в Турции 6 февраля 2023 г. магнитудой 7,8, погибших около 54000. В целом от землетрясений в регионе погибло в сумме 233388 человек.

В Армении в последние десятилетия отмечается интенсивная урбанизация, появились новые микрорайоны, отдельные многоквартирные здания и целые комплексы, и жилищное строительство является одним из основных отраслей экономики страны.

Изучение и прогноз геологических процессов и явлений связаны с проблемой охраны среды и рационального природопользования, защитой жизни людей в целом, поэтому инженерная и хозяйственная деятельность человека должны основываться на знании законов развития геологических процессов и явлений, на определении инженерно-геологических условий [1].

В любом городе есть много специалистов, чей опыт можно использовать при изучении грунтовых условий городской территории. Геологические исследования в

городе проводятся множеством заинтересованных геологов, которые могут осуществить сбор, документацию и обобщение геологических данных. В рамках многочисленных исследований в черте города можно использовать данные геологического описания горных выработок как при проходке канав, туннелей, скважин, траншей и т. д, так и при проведении работ для туннелей метро, подземных переходов, траншей для линий связи, канализационных коллекторов, водопроводов, селепроводов и других подземных коммуникаций. Эти работы проводились в разное время, разными организациями и специалистами, в связи с этим есть необходимость обобщить эти материалы.

В разное время, в разных частях города были проведены несколько сотен шурфов канав и множество котлованов, для строительства домов, станций метро и других сооружений. При вскрытии грунтов из обнажений были взяты пробы, проанализированы и документированы, геологическими разрезами, вскрытыми горными выработками, связанными как со строительством зданий и сооружений, так и прокладкой подземных коммуникаций.

Таким образом, можно уверенно предположить, что геологическое изучение местности играет важную роль на всех этапах городского и регионального планирования в строительстве и реконструкции городов. Очевидно, так же, что скрывающиеся под различными сооружениями геологические особенности почвы и грунта территории города должны быть выявлены и грамотно описаны.

В современных городах, при планировании строительства учитывают не только местную геологию, но и гидрогеологические особенности и возможность возникновения опасных геологических явлений и процессов, как: наводнения, сели, оползни, землетрясения, вулканы, обвалы, камнепады, оседание почвы и другие геологические опасности. Последние годы в мировой практике наиболее часто начали появляться сообщения о суффозионных процессах на территории городов, в том числе и в Ереване. В результате механического выноса частиц из толщ грунтов – суффозии, возникают подземные пустоты, воронки, происходит оседание поверхности за счет уплотнения грунтов.

Одно из первых инженерно-геологических исследований в Армении проводились при строительстве Ширакского канала (1922 г.), а также при строительстве Дзорагетского ГЭС (1927 г.) [2].

Геологическая информация об опасных геологических явлениях и процессах, особенно актуальна при проведении строительных работ в уже заселенных участках, где особую роль играют старые подземные выработки и изменения структуры почвы в результате дополнительных нагрузок строительными объектами на склоны и изменения гидрологического режима местности.

Для уменьшения влияния на население, территорий и системы управления, опасностей и опасных явлений, основным фактором является создание и обеспечение постоянного развития юридической и нормативно правовой базы [3].

Для нормативной базы будет полезно создание и публикация сводного отчета детального инженерно-геологического исследования городских районов города Еревана, где будет собрана и систематизирована вся геологическая информация с 1940 года и до наших дней. В результате может быть составлена современная геологическая

карта на которой будут обозначены важнейшие разновидности горных пород и грунтов, приведены их главные инженерно-технические характеристики, а также сведения о минеральных ресурсах и очагах опасных геологических явлений и процессов в районе города Еревана и его окрестностей.

Важным аспектом при градостроительстве является изучение гравитационных экзогенных процессов (оползневые, обвалы, просадки, обводнения, селевые потоки, камнепады, суффозии) и разработка мероприятий по борьбе с ними (подпорные стены, селепроводы, сеточные ограждения, барражи, запрещение производства взрывных работ вблизи оползневых участков, деривационные дренажные каналы).

В результате неконтролируемых подземных течений, вызванных деятельностью человека вод, при определенных условиях, зарождаются суффозионные очаги.

Управление антропогенными нагрузками является важным фактором для обеспечения устойчивости экосистемы города [4].

Нижней составной частью разреза новейших вулканических образований Араратской впадины, налегающих на вардашенские аллювиальные слои, являются покровные долеритовые базальты и андезито-базальты. В Ереванском районе основной поток долеритовых базальтов двигался в пределах г. Еревана по направлению Ариндж-Аван-Кармирблур-село Айнтап [5].

Изучив последствия землетрясений на городские постройки, были сделаны несколько основополагающих выводов. Большинство повреждений зданий и сооружений во время землетрясений связано с низкой прочностью и обрушениями грунтов, которые проявляются в виде оползней, срыва пород, разжижением грунта, расслоения насыпей, потери устойчивости склонов, осадков фундаментов. Геологическая информация должна быть достоверной, например, сведения о характере колебаний грунтов при землетрясениях можно получить только при их регистрации во время землетрясения. Закономерности колебания грунта при землетрясениях очень разнообразны и существенно отличаются друг от друга, даже если они происходят в одном и том же месте [6].

Отдельно следует рассматривать строительство на слабых грунтах, где требуется осуществление специальных инженерных мероприятий по обеспечению устойчивости сооружений, поэтому капитальные затраты в этих условиях по сравнению с капитальными затратами при строительстве в обычных условиях возрастает на 3-5%, иногда на 10-20%.

Строительство зданий и сооружений на слабых грунтах связано, с определенными трудностями, и требует больших затрат средств и времени, для получения достоверной информации, что обусловлено их низкой несущей способностью, высокой сжимаемостью и водопроницаемостью. Все здания и сооружения, возводимые на слабых грунтах, рассчитываются на устойчивость и деформацию.

Учитывая важность достоверности данных инженерно-геологических изысканий, при строительстве зданий в городских условиях, следует на основании этих данных разработать соответствующие рекомендации для повышения устойчивости территорий, для различных видов строительства.

При реализации инженерно-геологических исследований необходимо начинать с изучения архивных материалов, следующим этапом является бурение и анализ, изучается также гидрологический режим местности, литологический состав пород, геологическое строение, основные характеристики о состоянии почвы и грунта. Хочется специально подчеркнуть важность достоверности информации, полученной при инженерно-геологических изысканиях, в частности при определении в пробах грунта и пород физико-механических и химических свойств. Важно также определение и детальное описание типов опасных природных явлений и процессов: плоскостная и овражная эрозия, речная эрозия, оползни и обвалы, суффозия, просадки, подтопления и другие опасные геологические явления.

Отдельно рассматривается возможность тектонических катастроф, таких, как землетрясения и вулканические процессы, а также процессов, сопутствующих вулканическим извержениям. Наиболее часто в черте города, наблюдаются природные процессы в виде развития подповерхностной эрозии или суффозии, которые способствуют разрушению кавернозных участков коренных пород вдоль активных разломов. Эти явления могут повлиять на устойчивость отдельных склонов, защитных инженерных сооружений и зданий, а также котлованов новых зданий, которые предусмотрены планом реконструкции города. Учитывая горный рельеф на которой расположена основная часть территории города Еревана важную роль играет устойчивость склонов, на которые влияют: увлажнение, осушение, температурное расширение и сжатие, промерзание и оттаивание, передвижение транспорта, градостроительная деятельность и т.д. Кроме того, устойчивость склонов может нарушаться землетрясениями, а также разработкой недр и строительством.

Выработка решения выбора площадки строительства, в общем случае происходит по следующей схеме: уточнение задачи, в нашем случае выбор оптимального места площадки строительных работ, оценка инженерно-геологических условий участка работ, это проведение изыскательских работ, начиная с бурения скважин, проходки шурфов и канав, с отбором проб, с дальнейшим анализом физико-химических особенностей и определения модуля деформации грунтов. В действующем законе РА «О градостроительстве», в статье 13 особо подчеркнуто, что представители общественности в ходе осуществления градостроительной деятельности имеют право: а) получать достоверную информацию о планируемых изменениях среды их жизнедеятельности. Следовательно, на законодательном уровне подчеркивается необходимость достоверности информации.

По данным нескольких котлованов новых зданий, в центре города, прямым наблюдением в разрезе обнажений уверенно выявлены три слоя: верхний слой представлен песчано-галечными и глинистыми отложениями желтого цвета около 3-4 метра, под которым залегает толща черного Ереванского игнимбритового туфа тоже 3-4 метра, а ниже обнажены аллювиальные глинистые пески, красноватого цвета видимой мощностью в 4 метра, эта толща более консолидирована, более плотная. Все слои залегают горизонтально, разрывные нарушения и складки, не выявлены, в скальных породах также не наблюдаются трещины. По нашим наблюдениям под туфами залегает маркирующий прослой белого пепла, мощностью от 2 до 10 см, такие же данные можно увидеть в академическом издании “Минеральные ресурсы

Армянской ССР, неметаллические ископаемые” (Ереван, 1949г., стр. 564), изложенные авторами А.И. Месропян, И.А. Тараян. В целом вырыты котлованы глубиной около 12 метров.

С учетом полученных результатов геологической информации, по необходимости, надо применять дренаж с целью уплотнения слабых грунтов, которые вскрыты в центральной части города Еревана несколькими котлованами строительных площадок вырытых и документированных за последние десять лет. Котлованы фундаментов, по нашим наблюдениям нередко заполнялись водой, грунты в последствии приобретают высокую влажность, и требуется проведение мероприятий по их осушению. В последствии определяется тип фундамента в зависимости от грунтовых условий и наличия разнородных природных рисков.

Если в нормальных эксплуатационных условиях нагрузки через горизонтальные конструкции передаются на каркасы или стены, затем на фундаменты и через них на основания, то при землетрясениях – наоборот. Возникшие в результате сотрясения глубинных слоев земли, вертикальные и горизонтальные нагрузки передаются через фундаменты на надземные конструкции.

Результат геологических исследований зависит от достоверности и точности исходных данных, что может повлиять на объективность данных. Данные должны быть воспроизводимыми, что достигается повторным отбором проб или повторным контрольным анализом. При строительстве есть условие, что подрядчик обязан соблюдать требования, содержащиеся в задании и в других исходных данных для выполнения проектных и изыскательских работ, и вправе отступить от них только с согласия заказчика. Тем самым очевидна важность достоверности исходных данных. В нашем случае, при выборе места котловины строительства, исходными данными можно считать, определение литологического состава фундамента, данные о наличии микротрещин, гранулометрические данные, установление минералогического состава, результаты проведенных петрографических исследований и описание валунно-галечного материала. При изучении обнажений основания зданий особое внимание надо обращать на физико-механические характеристики пород основания, оценку геологических рисков, прогнозу состояния оснований и фундаментов проектируемого объекта с учетом всех возможных видов воздействий; а также геотехнический прогноз влияния строительства на окружающую застройку, геологическую среду и экологическую обстановку.

Сейчас самое широкое распространение на стройплощадках получили беспилотники. Дроны используются для съемки сверху, что позволяет получить более полное представление о площадке на различных этапах строительного проекта. В беспилотниках необходимо использовать искусственный интеллект, чтобы сопоставлять чертежи с аэрофотосъемкой земли. Нейронные сети помогут проверять изображения и сравнивать их с другими несоответствиями конструктивных решений. Так обнаруживают любые потенциальные риски для здания до того, как они произойдут, экономя время и деньги.

Учитывая многокомпонентность строительной отрасли, возникает острая необходимость использования таких информационных технологий как искусственный интеллект, которая позволит значительно снизить издержки в процессе

проектирования, строительства и эксплуатации за счет значительного снижения количества ошибок при проектировании, и их своевременного исправления, а также за счет исключения человеческого фактора. Применение искусственного интеллекта (ИИ) в строительстве становится все более востребованным во всей строительной отрасли от планирования до строительства, включая геологические изыскания и оценка риска геологического характера. На сегодня, разрушительное влияние человека является самым активным геоморфологическим агентом.

Резюмируя сказанное, можно сделать заключение, что при инженерно-геологических исследованиях информация должна соответствовать следующим требованиям: достоверность, точность, полный объем, правильная интерпретация, своевременность и полезность. В результате, возникает необходимость создания единой системы базы данных, где будут собраны физико-механические характеристики пород основания, данные по оценке геологических рисков, прогноз состояния оснований и фундаментов проектируемого объекта.

Литература

1. **Войткевич Г.В. и др.**, Справочник по охране геологической среды, том 1, Ростов на Дону, изд. Феникс, 1996. – 445 с.
2. **Бойнагрян В.Р., Степанян В.Э.,** Хачатрян Д.А., Ядоян Р.Б., Аракелян Д.Г., Гюрджян Ю.Г., Оползни Армении (отв. редактор В.Р. Бойнагрян). - Ер., 2009. - 308 с.
3. **Матевосян Г.Ш.**, Кризисное управление, Монография, (на армянском языке), Ер., авторское издание, 2020. - 379 с.
4. **Сарафян К.М.**, Актуальные вопросы современной науки, сборник научных трудов, выпуск 9 книга 1, Новосибирск, 2009г, Международная туристская геоэкологическая экскурсия по странам черноморского региона, СС. 14-19.
5. **Саядян Ю.В.**, Новейшая геологическая история Армении, Ер., изд. “Гитутюн” НАН РА, 2009. - 356 с.
6. **Хачиян Э.Е.**, Прикладная сейсмология, Ер., изд. “Гитутюн” НАН РА, 2008. – 491 с.

Կ.Մ. Սարաֆյան

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՂԱՔՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*«Մի մեղադրեք բնությանը, նա կապարել է իր
պարտականությունը, հոգ տանեք ձերի կապարմանը»:
Դ.Միլթոն*

Դաշտային և լաբորատոր հետազոտությունների արդյունքում ստացված տեղեկատվության հավաստիությունը որոշիչ դեր է խաղում ինժեներական և երկրաբանական հետազոտություններում:

Վիճակագրորեն հաշվարկված է, որ ընդհանուր առմամբ, Երկիր մոլորակի վրա ամեն հարյուր հազարերորդ մարդը մահանում է բնական վրանգավոր երևույթների ազդեցությունից: Տարերային աղետները, որոնք տեղի են ունեցել ամբողջ աշխարհում վերջին 20 տարիների ընթացքում, խլել են 1,3 միլիոն մարդու կյանք և պատճառել ավելի քան 2,9 տրիլիոն դոլարի գույքային վնաս, ասվում է ՄԱԿ-ի Աղետների նվազեցման գրասենյակի (UNISDR) զեկույցում: Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկրաշարժերի զոհերի մեծ մասը, հանդիսանում է երկրաբանների, շինարարների, շինանյութ արտադրողների սխալների և նախազոհողների, կառավարիչների և քաղաքաշինության այլ մասնակիցների կողմից թույլ տրված այլ սխալների արդյունք:

Երկրաբանական տեղեկատվության հավաստիությունն ու օբյեկտիվությունը, վրանգավոր երկրաբանական երևույթների ուսումնասիրությունը կարելի է համարել բնակչությանը բնական աղետներից պաշտպանելու հիմնական օղակը: Արհեստական բանականության (ԱԲ) կիրառումը շինարարության մեջ ավելի ու ավելի մեծ պահանջարկ է ձեռք բերում շինարարության ոլորտում՝ պլանավորումից մինչև շինարարություն, ներառյալ երկրաբանական հետազոտությունները և երկրաբանական ռիսկերի գնահատումը:

Առանցքային բառեր. վրանգավոր երկրաբանական երևույթներ, երկրաբանական տեղեկատվություն, ինժեներական և երկրաբանական հետազոտություններ, արհեստական բանականություն:

K.M. Sarafyan

GEOLOGICAL INFORMATION ABOUT GEOLOGICAL PHENOMENA, THREATENING CITIES

***“Do not blame Nature, it did it’s duty,
take care of fulfillment of yours.”***

D. Milton

It is statistically calculated, that in general one in every hundred thousand people on Earth dies from natural disasters. Natural disasters that have occurred around the world over the past 20 years have killed 1.3 million people and caused over \$ 2.9 trillion in property damage, according to a report by the United Nations Office for Disaster Reduction (UNISDR). Research in recent years has shown that as a result of earthquakes, people mainly die due to errors by geologists, builders, manufacturers of building materials and other errors made by designers, managers and other participants in urban planning.

The reliability and objectivity of geological information, and the study of hazardous geological phenomena can be considered the main link in protecting the population from natural disasters. The application of artificial intelligence (AI) in construction is increasingly in demand throughout the construction industry, from planning to construction, including geological surveys and geological risk assessment.

Key words: hazardous geological phenomena, geological information, engineering and geological research.

Սարաֆյան Կարապետ Մեսրոպի – դասախոս (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Дата представления: 12.10.2023

Дата рецензии: 19.10.2023

Հ.Ս. Ղազարյան, Հ.Ս. Ղազարյան

ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացված են էլեկտրական էներգիայի այլընտրանքային աղբյուր հանդիսացող արևային էլեկտրակայանների նկարագիրը, հիմնական տեսակներն, ինչպես նաև այդ համակարգերում հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման կազմակերպման և իրականացման առանձնահատկությունները՝ կապված դրանց բնորոշ վրանգների և վրանգավոր գործոնների հետ:

Առանցքային բառեր. այլընտրանքային էներգիայի աղբյուր, արևային էլեկտրակայան, արևային վահանակ, հրդեհաշիջման առանձնահատկություն, վրանգավոր գործոն և վրանգ:

Մարդկային գիտական միտքը մշտապես «փնտրել է» էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներ՝ կախվածություն չունենալ էներգետիկ այլ ռեսուրսներից և մշտապես ցանկացել, որ արևի անսահման էներգիան «աշխատի» իր օգտին: Արևային էլեկտրակայանների արագ տարածման հիմնական պատճառներից կարելի է նշել ֆինանսական և բնապահպանական գործոնները, քանի որ դրանց տեղակայումն ու շահագործումը ֆինանսական և բնապահպանական առումով առավել շահավետ է տարբեր արտադրական գործընթացներ իրականացնող էլեկտրաէներգիա սպառողների, ինչպես նաև անհատների համար: Արևային էներգիան ներկայումս հանդիսանում է այլընտրանքային էներգիայի զարգացման հիմնական ուղղություններից մեկը: Բնապահպանական առումով, այն հանդիսանում է «մաքուր» էներգիայի աղբյուր [1]:

Այլընտրանքային էներգիայի աղբյուր հանդիսացող արևային էներգիան վերականգնվող էներգիայի կարևոր աղբյուր է, և դրա հետ կապված տարբեր ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով այն վեր է ածվում էլեկտրական էներգիայի: Ընդհանրապես, արևային էներգիան կարելի է բնութագրել որպես ակտիվ կամ պասսիվ էներգիայի աղբյուր՝ կախված նրանից, թե ինչպես են դրանք վերցնում և տարածում արևային էներգիան կամ այն փոխարկում արևային հոսանքի: Ակտիվ արևային տեխնոլոգիաներն էներգիան օգտագործելու համար կիրառում են լուսազավանային համակարգեր, կենտրոնացված արևային էներգիա և արևային ջրատաքացուցիչներ, իսկ պասսիվ արևային տեխնոլոգիաները ներառում են շինության կառուցման ժամանակ համապատասխան ջերմային զանգված կամ լուսացիր հատկություններ ունեցող նյութերի ընտրությունը և բնական օդափոխություն ապահովող տարածքների նախագծումը:

Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում կարելի է ասել, որ Երկիր մոլորակի էներգետիկ կարիքների մեծ մասը հնարավոր է ապահովել արևային էներգիայի շնորհիվ [2]:

Ուսումնասիրելով վերջին տասնամյակում առավել լայն կիրառություն գտած արևային էներգիան էլեկտրական հոսանքի վերածող արևային էլեկտրակայանների կառուցվածքային տարրերը, դրանց հիմնական տեսակներն ու առանձնահատկություններն, ինչպես նաև հաշվի առնելով դրանց զարգացման և տարածման միտումները, կարելի է եզրակացնել, որ դրանց առկայությունը տարբեր գործառնական նշանակության շենքերում և շինություններում ծագած հրդեհների հրդեհաշիջման կազմակերպման և իրականացման ժամանակ կարող են առաջացնել առաջնային և երկրորդային վտանգներ:

Այդ պատճառով անհրաժեշտ է առավել մեծ ուշադրության դարձնել այլընտրանքային էներգիայի աղբյուր հանդիսացող արևային էլեկտրակայանների կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրմանն ու դրանց հետ կապված վտանգների բացահայտմանը:

Ընդհանուր առմամբ, արևային էլեկտրակայանը կարելի է ասել արևի ճառագայթման էներգիան էլեկտրական էներգիայի փոխակերպման համակարգ է, այդ փոխակերպման եղանակները տարբեր են և կախված են էլեկտրակայանի կառուցվածքից:

Ներկայումս տարբեր գործառնական շինություններում կամ այլ տարածքներում տեղակայվում են արևային էլեկտրակայանների հետևյալ տեսակները՝

- ✓ ցանցային,
- ✓ ոչ ցանցային,
- ✓ հիբրիդային:

Ցանցային արևային էլեկտրակայանները թույլ են տալիս միացված մնալ ընդհանուր էլեկտրացանցին՝ ինչը նշանակում է, որ ցանցային տեղակայված համակարգն ընդհանուր էլեկտրական ցանցի հետ միասին ապահովում է մշտական էներգիա՝ հասանելի դարձնելով այն գիշերային ժամերին: Սակայն էլեկտրական հոսանքի անջատումների ժամանակ նման համակարգերը կարող են վտանգի ենթարկվել և նույնիսկ պարբերաբար կրկնվող միացումների ու անջատումների արդյունքում շարքից դուրս գալ:

Ոչ ցանցային արևային էլեկտրակայաններն աշխատում են հատուկ մարտկոցներով, որոնց շնորհիվ հնարավոր է կուտակել էներգիայի ավելցուկը և օգտագործել այն ժամերին, երբ վահանակները էներգիա չեն արտադրում: Այս տարբերակը թույլ է տալիս զերծ մնալ հովիտային անջատումներից, քանի որ, ի տարբերություն ցանցային վահանակների, ոչ ցանցային վահանակներն ընդհանուր էլեկտրական ցանցից մշտական կախման մեջ չեն:

Հիբրիդային արևային էլեկտրակայանները ներառում են երկու նախորդ տեսակների դրական կողմերը: Նման համակարգի օգնությամբ հնարավոր է անհրաժեշտության դեպքում կուտակել արևային էներգիան, վաճառել այն ընդհանուր էլեկտրական ցանցին կամ օգտագործել ընդհանուր ցանցից եկող էլեկտրաէներգիան:

Արևային էլեկտրակայանների վերը նշված տեսակներից տարբեր պատճառներով առավել մեծ տարածում են ստացել ցանցային արևային էլեկտրակայանների համակարգերը՝ այդ պատճառով անհրաժեշտություն է առաջացել առավել մեծ ուշադրություն դարձնել դրանց կառուցվածքային տարրերի ուսումնասիրմանն ու բնորոշ վտանգներին և վտանգավոր գործոններին:


Ցանցային արևային էլեկտրակայանի հիմնական բաղկացուցիչ մասերն են՝ արևային վահանակները (1), ցանցային ինվերտորը (փոխակերպիչ), մալուխները, հաստատուն ու փոփոխական հոսանքի կցորդիչները և պաշտպանական համակարգերը (2), էլեկտրաէներգիայի սպառիչները (3), էլեկտրաէներգիայի հաշվիչը (4) և էլեկտրաէներգիայի ընդհանուր ցանցը (5):

Արևային վահանակները ծառայում են արևային էներգիան կուտակելու և էլեկտրական հոսանք ստեղծելու համար: Արևային վահանակի աշխատանքի ընդհանուր սկզբունքը հիմնված է ֆոտոէլեկտրական էֆեկտի վրա, որն առաջանում է, երբ արևի լույսը «հարվածում է» սիլիկոնային շերտին: Այդ ժամանակ արևի լույսը փոխազդում է սիլիցիումի հետ, ազատվում են էլեկտրոններ, որոնք այնուհետև շարժվում են հաղորդիչների երկայնքով և ձևավորում էլեկտրական հոսանք [3]:



Նկ. 1. Ցանցային արևային էլեկտրակայանի համակարգի սխեմատիկ պատկեր

Ստանդարտ արևային վահանակը բաղկացած է սիլիցիումային տարրերի շերտից, մետաղական ամրաշրջանակից, ապակե պատյանից, ինչպես նաև բազմաթիվ լարերից, որոնք թույլ են տալիս ներթափանցել սիլիկոնային բջիջներ:




Նկ. 2. Արևային վահանակի շերտերի կազմությունը


Արևային վահանակներն, ըստ կառուցվածքի լինում են միաբյուրեղային (նկ. 3ա), բազմաբյուրեղային (նկ. 3բ) և թաղանթային (նկ. 3գ):



Նկ. 3ա Միաբյուրեղային



Նկ. 3բ Բազմաբյուրեղային



Նկ. 3գ Թաղանթային

Արևային էլեկտրակայանի վահանակները հիմնականում տեղակայվում են հետևյալ հատվածներում

- ✓ շինության տանիքին (նկ. 4ա),
- ✓ շինության կողային պատերին (նկ. 4բ),
- ✓ շինությունից հեռու բաց տարածքում (նկ. 4գ),
- ✓ շինության հարակից տարածքում (նկ. 4դ):



4ա



4բ



4գ



4դ

Նկ. 4. Արևային էլեկտրակայանի վահանակները

Անհրաժեշտ է հիշել, որ հրդեհաշիջման կամ այլ փրկարարական աշխատանքների իրականացման ժամանակ արևային վահանակները կարող են վտանգի ենթարկել հրշեջ-փրկարարներին, քանի որ դրանցում առկա է բարձր լարման էլեկտրական հոսանք: [4].

Արևային էլեկտրակայանի համակարգը պետք է ունենա մեկ կամ մի քանի էլեկտրական հոսանքի ինվերտոր (փոխակերպիչ)՝ կախված էլեկտրակայանի պահանջվող հզորությունից, որոնք հատուկ արևային մալուխների միջոցով միացվում են էլեկտրական վահանակներին (Նկ. 5):



Նկ. 5. Էլեկտրական հոսանքի ինվերտոր

Արևային էլեկտրակայանի ինվերտորը նախատեսված է վահանակներից եկող հաստատուն հոսանքը փոփոխական հոսանքի փոխակերպման, էլեկտրական հոսանքի լարման տատանումների կայունացման և ինքնավար ու անխափան սնուցման ապահովման համար:

Կարելի է ասել, որ այն շինություններում, որտեղ կան տեղադրված արևային վահանակներ, հրդեհի մարման աշխատանքներն առավել բարդ են, քանի որ դրանք ավելացնում են վտանգավոր գործոնների քանակը: Տարեցտարի արևային վահանակները պատրաստում են ավելի ամուր ու դիմացկուն նյութերից, ինչն էլ բարդացնում է հրշեջ-փրկարարների աշխատանքը և պահանջում է հրդեհաշիջման մարտավարության նոր մոտեցումներ: Բացի այդ, քանի որ արևային վահանակների ավելի նոր մոդելները հաճախ ունենում են հարթ և գրեթե աննկատ դիզայն, հրշեջ-փրկարարները հետախուզություն իրականացնելիս ավելի շատ ժամանակ են ծախսում դրանց հայտնաբերման համար:

Արևային վահանակների մեծ մասը նախագծված է այնպիսի ձևով, որ տեղադրելուց հետո կարողանան տարիներով դիմակայեն կարկուտին և ուժեղ քամիներին: Նույնիսկ երբ արևային վահանակները չոր են, արտաքին մակերեսին գոյացած փոշեծածկույթի պատճառով դրանք կարող են սայթաքուն և վտանգավոր լինել:

Մեկ այլ խնդիր է առաջանում, երբ արևային վահանակներն ուղղակիորեն ներկառուցված չեն տանիքին և տանիքի ու արևային վահանակների միջև մնում է որոշակի տարածություն: Արևային էլեկտրակայանի հոսանքազրկումը ևս մեկ կարևոր խնդիր է, որին կարող են բախվել հրշեջ-փրկարարները:

Արևային էլեկտրակայանների վահանակների վրանգավոր գործոնները՝

- ✓ կարող են արտադրել մինչև 1000 վոլտ հաստատուն հոսանք,

- ✓ կարճ միացման արդյունքում առաջանում է բավականին հզոր բոց, որը կարող է այրման պատճառ հանդիսանալ,
- ✓ բաղկացած են սիլիցիումի հումքից պատրաստված վահանակներից, էլեկտրալարերերից, ինվերտորից, մարտկոցներից, հաշվիչից և խնդիրը կարող է առաջանալ այս բաղադրիչներից որևէ մեկում:

Արևային էլեկտրակայաններում հրդեհների առաջացման պատճառները՝

- ✓ կարճ միացումները,
- ✓ կայծակի հարվածը,
- ✓ արևային վահանակների, մարտկոցների, ինվերտորների, ապահովիչների և մալուխների ամրացման հատվածում հրդեհատեխնիկական արտադրանքի տեղակայումը,
- ✓ արևային վահանակի և տանիքի միջև ընկած հատվածում հավաքված տերևների և այլ այրվող նյութերի առկայությունը (կարող են հանդիսանալ այրվող վառելիքի աղբյուր),
- ✓ տեղադրվող արևային վահանակների, մարտկոցների, արևային ինվերտորների, մալուխների, ապահովիչների և այլ սարքավորումների ցածր որակը և սխալ միացումները,
- ✓ արևային վահանակների տանիքին և իրար ամրացման համար կիրառվող դյուրահալ և այրունակ նյութերը,
- ✓ ապահովիչի և մալուխի հատույթի ծանրաբեռնվածության ու պաշտպանիչ շերտի, դրանց ամրացման համար նախատեսված ժապավենների և այլ նյութերի սխալ ընտրությունն ու հաշվարկը:

Արևային վահանակի հրդեհի դեպքում հրշեջ-փրկարարների և արևային վահանակների անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝

- ✓ գտնել էներգիայի կուտակման համակարգերը՝ արևային վահանակների հրդեհի դեպքում հրշեջ-փրկարարները պետք է շրջեն շենքի ողջ տարածքում (360°)՝ փնտրելու արևային վահանակներ կամ էներգիայի կուտակման համակարգեր,
- ✓ անջատել ամբողջ համակարգը՝ բնակելի տան էլեկտրաէներգիան անջատվում է միայն հիմնական անջատիչն էլեկտրական ցանցից անջատելուց և հաստատուն ու փոփոխական հոսանքն արևային վահանակից և պահեստարանից անջատելուց հետո,
- ✓ դադարեցնել կրակն անվտանգ հեռավորությունից:

Կարևոր է հիշել, որ ցանցի միայն հիմնական անջատիչի անջատումով շինության պահուստային մարտկոցում դեռևս պահպանվում է էլեկտրական հոսանք: Կարևոր է անջատել բնակելի տան բոլոր համակարգերը՝ ներսում գտնվող հրշեջ-փրկարարներին էլեկտրահարումից խուսափելու համար:

Շինարարական նորմերը պահանջում են ցուցանակ տեղադրել տնից դուրս՝ արևային կամ մարտկոցային համակարգի գտնվելու և այն անջատելու համակարգի վայրի մասին: Այն դեպքում, երբ էներգիայի կուտակման համակարգերը վնասվել են հրդեհից և անհրաժեշտություն կա, որպեսզի հրշեջ-փրկարարները մոտենան դրանց, պետք է զգուշանալ դրանց այրման ջերմային ազդեցությունից:

Կարևոր է, որ հրշեջ-փրկարարները նախ օդափոխեն տարածքը, եթե մարտկոցը գտնվում է փակ տարածքում և (ներսից կամ դրսից) ենթարկվում է 65°C ջերմաստիճանից բարձր ջերմության:

Արևային վահանակներ տեղակայված շինություններում հրդեհաշիջման ժամանակ կիրառվում է նաև օդափոխության մարտավարություն, եթե կարիք կա իրականացնել ուղղահայաց օդափոխություն: Քանի որ արևային վահանակներով արտադրած էլեկտրաէներգիան անցնում է համապատասխան արտադրության պաշտպանիչ շերտով մալուխներով, հրշեջ-փրկարարները պետք է խուսափեն այդ համակարգի որևէ բաղադրիչ կտրելուց, վնասելուց կամ դիպչելուց: Անհրաժեշտ է հիշել, որ համապատասխան արտադրության պաշտպանիչ շերտով մալուխները շատ դեպքերում լինում են քողարկված, այդ իսկ պատճառով հրշեջ-փրկարարներն առաստաղի վրա անցք բացելիս պետք է հաշվի առնեն վտանգի գործոնը:

Տանիքի վրա տեղադրված արևային վահանակների հրդեհի դեպքում հրշեջ-փրկարարները պետք է տեղյակ լինեն, որ արևային վահանակների հետևի մասը պատրաստված է դյուրահալ նյութից և կարող է հեշտությամբ այրվել: Արևային վահանակներում կամ դրանց շրջակայքում բոցի զգալի քանակությունը կարող է ցույց տալ, որ տանիքը նույնպես վառվում է:

Հրշեջ-փրկարարները կարող են անվտանգ մարել կրակը՝ կիրառելով ջրի ուղիղ շիթ՝ առնվազն 6,1 մետր հեռավորությունից կամ ջրային վարագույր՝ 1.6 մետր հեռավորությունից: Արևային վահանակի հրդեհը մարելու համար փրփուր չի պահանջվում: Բացի այդ, փորձերը ցույց են տվել, որ սովորական ջուրն ամենաօգտակար միջոցն է արևային վահանակների հրդեհները մարելու համար:

Անկախ նրանից, թե այրվող վահանակը տեղադրված է շինության տանիքային կամ կողային հատվածում, հրշեջ-փրկարարները պետք է լինեն համապատասխան հագուստ հանդերձանքով և շնչառական ապարատներով և վահանակին մոտենան կողքի հատվածից, քանի որ վահանակի ամուր մետաղական պատյանը խոչընդոտ կհանդիսանա ջրի հոսքն ուղղելու այրվող շրջանակի վրա:

Արևային վահանակներ և մարտկոցներ տեղադրված բնակելի շինությունում հրդեհը մարելուց հետո հրշեջ-փրկարարները քանդման, բացման և մաքրման գործընթացում պետք է առավել զգույշ լինեն: Արևային վահանակների և մալուխների հնարավոր վնասների դեպքում, որոնք պաշտպանիչ շերտի միջով կարող են հասնել ինվերտորի վերահսկիչին, անվտանգությունն ապահովելու համար պետք է ստուգվեն մասնագետի կողմից: Քանի դեռ դա չի ավարտվել, հրշեջները չպետք է դիպչեն այդ համակարգի որևէ բաղադրիչին:

Վահանակի հոսանքազրկումից հետո կատարվում է ջրով հովացման և մարման աշխատանքներ: Հրշեջ-փրկարարները պետք է սպասեն, որ մասնագետը գնահատի դրա լիցքավորման աստիճանը և հետո կազմակերպվի դրանց դուրս բերումը տվյալ շինությունից:

Ուսումնասիրելով արևային էլեկտրակայանների համակարգերի վտանգներն ու վտանգավոր գործոնները կարելի է եզրակացնել, որ դրանց կառուցվածքային տարրերի, տարբեր համակարգերի մասին տեղեկատվությունն ու դրանց տեղակայման սխեմատիկ պատկերների իմացությունը թույլ կտա հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ խուսափել դրանց բնորոշ առաջնային և երկրորդային վտանգների և վտանգավոր գործոնների ազդեցությունից՝ բարձրացնելով հրդեհաշիջման աշխատանքների արդյունավետությունն ու անվտանգությունը:

Գրականություն

1. **Харченко Н.В.**, Индивидуальные солнечные установки. М.: Энергоатомиздат, 1991. - 208 с.
2. **Павлов Н.**, Солнечная энергия - энергия будущего // Электроника: наука, технология, бизнес. № 1(123). 2013. СС. 130-137.
3. <https://e-solarpower.ru/stati/iz-chego-sostoyat-solnechnye-batarei/> Դիտում՝ 18.08.2023.
4. <https://www.beny.com/ru/firefighting-solar-panels/>. Դիտում՝ 23.08.2023.

А.С. Казарян, А.С. Казарян

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ПОЖАРОТУШЕНИЯ СОЛНЕЧНЫХ ЭЛЕКТРОСТАНЦИЙ

В статье представлено описание солнечных электростанций, которые являются альтернативным источником электрической энергии, основные их типы, а также особенности организации и осуществления пожаротушения при возникновении пожара в этих системах, связанные с присущими им свойствами опасности и опасными факторами.

Ключевые слова: альтернативный источник энергии, солнечная электростанция, солнечная панель, особенность пожаротушения, опасный фактор и опасность.

H.S. Ghazaryan, H.S. Ghazaryan

FEATURES OF FIREFIGHTING ORGANIZATION OF SOLAR POWER PLANT

The article presents a description of solar power plants, which are an alternative source of electrical energy, the main types, as well as features of the organization and implementation of fire extinguishing in the event of a fire in these systems, associated with their inherent properties. dangers and hazardous factors.

Key words. alternative energy source, solar power plants, solar panels, firefighting features, hazardous factor and hazard.

Ղազարյան Հարություն Սամվելի - փ/ծ փոխգնդապետ (ՀՀ ՆԳՆ Փ/Ծ),
դասախոս (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Ղազարյան Հայկ Սամվելի - փ/ծ փոխգնդապետ (ՀՀ ՆԳՆ Փ/Ծ), դասախոս (ՀՀ
ՆԳՆ ՃԿՊԱ)

Ներկայացման ամսաթիվը՝ 13.09.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 29.09.2023

ՀՏԴ 378

III. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Լ.Հ. Ղուկասյան, Մ.Ս. Կարապետյան

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

Հոդվածում ուսումնասիրված և քննարկված են, աշխարհում միգրացիոն գործընթացների փարածվածությամբ պայմանավորված, փախստականների և միգրանտների որոշ հիմնահարցեր: Մեկնաբանված են առկա խնդիրները, առաջադրված են լուծումներ, դրանց վերաբերյալ որոշ մոտեցումներ, ներկայացված են հարցման արդյունքներ: Այդ համատեքստում հիմնավորված է փախստականների և միգրանտների հետ սոցիալական աշխատանքի իրականացման, կանոնակարգման, համակարգման անհրաժեշտությունը:

Առանցքային բառեր. միգրանտ, փախստական, միգրացիոն գործընթաց, սոցիալական աշխատանք, սոցիալական հիմնախնդիր, հիմնախնդիրների լուծում:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից միգրացիոն գործընթացները, պարզաբանել այդ առնչությամբ որոշ հիմնահարցեր, քննարկել այդ հիմնահարցերի լուծման հնարավորությունները սոցիալական աշխատանքի տեսանկյունից:

Իրենց ստուգաբանությամբ «գաղթականներ», «փախստականներ», «բնակափոխ անձինք» (կամ «տարեգրվածներ») եզրույթները մոտ են և նշանակում են անձինք, որոնք ժամանակավորապես կամ մշտական փոխել են իրենց բնակության վայրը: Սակայն միջազգային իրավունքի համատեքստում, ինչպես նաև մի շարք պետությունների իրավաբանական համակարգերում այս և այլ հասկացությունների բնորոշումները տարբեր են: Առավել սուր համարվում է փախստականների հիմնահարցը, այսինքն՝ որոնք, փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի բնորոշմամբ (1951 թ.), ստիպված են եղել լքել, թողնել իրենց երկիրը «հիմնավորված վախի պատճառով, որ իրենց կարող են հետապնդել ռասսայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների համար» [5]:

Եթե փախստականն այլ երկիր ժամանած օտարերկրացի է, ապա գաղթականների այդ նույն կատեգորիան սեփական երկրում համարվում են բնակափոխ անձինք կամ հարկադրված վերաբնակեցվածներ: Այս խմբի միգրանտների հետ սոցիալական աշխատանքը, որպես կանոն, արտակարգ պայմաններում է իրականացվում: Առավել պլանաչափ և կազմակերպված աշխատանք տարվում է ինքնակամ գաղթականների և ներգաղթյալների հետ:

Ընդհանուր առմամբ, գաղթականների հետ սոցիալական աշխատանքի իրականացումը նախատեսում է ոչ միայն օգնության ցուցաբերման համակարգ առանձին անհատներին և խմբերին, որոնք միգրացիայի արդյունքում հայտնվել են բարդ կենսական իրավիճակում, այլև սոցիալական միջավայրի վերակառուցում, միգրացիոն իրավիճակների, միգրացիոն հոսքերի բնույթի, միգրանտների քանակի,

նրանց խմբի կարիքների հաշվառում, հարմարման գործընթացի իրականացում, ինտեգրում, հասարակական գործընթացների զարգացում [3, 6]:

Միգրացիոն գործընթացներին վերաբերող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միգրացիայի (էմիգրացիայի, իմմիգրացիայի) հասկացության բովանդակությունը որոշվում է կոնկրետ ստեղծված իրավիճակով, պատմական պայմաններով, քաղաքական, էթնիկական, սոցիալ-տնտեսական և կրոնական գործոնների ամբողջության մեջ [4]: Միգրացիոն գործընթացների և դրանց զարգացման հնարավոր հեռանկարները հասկանալու համար շատ կարևոր է միջազգային մասշտաբով հաշվի առնել վերջին տարիների գլոբալ, տարածքային և ազգային տարբեր հարցերին առնչվող գործընթացները, դրանց առանձնահատկությունները: Առանձնացվում են միգրացիայի 50 պատճառ [8]: Ստորև ներկայացված է միգրացիայի հիմնական պատճառներ.

1. միջազգային, միջէթնիկական հարաբերությունների կտրուկ վատացում՝ պատերազմներ, ռազմական գործողություններ, շրջափակումներ, լարվածություններ, հարաբերական խաղաղություն և այլն:
2. Շուկայական հարաբերություններ՝ տնտեսական ճգնաժամեր, արտադրության անկում և գործազրկություն:
3. Տարաբնույթ աղետներ, որոնք տեղի բնակիչների համար վտանգ են ներկայացնում:
4. Ավանդական, որը գրեթե միշտ առկա է, հատկապես երիտասարդների կողմից դրսևորվող պահանջումը՝ փնտրել իրենց ուժերի և կարողությունների ըստ արժանվույն կիրառման հնարավորություն, ձգտել լավի, ավելի լավ կյանքի, մասնագիտական աճի, ունենալ բարձր վճարվող աշխատանք, եկամուտ և այլն:
5. Զինված ուժերում ծառայողների, աշխատողների թվաքանակի նվազում, որի պատճառով շատերը մեկնում են այլ երկրներ, վայրեր:

Այս ամենը՝ համակցված գործազրկության համատարած աճի հետ, պայմանավորում են միգրացիայի, փախստականների, հարկադրված վերաբնակեցվածների հիմնախնդրի առաջացումն ու տարածվածությունը: Նշենք, որ «Հայաստանի ներկայիս իրողություններում արտաքին միգրացիան հանդես է գալիս, որպես բնակչության ֆինանսական վիճակի քիչ թե շատ բարելավման բավական նշանակալի գործոն» [7]:

Ներկայացնենք այն հիմնահարցերը, որոնք պարզաբանվել են մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում: Ուսումնասիրությունները փաստում են, որ փախստականների և հարկադրված վերաբնակեցվածների զգալի մասն աշխատունակ է, ունեն որոշակի կրթական մակարդակ և մասնագիտական որակավորում, աշխատանքային փորձառություն: Դրանով պայմանավորված առաջնահերթ խնդիր է նրանց աշխատանքի տեղավորման հարցը, որը ենթադրում է նաև ինքնագրավածության կազմակերպում, այնպիսի աջակցության տրամադրում, որը կօգնի միգրանտներին զարգացնել սեփական ձգտումներն ու կարողությունները:

Առավել սուր է համարվում փախստականների կրած նյութական կորուստների փոխհատուցման հիմնախնդիրը:

Ինչպես փաստում են փախստական ընտանիքների հետ (տարբեր ծրագրերի շրջանակներում) մեր ուսումնասիրությունները, նրանց և վերաբնակեցվածների ադապտացիան մեծ մասամբ պայմանավորված է մշտական աշխատատեղ և բնակարան ունենալու հանգամանքների հետ, խնդիրներ կան նաև գյուղական, քաղաքային բնակավայրերի, սոցիալ-կենցաղային պայմանների, միգրանտների և

տեղի բնակչության փոխհարաբերությունների հետ կապված, որոնք ոչ միշտ են բարեհաջող: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը, կենցաղային, վարքային, մշակութային, կրոնական առանձնահատկությունները երբեմն հանդիսանում են նրանց նկատմամբ անբարեհաճ հարաբերությունների պատճառ տեղի բնակչության կողմից:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, միգրանտների ինտեգրացիայի հիմնախնդրի լուծման առավել արդյունավետ ձևերից մեկը նրանց միևնույն բնակավայրերում, իրենց ցանկությամբ, հոժարակամ տարբեր հարցերի կազմակերպումն է: Դա ոչ միայն լուծում է բնակարանային-կենցաղային հիմնախնդիրները, այլ նպաստում է, որ հարմարվողականության գործընթացն ընթանա աստիճանաբար, առանց կոնֆլիկտների, հնարավորինս փոքր սոցիալ-հոգեբանական խնդիրներով, լարվածությամբ: Այս պարագայում էթնոմշակութային խմբերը հնարավորություն են ստանում պահպանել նորմերը, սովորությունները, ավանդույթները, ստեղծել մշակութային կենտրոններ, ազգային խմբավորումներ և համայնքներ [6]:

Ստեղծված միգրացիոն իրավիճակի պայմաններում շատ կարևոր է իմմիգրանտների (ներգաղթյալների) կենտրոնացման վայրերում հատուկ աջակցության կենտրոնների հիմնադրումը, որտեղ կգբաղվեն նրանց հիմնախնդիրների լուծման հարցերով:

Միջազգային պրակտիկան վկայում է այն մասին, որ անցանկալի է իմմիգրանտների հարկադրական կենտրոնացումը որոշակի քաղաքային թաղամասերում կամ գյուղական բնակության վայրերում, որը հավասարազոր է խտրականության (սեգրեգացիայի), երբ նշված վայրերը վերածվում են առանձին համայնքի, թաղի [3]:

Առավել կառուցողական է համարվում լքված թաղամասերի վերականգնումը (որում իմմիգրանտները հակված են համակենտրոնանալու), դրանք առավել գրավիչ դարձնելու նպատակով ողջ բնակչության համար:

Կարծում ենք, որ միգրացիայի շատ առօրեական խնդիրներ կարող են, և պետք է լուծվեն տեղական մակարդակով:

Այսպիսով, մեր կողմից անցկացված հարցման արդյունքում հարցվողների մեծամասնությունը նշում էին փաստաթղթերի հետ կապված խնդիրները, որոնք, ըստ նրանց պատասխանների, անհնար է լուծել առանց սոցիալական ծառայողների և տեղի իշխանության աջակցության: Նրանք զբաղվում են նաև փախստականների և հարկադրված վերաբնակեցվածների երեխաներին բնակության վայրում ուսումնական հաստատություններ, ըստ անհրաժեշտության, վերականգնողական հաստատություններ տեղավորելու և միգրանտների հոգեբանական վերականգնման հարցերով: Հարցվողների կեսից ավելին (73%) գտնում է, որ իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացը կազմակերպվել է բավարար և հիմնականում գոհ են, տարբեր հաստատություններում կազմակերպվել է սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական աջակցություններ: Որոշ խնդիրներ կան գյուղական բնակավայրերում վերը նշված աջակցությունների իրականացման առումով:

Հարցումները մեկ անգամ ևս հաստատեցին, որ այսօր միգրանտների և փախստականների համար կարևոր խնդիրներից եղել և մնում են ֆինանսական միջոցների անբավարարությունը, աշխատանքի բացակայությունը, բնակության հետ կապված հարցերը: Դրանք միգրացիայի ոլորտի հիմնական առանցքային հարցերն են

և պահանջում են կանոնակարգված, համակարգված մոտեցումներ, փոփոխություններ երկրում ընթացող տարբեր գործընթացներում: Ուսումնասիրելով մեր երկրի, ինչպես նաև այլ երկրների փորձը կարելի է հետևություն անել, որ միգրանտների, փախստականների հետ սոցիալական աշխատանքում պետք է հաշվի առնել՝

1. որ փախստականների մեծ մասը կմնա մշտական (կամ երկարատև, շարունակական) բնակության տվյալ երկրում և, որ նրանք կարող են կարևոր ներդրում ունենալ տվյալ երկրի տնտեսության զարգացման մեջ,
2. խիստ կարևոր է պետական կառույցների դերը փախստականների ադապտացիայի և ինտեգրացիայի աջակցության, բարյացակամ միջհամայնքային հարաբերությունների զարգացման գործում,
3. անհրաժեշտ է խրախուսել իմմիգրանտներին զարգացնելու նոր հասարակությանը (համայնքին) պատկանելության զգացումը.
4. պետք է ընդունել իմմիգրանտներին և նրանց լիդերներին, որպես գործընկերներ, տարբեր հարաբերությունների հաստատման գործում [6]:

Այսպիսով, վերոնշյալ խնդիրների ուսումնասիրության, դրանց լուծման հնարավորությունների քննարկման արդյունքում հիմնավորվում է միգրանտների, փախստականների հիմնախնդիրներին օպերատիվ կերպով արձագանքելու, նրանց մոտ հարմարվողականության ընդունակությունների զարգացման անհրաժեշտությունը, սոցիալական աշխատողի կողմից աջակցող, վերափոխող գործողությունների իրականացումը: Այս ամենն իհարկե կբերի միգրանտների դրության բարելավմանը, նրանց սեփական ներուժի ակտիվացմանը, մշտական կապերի հաստատմանը տեղի ազգաբնակչության հետ:

Մեր կողմից անցկացվել են հարցումներ Արցախից տեղահանված (2020 թ.) թվով 60 փախստականների հետ և, այն հարցին, թե արդյո՞ք նրանք ունեցել են սոցիալական աշխատանքի կարիք. բոլոր հարցվողները պատասխանել են այո, իրենք ունեն աջակցության և օգնության կարիք: Սա փաստում է, որ սոցիալական աշխատանքն այդ խմբի հետ կարևոր է և անհրաժեշտ, որը հիմնավորվել է նրանց մշտապես ուղեկցման կարիքով, տարվող բացատրական և տեղեկատվական աշխատանքներով, սոցիալ-հոգեբանական աջակցության կազմակերպմամբ և իրականացմամբ, ընթացող տարբեր հարմարվողականության գործընթացներով: Աշխատելով մարդկանց, խմբերի, համայնքի հետ սոցիալական աշխատողը կիրառում է սոցիալական աշխատանքի բոլոր մոդելներն, ըստ ստեղծված իրավիճակների, որոնց հիմքում ընկած են փիլիսոփայության, հոգեբանության, հոգեբուժության, սոցիոլոգիայի, մանկավարժության գիտական մոտեցումներն ու տեսությունները:

Ինչպես փաստում են հետազոտողները, սոցիալական աշխատանքի արդյունքում ոչ միայն փոփոխվում է շահառուի վերաբերմունքը խնդրի նկատմամբ, այլև փոփոխվում է նրա կենսամիջավայրը, միջավայրի վերաբերմունքը նրա նկատմամբ [2]: Հասարակության որոշակի շրջանակում և պետական մակարդակով իրականացվող սոցիալական աշխատանքն ապահովում է տվյալ երկրի քաղաքականությունը, որն հանդիսանում է հասարակության քաղաքական կառավարման մաս [1]:

Կարծում ենք, որ սոցիալական աշխատանքի պրակտիկայում պետք է տարածում ստանան միգրանտների և փախստականների հետ տարվող աշխատանքների ուղղությամբ պարբերաբար իրականացվող վերապատրաստումները, քննարկումները, հնարավորինս փոփոխելով տարբեր համակարգերի, կառույցների անարդյունավետ և դիսֆունկցիոնալ ռազմավարություններն ու գործողությունները: Նշենք, որ

միգրանտների ու տեղի բնակչության միջև բարյացակամ հարաբերությունների հաստատումը երկարատև գործընթաց է: Այս նպատակով առաջարկում ենք իրականացնել սոցիալական, սոցիալ-հոգեբանական աշխատանքներ ընդունող երկրի բնակչության, համայնքների, առանձին խմբերի, անհատների հետ՝ ուղղված նրանց և փախստականների միջև փոխօգնող, արդյունավետ հարաբերությունների հաստատմանը, փոխգործունեությանը:

Գրականություն

1. **Булатецкий Ю.Е.**, Мошняга В.П., Миграционные процессы и миграционная политика.-М., 2009. - 224 с.
2. **Григорьев С.И.**, Гусякова Л.Г., Социология для социальной работы. Учебное пособие для студентов вузов и практических работников 2-е изд. доп. перераб. М.: Издательский Дом МАГИСТР. ПРЕСС. 2002. – 164 с.
3. **Крысова Е.В.**, Социальная работа с мигрантами: учебное пособие./ Е.В. Крысова, В.П. Шалаев; Поволжский государственный технологический университет. Йошкар-Ола: 2016. – 104 с.
4. **Социальная психология этнических миграций / Н.М. Лебедева.** М.: Институт этнологии и антропологии им. Н.Н. Миклухо-Маклая РАН, 1993. - 196 с.
5. **Социальные аспекты прав человека в документах мирового сообщества,** - М., 1996.
6. **Технология социальной работы: Учебник под общ. Высшее образование.** Ред. Проф. Е.И. Холостовой.-М.: ИНФРА - М. 2001. – 400 с.
7. <https://files4.webydo.com/45/452723/UploadedFiles/7926b382-53f6-4128-8dbb-cacc8e6a8ff9.pdf>. Դիտում՝ 19.09.2023.
8. https://www.google.com/search?sca_esv=569077669&rlz=1C1FHFK_ruAM1002AM1002&q=%D0%9F%D1%80%D0%B8%D1%87%D0%B8%D0%BD%D1%8B+%D0%BC%D0%B8%D0%B3%D1%80%D0%B0%D1%86%D0%B8%D0%B8&sa=X&ved=2ahUKewjQoKyh5MyBAxWjR_EDHR_eCA4Q1QJ6BAg8EAE&biw=1920&bih=973&dpr=1&bsh=m=rime/1. Դիտում՝ 22.09.2023.

Л.Г. Гукасян, М.С. Карапетян

НЕКОТОРЫЕ ОСНОВОПОЛОГАЮЩИЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ С МИГРАНТАМИ И БЕЖЕНЦАМИ

В статье исследуются и обсуждаются некоторые проблемы беженцев и мигрантов, вызванные распространённостью процессов миграции в мире. Комментируются существующие проблемы, предлагаются решения, представляются некоторые подходы к ним и результаты исследования. В этом контексте обоснована необходимость осуществления, регулирования и координации социальной работы с беженцами и мигрантами. Обосновывается также необходимость социальной работы с населением, с отдельными группами и личностями принимающей страны.

Ключевые слова: мигрант, беженец, миграционный процесс, социальная работа, социальная проблема, решение проблем.

L.H. Ghukasyan, M.S. Karapetyan

SOME FUNDAMENTAL ISSUES OF SOCIAL WORK WITH MIGRANTS AND REFUGEES

The article examines, explores and discusses some of the problems of refugees and migrants caused by the prevalence of migration processes in the world. The existing problems are commented on, solutions are proposed, some approaches to them are presented, the results of the survey are presented. In this context, the necessity of implementing, regulating, and coordinating social work with refugees and migrants is justified.

Key words: migrant, refugee, migration process, social work, social problem, problem solving.

Ղուկասյան Լուսիկ Հենրիկի – մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՇՊՀ)
Կարապետյան Մանուշակ Սեյրանի - մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՇՊՀ)

Գրախոսման ամսաթիվը՝ 13.10.2023
Ներկայացման ամսաթիվը՝ 20.10.2023

Ռ.Գ. Ղարիբյան

ՄՆՆԴԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ

Կենսաբանական անվտանգության ապահովումը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առաջնահերթություններից է, որը խարսխվում է մարդու կյանքի և առողջության պաշտպանության վրա, նպատակաուղղված է քաղաքացու, հասարակության և պետության բնականոն գործունեության ապահովմանը:

Մենդային թունավորումը բազմապարճառային թունավորում է, ունի բազմազան ախտանիշներ և կարող է բերել ամենաձանր հետևանքների:

Մենդային թունավորումների կանխարգելումը հանրակրթական դպրոցներում հանդիսանում է կենսաբանական անվտանգության մշակույթի բաղկացուցիչ և կարևորագույն գործընթաց:

Առանցքային բառեր. սենդային թունավորում, կանխարգելում, հանրակրթական դպրոց, կենսաբանական անվտանգության մշակույթ:

Մենդային թունավորումներն այնպիսի հիվանդություններ են, որոնք առաջանում են բակտերիային, սնկային թույներ պարունակող կամ քիմիական թունավոր խառնուրդներով աղտոտված սննդամթերքների օգտագործումից: Կերակուրների ոչ ճիշտ մշակման և պատրաստման դեպքում մանրէները չեն ոչնչանում: Մանրէների քանակությամբ պայմանավորված, այսինքն, աղտոտվածության աստիճանով, կարող է զարգանալ սենդային թունավորումը: Հանրաճանաչ մթերքների մեծ մասը ոչ պատշաճ մշակման դեպքում կարող է հրահրել թունավորումներ, օրինակ՝ թռչնի կամ կենդանիների հում միսը, հում ձուն, թունավոր և անհայտ սնկերը, հում կաթը, մրգերի կամ բանջարեղենի մեջ պարունակվող պեստիցիդները և, նույնիսկ, չեռացրած ջուրը:

Մենդային թունավորումներն անվանվում են սենդային ինֆեկցիաներ, երբ թունավորման երևույթների զարգացմանը մասնակցում են օրգանիզմ ներթափանցած կենդանի մանրէներ, և տոքսիկոզներ, երբ թունավորումը պայմանավորված է սննդամթերքի մեջ մանրէի արտադրած թույներով (օրինակ՝ բոտուլիզմ, ստաֆիլակոկային թունավորումներ և այլն) [1]:

Մենդային թունավորման դեպքերը հաճախակի գրանցվում են նաև հանրակրթական դպրոցներում: Սա արդիական հիմնախնդիր է հանդիսանում երեխաների առողջության պահպանման տեսանկյունից, հատկապես ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում, կապված՝ միգրացիոն մեծ հոսքերի հետ: Մենդի մեջ պարունակվող ախտածին օրգանիզմներն այսօր լայնորեն տարածվում են սննդամթերքի միջկապակցված գլոբալ շղթայի շնորհիվ, որը պայմանավորում է սենդային ծագման հիվանդությունների տեղը և տարածվածության աստիճանը: Ուրբանիզացման բարձր մակարդակն ավելացնում է նմանատիպ հիվանդությունների ռիսկը, քանի որ քաղաքաբնակ երեխաներն առավել հաճախ են ստիպված լինում տանից (այդ թվում և դպրոցում) դուրս սնունդ ուտել, որը կարող է պահպանված և պատրաստված չլինել սննդամթերքի անվտանգության կանոններին համապատասխան:

Հանրակրթական դպրոցներում սննդային թունավորումների կանխարգելման հարցերը բնական են, ավելի պատասխանատու են և պահանջում են բոլոր օղակների մասնակցությունը՝ առողջապահության մարմիններ, դպրոցի ղեկավարություն և ուսուցիչներ, ծնողներ, ինչպես նաև բարձր դասարանցիներ: Աշակերտներին սննդամթերքի անվտանգության կանոնների տեղեկացումը կարող է մեծ քայլ լինել այսօր և ապագայում սննդամթերքի անվտանգության պահպանման ուղղությամբ: Նման դասընթացների ներմուծումը դպրոցական ծրագիր կարող է մեծապես նպաստել աշակերտների և նրանց ընտանիքների առողջության պահպանմանն ու անվտանգության մշակույթի ձևավորմանը:

Սննդային թունավորումներին բնորոշ են հետևյալ երևույթները՝ հիվանդության սուր կտրուկ սկիզբը, սննդային թունավորումների մեծ մասի սուր, կարճատև ընթացքը, հիվանդությունների կապը միևնույն սննդամթերքի կամ կերակրատեսակների ընդունման հետ, սննդամթերքի ձեռք բերման կամ ընդունման վայրի տարածքային սահմանափակումը, ոչ հպավարանցիկությունը, սննդային թունավորման պատճառ հանդիսացող մթերքը օգտագործումից հանելուց հետո նոր դեպքերի առաջացման դադարելը, սննդային թունավորման բռնկման դեպքում հիվանդության միաժամանակյա սկիզբը մի խումբ անձանց մոտ:

Լաբորատոր եղանակով հաստատվում է սննդամթերքում, ինչպես նաև տուժածներից, կամ սնունդն օգտագործած, կասկածելի սննդամթերքի հետ պատրաստման կամ արտադրման փուլում շփված անձանցից կենսանմուշում միևնույն հարուցիչ կամ թույնի առկայությունը:

Ըստ թունավորման վտանգավորության աստիճանի հանրակրթական դպրոցներում օգտագործվող սննդամթերքները դասակարգվում են հետևյալ կերպ (ըստ նվազման)՝

- կաթ և կաթնամթերք,
- միս և մսամթերք,
- ձուկ և ձկնամթերք,
- ձու,
- մրգեր, բանջարեղեն, դրանց պահածոները,
- հաց և հացամթերք:

Հանրակրթական դպրոցներում սննդային թունավորումների կանխարգելման գործընթացում բացի հանրային առողջապահության մարմիններից, անհրաժեշտ է ներգրավել դպրոցի ղեկավարությանը, ուսուցիչներին և ծնողներին, ինչպես նաև բարձր դասարանցիներին:

Սննդային թունավորումների դեմ պայքարի և կանխարգելման ապահովման գործառույթային կազմակերպման օրենսդրական հիմքը կազմում են «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարական-համաճարակային անվտանգության ապահովման մասին», «Հանրային առողջության ապահովման մասին», «Սննդի անվտանգության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանները:

Հանրակրթական դպրոցում արձանագրված սննդային թունավորման դեպքի մասին շտապ հաղորդում ստանալուն պես հիգիենիկ հակահամաճարակային հսկողության կենտրոնի մասնագետները.

- 1) կապ են հաստատում դպրոցի բուժաշխատողի հետ՝ պարզելու տուժած երեխաների իրական թիվը, դեպքի ծագման վայրը, ժամանակը, պատճառները, հիվանդության կլինիկա-

կան ախտանշանները, լաբորատոր հետազոտության նպատակով նմուշառված նյութերի տեսակը և քանակը, ինչպես նաև բժշկական օգնություն ցուցաբերած կազմակերպությունում ծանոթանում են գրանցամատյանում և հիվանդության պատմության մեջ առկա դեպքի հետ առնչվող գրանցումներին,

- 2) բուժող բժշկի հետ քննարկում են հիվանդության կլինիկական պատկերը, ընթացքը և հնարավոր ելքը՝ օգտագործելով նաև առաջին բժշկական օգնություն ցուցաբերող կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվական նյութերը:

Սննդային թունավորման դեպքի արձանագրման ժամանակ օջախում համաճարակաբանական հետազոտությունն իրականացնում է տվյալ օջախի տեղակայման վայրի հիգիենիկ հակահամաճարակային հսկողության կենտրոնի մասնագետը:

Հանրակրթական դպրոցներում սննդային թունավորումների կանխարգելման գործընթացում դպրոցական ճաշարանին ներկայացվող պահանջներն ունեն առաջնային դեր:

Աշակերտների սնունդը կազմակերպվում է հումքով կամ կիսաֆաբրիկատներով գործող ճաշարաններում, ինչպես նաև համապատասխան պայմաններ ունեցող բուֆետներում:

Հանրակրթական դպրոցներում հումքով և կիսաֆաբրիկատներով աշխատող ճաշարանը պետք է ունենա հիմնական և օժանդակ հետևյալ սենյակները՝ տաք և սառը ճաշատեսակների պատրաստման, խոհանոցի և ճաշարանի սպասքի լվացման, տարաների լվացման սենյակ, չոր սննդամթերքի պահպանման, շուտ փչացող մթերքի ու մսամթերքի սառցապահարաններ, ճաշարանի աշխատողների ճաշելու, հանգստի և հանդերձանքի սենյակ, սննդամթերքի նախնական մշակման աշխատամաս, խոհանոցի և ճաշարանի սպասքի լվացման բաժին, կիսաֆաբրիկատների սառցապահարան, սննդային մնացորդների սառցապահարան:

Բուֆետի սենյակները պետք է ապահովված լինեն ճաշատեսակների տաքացման սալիկներով, սառցապահարաններով, ճաշերը տաք պահպանելու սալիկով, պետք է ունենան ճաշերի բաժանման աշխատամաս, սպասքի լվացման բաժին, տարաների լվացման սենյակ և օժանդակ սենյակներ՝ բուֆետում աշխատող անձնակազմի համար: Դպրոցական բուֆետներին ու ճաշարաններին կից պարտադիր պետք է նախատեսել ճաշարահներ՝ բոլոր աշակերտներին ճաշարահում տեղավորելու համար, իսկ գիշերօթիկ դպրոցներում՝ բոլոր աշակերտներին երկու հերթով սպասարկելու համար:

Տարրական դասարանների աշակերտների սննդի ընդունումը կազմակերպվում է ուսուցչի վերահսկմամբ: Ուտելուց առաջ աշակերտները պարտադիր ձեռքերը լվանում են օճառով և չորացնում սրբիչներով կամ էլեկտրաչորացուցիչներով:

Դպրոցական ճաշարանների, բուֆետների բոլոր աշխատողները պարտավոր են անցնել պարտադիր և պարբերական բժշկական կանխարգելիչ ստուգումներ:

Ճաշարանում և բուֆետում խստիվ արգելվում է ճաշել աշխատանքի տեղում (այդ նպատակի համար հատկացվում է առաձին տարածք կամ սենյակ): Յուրաքանչյուր օր աշխատանքը սկսելուց առաջ դպրոցի բուժաշխատողը զննում է բոլոր աշխատակիցների մաշկային ծածկույթները՝ թարախային հիվանդություններ հայտնաբերելու նպատակով: Մաշկի թարախային հիվանդություններով, թարախակալված կտրվածքներով, ինչպես նաև վերին շնչուղիների կատարով հիվանդ անձինք ժամանակավորապես մեկուսացվում են աշխատանքից, իսկ հետազոտության

տվյալները գրանցվում են սանիտարական գրքույկում և համապատասխան մատյանում: Սննդի բլրկում անհրաժեշտ է ունենալ դեղարկղ (դեղատուփ)՝ առաջին բժշկական օգնության դեղերով:

Դպրոցի տնօրենը, բուժանձնակազմը, ծնողները, ցանկալի է նաև բարձր դասարանցիները, պարտավոր են մշտապես հոգատար լինել դպրոցականների սննդի հարցերի հանդեպ և սահմանել ամենօրյա հսկողություն դպրոցական ճաշարանի (բուֆետի) աշխատանքների նկատմամբ:

Հանրակրթական դպրոցներում սննդային թունավորումը կանխող միջոցառումները հիմնվում են սննդամթերքի անվտանգության պահպանման սկզբունքների վրա: Գոյություն ունեն հետևյալ հիմնական սկզբունքները՝ մաքրության պահպանում, հում և եփած սննդամթերքի անջատ պահում, կերակրի լավ եփում, սննդի պատրաստումից առաջ և հետո ձեռքերն օճառով լավ լվացում, սննդամթերքի պահպանում պատշաճ ջերմաստիճանում, անվտանգ ջրի և հումքի օգտագործում, կենդանական ծագում ունեցող սննդի համապատասխան ջերմային մշակում, գնելուց առաջ մսի պահպանման ժամկետի ստուգում, կերակրատեսակը պատրաստելիս հում մսի, հավի կամ ձվի մասնիկների այլ սննդամթերքի վրա ընկնելու բացառում, հում միս, ծովամթերք, թռչնամիս մշակելուց հետո ձեռքերի, կտրատելու տախտակի և դանակների լվացում տաք ջրում՝ հակամիկրոբային միջոցներով:

Խոշոր փաթեթավորմամբ թթվասերը և կաթնաշոռը պահվում է կափարիչով փակ տարաներում: Չի թույլատրվում թթվասերի և կաթնաշոռի տարաների մեջ թողնել գդալներ և թիակներ, դրանք պահվում են հատուկ ամանների մեջ և օգտագործելուց հետո լվացվում: Փոխադրական և սպառողական յուրաքանչյուր տարայի վրա փակցված պիտակները պահվում են մինչև մթերքի լրիվ օգտագործումը/իրացումը: Սերուցքային և այլ տեսակի կարագը պահվում է արտադրողի տարայում/վաճառարկղերում կամ մագաղաթաթղթի մեջ փաթեթավորված կտորներով, հալած յուղը՝ թիթեղամաններում (կաթնամաններում): Կարագը, հալած յուղը և սննդային այլ ճարպերը չի թույլատրվում պահել սուր հոտ ունեցող մթերքի հետ համատեղ:

Գլուխներով /խոշոր կտորներով պանիրը կարող է պահվել առանց տարայի՝ մաքուր դարակաշարերի վրա: Պանիրն իրար վրա դարսված պահելու դեպքում, դրանց միջև պետք է տեղադրել մագաղաթաթուղթ: Փոքր կտորներով պանիրը պահվում է կափարիչով փակ, մաքուր, չոր տարայի մեջ՝ դարակաշարերի վրա:

Ձուն տուփերով պահվում է ապրանքատակերի վրա՝ չոր, հով շենքերում, այլ մթերքից առանձին, ձվի փոշին՝ չոր շենքերում 20° C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, իսկ ձվի զանգվածը (մեկանժր)՝ սառցախցիկում մինուս 6° C-ից ոչ բարձր ջերմաստիճանում:

Ձավարեղենը և այլորը պահվում են պարկերով՝ ապրանքատակերի վրա իրար վրա դարսված: Երկար ժամանակ պահելու դեպքում, այլորի խոնավացումը կանխելու նպատակով, պարկերը ստորին շարքերից տեղափոխվում են վերին շարքերը և հակառակը: Այլորի և ձավարեղենի ոչ մեծ քանակները կարող են պահվել փակ կափարիչով տարողություններում:

Տարողությունները պետք է պատրաստված լինեն սննդամթերքի հետ շփման համար նախատեսված նյութերից և պարբերաբար լվացվեն կալցիումական սոդայի 1%-անոց լուծույթով և լավ չորացվեն:

Թեյը և սուրճը պահվում են չոր և օդափոխվող շենքերում:

Հացը և հացաբուլկեղենը պահվում են տեփուրներում (դարակաշարերի) դարակների վրա կամ պահարաններում: Տարեկանի և ցորենի հացը պահվում է առանձին: Հացի պահարանի դռները պետք է ունենան օդափոխիչ անցքեր: Պահարանները մաքրվում են հացի փշուրներից հատուկ խոզանակներով և շաբաթը մեկ անգամ մանրակրկիտ մշակվում քացախաթթվի 1%-անոց լուծույթով հացի կարտոֆիլային հիվանդության կանխարգելման նպատակով:

Կարտոֆիլը և արմատապտուղները պահվում են չոր և մութ շենքում, կաղամբը՝ առանձին դարակաշարերի վրա, թթու և աղ դրած բանջարեղենը՝ տակառներում 100° C ոչ բարձր ջերմաստիճանում: Պտուղները և կանաչեղենը պահվում են արկղերով հով տեղում: Սառեցված բանջարեղենը և պտուղները պահվում են սառցախցիկում: Չորացրած կանաչեղենը, պտուղները և սունկը պահվում են չոր, մաքուր, օդափոխվող շենքերում:

Չի թույլատրվում իրացնել սպառման ժամկետն անցած սննդամթերք:

Հանրակրթական դպրոցի ճաշարանի աշխատող անձնակազմը պետք է պահպանի անձնական հիգիենայի կանոնները:

Սննդային գործոնով պայմանավորված զանգվածային վարակիչ հիվանդությունների ու սննդային թունավորումների առաջացման և տարածման կանխարգելման նպատակով, ուսումնական հաստատություններում չեն օգտագործվում ստորև նշված սննդամթերքը և չեն պատրաստվում նշված ճաշատեսակներն ու խոհարարական կերակրատեսակները [2, 3]

- 1) առանց որակն ու անվտանգությունը հավաստող փաստաթղթերի պարենահումք և սննդամթերք, պիտանիության ժամկետն անց և վատորակության հատկանիշներով (հոտի, համի, գույնի փոփոխմամբ) սննդամթերք,
- 2) բոլոր տեսակի գյուղատնտեսական կենդանիների միս, ձուկ, թռչուն ու ենթամթերք՝ առանց խարանի (դրոշմի) և բժշկ-անասնաբույժի կողմից տրված վկայականի,
- 3) թռչուն՝ չմաքրած փորոտիքով,
- 4) ձու՝ անվա կճեպով, ինչպես նաև սալմոնելոզի տեսակետից անբարենպաստ տնտեսություններից, ջրլող թռչունների (բադի, սագի և այլն) միս, ձու,
- 5) պահածոներ՝ տարայի հերմետիկության խախտումով, ժանգոտված կամ դեֆորմացված տարայով, առանց պիտակի և այլն,
- 6) ամբարային վնասատուներով վարակված ձավարեղեն, այլուր, չրեր և այլ մթերքներ,
- 7) բորբոսի և փչացման հատկանիշներով բանջարեղեն ու միրգ, կանաչած կարտոֆիլ,
- 8) տնային պայմաններում և հաստատության խոհանոցում պատրաստված պահածոներ,
- 9) նախորդ օրվա պատրաստած կերակրատեսակներ կամ օգտագործած կերակրատեսակների մնացորդներ,
- 10) կրեմային հրուշակեղեն՝ տորթեր, հրուշակներ և այլն,
- 11) դոնդողաձածկ ճաշատեսակներ (մսի և ձկան), խաշ, տնային պայմաններում և հաստատության խոհանոցում պատրաստված մսատորովածքներ (պաշտետներ),
- 12) մսի կտորների եզրերից, ստոծանուց, գլխի փափկամսից պատրաստած ռուլետներ և այլն,
- 13) ֆլյագայով կաթ՝ առանց ջերմային մշակման (եռացման),
- 14) տնային պայմաններում և հաստատության խոհանոցում պատրաստված կաթնաթթվային մթերք, թթված կաթ, այդ թվում նաև կաթնաշոռի պատրաստման համար, կաթնաշոռ՝ չպաստերիզացված կաթից, տնային պայմաններում և հաստատության խոհանոցում պատրաստված կաթնաշոռ,
- 15) դպրոցի խոհանոցում պատրաստված սառը (առանց ջերմային մշակման) ըմպելիքներ, օշարակ, կվաս և այլն,

- 16) մակարոն աղացած մսով (ֆարշով)՝ «նավատորմային» և մակարոն կտրատած ձվով առանց կրկնակի ջերմային մշակման,
- 17) աչքով-ձվածեղ, թերխաշ և հում ձու,
- 18) սունկ և դրանից պատրաստված կերակրատեսակներ, սնկի արգանակ,
- 19) տարբեր սննդային խտանյութեր, այդ թվում՝ արգանակներ և դրանց հիմքի վրա պատրաստված կերակրատեսակներ,
- 20) հում ապխտած մսից պատրաստված ուտեստներ (բաստուրմա, սուջուխ և նմանատիպ այլ արտադրանք), երշիկեղեն,
- 21) պաղպաղակ, ժելե,
- 22) առանց մրգային միջուկի կարամել:

Սննդային թունավորումների կանխարգելման նպատակով ուսումնական հաստատություններում չի թույլատրվում օգտագործել հետևյալ սննդատեսակները՝

- տապակած կերակրատեսակներ, այդ թվում ֆրիտյուրի մեջ (ճարպով, յուղով) կարկանդակներ, փքաբլիթներ, կարտոֆիլ, մսով կամ կաթնաշոռով պատրաստված բարակաբլիթներ (բլինչիկներ), չիպս և այլն,
- մարգարին, խոհարարական և տրանսճարպեր, սպրեդ,
- քացախ, մանանեխ, ծովաբողկ գյուղական (սովորական), կծու պղպեղ (կարմիր, սև) և այլ կծու համեմունքներ,
- սուրճ, ինչպես նաև կոֆեին պարունակող ըմպելիքներ, էներգետիկ ըմպելիքներ, ալկոհոլային խմիչքներ, այլ խթանիչներ, գազավորված ըմպելիքներ,
- օրգանիզմի տոնուսը բարձրացնող և հյուսվածքների աճի վրա ազդող կենսաբանական ակտիվ հավելումներ (ԿԱՀ), նաև դրանց օգտագործմամբ արտադրանք և հյութեր,
- պիստակ, գետնանուշ և այլն,
- մաստակ,
- շաքարների և աղի բարձր պարունակությամբ սննդամթերք:
Այսպիսով՝

1. սննդային թունավորումների կանխարգելումը հանրակրթական դպրոցներում, դպրոցականի կենսաբանական անվտանգության մշակույթի կարևորագույն բաղկացուցիչ է:
2. Սննդի մեջ պարունակվող ախտածին օրգանիզմներն այսօր լայնորեն տարածվում են սննդամթերքի միջկապակցված գորբալ շղթայի շնորհիվ, որը պայմանավորում է սննդային ծագման հիվանդությունների տեղը և տարածվածության աստիճանը:
3. Սննդային թունավորումն առաջանում է զանգվածային քանակությամբ ախտածին և/կամ պայմանական ախտածին մանրէներով և/կամ դրանց թույլերով, կամ մարդու օրգանիզմում ախտաբանական պատասխան առաջացնող ոչ մանրէային ծագման թունավոր նյութերով վարակված սննդամթերք օգտագործելիս:
4. Դպրոցներում սննդային թունավորումները համարվում են նաև առողջապահության համակարգի կողմից չդիտարկվող ինֆեկցիաներ, քանի որ դրանց դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումները միայն այդ համակարգի ուժերով գրեթե անհնար է իրականացնել: Անհրաժեշտ են դպրոցի տնօրինության, ուսուցիչների, ծնողների, ինչպես նաև բարձր դասարանի աշակերտների համատեղ ջանքերը:
5. Աշակերտներին սննդամթերքի անվտանգության կանոնների տեղեկացումը կարող է մեծ քայլ լինել այսօր և ապագայում սննդամթերքի անվտանգության պահպանման ուղղությամբ: Նման դասընթացների ներմուծումը դպրոցական

ծրագիր կարող է մեծապես նպաստել աշակերտների և նրանց ընտանիքների առողջության պահպանմանը:

Գրականություն

1. **Չասպարյան Ա.Զ.**, Սննդային թունավորումները հանրակրթական դպրոցներում և դրանց կանխարգելումը, Մերոդական մշակումներ, ՃԿՊԱ, Եր., 2014. - 25 էջ:
2. **Бакулов И.А.**, Смирнов А.М, Васильев Д.А., Токсикоинфекции, пищевые инфекции и токсикозы микробного происхождения. М. МСХиП РФ 1995. - 97 с.
3. Reducing the carriage of foodborne pathogens in livestock and poultry. 85 (6). Jun 2016. pp. 960–73. PMID 16776463.

Р.Г. Гарибян

ПРОФИЛАКТИКА ПИЩЕВЫХ ОТРАВЛЕНИЙ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ ШКОЛАХ КАК ВАЖНЫЙ ПОКАЗАТЕЛЬ КУЛЬТУРЫ БИОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ШКОЛЬНИКОВ

Обеспечение биологической безопасности является одним из приоритетов национальной безопасности Республики Армения, который основан на защите жизни и здоровья человека и направлен на обеспечение нормального функционирования граждан, общества и государства. Пищевое отравление — острое неинфекционное заболевание, обусловленное употреблением в пищу пищевых продуктов, контаминированных массовым количеством патогенных и/или условно-патогенных бактерий, и/или их токсинов, либо немикробными токсическими веществами, вызывающими патологическую реакцию в организме человека. Таким образом, пищевое отравление – это отравление множественного происхождения, имеющее разнообразную симптоматику и способное привести к самым тяжелым последствиям. Профилактика пищевых отравлений в государственных школах является неотъемлемым и важным процессом биологической профилактики пищевых отравлений в государственных общеобразовательных школах, неотъемлемым и важным процессом культуры биобезопасности.

Ключевые слова: пищевые отравления, профилактика, государственные школы, культура биологической безопасности.

R.G. Gharibyan

PREVENTION OF FOOD POISONING IN PUBLIC EDUCATION SCHOOLS AS AN
IMPORTANT COMPONENT OF THE CULTURE OF BIOLOGICAL SAFETY OF
SCHOOLCHILD

Ensuring biological safety is one of the national security priorities of the Republic of Armenia, which is based on the protection of human life and health, and is aimed at ensuring the normal functioning of citizens, society and the state. Food poisoning is a multi-cause poisoning. It has various symptoms and can lead to the most serious consequences. Prevention of food poisoning in public schools is an integral and important process of biosafety culture.

Key words: food poisoning, prevention, public schools, biological safety culture.

Ղարիբյան Ռուզաննա Գուրգենի – մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ
ՃԿՊԱ)

*Ներկայացման ամսաթիվը՝ 11.09.2023
Գրախոսման ամսաթիվը՝ 20.09.2023*

А.Л. Минасян

РОЛЬ ПЕДАГОГА В АДАПТАЦИИ ДЕТЕЙ-БЕЖЕНЦЕВ

В данной статье освещаются вопросы социально-педагогического сопровождения детей-беженцев. Большое внимание уделено влиянию вынужденного переселения на подрастающее поколение. Особо подчеркивается, что дети-беженцы испытывают большие затруднения в новой социально-культурной среде и нуждаются в профессиональной помощи. Большое внимание уделено работе педагога с детьми-беженцами. Рассматриваются основные направления социально-педагогического сопровождения детей-беженцев.

Ключевые слова: вынужденная миграция, дети-беженцы, адаптация, социализация, педагог, социально-педагогическое сопровождение.

В настоящее время в связи с изменением геополитической картины мира активизируется процесс вынужденной миграции населения, вызванной причинами военного и политического характера. Принудительная миграция сопровождается появлением беженцев и вынужденных переселенцев.

Появление больших групп беженцев обостряет проблемы их адаптации в новой социокультурной среде и вносит существенные изменения в социум страны, принимающей беженцев.

В то же время беженцы – пробный камень, на котором местное население может проверить свое умение сострадать, понимать чужую боль и помогать им. В процесс вынужденной миграции бывают вовлечены также дети, у которых адаптация к новой среде зачастую протекает гораздо труднее, чем у взрослых. Этот аспект миграции представляется нам весьма актуальным для исследования с точки зрения педагогической науки. Беженцы и их дети являются представителями различных национальностей, государств с разными культурными традициями и социальными характеристиками, что способствует возникновению множества проблем социально-педагогического характера. Проблема социально-педагогического сопровождения детей-беженцев в педагогике в настоящее время недостаточно изучена, не существует систематизированного видения данной области, еще не сложился полноценный терминологический и концептуальный аппарат, не существуют технологии сопровождения детей-беженцев в условиях школы. Именно поэтому этот вопрос столь остро нуждается в теоретических и практических исследованиях, которые помогут детям-беженцам безболезненно адаптироваться, существовать и развиваться в новой социокультурной среде. В связи с этим тема, освещаемая в данной статье, представляется нам весьма актуальной как для современного общества, так и педагогики.

Анализ психолого-педагогической литературы показал, что вопрос поддержки и защиты личности ребёнка в её нравственном становлении и самовыражении занимает значительное место в трудах отечественных и зарубежных ученых. Всестороннее изучение проблемы беженцев предполагает также изучение её социально-педагогической стороны. Для нашего исследования были интересны труды Э. Берна, Э. Эриксона, К. Юнга, В.А. Бондаревской, В.В.

Краевского. Отдельные аспекты поддержки детства раскрываются в работах А.Г. Козловой, В.В. Тарасова, А.О. Топузян, Д.Г. Гюламирян.

Адаптация детей-беженцев к новой социальной и культурной среде часто носит стрессовый характер и может разочаровать их. Исходя из этого, можно предположить, что дети-беженцы нуждаются в серьёзном психолого-педагогическом сопровождении.

Дети-беженцы пережили множество разных нежелательных ситуаций. Как и взрослые, большинство детей справляются с многочисленными стрессами, связанными с положением беженца и травмирующими детскую психику, в результате чего некоторые дети становятся психологически уязвимыми. Дети-беженцы лишились родителей, близких людей, братьев и сестер, родственников и друзей, свой дом, игрушки, знакомое окружение, привычный образ жизни. Они были свидетелями трагических событий: ожесточенные военные действия, интенсивные бомбардировки, разрушение домов, гибель членов семьи и друзей, ранение и арест членов семьи, нехватка пищи, воды, других жизненно необходимых предметов, вероятность быть обнаруженными или арестованными, враждебность в новой стране проживания, материальные лишения на новом месте, пребывание среди людей, которые не понимают, какие страшные события они пережили, их недоброжелательность.

Дети-беженцы могут испытывать большие перемены культурного плана, такие, как обучение на чужом языке и иная система культурных норм, посещение совсем другого типа школы, а также перемены в уровне жизни и статусе в обществе. Они часто воспринимают своих родителей как незащищенных людей, ощущают изменения в их характере, такие, как стремление всячески защитить детей или проявление авторитарности. При работе с детьми-беженцами важно не делать никаких предположений о том, что они пережили, и не наклеивать на них ярлыка "травмированный". У каждого ребенка была своя утрата, психологическая травма, и все дети по-разному реагируют на эти переживания.

Беженцев чрезвычайные обстоятельства срывают с родных мест, лишают опоры. Люди, предоставляющие социальную помощь и образование, должны помочь им разрешить проблемы. Особое место в решении социально-педагогических проблем семей вынужденных мигрантов занимает школа, поскольку дети должны получить достойное образование, успешно адаптироваться в новом социуме. Школа как социальный институт имеет свои специфические возможности и средства решения ряда проблем вынужденных мигрантов, среди них - психолого-педагогическая поддержка и защита семей, формирование толерантных взаимоотношений в поликультурном социуме, воспитание у детей открытости по отношению к окружающему миру и другим. Педагоги могут помочь детям завязать новую дружбу, восстановить языковое общение, роль и статус. Они могут сделать многое, чтобы обеспечить эмоциональную поддержку детям-беженцам, но и им самим нужна помощь коллег и администрации школы. Для работы с неустроенными или пережившими травму детьми должны быть выделены определенные ресурсы, прежде всего время. Педагоги, дающие консультации детям-беженцам, должны иметь навыки и уверенность, необходимые для обсуждения таких вопросов, как смерть, пытки, насилие.

Некоторые дети-беженцы сразу приспосабливаются и находят свое место в новой школе. Другие сначала чувствуют себя растерянными и несчастными, но потом вполне способны хорошо учиться. Часть беженцев-детей проявляют признаки отклоняющегося поведения. Важно, чтобы педагоги были внимательными и знали, когда и что вызывает у детей плохое настроение. Только при таком условии можно оказать нужную поддержку.

Если у ребенка возникают трудности в школе, чрезвычайно важно немедленно установить доверительную связь с родителями. Иногда проблемы родителей и ребенка могут быть тесно взаимосвязаны. Чрезвычайные обстоятельства часто разрушают семейные отношения: дети могут лишиться родителей. Еще чаще дети лишаются внимания своих родителей, которые бывают настолько поглощены заботой о выживании и собственными проблемами, что не могут уделять детям то внимание, в котором они нуждаются. В тех случаях, когда родители проявляют "эмоциональное отсутствие", важно добиться, чтобы они получали профессиональную помощь.

Для многих беженцев изоляция и отсутствие поддержки являются немаловажными факторами риска. Если беженцы-дети испытывают трудности в школе, важно проверить, имеют ли они и их семьи поддержку со стороны местного населения, посещают ли внешкольные кружки и клубы, имеют ли доступ на игровые площадки и в детские центры, охвачены ли планами социальной интеграции. Успешным часто оказывается психологическое вмешательство в проблемы семей маленьких беженцев, которое способствует повышению компетентности родителей.

Любой ребенок, вызывающий тревогу, должен наблюдаться в течение некоторого периода времени. Педагогам следует избегать делать поспешные выводы или наклеивать на ребенка готовый ярлык. Они должны попытаться выяснить биографию ребенка и сведения о той среде, из которой он вышел, а также причины его поведения. Можно спросить детей, почему им грустно или почему они сердятся. После этого педагогу необходимо подумать о какой-либо стратегии по оказанию поддержки этому ребенку.

Основными проблемами детей из семей вынужденных мигрантов можно назвать наличие фобий, нарушение сна и аппетита, нарушения в поведении, проявляющиеся реакциями протеста и агрессивностью, затрудненность контактов с местным населением, трудности в обучении, недостаточная сформированность коммуникативных навыков, плохое знание привычек, традиций, норм и правил поведения местного населения. Для таких детей характерны неспособность вступить в диалог, наладить контакт со сверстниками и взрослыми, чувство подавленности, психическая неуравновешенность, неадекватные защитные реакции. Такие дети находятся в особенно трудных условиях: ребенок отличается от среды своего нового местонахождения и новой культуры. Он является, как правило, выходцем из малообеспеченных слоев общества, социально не защищен, не знает или плохо знает язык принимающей страны. Все это существенно затрудняет процессы его обучения и воспитания, социализации и адаптации. Миграция лишает детей безопасного, стабильного, поддерживающего окружения, необходимого для нормального развития, нарушается процесс формирования и становления личности. Пережитый негативный опыт влияет на познавательные процессы, межличностные отношения, самооценку,

особенности поведения, и на мировоззрение в целом. У детей отмечаются глубокие изменения в видении мира, себя и своего будущего [2].

Нередко дети становятся косвенными жертвами травм, полученных их родителями. Взрослые уже не могут уделять воспитанию детей столько же времени и внимания, как дома, в привычной обстановке; сами родители, переживая шок, не всегда способны помочь своим детям. У детей-беженцев значительно чаще встречается страх наказания и страх боли.

Дети из семей беженцев, как правило, неверно понимают эмоциональное состояние сверстников или взрослых, что создает определенные трудности в общении. Часто сами окружающие не могут распознать настроение и состояние детей. Возникающее при этом взаимное непонимание со стороны взрослых и детей, неумение справиться с этой проблемой, приводят к нарушению эмоционального состояния ребенка. Дисбаланс чувств приводит к возникновению эмоциональных расстройств, и, как следствие, к отклонению в развитии личности ребенка, к нарушению социальных контактов.

Таким образом, можно выделить проблемы, которые наиболее часто возникают у детей из семей вынужденных мигрантов. Это нарушение познавательных процессов, эмоциональные и поведенческие нарушения, невротические реакции и проблемы общения.

Как отмечает Шакурова М.В., дети-беженцы испытывают большие затруднения в связи с низким уровнем знания языка и культуры данной страны [4].

В таких сложных условиях гармоничное вхождение в новую культурную среду и бесконфликтная жизнь детей-мигрантов вряд ли возможна, и в большинстве случаев ребенок испытывает «культурный шок», когда оказывается в незнакомой стране, которая существенно отличается от страны, где он родился и жил. Отметим, что в подобной ситуации он может оказаться также на своей родине при резкой смене социальной среды, когда у ребенка возникает противоречие между старыми и новыми культурными нормами.

«Культурный шок» возникает тогда, когда старые, знакомые с раннего детства культурные нормы, которые помогали ребенку адаптироваться в обществе, исчезают, и на смену им приходят новые и непонятные, рожденные новой средой. Такой опыт усвоения новой культуры неприятен ребенку, но в то же время, только выйдя за границы собственной культуры и познав другую культуру, можно ощутить самобытность родной культуры. Обычно у детей-мигрантов наблюдаются следующие признаки «культурного шока»: тревожность, чувство одиночества, чувство неполноценности, тоска по родине, друзьям, прошлой жизни, недоверие к работникам учебных заведений, трудности адаптации. Одним из ключевых вопросов, требующих решения, является степень вмешательства в детские игры педагога, который должен установить определенные правила игры, например, нельзя допускать игры с насилием и ломать игрушки. При таких правилах часто бывает целесообразно просто понаблюдать за играющими детьми некоторое время. Педагог может вмешиваться в процесс игры, разыгрывая роли и давая указания и словесные подсказки.

Педагог может побуждать детей к тому, чтобы они написали о себе, о своей родине и нынешних обстоятельствах жизни, вели дневник либо сделали себе альбом

для наклеивания вырезок или альбом для картинок о самих себе. Такие автобиографические приемы часто используются с беженцами-детьми, они помогают развивать понимание сложных событий и чувств.

Искусство можно использовать точно так же, как творческие сочинения и игру, для того чтобы дать детям возможность выразить себя и выработать понимание сложных событий и чувств. Терапия с помощью искусства широко применяется в системе здравоохранения, и все большее число специалистов в этой области ведут работу с детьми-беженцами. Возникают ситуации, когда необходимо привлечь специалиста по арт-терапии (например, для работы с детьми-беженцами с сильными душевными расстройствами). Но обучить навыкам применения искусства для работы с детьми-беженцами с целью помочь им найти свое место в жизни можно также учителей начальных классов, учителей рисования, воспитателей.

Драматическое искусство также можно использовать для выражения чувств и размышления над событиями. Оно позволяет детям передать свои мысли и чувства, которые было бы трудно выразить непосредственно словами. Дети могут создать пьесу или организовать кукольное представление, которое даст им возможность выразить собственные переживания, не отождествляя себя с персонажами пьесы. Дети могут использовать также драматическое искусство и куклы для того, чтобы поэкспериментировать с концовками историй.

Приход в новую школу порой вызывает страх у многих детей-беженцев. Хотя во время уроков ребенок еще кое-как может справляться с трудностями, на переменах он может чувствовать себя совсем невыносимо. Поэтому важно, чтобы в школах имелись безопасные места, например комната или какое-либо тихое место, где дети могут посидеть, если им не хочется участвовать в играх.

Рано или поздно в жизни каждого человека бывают тяжелые утраты, поэтому всем учащимся важно знать о том, что такое потеря близкого человека. Педагог может очень корректно с обсудить с детьми вопрос об утрате близкого человека. В результате беженцы-дети будут чувствовать себя такими, как все, и осознают, что и у других детей тоже были или могут быть тяжелые переживания.

Наиболее часто у детей-мигрантов возникают проблемы, связанные с отличием программ обучения от привычных им, незнанием языка, длительными перерывом в учебной деятельности. Проблема обучения детей-беженцев по сей день остается одной из важных в современном обществе. Незнакомая страна, чужая культура, обычаи, неумение хорошо говорить и понимать иностранную речь — вот что сваливается на ребенка.

Как отмечают Гуляева А.Н., учитель, сталкиваясь с подобной проблемой, в свою очередь испытывает большие трудности, так как не подготовлен к обучению языку ребенка-мигранта, а образование должен получить каждый ребенок, независимо от того, беженец он или нет.

Учителю остается только вырабатывать и использовать свои собственные методики, искать и находить новые пути для обучения ребенка-беженца.

Отметим, что, будучи достаточно трудолюбивыми и приспособляясь к новым условиям, такие дети очень часто проявляют себя с наилучшей стороны.

Нам представляется целесообразным проводить тренинги для учителей, работающих с детьми-беженцами. При обучении детей-беженцев также уместна работа с родителями, которых можно включить в процесс обучения. В такой обстановке дети будут чувствовать себя непринужденнее.

В то же время ребенку-беженцу необходимо установить новые отношения со сверстниками и взрослыми, которые зачастую проявляют к ним антипатию. Причина такого отношения – большой приток мигрантов, прибывших в экономически благоприятные регионы, который вызывает повышение социальной напряженности. Для детей-беженцев существует проблема проведения досуга, его включения в систему дополнительного образования, а также медицинского обслуживания. Все это способствует тому, что дети-беженцы воспринимают социум, в котором они вынуждены находиться, как дискриминирующий и отвергающий.

Загвязинский В.И. и Селиванова О.А. отмечают, что в работе с детьми-беженцами необходимо социально-педагогическое сопровождение, направленное на реализацию потенциальных возможностей ребёнка, на формирование положительных качеств, раскрытие ему индивидуальных возможностей, оказание ему социально-педагогической поддержки [1].

Педагог осуществляет педагогическую работу со всеми возрастными категориями беженцев, создавая благоприятные условия для их социализации и интеграции в новом социуме. Он является связующим звеном между ребёнком и новой средой, образовательным учреждением, медицинскими службами. Он строит свои отношения с ребёнком на взаимном доверии и уважительном отношении к его личности в условиях положительного эмоционального фона. Он не ждет, чтобы родители ребёнка обратились к нему за помощью. Он, не нарушая правил этики, сам устанавливает контакт с семьёй беженцев, осуществляет социально-педагогическую диагностику, выявляет индивидуальные особенности ребёнка, положительные и отрицательные факторы среды, воздействующие на процесс его развития, и, исходя из этого, планирует социально-педагогическую поддержку ребёнка. Он выступает в качестве защитника его интересов и прав и достигает социальной справедливости, стараясь помочь ребёнку раскрыть и развить свой внутренний потенциал и способности.

Выполняя роль конфликтолога, педагог старается разрешить противоречия в жизни ребёнка. Работая с ребенком-беженцем, педагог применяет различные способы разрешения конфликтов.

Процесс социально-педагогического сопровождения касается не только самого ребёнка-мигранта, но и его семьи и других социальных институтов, в которые он вовлечён.

По Столяренко Л.Д., Самыгину С.И., Тумайкину И.В., основными направлениями социально-педагогического сопровождения ребёнка-беженца являются [3]:

- работа с семьёй ребёнка;
- работа с учащимися и педагогами;
- работа с диаспорой;

Цель социально-педагогического сопровождения детей-мигрантов – социальная адаптация.

Об успешности работы педагога можно судить по общению ребёнка с окружающими, а также по его активности, уровню тревожности, толерантности, знанию языка новой страны, принятию ценностей принимающей стороны.

Грамотно организованное социально-педагогическое сопровождение процесса адаптации детей-беженцев позволяет выработать конструктивные стратегии поведения, взаимодействовать с представителями принимающей стороны, раскрыть личностный потенциал ребенка.

Литература

1. **Загвязинский В.И.**, Селиванова О.А., Социальная педагогика. М., Юрайт, 2019. - 448 с.
2. **Молодцов Т.Д.**, Дети из семей мигрантов и их адаптация в школьном социуме. Социологические науки. Международный журнал экспериментального образования. №7. 2013. – СС. 92-94.
3. **Столяренко Л.Д.**, Самыгин С.И., Тумайкин И.В., Социальная педагогика. М., Дашков и К., 2014. – 272 с.
4. **Шакурова М.В.**, Методика и технологии работы социального педагога. М., Академия, 2004.- 252с.

Ա.Լ. Մինասյան

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԴԵՐԸ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Հոդվածում լուսարանվում են փախստական երեխաների սոցիալ մանկավարժական աջակցության հարցերը: Հատուկ ուշադրություն է դարձվում սրիպողական միգրացիայի բացասական ազդեցությանն ածող սերնդի վրա: Ընդգծվում է, որ միգրանտ երեխաները նոր մշակութային միջավայրում հանդիպում են տարաբնույթ դժվարությունների, և նրանց անհրաժեշտ է մասնագիտական աջակցություն: Մանրամասն քննարկվում են փախստական երեխաների հետ մանկավարժի աշխատանքի ձևերը: Դիտարկվում են փախստական երեխաների սոցիալ մանկավարժական աջակցության հիմնական ուղղությունները:

Առանցքային բառեր. հարկադրված միգրացիա, փախստական երեխաներ, հարմարում, սոցիալականացում, մանկավարժ, սոցիալ մանկավարժական աջակցություն:

A.L. Minasyan

THE TEACHERS ROLE IN THE ADAPTATION OF REFUGEE CHILDREN

The article highlights the issues of social-pedagogical support for refugee children. Much attention is paid to the influence of forced relocation on younger generation. It is especially emphasized that refugee children experience great difficulties in the new social-cultural environment and need professional help. Much attention is paid to the work of the teacher with refugee children. The main directions of the social and pedagogical accompaniment of refugee children are considered

Keywords: forced migration, refugee children, adaptation, socialization, teacher, social and pedagogical support.

Минасян Анна Леоновна - Кандидат педагогических наук, доцент (Ереванский государственный университет им. В. Брюсова)

Дата представления: 13.10.2023
Дата рецензии: 20.10.2023

Ա.Հ. Ավանեսյան, Դ.Ռ. Թադևոսյան

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՀԱՆՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՈՐՊԵՍ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊԱՏՐԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ
ՏԱՐԻ**

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը պետության կարևորագույն գործառնություններից է, և ազգային անվտանգության բաղկացուցիչ մասը, քանի որ մարդկային և նյութական ռեսուրսների պահպանումը յուրաքանչյուր պետության գոյության նախապայմաններից է: Բնակչության պաշտպանության ձևերից մեկը, դա տարահանումն է, և հետևաբար տարահանման վարժանքների պարբերաբար անցկացումը նախադպրոցական կրթական հաստատություններում կարևորվում է որպես երեխաների մոտ անվտանգության մշակույթի ձևավորման և հմտությունների ձեռք բերման արդյունավետ եղանակ:

Առանցքային բառեր. արտակարգ իրավիճակ, նախադպրոցական կրթական հաստատություն, տարահանում, վարժանք, անվտանգ տարածք:

Տարահանումը (լատ.՝ evacuatio, evacuare – դատարկել, հեռացնել), վտանգավոր տարածքից մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումն ու տեղաբաշխումն է անվտանգ տարածք [1]:

Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև՝ այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որոնց հետևանքով որոշակի տարածքներում/բնակավայրերում կամ օբյեկտներում կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ: Պատմական իրադարձությունների և վերջին տարիներին տեղի ունեցած աղետների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տարահանումը հանդիսանում է բնակչության պաշտպանության լավագույն և հուսալի եղանակ [2]:

Նախադպրոցական կրթական հաստատություններում (ՆԿՀ) աղետներին պատրաստվածության և քաղաքացիական պաշտպանության պլանների, ազդարարման համակարգի փորձարկման, ստեղծված իրավիճակին արձագանքելու կարողությունները և հմտությունները զարգացնելու, ինչպես նաև դրանց գնահատմանը, պլանավորմանը և ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններին պատրաստվածության մակարդակը բարձրացնելու հիմնական միջոցներից է տարբեր ուսումնական վարժանքների պարբերական անցկացումը, ինչն անվտանգ կենսագործունեության մշակույթի ձևավորման բաղկացուցիչն է:

Խնդիրների լուծումը հնարավոր է անվտանգ կենսագործունեության մշակույթի ձևավորմամբ, ինչը ենթադրում է հասարակության յուրաքանչյուր անդամի վրա նպատակաուղղված մանկավարժական ներգործություն՝ վերջինիս կողմից անվտանգ կենսագործունեության վերաբերյալ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերման, ինչպես նաև ներքին գիտակցված պահանջմունքների

ձևավորման ճանապարհով՝ հետևելով անվտանգ վարքի ընդունված նորմերին և կանոններին [3]:

Հիշյալ վարժանքներն անհրաժեշտ են, քանի որ արտակարգ իրավիճակներում, նախադպրոցական կրթական հաստատություններում աշխատողների առջև հատուկ խնդիր է դրվում՝ կանխել խուճապը երեխաների շրջանում, թույլ չտալ նրանց մոլորվելու և բոլորին տեղափոխել անվտանգ տարածք, պահպանելով իրավիճակի նկատմամբ վերահսկողությունը: Սա անհրաժեշտ է առաջին հերթին երեխաների անվտանգության համար, քանի որ մեծահասակների վստահ գործողությունները հանգստացնում են նրանց:

Երկրորդ՝ անձնական հանգստության պահպանումն անհրաժեշտ է, որպեսզի դաստիարակը կարողանա իրականացնել երեխաների հաշվառում տարիանման ավարտից հետո՝ հստակ իմանալով իրականացվող գործողությունների հաջորդականությունը:

Երրորդ՝ այս վարժանքները հնարավորություն են տալիս վաղ հայտնաբերել երեխաների անվտանգության գծով նախադպրոցական կրթական հաստատությունում առկա թերությունները՝ դրանք հետագայում շտկելու նպատակով:

Միաժամանակ, անվտանգության մշակույթի ձևավորվածությանը նպաստում են մանկավարժական գործընթացում կիրառվող գործառնական-գործունեության միջոցները, երբ ձևավորված է արտակարգ իրավիճակները հաղթահարելու համար տեսական գիտելիքների վրա հիմնված որոշակի գործնական հմտությունների ու տարբեր խնդիրների լուծման մտածողության ճկունության և փոփոխականության, տրամաբանական ունակությունների, դատողության արագության ու անկախության համակարգ, առկա է արտակարգ իրավիճակի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու գործողությունների իրականացման գործնական պատրաստականության որոշակի մակարդակ [5]:

Նախադպրոցական կրթական հաստատություններում ուսումնական տարիանման գործնական վարժանքի անցկացման հիմնական նպատակներն են.

- արտակարգ իրավիճակների դեպքում որոշումների օպերատիվ կայացման նպատակով ՆԿՀ վարչական կազմի գործնական հմտությունների ու երեխաների տարիանման, փրկարարական աշխատանքներ կազմակերպելու ու իրականացնելու կարողությունների զարգացումը,
- մանկավարժական կոլեկտիվի գործնական հմտությունների զարգացումն արտակարգ իրավիճակների դեպքում երեխաների տարիանման միջոցառումներ իրականացնելու համար,
- մանկավարժական կոլեկտիվի և սպասարկող անձնակազմի մոտ գիտակցված և պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը՝ արտակարգ իրավիճակների դեպքում երեխաների անվտանգությունն ապահովելու համար,
- կենսագործունեության անվտանգության ուղղությամբ երեխաների կողմից ձեռք բերված որոշ տեսական գիտելիքների կատարելագործումը,
- ՆԿՀ անվտանգության համակարգի, այդ թվում և հրդեհ-տեխնիկական անվտանգության վիճակի ստուգումը,



Նկ. 1. Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարիանման գործնական վարժանքի անցկացումը

- ուսումնական տարիանման վարժանքի ընթացքում տարբեր իրավիճակների խաղարկումը, որոնք կարող են առաջանալ իրական արտակարգ իրավիճակների դեպքում՝ աշխատակիցներին և երեխաներին իրավիճակային միջանկյալ խնդիրների առաջադրմամբ, որոնց կատարմամբ էլ որոշվում է նրանց պատրաստականության աստիճանը [6]:



Նկ. 2. Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարիանման անցկացումը

Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարիանման գործնական վարժանքի անցկացման ընթացքում ստուգվում են աշխատակիցների հետևյալ գործնական հմտությունները (ունակությունները).

- արտակարգ իրավիճակների ծագման մասին ՆԿՀ հաստատված պայմանական ազդանշանի տրման դեպքում արագ և հմտորեն գործելը,
- աշխատավայրում կամ հաստատության այլ տարածքում հրդեհի, կամ այլ վտանգի հայտնաբերման դեպքում առանց խուճապի անհապաղ գործելը,
- արտակարգ իրավիճակների ծագման մասին սահմանված պայմանական ազդանշանի ժամանակին հաղորդելը,
- հրշեջ-փրկարարական և այլ ծառայություններին իրադրության մասին տեղեկատվության ժամանակին հաղորդելը,
- էլեկտրամատակարարման հանգույցի էլեկտրական վահանակի ավտոմատի, ինչպես նաև սենյակների անջատիչների անջատելը,
- առաջնային հրդեհաշիջման միջոցների (կրակմարիչներ, ավազ, ջուր) նպատակային օգտագործելը,
- հիմնական և վթարային տարիանման ելքերի, վթարային այլ ելքերով արագ

տարհանվելը,

- արտակարգ իրավիճակներում արդյունավետ գործելը,
- տուժածներին առաջին օգնության ցուցաբերելը:

Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարհանման գործնական վարժանքի անցկացման ընթացքում ստուգվում են երեխաների հետևյալ գործնական հմտությունները (ունակությունները)՝

- արտակարգ իրավիճակների մասին ՆԿՀ հաստատված պայմանական ազդանշանի տրման դեպքում աշխատակիցների ուղեկցությամբ գործելը համաձայն իրենց ունեցած տեսական գիտելիքների,
- ննջասենյակում, խմբասենյակում, մանկապարտեզի այլ դասասենյակներում և տարածքներում հրդեհի, ծխի և այլ վտանգների հայտնաբերման դեպքում արագ, կազմակերպված և առանց խուճապի անհապաղ գործելը, ՆԿՀ աշխատակիցներից մեկին անհապաղ տեղեկացնելը,
- հիմնական և վթարային տարհանման ելքերի, վթարային այլ ելքերով արագ տարհանվելը՝ աշխատակիցների ուղեկցությամբ:

Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարհանման վարժանքի անցկացման մասնակիցներն են՝

- վարչական կազմը,
- մանկավարժական կազմը,
- սպասարկող անձնակազմը, ներառյալ սննդի բաժնի և բուժկետի աշխատակիցները,
- բոլոր խմբերի երեխաները:

Ուսումնական տարհանման վարժանքի անցկացմանը օգնություն կարող են ցուցաբերել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության և պետական կառավարման տարածքային մարմինները:

Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարհանման վարժանքի անցկացումը պետք է իրականացվի համաձայն տվյալ համայնքի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնական միջոցառումների օրացուցային պլանի:

Գործնական պարապմունքները (իրական տարհանումը) կարող են պարբերաբար իրականացվել ինչպես ցերեկային, այնպես էլ երկարօրյա խմբերում:

Ուսումնական տարհանման վարժանքի անցկացմանը նախապատրաստվելիս ՆԿՀ ղեկավարը պարտավոր է հաստատել.

- հրդեհային անվտանգության աշխատանքների կազմակերպման կարգը,
- արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման ժամանակ աշխատակիցների գործողությունների կարգը,
- արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման ժամանակ անձնակազմի գործողությունների ընթացակարգի վերաբերյալ հրահանգները,
- հրդեհի դեպքում աշխատակիցների գործողությունների կարգի վերաբերյալ հրահանգը, կարգը, վարժանքի նախապատրաստման և անցկացման պլանը, վարժանքի անցկացման ամսաթիվը,
- աշխատակիցների և երեխաների կողմից ուսումնական տարհանման վարժանքի անցկացման ընթացքում հաղորդվող և կատարվող ներածական միջանկյալ առաջադրանքների ցանկը,

- դիտորդների (փորձագետների) ցանկը կազմված՝ ՆԿՀ անձնակազմից կամ մեկ այլ հաստատության, քաղաքապետարանի կրթության վարչության աշխատակիցներից, ՆԳՆ փրկարար ծառայության անձնակազմից, ՆԳՆ համակարգի աշխատակիցներից, ովքեր կհետևեն վարժանքի ընթացքին և կգնահատեն ՆԿՀ աշխատակիցների գործողությունները երեխաներին տարհանելիս, կգրանցեն տարհանման ժամկետները, կստուգեն տարածքն աշխատողների և երեխաների տարհանումից հետո և այլն):

Ուսումնական տարհանման գործնական վարժանքի անցկացմանը նախապատրաստվելիս ՆԿՀ ղեկավարն անցկացնում է պարապմունքներ վարչական կազմի, մանկավարժական և սպասարկող անձնակազմի հետ՝ ուսումնասիրելով արտակարգ իրավիճակների դեպքում գործելու կարգը, աշխատողների և երեխաների տարհանման կանոնակարգը, տարհանման և քաղաքացիական պաշտպանության պլանները և այլ փաստաթղթեր [4]:

ՆԿՀ ղեկավարը կազմակերպում է դաստիարակների կողմից պարապմունքների անցկացումը երեխաների հետ արտակարգ իրավիճակներում գործելու վերաբերյալ:

ՆԿՀ ղեկավարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել՝ վերացնելու տարհանման ուղիների և ելքերի պահպանման խախտումները, որոնք կարող են խոչընդոտել մարդկանց արագ և անվտանգ տարհանմանը, ազդարարման և տարհանման կառավարման համակարգի սարքինությունն ու գործունակությունը:

Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարհանման վարժանքի անցկացմանն առավելագույն թվով աշխատակիցներ և երեխաներ ներգրավելու համար ՆԿՀ ղեկավարը պարտավոր է:

- չպլանավորել վարժանքի անցկացման օրը որևէ լրացուցիչ (բացառությամբ դասերի հիմնական ժամանակացույցի) միջոցառումներ և աշխատանք, ինչպես ՆԿՀ տարածքում, այնպես էլ դրանից դուրս,
- ուսումնական տարհանման վարժանքի մակարդակը բարձրացնելու համար աշխատակիցներին տեղեկացնել վարժանքի ընթացքում անփութության դեպքում նրանց պատասխանատվության մասին:

Ուսումնական տարհանման գործնական վարժանքի իրականացման սկիզբն ազդարարվում է նախադպրոցական կրթական հաստատության երեխաների և աշխատակիցների մշտական կամ ժամանակավոր տեղակայման բոլոր տարածքներում արտակարգ իրավիճակի մասին ձայնային և (կամ) լուսային ազդանշանների հաղորդմամբ: Հրդեհի և այլ արտակարգ իրավիճակների մասին ազդանշան ստանալու դեպքում մանկավարժական կազմը և սպասարկող անձնակազմը միջոցառումներ են իրականացնում «Նախադպրոցական կրթական հաստատությունում արտակարգ իրավիճակների դեպքում գործելու» կանոնակարգին համապատասխան:

Ուսումնական տարհանման գործնական վարժանքի ընթացքում նախադպրոցական կրթական հաստատության ղեկավարը կամ նրան փոխարինողը վերահսկում է տարհանման անցկացման ընթացքը, ինչպես նաև այն ժամանակը, որի ընթացքում իրականացվել է շենքից մարդկանց ամբողջական տարհանում, որից հետո իրականացվում է երեխաների անվանական ստուգում ըստ խմբերի ցուցակների և զեկուցվում նախադպրոցական կրթական հաստատության ղեկավարին կամ տարհանում կազմակերպող անձին: Բացակա երեխաների մասին տեղեկատվությունն անմիջապես ներկայացվում է նախադպրոցական ուսումնական հաստատության

ղեկավարին կամ տարհանումն իրականացնող անձին, ինչպես նաև վարժանքին մասնակից հրշեջ-փրկարարներին: Ձեռնարկվում են միջոցներ վերոնշյալ երեխաների գտնվելու վայրը պարզելու (փրկություն) ուղղությամբ [7]:

Գործնական վարժանքի ժամանակ տարհանումից հետո նախադպրոցական կրթական հաստատության ղեկավարը կամ վարժանքն անցկացնող անձն իրականացնում է շրջայց նախադպրոցական կրթական հաստատության շենքի ողջ տարածքում՝ շենքը լքել չհասցրած կամ չկարողացած մարդկանց հայտնաբերելու նպատակով: Ուսումնական տարհանմանը չմասնակցող և սպասարկող անձնակազմը սկսում է հրդեհի ուսումնական մարումը հաստատությունում առկա առաջնային հրդեհաշիջման միջոցներով և իրականացնում գույքի ու այլ նյութական արժեքների տարհանման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման անհետաձգելի աշխատանքներ մինչև ՀՀ ՆԳՆ հրշեջ-փրկարարական խմբերի ժամանումը:

Ուսումնական տարհանման գործնական վարժանքի ավարտից հետո նախադպրոցական կրթական հաստատության ղեկավարն անցկացնում է արդյունքների ամփոփում, նշում հայտնաբերված թերությունները, քննարկում դրանց առաջացման պատճառները և հանձնարարում մշակել արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու միջոցառումներ, մասնավորապես նախադպրոցական կրթական հաստատության շենքի հրդեհատեխնիկական վիճակի, տարհանման գործընթացի բարելավման կազմակերպչական և գործնական միջոցառումներ:

Ուսումնական տարհանման գործնական վարժանքի ավարտին կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են ձեռք բերված արդյունքները, մատնանշվում թերությունները և արվում առաջարկություններ հետագա վարժանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար:



Նկ. 3. Նախադպրոցական կրթական հաստատությունում ուսումնական տարհանման գործնական վարժանքի արդյունքների ամփոփումը

Նախադպրոցական կրթական հաստատությունում տարհանման գործնական վարժանքի անցկացումը կարևորվում է որպես երեխաների մոտ անվտանգության մշակույթի ձևավորման և անվտանգության հմտությունների ձեռք բերման արդյունավետ եղանակ: Նախադպրոցական կրթական հաստատությունում արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և քաղաքացիական պաշտպանության պլանների, ազդարարման համակարգի փորձարկման, ստեղծված իրավիճակին արձագանքելու կարողությունները և հմտությունները զարգացնելու, ինչպես նաև դրանց գնահատմանը, պլանավորմանը և ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններին պատրաստվածության մակարդակը բարձրացնելու հիմնական միջոցներից է տարբեր ուսումնական վարժանքների պարբերական անցկացումը: Նման միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ, որոնք միտված կլինեն տարբեր արտակարգ իրավիճակներին դիմակայելու համար անձնակազմի, ինչպես

նաև երեխաների կարողությունների բարելավմանը, իրազեկմանը, առկա թերությունների բացահայտմանն ու շտկմանը: Արտակարգ իրավիճակներում անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման բովանդակությունը պետք է ներառի անհատի, իր և աշխարհի անվտանգ փոխհարաբերությունների ձևավորումը, որում նա հստակ ներկայացնում է կյանքի հանդեպ իր մոտեցումների բնույթը, վերաբերմունքը դեպի շրջակա աշխարհը, հասարակությունը, ճիշտ գիտակցելով իր անհատական, մտավոր, ճանաչողական, հուզական-կամային և հաղորդակցական-վարքային հատկանիշները [4]:

Անհրաժեշտ է նշել, որ անվտանգության մշակույթի ձևավորման գործընթացը պետք է սկսել երեխայի ձևավորման, աշխարհընկալման վաղ տարիքից, ինչի համար շատ կարևոր է նախադպրոցական կրթական հաստատություններում ուսումնական տարիանման գործնական վարժանքների պարբերաբար անցկացումը որպես աղետների ռիսկի կառավարման գործընթացում խոցելիության նվազեցման տարր, ինչը հիմք կհանդիսանա ավելի մեծ տարիքում անվտանգության մշակույթի զարգացմանը և կնպաստի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստվածության աստիճանի բարձրացմանը:

Գրականություն

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1998:
2. ՀՀ կառավարության 2011թ-ի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշումը:
3. Ղարիբյան Ռ., Բրուսյան Վ., Պետրոսյան Հ., Մաթևոսյան Հ., Անձի անվտանգության մշակույթի ձևավորումը որպես արդի մանկավարժության հիմնախնդիր «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հոդվածների ժողովածու, No 1, 2020. - էջ 4-14:
4. Պետրոսյան Հ.Հ., Ղարիբյան Ռ.Գ., Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորումը և զարգացումը: Մենագրություն/Հեղինակային հրատարակություն, Եր.: 2022.- 305 էջ:
5. Марчук Н.Ю., Методические материалы по вопросам формирования навыков безопасного поведения у детей и подростков. ГБОУ СО ЦППРиК. "Ладо", Екатеринбург: 2014. - 52 с.
6. Обеспечение комплексной безопасности в образовательном учреждении. Настольная книга руководителя/ (сост. Н.В. Андреева и др. под общей ред. Л.Н. Антоновой). - М.: Айрис-пресс, 2005. — 248 с.
7. Шумик В.Я., Бачурина Т.М., Учебная эвакуация на случай пожара в образовательном учреждении. Справочное пособие для руководителей образовательных учреждений, М.: 2012. — 78 с.

А.Г. Авансян, Д.Р. Тадевосян

ПРОВЕДЕНИЕ УЧЕБНОЙ ЭВАКУАЦИИ В ДОШКОЛЬНЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ, КАК ВАЖНЫЙ ЭЛЕМЕНТ ПОДГОТОВКИ ПО ГРАЖДАНСКОЙ ОБОРОНЕ

Защита населения в чрезвычайных ситуациях и организация гражданской обороны – одна из важнейших функций государства и неотъемлемая часть национальной безопасности, ведь сохранение людских и материальных ресурсов – одно из обязательных условий для существования каждого государства. Эвакуация является одной из форм защиты населения. Проведение

эвакуационной тренировки в дошкольном образовательном учреждении выделено как эффективный метод формирования у детей культуры безопасности и приобретения навыков безопасности.

Ключевые слова: чрезвычайная ситуация, дошкольное образовательное учреждение, эвакуация, учения, безопасная территория.

A.H. Avanesyan, D.R. Tadevosyan

CONDUCT OF EDUCATIONAL EVACUATION PRACTICAL DRILLS IN PRE-SCHOOL EDUCATIONAL INSTITUTIONS, AS AN IMPORTANT ELEMENT OF CIVIL DEFENSE PREPARATION

The organization of population protection and civil defense in emergency situations is one of the most important functions of the state and an integral part of national security, as the preservation of human and material resources is one of the prerequisites for the existence of every state. Evacuation is one of the forms of population protection. One of the forms of protection of the population is evacuation, and therefore regular evacuation drills in pre-school educational institutions are highlighted as an effective way of forming a safety culture and acquiring skills among children.

Key words: emergency situation, preschool educational institution, evacuation, drill, safe area.

Ավանեսյան Անդրանիկ Հայկի – դասախոս (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)
Թադևոսյան Դավիթ Ռաֆայելի - տ.գ.թ., դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Ներկայացման ամսաթիվը՝ 11.10.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 19.10.2023

Հ.Հ. Պետրոսյան

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ

Հոդվածում քննարկված է բուհերում ուսուցման նորարարական մեթոդների կիրառման արդյունավետության հարցը: Դասի կազմակերպման ավանդական հրահանգչական և ժամանակակից ինտերակտիվ մեթոդի կիրառության համեմատության արդյունքներով բացահայտված է ինտերակտիվ մեթոդի արդյունավետությունն ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխներգործության, ակտիվության, խմբային փորձի և պարտադիր հետադարձ կապի սկզբունքների հիմքի վրա:

Առանցքային բառեր. ուսուցման հրահանգչական եղանակ, ինտերակտիվ մեթոդ, դասախոսություն, խմբային փորձ, հետադարձ կապ, նախագիծ:

Վերջին տարիներին կրթական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտության մասին հաճախ է խոսվում: Ներկայում նորարարական մանկավարժական գործունեությունը ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության կրթական գործունեության էական բաղադրիչներից է: Նորարարությունը կրթության բնագավառում տեղեկատվության ներկայացման նոր, ավելի արդյունավետ մեթոդների և միջոցների օգտագործումն է, անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու ուսուցանում է, դրա համարժեքության ստուգումն է և նոր նյութի նկատմամբ ուսանողների հետաքրքրության զարգացումը:

Ավանդական մեթոդիկան ենթադրում է դասավանդողի և ուսանողի միջև հաղորդակցում, դասավանդողի կողմից ուսանողի կրթական գործունեության մշտական վերահսկողություն և ուսումնական նյութի յուրացման մակարդակի հաշվառում:

Այլ կերպ ասած, այս երկխոսության արդյունավետությունը կախված է դասավանդողի կողմից հետևյալ առաջադրանքների ճիշտ լուծումից՝

- 1) կրթական նպատակի սահմանում և դրանից բխող ուսանողի մոտիվացիա,
- 2) որոշակի բովանդակությամբ նյութի (դասախոսություն) հաղորդում և դրա մեկնաբանում (սեմինար): Միաժամանակ դասավանդողը որոշում է նաև ուսումնական նյութի մշակման մեթոդական գործառույթը,
- 3) գիտելիքների վերահսկողություն և հաշվառում:
Ուսուցման այս մոդելն իր բնույթով հրահանգչական է:

Հրահանգչական մոդելով ուսումնառության արդյունքը դիտվում է որպես գիտելիքների հանրագումարի փոխանցում ուսումնական գործընթացի բովանդակության ռացիոնալ կազմակերպման միջոցով, երբ տեղի է ունենում միակողմանի երկխոսություն, որտեղ տեղեկատվության հոսքի ակտիվ, նախաձեռնող կողմը դասավանդողն է: Ստացված տեղեկատվության վերարտադրումը մեխանիկական է, ուսումնական գործընթացի նկատմամբ ուսանողի ակտիվությանը և հետաքրքրությանը հետևելը բավականին դժվար է: Հրահանգչական դասավանդման մոդելի հիմնական չափանիշներն են՝ ներկայացված նյութի ճշգրտությունը, անվիճելիությունը, հավաստիությունը (այն ենթադրում է մեծ թվով դասախոսություններ), ուսանողների գիտելիքների և կարողությունների հանրագումարային վերահսկողություն և հաշվառում:

Այդուամենայնիվ, ժամանակակից Հայաստանում փոփոխվող սոցիալ-տնտեսական իրավիճակն առաջացրել է կրթության արդիականացման անհրաժեշտություն [1]: Պետք է ոչ միայն բարձր մակարդակի պատրաստություն անցած մասնագետ թողարկել, այլև նրան արդեն իսկ ուսումնառության փուլում ընդգրկել նոր տեխնոլոգիաների մշակման մեջ, ադապտացնել կոնկրետ աշխատանքային միջավայրի պայմաններին և դարձնել նոր լուծումների ակտիվ մասնակից: Այդ կապակցությամբ հայաստանյան համալսարանների դասավանդողների առջև խնդիր է դրված մշակել և կիրառել դասավանդման այնպիսի մեթոդիկաներ և մեթոդներ, որոնք ուղղված կլինեն ակտիվացնելու ուսանողի ստեղծագործական ներուժը և սովորելու ցանկությունը: Բացի այդ, ժամանակակից հասարակության գլոբալ տեղեկատվայնացումը զգալի ազդեցություն է ունենում նաև կրթական գործընթացի, հանրապետության բարձրագույն կրթության համակարգի վրա՝ կիրառվող դասավանդման մեթոդների արմատական վերանայման հրամայականով:

Կրթական գործունեության նախագծված նպատակների և վերջնական արդյունքների միջև կապող օղակը հանդիսանում է մեթոդը: Այդ պատճառով էլ ուսուցման տեխնոլոգիաներին առնչվող հարցերի հետ համատեղ քննարկման ենթակա են նաև ուսուցման և ուսումնառության մեթոդների ընտրության և կիրառության հիմնախնդիրները: Այդ մեթոդների դասակարգումը և նկարագրումը կարելի է կառուցել այնպես, որ.

- դրանք կարելի լինի կիրառել ցանկացած դասընթացի դասավանդման ժամանակ,
- դրանց ընտրությունը հնարավոր լինի կատարել ուսուցման և դիդակտիկ խնդիրների նպատակներին համապատասխան [3]:

Ներկա պայմաններում դասավանդումը պետք է համատեղի պրակտիկայում մշակված հրահանգչական և դասավանդման ժամանակակից, նորարարական, ինտերակտիվ մոդելը: Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործունեության կազմակերպման հատուկ ձև է: Դա ենթադրում է շատ կոնկրետ նախագծված նպատակներ: Դրանցից մեկն ուսուցման հարմարավետ պայմանների և բարենպաստ հոգեբանական միջավայրի ստեղծումն է, որտեղ ուսանողը կզգա իր հաջողությունը, իր ինտելեկտուալ կոմպետենտությունը, ինչն ուսուցման գործընթացն ինքնին դարձնում է արդյունավետ: Ուսուցման ինտերակտիվ մոդելի օգտագործումը ներառում է աշխատանքային իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի կիրառում և խնդիրների համատեղ լուծում:

Ուսումնական գործընթացում բացառվում է ցանկացած մասնակցի կամ գաղափարի գերակայությունը: Ազդեցության օբյեկտից ուսանողը դառնում է փոխներգործության սուբյեկտ, նա ինքն է ակտիվորեն մասնակցում ուսումնական գործընթացին՝ հետևելով իր անհատական երթուղուն [4]: Օպտիմալ ուսուցումը տեղի է ունենում, երբ հնարավոր է ցուցաբերել ակտիվություն և փոխներգործություն (ինտերակտիվ): Ի վերջո, հայտնի է, որ ինչ-որ բան կարդալուց հետո հիշողության մեջ մնում է տեղեկույթի 10%-ը, ինչ-որ բան լսելուց հետո՝ 20%-ը, ինչ-որ բան տեսնելուց հետո՝ 30%-ը, ինչ-որ բան տեսնելուց և լսելուց հետո՝ 50%-ը և 90%, երբ մարդ ինքն է ինչ-որ բան կատարում:

Ուսուցման ինտերակտիվ ձևերի ներդրումը ժամանակակից բուհում ուսանողների մասնագիտական պատրաստության բարելավման կարևոր ուղղություններից է:

Հիմնական մեթոդաբանական նորամուծություններն այսօր կապված են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառության հետ: Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման վրա հիմնված ուսումնական գործընթացը կազմակերպվում է հաշվի առնելով ուսումնական գործընթացում, առանց բացառության, բոլոր սովորողների ներգրավվածությունը: Համատեղ գործունեություն նշանակում է, որ աշխատանքի ընթացքում յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է ունենում, փոխանակվում են գիտելիքներ, գաղափարներ, գործունեության եղանակներ:

Ինտերակտիվ մեթոդները հիմնված են փոխներգործության, ուսանողի գործունեության, ուսանողների ակտիվության, խմբային փորձի և պարտադիր հետադարձ կապի սկզբունքների վրա: Ուսուցման այս ձևերով ստեղծվում է կրթական հաղորդակցության միջավայր, որը բնութագրվում է մասնակիցների փոխներգործությամբ, նրանց փաստարկների հավասարությամբ, ժամակակից գիտելիքների կուտակմամբ, փոխադարձ գնահատման և վերահսկողության հնարավորությամբ: Դասավանդողը հրաժարվում է յուրատեսակ ֆիլտրի դերից, որն իր միջով անցկացնում է ուսումնական տեղեկույթը և աշխատանքի ընթացքում կատարում է օգնականի գործառույթ, հանդես գալիս որպես տեղեկատվության աղբյուրներից մեկը: Այդ պատճառով, ինտերակտիվ ուսուցումն ի սկզբանե նախատեսված էր բարձրագույն դպրոցի համար: Ինտերակտիվ կրթական տեխնոլոգիաների հիմնական տեսակներն են՝

1. աշխատանք փոքր խմբերում (թիմերում)՝ ուսանողների համատեղ գործունեություն խմբում առաջնորդի ղեկավարությամբ, որի նպատակն է լուծել ընդհանուր խնդիր՝ ստեղծագործաբար համատեղելով թիմի անդամների անհատական աշխատանքի արդյունքներն իրավասությունների և պարտականությունների բաշխման շրջանակում:
2. Նախագծային տեխնոլոգիա՝ կոնկրետ թեմայի վերաբերյալ նյութի ընտրության, բաշխման և համակարգման անհատական կամ կոլեկտիվ գործունեություն, որի արդյունքում կազմվում է նախագիծ:
3. Կոնկրետ իրավիճակների վերլուծություն (դեպքի ուսումնասիրություն)՝ մասնագիտական գործունեության համապատասխան ոլորտում տեղի ունեցած իրական պրոբլեմային իրավիճակների վերլուծություն և լավագույն լուծումների տարբերակների որոնում:
4. Դերային և իրավիճակային խաղեր՝ ուսանողների դերային խաղերի իրական մասնագիտական գործունեության սիմուլյացիա տարբեր աշխատավայրերում մասնագետների գործառույթների իրականացմամբ:
5. Մոդուլային ուսուցում՝ գիտելիքների օգտագործում ա) դասընթացի ինքուրույն մասերի առանձին մոդուլների, դասընթացի այլ մասերի հետ ինտեգրված, բ) փոխկապակցված դասընթացների կառուցահատվածներ, որոնք կարող են ուսումնասիրվել առանձին առարկաներից անկախ:
6. Համատեքստային ուսուցում՝ ուսանողներին մոտիվացնելով ուսուցանել գիտելիքները բացահայտելով կոնկրետ գիտելիքների և դրանց կիրառման միջև կապերը:
7. Քննադատական մտածողության զարգացում՝ կրթական գործունեություն, որն ուղղված է ուսանողների մոտ զարգացնել խելամիտ, ռեֆլեկտիվ մտածողություն, նոր գաղափարներ առաջ քաշելու և նոր հնարավորություններ տեսնելու ունակությունների զարգացմանը:
8. Պրոբլեմային ուսուցում՝ ուսանողներին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու գործունեության խթանում, որոնք անհրաժեշտ են կոնկրետ խնդրի լուծման համար:
9. Անհատական ուսուցում ուսանողը կառուցում է իր ուսումնական հետագիծը հիմնվելով անհատական կրթական ծրագրի ձևավորման վրա, հաշվի առնելով սեփական հետաքրքրությունը:

10. Առաջանցիկ ինքնուրույն աշխատանք՝ սովորողները սովորում են նոր նյութը մինչ այն դասերի ընթացքում ուսումնասիրելը:
11. Միջառարկայական ուսուցում՝ տարբեր ոլորտների գիտելիքների օգտագործում, դրանց խմբավորում և կենտրոնացում լուծվող խնդրի համատեքստում:
12. Փորձի վրա հիմնված ուսուցում՝ ուսանողի ճանաչողական գործունեության ակտիվացում, ուսումնառության առարկայի հետ սեփական փորձի համադրման միջոցով:
13. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ՝ ուսուցում էլեկտրոնային կրթական միջավայրում՝ կրթական ռեսուրսների հասանելիության ընդլայնման նպատակով (տեսականորեն անսահմանափակ մուտքի ծավալ և արագություն), դասավանդողի հետ փոխներգործության ավելացում, անհատական վերապատրաստման հետազոծի կառուցում և ուսանողների գիտելիքների օբյեկտիվ վերահսկողություն ու մշտադիտարկում:

Ինտերակտիվ մեթոդները միտված են ուսումնա-ճանաչողական գործունեության ակտիվացմանը դասախոսի հետ փոխգործակցության միջոցով: Երկխոսության համատեքստում խնդիրների լուծման եղանակը ենթադրում է հետադարձ գործընթացի կանոնակարգում, որը դասախոսի կողմից պարտադիր բնույթ չի կրում: Նման մեթոդների կիրառումը կապ կամ երկուղղորդված գործունեություն է՝ հարց-հարցադրում-պատասխան: Այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս սովորողին բացահայտել իր պոտենցիալ հնարավորությունները, լրացնել հատուկ ընդունակությունները և որպես արդյունք՝ ձեռք բերել կարողություններ և հմտություններ [2]:

Ինչպես հետևում է վերը նշվածից, ինտերակտիվ ուսուցման մոդելի հիմնական չափանիշներն են՝ ոչ ֆորմալ քննարկումների հնարավորությունը, նյութի շարադրման ազատությունը, փոքր թվով դասախոսությունները, ուսանողի նախաձեռնողականությունը, խմբային աշխատանքների առկայությունը, որոնք պահաջում են խմբային ջանքեր, կիսամյակի ընթացքում մշտական վերահսկողություն գրավոր աշխատանքների կատարման նկատմամբ: Թվարկված ուսուցման բոլոր տեխնոլոգիաներն օգնում են լուծել ուսուցման որակի խնդիրը: Այսպիսով, վերլուծելով դասախոսությունների անցկացման ժամանակակից պրակտիկան, հնարավոր է ձևակերպել լուծումներ պահանջող մի շարք դիդակտիկ խնդիրներ:

Դասախոսության ժամանակ տեղեկատվության ներկայացման ձևը, որպես կանոն, ստատիկ է, և չի կարող ճկուն կերպով հարմարվել կրթության բովանդակության փոփոխություններին: Բայց կարելի է իրականացնել նաև ուսումնական նպատակներին հասնելու գործունեություն՝ ակտիվ եղանակով, դասախոսության անցկացում ակտիվ ձևերի կիրառմամբ՝

- պրոբլեմային դասախոսություն,
- դասախոսություն-կոնֆերանս,
- դասախոսություն առանց կոնսպեկտի՝ բարձրաձայն մտորումներ,
- հեղինակային-դասախոսություն,
- դասախոսություն՝ հետադարձ կապի կիրառմամբ,
- դասախոսություն կոնկրետ իրավիճակների քննարկմամբ,
- դասախոսություն-երկխոսություն,
- դասախոսություն՝ այլ մեթոդների հետ համակցված [3]:

Դասավանդողների և ուսումնառողների համատեղ գործունեության կազմակերպման վերոնշյալ եղանակի իրականացման արդյունավետության պայմաններն են՝

- դասախոսության մանրամասն պլանի առկայությունը,

- ուսումնառողներին դասախոսության պլանի մասին տեղեկացում,
- պլանի յուրաքանչյուր կետի պարզաբանումից հետո հակիրճ ընդհանրացնող եզրակացությունների ձևակերպման առկայությունը,
- տրամաբանական կապի ապահովումը դասախոսության յուրաքանչյուր մասից մյուսին անցնելիս,
- այն ամենի առանձնացումը, ինչն անհրաժեշտ է գրառել,
- դասախոսության զուգակցումը սեմինարների, գործնական աշխատանքների հետ, դրանց ժամանակ դասախոսության առանձին դրույթների մանրագնին վերլուծությունը [3]:

Ինչ վերաբերում է հենց ուսանողներին, ապա դասախոսությունների ավանդական ձևը չի նպաստում նրանց ակտիվ գործունեությանը: Այս խնդիրներն արդիական են գրեթե բոլոր առարկաների դասավանդման համար: Թվարկված թերությունների շտկումը կարող է իրականացվել տարբեր դիդակտիկ նորարարությունների միջոցով օգտագործելով պրոբլեմային ուսուցումը, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը, փոքր խմբերում աշխատելու մեթոդը, համակարգչային մոդելավորումը և արդյունքների գործնական վերլուծությունը, ինտերակտիվ դասախոսությունները՝ որպես դասախոսությունների վերահսկիչ բաղադրիչ կիրառելով թեստային առաջադրանքներ, ինչպես նաև ուսումնական գործընթացում ուսումնական նյութի ներկայացման նոր ձևերի ընդգրկումը: Պրակտիկան ցույց է տալիս, որ այս համատեքստում ամենաարդյունավետը էլեկտրոնային ներկայացումների օգտագործումն է, որոնք դասախոսության բովանդակությունը շարադրում են դրա ներկայացման տրամաբանությանը համապատասխան: Դասախոսություն կարդալիս ներկայացումների օգտագործումը ուսուցման ակտիվ ձևերի հետ համատեղ (քննարկում, զրույց) հնարավորություն է տալիս լսարանին հաղորդել ուսումնական նյութը արդյունավետ կերպով, տեսողականորեն ներկայացնել ուսումնական բովանդակությունը, ընդգծել և լուսաբանել հիմնական կետերը, ինչպես նաև ուսանողներին ներգրավել խնդիրների լուծման և քննարկման գործընթաց:

Գործնական պարապմունքներին օգտագործում են փոքր խմբերի և խնդիրների վրա հիմնված ուսուցման մեթոդներ: Այդ աշխատանքների ժամանակ ուսանողները բաժանվում են 3-4 հոգանոց խմբերի և լուծում են իրենց տրված կոնկրետ խնդիր: Խմբի համար ընդհանուր որոշման կայացումը պահանջում է մի կողմից ուսումնական նյութի իմացություն, նոր տեղեկատվության որոնում (աշխատանք գրականության հետ), ստացված նյութն ամփոփելու և ներկայացնելու կարողություն, իսկ մյուս կողմից՝ շփվելու, հաղորդակցվելու, միջանձնային հարաբերությունների էթիկան պահպանելու կարողություն՝ մասնագիտական խնդիրները լուծելու համար: Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում նախագծային մեթոդը: Օրինակ՝ ուսանողին կարելի է հանձնարարել ուսումնասիրել որևէ գործունեություն իրականացնելու պայմանները: Նախագիծը սահմանվում է որպես կազմակերպված, նպատակային գործունեություն: Դասավանդողի ղեկավարությամբ ուսանողի նախագծային գործունեության արդյունքը նոր գիտելիքներ են: Նախագծի փուլերն են՝ հիմնախնդրի և դրանից բխող հետազոտական խնդիրների որոշումը, տվյալ խնդրի վերաբերյալ տեղեկատվության և հայտնի փաստերի հավաքագրումը, դրա լուծման համար վարկածի առաջ քաշելը, փորձարարական ուսումնասիրությունների իրականացումը, ստացված տվյալների համակարգումը և վերլուծությունը, արդյունքների ամփոփումը, ձևակերպումը, դրանց ներկայացումը, եզրակացությունների և նոր խնդիրների առաջադրումը:

Այսպիսով, նորարարական մեթոդներն ուղղված են մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը՝ զարգացնելով ուսանողների մասնագիտական գիտելիքների շրջանակը, ստեղծագործական կարողությունները, հմտությունները և ինքնուրույնությունը:

Գրականություն

1. **Հայաստանի** Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր, ընդունված է 2022 թվականի նոյեմբերի 16-ին:
2. **Միրիմանյան Ս.**, Մկրտչյան Ք., Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացում ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավետության բարձրացման ուղիները: http://publications.y.su.am/wp-content/uploads/2020/12/Mirimanyan_Mkrtchyan1.pdf
3. **Պետրոսյան Հ.**, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսումնական ձեռնարկ, Հեղ. հրատ. Եր.: 2012. – 564 էջ:
4. **Бренда Гордии** // Болонский процесс в глобальном контексте: потенциальные возможности и угрозы для Европейского сектора высшего образования / Итоги Лондонской конференции министров образования Европейских стран/ Вопросы образования. № 2, 2007. СС. 6-13.

Г.Г. Петросян

ИННОВАЦИОННЫЕ МЕТОДЫ ОБУЧЕНИЯ В ВУЗЕ

В статье рассматривается эффективность использования инновационных методов обучения в вузах. Результаты сравнения использования традиционного учебного и современного интерактивного метода организации урока выявили эффективность интерактивного метода по взаимодействию субъектов учебного процесса, деятельности, групповому опыту и принципам обязательной обратной связи.

Ключевые слова: метод обучения, интерактивный метод, лекция, групповой опыт, обратная связь, проект.

H.H. Petrosyan

INNOVATIVE TEACHING METHODS IN HIGHER EDUCATIONAL INSTITUTION

The article examines the effectiveness of using innovative teaching methods in higher educational institutions. The results of comparing the use of traditional educational and modern interactive methods of lesson organization revealed the effectiveness of the interactive method based on the principles of interaction, activity, group exercise and the mandatory feedback of subjects of the educational process.

Key words: instructional method of teaching, interactive method, lecture, group exercise, feedback, project.

Պետրոսյան Հրայր Հայկի - մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ (Գորիսի պետական համալսարան)

Ներկայացման ամսաթիվը՝ 07.09.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 15.09.2023

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ. 2023. No 2 (23)

Ի.Վ. Նասիյան, Ա.Ա. Գրիգորյան

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կոնֆլիկտային իրավիճակում առավել արդյունավետ վարքի ռազմավարություն օգտագործելու ունակությունն արտակարգ իրավիճակներում ցանկացած գործունեության կարևոր ցուցանիշ է:

Ներկայացված հոդվածում դիտարկվում է կոնֆլիկտների կառավարման առանձնահատկությունները արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացներում՝ քննարկելով դրանց լուծման ժամանակակից մոտեցումները:

Առանցքային բառեր. արտակարգ իրավիճակ, կոնֆլիկտ, բախում, արդյունավետ վարքագծի ռազմավարություն:

Յուրաքանչյուր կազմակերպության արդյունավետ գործունեությունը պահանջում է գրագետ, հիմնավորված կառավարման համակարգի ձևավորում, որը պետք է հաշվի առնի գիտականորեն ուսումնասիրված բոլոր գործառույթները, կառավարման առանձին տարրերը, ճգնաժամային կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին և ներքին միջավայրի ազդեցության գործոնները: Այս տեսանկյունից, իհարկե, առավել բարդ է կառավարման գործընթացն արտակարգ իրավիճակների պայմաններում, որն իր հետ բերում է բազմաթիվ կոնֆլիկտներ և դրանց չկարգավորման հետևանքով տանում մինչև կազմակերպության լուծարումը:

Համարելով այս խնդրի լուծումն արդիական՝ ներկայացնում ենք կատարած ուսումնասիրությունների արդյունքները, որոնք վերաբերում են կոնֆլիկտների կառավարման առանձնահատկություններին արտակարգ իրավիճակների պայմաններում: Այդ խնդրի լուծման նպատակով կներկայացնենք կոնֆլիկտների կառավարմանը վերաբերող հիմնական տեսական դրույթները, կառավարման արտասահմանյան փորձը, նաև մեր կողմից հետազոտվող ոլորտի առանձնահատկությունները: Հարկ ենք համարում նշել, որ հաշվի առնելով կոնֆլիկտի ուսումնասիրության կարևորությունը բոլոր կազմակերպությունների համար, այն ձևավորվել է որպես առանձին գիտական ճյուղ «կոնֆլիկտաբանություն» և անցել է պատմական երեք ժամանակաշրջան 1924թ-ից մինչև ներկա ժամանակները [13]:

Ցանկացած հասարակության պատմություն կոնֆլիկտների պատմություն է, որն ուղեկցվում է հոգեբանական սթրեսով, նյութական, մշակութային, մարդկային կորուստներով:

Հոգեբանները կոնֆլիկտը դիտարկում են որպես մարդկանց փոխազդեցության բնական պայման, որի հիմքում ընկած են հակասությունները, սոցիալական կապերի, սուբյեկտների արժեքների և հետաքրքրությունների միջև տարբերությունները: Նրանք պնդում են, որ կոնֆլիկտը, լինելով այն էակների շփման ցուցաբերում, որոնք ունակ են ինքնագիտակցման, նշանակում է համաձայնության բացակայություն, տարակարծություն, տարբեր հայացքների և ցանկությունների բախում [5]:

Կառավարման հարցերով զբաղվող մասնագետները հաճախ սահմանում են կոնֆլիկտը որպես բարդ համակարգերի փոխհարաբերության համընդհանուր ձև, հակասությունների և սահմանափակումների հաղթահարում ցանկացած ոլորտում, որտեղ հաղորդակցումը կատարվում է առանձին անհատների և նրանց համայնքների միջև [4]: Յու. Սուվարյանը կոնֆլիկտը կառավարման համակարգում սահմանում է որպես մարդկանց շահերի, նպատակների, արժեքների ընկալման տարբերություններով պայմանավորված անհամաձայնություն ու համապատասխան հարբերությունների, գործողությունների դրսևորում [3]:

Կոնֆլիկտների կործանարար ուժն այնպիսին է, որ կազմակերպությունները, որտեղ ուշադրություն չեն դարձնում կոնֆլիկտների կարգավորմանը, լիովին

ապակազմավորվում են և ղեկավարներից ոչ մեկը չի կարողանում գտնել կոնֆլիկտը վերացնելու, դրա հետևանքով տուժած կազմակերպության արդյունավետությունը վերականգնելու միջոցը [1]: Սակայն շատ իրավիճակներում կոնֆլիկտն օգնում է բացահայտել տարբեր տեսանկյուններ, լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրում, օգնում է ավելի շատ այլընտրանքներ կամ խնդիրներ գտնել, ինչը նպաստում է խմբի որոշումների կայացման գործընթացն առավել արդյունավետ դարձնել: Դա կարող է հանգեցնել նաև պլանների, ռազմավարությունների և նախագծերի առավել արդյունավետ իրականացմանը: Այսպիսով, կոնֆլիկտը կարող է լինել կառուցողական և հանգեցնել կազմակերպության արդյունավետության բարձրացմանը: Կամ էլ այն կարող է լինել ապակառուցողական և տանել անհատական բավարարման, խմբային համագործակցության և կազմակերպության արդյունավետության իջեցմանը [1]: Ներկայացնենք կոնֆլիկտի կառավարման հիմնական տարրերը:

Կոնֆլիկտի կառավարման համար նախ անհրաժեշտ է ակտորոշել կոնֆլիկտի տեսակը: Կարտաշևը իր «Կոնֆլիկտներ կազմակերպությունում» գրքում տվել է կոնֆլիկտների հետևյալ դասակարգումը [10]: Հիմնական տեսակներն են՝ կազմակերպական, հուզական, գործնական, հորիզոնական, ուղղահայաց, ընդհանուր, տեղային, միջանձնային և այլն: Կարևոր են կոնֆլիկտի տարրերը, կանֆլիկտի օբյեկտը, ընդդիմախոսները: Կոնֆլիկտի իրավիճակի մասնակիցներից յուրաքանչյուրը որոշակի կարգ ունի: Միջադեպը հենց այն գործողությունն է, որը բռնկում է կոնֆլիկտը, բացահայտում հակասությունների գոյությունը: Միջադեպից հետո կոնֆլիկտը անցնում է բաց ձևի:

Կոնֆլիկտի առարկան ներքին պատճառն է, որը դրդում է մարդուն առճակատման: Մասնագետների գնահատմամբ, մենեջերները կոնֆլիկտային իրավիճակների լուծման վրա ծախսում են աշխատանքային ժամի մոտ 20 %: Կոնֆլիկտին նախորդում է կոնֆլիկտային իրավիճակը, որը բաղկացած է կոնֆլիկտի կողմերից և կոնֆլիկտի օբյեկտից, այսինքն՝ անհամաձայնության պատճառից [3]:

Կառավարման ժամանակակից տեսությունների համաձայն՝ տարբերում են կազմակերպություններում կոնֆլիկտների երկու տեսակ՝ ֆունկցիոնալ (գործառական) և դիսֆունկցիոնալ (ոչ գործառական): Ֆունկցիոնալ կոնֆլիկտների զարգացումն ուղեկցվում է տեղեկատվության առավել արդյունավետ ու արագ փոխանակմամբ, տարբեր դիրքորոշումների համաձայնեցվածությամբ, փոխադարձաբար միմյանց հասկանալու ցանկությամբ:

Կոնֆլիկտը պետք է կառավարվի աշխատանքային հարաբերությունների կարգավորման արդյունավետ քաղաքականությամբ, որը ներառում է ընթացակարգերը, վարքականոսները և ներքին վարքաբանական կանոնակարգեր:

Կոնֆլիկտի կարգավորման գործընթացը, սերտաճելով կոնֆլիկտի ընթացքին և զարգացմանը, ենթադրում է, որ կոնֆլիկտող կողմերը պետք է պարտադիր գտնվեն կարգավորման գործընթացի միևնույն փուլում: Կոնֆլիկտների առաջացման խնդրում մեծ նշանակություն ունեն կոնֆլիկտաժին երևույթները, որոնք նպաստում կամ դրդում են, որ հավանական կոնֆլիկտը դառնա իրական [12]:

Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերում կարող են գոյություն ունենալ կոնֆլիկտների հետևյալ հիմնական տեսակները՝ կազմակերպական, աշխատանքային, նորարարական: Ընդ որում, ժամանակակից շուկայական պայմաններում նորարարությունների ներմուծումը դառնում է մրցակցային գլխավոր

առավելություններից մեկը: Նորարարական կոնֆլիկտներն ընդգրկում են նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, նյութերի ստեղծման և դրանց արտադրման միջոցների վերաբերյալ խնդիրների լայն շրջանակ [14]:

Նորարարական կոնֆլիկտ առաջացնող հիմնական պատճառներից են աշխատողների պասսիվությունը, նյութատեխնիկական ռեսուրսների սակավությունը կամ դրանց ցածր որակը, ղեկավարների և մասնագետների աշխատանքը վերակառուցելու անհրաժեշտությունը: Կազմակերպության նորարարական կոնֆլիկտները կարող են լինել աշխատանքային և միջանձնային:

Ցանակացած կազմակերպության պրակտիկ գործունեության մեջ անհրաժեշտ է կազմակերպել կոնֆլիկտների կառավարման գործընթացը՝ վերլուծել, կառավարել, այսինքն հաղթահարել կոնֆլիկտը:

«Կառավարչական» կոնֆլիկտի կառավարումը ղեկավարի ունակությունն է (ինքնուրույն կամ երկրորդ կողմի օգնությամբ) տեսնել կոնֆլիկտային իրավիճակը, վերլուծել այն և իրականացնել ուղղորդված և սոցիալ-հոգեբանական գործողություններ այն լուծելու համար [11]: Կոնֆլիկտի կառուցվածքը վերլուծելու նպատակով առանձնացնենք մի քանի կարևոր բաղադրիչներ՝ հակամարտող կողմերը, տարաձայնությունների գոտի, ստեղծված իրավիճակի պատկերացումներ, մոտիվներ, գործողություններ, վերահսկում:

Կոնֆլիկտների հաղթահարումը կազմակերպությունում տեղի է ունենում՝

- կողմերի օբյեկտիվ պահանջները բավարարելու ճանապարհով, կանոնակարգերի, հրահանգների փոփոխությամբ, պատժի միջոցով:
- Կոնֆլիկտի ադմինիստրատիվ դադարեցման միջոցով:
- Կանխարգելիչ միջոցառումների անցկացում, որն ուղղված է կոնֆլիկտների նախազգուշացմանը:
- Բանակցությունների կազմակերպման միջոցով:
- Կոնֆլիկտի հաղթահարման մեկ այլ միջոց է երրորդ կողմի մասնակցությունը:

Կոնֆլիկտի առաջացման ու զարգացման գործընթացում կարևոր դեր ունեն նաև ուրիշ մասնակիցներ.

- նախաձեռնողներ (հրահրողներ):
- Կազմակերպիչներ:
- Մեղսակիցներ:
- Միջնորդներ (մեղիատորներ):

Կոնֆլիկտի դինամիկան նրա փոփոխության գործընթացն է: Կոնֆլիկտը կարող է ներկայանալ երեք փուլերով՝ սկիզբ, զարգացում, ավարտ: Բուն կոնֆլիկտին միանում են երկու փուլեր՝ նախակոնֆլիկտային և հետկոնֆլիկտային: Մենեջմենթի և աշխատակազմի կառավարման շատ մասնագետներ անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում այս հարցին: Արդյունքում կոնֆլիկտների գործընթացների կառավարման արդյունավետությունը նվազում է [3]:

Կոնֆլիկտի վրա ազդելու առավել հիմնախնդրային է մեթոդաբանության հարցը, քանի որ հենց մեթոդաբանությամբ է որոշվում կիրառվող մեթոդների և տեխնոլոգիաների ուղղությունը, ինչը թույլ է տալիս նպատակաուղղված ազդեցություն գործել կոնֆլիկտի գործընթացի վրա:

Կոնֆլիկտների կառավարման նպատակով պրակտիկայում կիրառվող հիմնական կազմակերպական մեթոդների թվին են պատկանում.

1. կոնֆլիկտի գործընթացի կազմակերպման,

2. կոնֆլիկտի գործընթացների մոտիվացման,
3. կոնֆլիկտի գործընթացների պլանավորման,
4. կոնֆլիկտի գործընթացների վերահսկման [3]:

Տարբեր երկրներում կոնֆլիկտի կառավարումն իրականացվում է տարբեր եղանակներով: ԱՄՆ-ում գործող կազմակերպություններում կոնֆլիկտների կառավարման գործընթացն իրականացվում է կոնֆլիկտի քարտեզագրման միջոցով, որն ուղղված է տարաբնույթ մասնագիտական խնդիրների լուծմանը: Քարտեզագրումը վիզուալ տեխնիկա է, որի միջոցով ցույց են տրվում կոնֆլիկտում ներգրավված բոլոր կողմերը, դրանց դերակատարության աստիճանն ու դրանց միջև եղած փոխհարաբերությունների բնույթը [6]:

Մեծ Բրիտանիայում կոնֆլիկտի կառավարման համար հաճախ կիրառվող մեթոդը կոնֆլիկտի «Ծառի» կառուցումն է: Կոնֆլիկտի «Ծառը» իրենից ներկայացնում է սխեմատիկ պատկեր կոնֆլիկտային հիմնահարցերը վերլուծելու համար: Պատկերը նմանվում է ծառի, որն ունի արմատներ, բուն և ճյուղեր: «Ծառը» կիրառվում է այն դեպքերում, երբ կոնֆլիկտի մասնակիցները չունեն ընդհանուր պատկերացում այն մասին, թե ինչից է առաջացել կոնֆլիկտը, կամ այն դեպքում, երբ մասնագետը պետք է հասկանա, թե որ ուղղությամբ կենտրոնացնի միջամտությունը [6]:

Արդի ժամանակներում կոնֆլիկտների կառավարման գործում լայն տարածում են ստացել «Գործարար խաղերի մեթոդները»: Ամեն մի գործարար խաղի տրամաբանությունն ձգտում է վերարտադրել խաղարկվող երևույթին բնորոշ օրինաչափությունները: Խաղի բովանդակությունը կարող է այս կամ այն կերպ տարբերվել իրական գործընթացներից՝ կախված նրանից, թե խաղի կազմակերպիչները հատկապես ի՞նչն են առանձնացնում և խաղի մասնակիցների ո՞ր կարողություններն են ձգտում խթանել ու զարգացնել [9]:

Գործարար խաղի մշակումը, կազմակերպումն ու իրականացումն ենթադրում են որոշակի կանոնների սահմանում: Այդ կանոնների շրջանակում է ծավալվում խաղի տրամաբանությունը, ապահովվում խաղացողների գործողությունների հերթականությունը, մրցակիցների արդյունքների համադրելիությունը, խաղի ամփոփման ամբողջությունը և այլն:

Գործարար խաղը կոլեկտիվ մեթոդ է, որտեղ որոշումները մշակվում և ընդունվում են աշխատակիցների հավասար մասնակցության պայմաններում, ինչպես նաև այլ խմբերի որոշումների տարբերակների քննադատության արդյունքում: Այն բնույթով համադրական է՝ ներառում է ակտիվ մեթոդների մի ամբողջ համալիր՝ բանավեճ, մտազրոհ, տվյալների հետազոտում, իրավիճակի վերլուծություն, գործողություն՝ համաձայն ցուցումների:

Կազմակերպություններում, արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացներում, գործարար խաղն ունի հետևյալ առավելությունները՝

- հնարավորություն է տալիս միավորելու խնդրի ծավալային կողմը և խորությունը,
- բնորոշ է հետադարձ կապի առկայությունը, որով այն դառնում է ավելի իմաստալից և կառավարելի,
- խաղում ձևավորվում է վերաբերմունք մասնագիտական գործունեության հանդեպ,
- անձը դրսևորվում է տարբեր կողմերով՝ մտածական, հոգեկան, ֆիզիկական, կամային և այլն,
- մեթոդը խթանում է անձի անդրադարձ՝ ռեֆլեքսիվ գործառույթները, ստեղծում է մեկնաբանելու, ստացված արդյունքներն իմաստավորելու հնարավորություն,

➤ գործարար խաղերը մեծացնում են իրականության շրջանակը, տեսանելի դարձնում ընդունված որոշումների հետևանքները,

➤ խաղն ընձեռում է նաև ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հնարավորություն:

Այսօր գործարար խաղերը կիրառվում են աշխատակիցների կողմից մասնագիտական գործնական հմտություններ ձևավորելու նպատակով:

Գործարար խաղը դիտարկվում է որպես ապագա մասնագետի պրոֆեսիոնալ գործունեության առարկայական և սոցիալական բովանդակության վերարտադրում, որը մոդելավորում է համակարգերի այն հարաբերությունները, որոնք, որպես ամբողջություն բնորոշ են այդ գործունեությանը:

Դիտարկելով կոնֆլիկտներն արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացներում անհրաժեշտ է նշել, որ այս ոլորտում կոնֆլիկտի դինամիկայի ընդհանուր սխեման կառուցվում է հետևյալ փուլերով.

➤ նախակոնֆլիկտային իրավիճակ,

➤ բաց կոնֆլիկտ,

➤ միջադեպ (կոնֆլիկտի սկիզբ),

➤ կոնֆլիկտի էսկալացիա (զարգացում),

➤ կոնֆլիկտի ավարտ,

➤ հետկոնֆլիկտային շրջան:

Նախակոնֆլիկտային իրավիճակը կոնֆլիկտի հնարավորությունն է, ոչ թե իրողությունը: Այն անհիմն տեղը չի ծագում, և հասունանում է աստիճանաբար, ըստ այն հարուցող հակասությունների զարգացման: Նախակոնֆլիկտային իրավիճակում կոնֆլիկտի պատճառների գիտակցումն ինքնին կարող է և՛ ադեկվատ, և՛ ոչ ադեկվատ լինել: Վերջինիս դեպքում կոնֆլիկտը չի կարող վերջնականապես վերացվել, քանի որ կոնֆլիկտի իրական պատճառները վաղ թե ուշ զգացնել կտան, իսկ հանգուցալուծման ձգձգումը կարող է ավելի սրել այն: Նախակոնֆլիկտային իրավիճակի ադեկվատ և ժամանակին գիտակցումն ու գնահատումն առավել օպտիմալ հանգուցալուծման և հնարավոր կոնֆլիկտի արդյունավետ կանխարգելման կարևոր նախապայման է հանդիսանում: Կոնֆլիկտը նախակոնֆլիկտային իրավիճակում շատ ավելի դյուրին և արդյունավետ է կանխարգելվում, լուծվում քան հետագայում: Եթե նախակոնֆլիկտային փուլում շահերի հակասությունները հարթեցնել չի հաջողվում, վաղ թե ուշ կոնֆլիկտային իրավիճակը փոխվում է բաց կոնֆլիկտի:

Բաց կոնֆլիկտի փուլում ակնհայտ է դառնում նաև, որ կողմերից ոչ մեկը չի կամենում զիջումների գնալ, ընդհակառակը, գերակշռում է հակամարտության, սեփական շահերը պնդելու տրամադրությունը: Բաց կոնֆլիկտի ներսում կարելի է առանձնացնել դրա ներքին փուլերը՝ միջադեպ, էսկալացիա և կոնֆլիկտի ավարտ:

Միջադեպն այն դեպքն է, որը հրահրում է կողմերի բաց հակամարտությունը: Ընդ որում, կոնֆլիկտի միջադեպը պետք է տարբերել առիթից: Առիթը այն որոշակի իրադարձությունն է, որը կոնֆլիկտային գործողությունների սկզբնավորման խթան է դառնում, իսկ միջադեպը մերկացնում է կողմերի դիրքորոշումները և բացահայտ դարձնում բարեկամների և թշնամիների, համախոհների և հակառակորդների սահմանազատումը:

Կոնֆլիկտի զարգացման կարևոր տարրը «հետախուզումն» է՝ ընդդիմախոսների իրական հնարավորությունների և մտադրությունների մասին տեղեկատվության հավաքում, համախոհների որոնում և լրացուցիչ ուժերի ներգրավումը:

Եթե միջադեպից հետո չի հաջողվում գտնել և կանխել կոնֆլիկտի հետագա զարգացումը, ապա անցնում է հաջորդ փուլին, տեղի է ունենում դրա էսկալացիան (ծավալումը), երբ սրվում են դրա մասնակիցների բոլոր հակասությունները և օգտագործվում են բոլոր միջոցները հակամարտությունում հաղթելու համար: Կոնֆլիկտի էսկալացիայի փուլը բնութագրող հիմնական պահերի շարքում առաջին հերթին կարելի է առանձնացնել՝ թշնամու կերպարի ստեղծում, ուժի ցուցադրում և այն կիրառելու սպառնալիք, բռնության գործադրում, կոնֆլիկտն ընդլայնելու և խորացնելու միտում:

Բռնության կիրառումը կոնֆլիկտի էսկալացիայի փուլի ևս մի էական կարևոր բնութագիր է: Դրա կիրառումը վկայում է այն մասին, որ սկսվել է կոնֆլիկտի ծավալման վերջին փուլը:

Բռնությունը՝ որպես էսկալացիայի վերջին փուլ, ոչ միայն տարբեր ձևեր, այլ նաև տարբեր տեսակներ ունի:

Կոնֆլիկտի ընդլայնման և խորացման միտումը կոնֆլիկտի էսկալացիայի ևս մի փուլ է: Կոնֆլիկտը մշտական շրջանակներում և միևնույն վիճակում չէ, որ գոյություն է ունենում:

Կոնֆլիկտի ավարտը կոնֆլիկտի բաց շրջանի վերջին փուլն է: Հաճախ կոնֆլիկտի ավարտումը բնութագրվում է նրանով, որ երկու կողմերն էլ գիտակցում են՝ անիմաստ է այն շարունակել: Իր բնույթով կոնֆլիկտի ավարտը կարող է լինել.

- հակամարտության նպատակների իրականացման տեսանկյունից՝ հաղթական, փոխզիջումային, պարտվողական:
- Կոնֆլիկտի հանգուցալուծման ձևի տեսանկյունից՝ խաղաղ, բռնի:
- Կոնֆլիկտի գործառույթների տեսանկյունից՝ կառուցողական, ապակառուցողական:
- Հանգուցալուծման արդյունավետության և լիակատարության տեսանկյունից՝ լիովին և արմատապես ավարտված, հետաձգված մի որոշ ժամանակով կամ անորոշ ժամանակով, հետկոնֆլիկտային փուլ:

Կոնֆլիկտի վերջին փուլը հետկոնֆլիկտային շրջանն է, երբ վերացվում են լարվածության հիմնական տեսակները, կողմերի հարաբերությունները վերջնականապես կարգավորվում են, սկսում են գերակշռել համագործակցությունը և վստահությունը:

Արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացներում կազմակերպությունում կոնֆլիկտի լուծման ժամանակ լայնորեն կիրառվում է կառուցվածքային եղանակը, որն իր հերթին ունի իրականացման չորս հիմնական ձև: Կոնֆլիկտի լուծման կառուցվածքային ուղու հիմնական ձևերն են՝ աշխատանքի նկատմամբ պահանջների հստակեցում, համակարգող, ամբողջացնող աշխատակարգ, **ընդհանուր նպատակներ, պարզևատրման համակարգ:**

Արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացներում կոնֆլիկտների լուծման հաջորդ հիմնական եղանակը միջանձնայինն է, որն իր հերթին ունի վեց՝ առավել տարածված ոճեր: Դրանք են՝ կոնֆլիկտից խուսափում, **համագործակցում, համահարթեցում, կոնֆլիկտների լուծում ուժի կամ հարկադրանքի միջոցով, փոխզիջում, խնդրի լուծում:**

Անհրաժեշտ է նաև նշել, որ ներկայիս գիտության, տեխնիկայի զարգացումը պարտադրում է որքան հնարավոր է կոնֆլիկտները լուծել առավել կոնստրուկտիվ տարբերակով՝ ընդգրկելով կոնֆլիկտող կողմերին: Ելնելով վերոնշյալից՝ հասարակական կյանք է ներմուծվել հաշտարարի ինստիտուտը, որը, ըստ ներկայիս

ձևաչափի, իրավաբանական մասնագիտություն է, սակայն գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև անձնային և սոցիալ-հոգեբանական գործոններով: Մասնագետից պահանջվում է հոգեբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի ռեսուրսներ:

Ժամանակակից հաշտարարության ինստիտուտի, դրա կառուցվածքային և գործառական տարրերի, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների տեսական-էմպիրիկ հետազոտումը հնարավորություն է ընձեռում հստակեցնելու, շտկելու և կարգավորելու հաշտարարության անցկացման առկա մոտեցումները՝ ելնելով ազգային առանձնահատկություններից:

Արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտի հաշտարարի ընտրության և նրա գործունեության արդյունավետությունը պայմանավորված կլինի ոչ միայն համապատասխան կրթության մակարդակով, այլև տվյալ մասնագիտության պահանջներին և կոմպետենտության ձևավորմանը նպաստող հաշտարարի անձի հոգեբանական առանձնահատկությունների համապատասխանությամբ:

Կոնֆլիկտների լուծման միջանձնային եղանակի կակոր միջոցն է միջանձնային հարաբերությունների կանոնակարգումը: Բացի այն կոնֆլիկտներից, որոնք տեղի են ունենում և լուծում են գտնում իրավական դաշտում, մնացած միջանձնային կոնֆլիկտները պետք է կարգավորվեն կանոնակարգերի միջոցով: Ուստի, կազմակերպություններն իրենց ներքին կանոնակարգում պետք է հստակ ձևակերպեն միջանձնային հարաբերությունների նորմերը և դրանց խախտման պատճառով առաջացած կոնֆլիկտների պատասխանատու կողմերի պատժամիջոցները: Միջանձնային կոնֆլիկտների կարգավորման գործում մեծ դեր կարող է խաղալ կազմակերպության կորպորատիվ կուլտուրան, որը սահմանվում է հետևյալ կերպ. «Կորպորատիվ կուլտուրան տվյալ կորպորացիային բնորոշ նյութական և հոգևոր արժեքների, նրանց դրսևորման և համագործակցության համակարգ է, որն արտացոլում է կազմակերպության անհատականությունը, ներքին և արտաքին սոցիալական և տնտեսական միջավայրը և արտահայտվում է վարքագծի, փոխազդեցության, սեփական և շրջապատող միջավայրի ըմբռնման միջոցով» [2]: Որպես կորպորատիվ կուլտուրայի դրսևորման ձև կազմակերպություններում մշակում են «էթիկայի կանոնադրություն» (կոդեքս), որի նորմերը վերահսկելու նպատակով ստեղծում են նաև «էթիկայի հանձնաժողով», վերջինիս հիմնական նպատակն է անձնային կոնֆլիկտների կանխարգելումը և կարգավորումը:

Արտասահմանյան երկրներում անձնակազմի խթանումը և կառավարումը գտնվում է բավականին բարձր մակարդակի վրա, ինչի հետևանքով էլ, երբ առաջանում են կոնֆլիկտային իրավիճակներ, դրանք շատ կազմակերպված եղանակով հարթվում են [7]:

Օրինակ՝ կառավարման բազմաթիվ ձևերը, որոնք ակտիվորեն օգտագործվում են ճապոնական կազմակերպություններում, սերտորեն կապված են վարքի սոցիալական նորմերի հետ, որոնք ձևավորվել են ճապոնիայի բազմամյա պատմության ընթացքում: Այստեղից էլ հանդես է եկել ճապոնացու բնավորության ևս մեկ հայտնի գիծ՝ խմբին, կազմակերպությանը, պետությանը, ազգին հավատարիմ լինելը, նվիրվածությունը և բարձր կազմակերպվածությունը: Ճապոնական կազմակերպությունների գլխավոր խնդիրը, դա մարդկանց՝ կառավարման տարբեր ստորաբաժանումներում աշխատող անձանց հետ մարդկային և բարիդրացիական փոխհարաբերությունների հաստատումն է [8]:

Անդրադառնալով ԱՄՆ-ի կառավարման մոդելին, նշենք որ 21-րդ դարում ամերիկյան մենեջմենթը բնութագրվում է կառավարման կոշտ կազմակերպմամբ:

Ամերիկյան կազմակերպություններում աշխատանքի կազմակերպումն արտադրամասում հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում»։ Ի տարբերություն Ճապոնիայի՝ ԱՄՆ-ում աշխատողը համարվում է բարձր որակավորմամբ, եթե նա տիրապետում է իր աշխատանքի բոլոր մանրուքներին։

Այսպիսով, ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի երկրների աշխատողների անհատապաշտությունը հակադարձ համեմատական է Ճապոնիայի խմբային աշխատանքին, սակայն հայկական իրականությունում, այսօր արդեն հնարավոր է վերլուծել և դրական օտարերկրյա փորձը ներդնել։ Հարկ ենք համարում ներկայացնել նաև այս ուղղությամբ կատարած հետազոտությունների արդյունքները։ Գնահատման են ենթարկվել կոնֆլիկտային իրավիճակներում կազմակերպությունների, որոշ ուժային կառույցների և ԱԽՆ որոշ ստորաբաժանումների աշխատակիցների վարքի ցուցանիշները, որը վերցրվել է համակարգի տարբեր ստորաբաժանումներում և որորշակի այլ ուժային կառույցներում անցկացված հետազոտական աշխատանքի արդյունքներից։ Այն իրականացվել է Բ.Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» հարցարանի և Ա.Բասսի-Ա.Դարկի ագրեսիվության ախտորոշման թեստերի միջոցով։ Արդյունքները ցույց են տվել, որ ստորաբաժանումների աշխատակիցները կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորում են խուսափում և հարմարվողականություն։

Բացի նշված կանոնակարգերից, արտակարգ իրավիճակներում կոնֆլիկտի արդյունավետ կառավարմանը կարող է նպաստել նաև համապատասխան մասնագետների կողմից համատեղ պատրաստված գործնական ձեռնարկը, որտեղ ներկայացված կլինեն բոլոր հնարավոր կոնֆլիկտների տարբերակները, մոդելները և դրանց լուծման հիմնավորված ուղիները։ Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել տեսական դրույթները, համաշխարհային փորձը, ազգային և կազմակերպության ճյուղային առանձնահատկությունները։ Ձեռնարկը պետք է անընդհատ լրամշակվի նոր նյութերով։

Կազմակերպություններում կոնֆլիկտների արդյունավետ կառավարումը զգալիորեն կախված է նաև անձնակազմի տվյալ ոլորտի կառավարման վերաբերյալ իրազեկության, գրագիտության մակարդակից։ Ուստի կազմակերպությունում պետք է նախատեսել այս հարցերի կազմակերպման պատասխանատու անձի հաստիք, որի աշխատանքային պլանում բացի կոնկրետ գործնական հարցերի լուծումից պետք է նախատեսված լինեն անձնակազմի ուսուցման գործընթացների անցկացում, գիտելիքների գնահատում։

Կարծում ենք, արդյունավետ կլինի նաև անձնակազմի ծառայողական քննությունների (ատեստավորման) հարցաշարերում ներառել հարցեր նշված կանոնակարգերից, որոնք վերաբերում են կոնֆլիկտների կառավարմանը։ Նոր ընդունվող աշխատակիցները նույնպես պետք է ծանոթանան դրանց, հատկապես էթիկայի կանոններին և հաստատեն, որ ընդունում են այդ նորմերը։

Ներկայացված և գրականության մեջ մանրամասն նկարագրված կոնֆլիկտների կառավարման գործընթացի փուլերը և դրանց իրականացման մեթոդները կազմակերպություններում պետք է ձևակերպել կանոնակարգերի ձևով։

Գրականություն

1. **Ապրեսյան Ա.Թ.**, Ճգնաժամային և կոնֆլիկտային իրավիճակներում որոշումների կայացման ինֆորմացիոն-հաղորդակցման խնդիրները» Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Եր., 2018. 61-62 էջ:
2. **Գյուրջյան Ա.**, Նասիլյան Ի., Կորպորատիվ կոլտուրայի կառավարման հիմնախնդիրները ՀՀ կազմակերպություններում: Ուս. Ձեռնարկ: Տիգրան մեծ, Եր., 2009. - 360 էջ:
3. **Սուվարյան Յու.Մ.**, Մենեջմենթ, «Տնտեսագետ», Եր., 2009. - 367 էջ:
4. **Балашов А.П.**, Основы менеджмента: Учебное пособие - М.: Вузовский учебник, ИНФРА-М., 2012. - 144 с.
5. **Баронин С.А.**, Основы менеджмента, планирования и контроллинга в недвижимости: Учебное пособие – М.: НИЦ ИНФРА– М., 2016, СС. 91-92.
6. **Веснин В.Р.**, Основы менеджмента: Учебник /М.: Проспект, 2017, СС. 55-66.
7. **Воропаев С. Н.**, Менеджмент: учебное пособие; Международная ассоциация, Агрообразование. – М.: Колосс, 2017. – С. 37
8. **Всеобщая история** менеджмента: учебное пособие// [И. И. Мазур и др.]. – М.: Елима, 2017.- С. 94.
9. **Вдовин С.М.**, Система менеджмента качества организации: Учебное пособие / С.М. Вдовин, Т.А. Салимова, Л.И. Бирюкова. — М.: ИНФРА-М, 2012. – С. 64
10. **Глухов В. В.**, Менеджмент: для экономических специальностей / В. В. Глухов. – Санкт–Петербург: Питер Пресс, 2017. – С. 11.
11. **Зиновьев В. Н.**, Менеджмент: учебное пособие / В. Н. Зиновьев, И. В. Зиновьева. – Москва: Дашков и КО, 2016. - С. 64.
12. **Лопарев А. В.**, Знаменский Д. Ю., Конфликтология. Учебник. М.: Юрайт. 2017. - С. 94
13. **Уткин Э. А.**, Конфликтология. Теория и практика // Э.А. Уткин. М.: Ассоциация авторов и писателей "ТАНДЕМ", ЭКСМОС, 2016, СС. 202-206.
14. **Чернова Г. Р.**, Сергеева М. В., Беляева А. А., Конфликтология. Учебное пособие для СПО. М.: Юрайт. 2019. – С. 44.

И.В. Насилян, А.А. Григорян

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ КОНФЛИКТАМИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Способность использовать более эффективные стратегии поведения в конфликтных ситуациях является важным показателем любого действия в чрезвычайных ситуациях.

В данной статье рассматриваются особенности управления конфликтами в чрезвычайных ситуациях, обсуждаются современные подходы к их разрешению.

Ключевые слова: чрезвычайная ситуация, конфликт, стратегия эффективного поведения.

I.V. Nasilyan, A.A. Grigroyan

FEATURES OF CONFLICT MANAGEMENT IN EMERGENCY SITUATIONS

The ability to use the most effective behavior strategy in a conflict situation is an important indicator of any activity in emergency situations.

The presented article observes the features of conflict management, discussing modern approaches to their solution in emergency situations.

Keywords: emergency situations, conflict, collision, effective behavior strategy.

**Նասիլյան Ինգա Վալերիի – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)
Գրիգորյան Արսեն Ալբերտի – ՀՀ ՊՆ ԶՈՒ փոխգնդապետ**

Дата представления: 13.10.2023
Дата рецензии: 19.10.2023

Դ.Յու. Սարգսյան, Ի.Հ. Բաբաջանյան, Ս.Հ. Գրիգորյան

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Բնակչության հոգեկան առողջության պահպանումը կարևորագույն նախապայման է կայուն, ապահով և բարեկեցիկ հասարակության զարգացման համար: Չնայած նրան, որ վերջին տասնամյակում բոլոր միջազգային առողջապահական կազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձնում հոգեկան առողջության պահպանմանը, այնուամենայնիվ, ոլորտի զարգացումն այնքան էլ անխոչընդոտ և սահուն չի ընթանում, հարկապես ՀՀ-ում: Հիմնական պատճառներից է հոգեկան առողջության ոլորտում մասնագիտական կենտրոնների և հանրության միջև հաղորդակցման սակավությունը կամ բացակայությունը: Հոդվածի նպատակն է դիտարկել հոգեբանական ծառայություններում հանրային կապերի դերը, որոնք մեծ դերակատարում ունեն հոգեկան առողջության պահպանման մասին սոցիալական դիրքորոշումների և կարծիքների ձևավորման հարցում: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ հոգեբանական ծառայությունների որակական և գիտահեն լինելը հոգեբանական կենտրոնների ռազմավարության հիմնախնդիրներ են, որոնց համար պարասխանավություն են կրում բացառապես անհապ հոգեբանները՝ ելնելով իրենց բարեվարքության սկզբունքներից:

Առանցքային բառեր. հոգեկան առողջություն, գիտահենություն, իրազեկվածություն, հոգեբանական աջակցություն և ծառայություն:

Հոգեկան առողջության թեման կիզակետային խնդիրներից է դարձել, այն մեր առողջության, հարաբերությունների, վարքի և սոցիալական կյանքի անբաժանելի ու կարևոր մասն է կազմում: Այլ կերպ ասած, հոգեկան առողջության վերաբերյալ նախնական գիտելիքների փոխանցումը հանդես է գալիս որպես հիմնական խնդիր, ընդ որում, ոչ միայն նեղ մասնագիտական հանրության, այլև առողջապահության մյուս ոլորտների ծառայողների համար [1]: Հոգեկան առողջության խթանումը պետք է ներգրավվի տարբեր ոլորտների ուսումնասիրության շրջանակներ, ինչպիսիք են՝ առողջապահությունը, քաղաքականությունը, կրթությունը, արդարադատությունը, տրանսպորտը, շրջակա միջավայրը, բնակարանային ապահովությունը, սոցիալական ապահովությունը և այլն [4]:

Ժամանակակից քաղաքական, հասարակական, գովազդային և այլ կազմակերպություններում հաջողությունն ավելի ու ավելի է կախված հասարակության վրա հմուտ տեղեկատվական և հոգեբանական ազդեցությունից: Լրատվամիջոցներն այսօր հոգեկանի վրա ազդող հզոր գործոն են հանդիսանում և կիրառվում են մի շարք տարբեր ոլորտներում, որոնցից յուրաքանչյուրում կատարում են իրենց հատուկ գործառույթը (տեղեկատվական, սոցիալական հաղորդակցության, հանգստի և այլն) [5]:

Ի հեճուկս հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց մի շարք իրավունքների, այսօր Հայաստանի Հանրապետությունում չկա վստահություն դեպի հոգեկան առողջության կենտրոններ: Այդ մասին փաստում են մեր կողմից իրականացված հետազոտությունները: Ընդհանուր կարծիքների մեջ գերակշռում են այն մտքերը, որ հոգեկան առողջության կենտրոններն իրականում քրեակատարողական պատժից խուսափելու այլընտրանք են, տեղեր են, որտեղ անարգում են հիվանդներին, իրականացնում են ապօրինի որդեգրումներ, առողջ մարդուն հասցնում են հոգեկան անհավասարակշիռ վիճակի: Հենց սա է պատճառը,

որ ՀՀ-ում հասարակության մեջ մարդիկ հաճախ նախընտրում են իրենց ընտանիքի անդամներին պահել տանը, խուսափում են հոգեկան առողջության կենտրոններ այցելել: Այս կարծրատիպային երևույթների հիմքում ընկած է սխալ տեղեկատվության տարածումը կամ առհասարակ դրա բացակայությունը: Տեղեկատվության թիրախավորմանը և տարածմանը պետք է ձեռնամուխ լինեն առողջապահության նախարարությունը, հոգեկան առողջության կենտրոնները հանրային կապերի բաժինների միջոցով: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ այդ կառույցները բացակայում են կամ էլ լիարժեք չեն աշխատում, որի արդյունքում, հասարակության միջից դեռևս արմատախիլ չեն արված որոշակի կարծրատիպային մտքեր և գաղափարներ, չկա վստահություն դեպի հոգեկան առողջության պահպանության ոլորտ [3]:

Հետազոտության **նպատակն** է՝ հոգեկան առողջության պահպանման, հոգեբանական աջակցության և վերականգնողական կենտրոնների գործառույթների ուսումնասիրությամբ պարզել ոլորտում առկա հաղորդակցային խնդիրները և դուրս բերել դրանցում հոգեբանական խոչընդոտներն ու հանրային պատկերացումների թուլմբռնումները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Դիտարկել հոգեկան առողջության պահպանման ոլորտների գործունեության խնդիրները հոգեբանության գիտության տեսանկյունից՝ առանձնացնելով հոգեբանական աջակցության և վերականգնողական ռազմավարության դերը:
2. Բացահայտել հասարակության իրազեկվածության մակարդակը հոգեկան առողջության ոլորտի մասին՝ ներկայացնելով հանրային կարծիքի վրա ազդող, կարծրատիպեր թելադրող հոգեբանական գործոնները և դրանց առաջացման պատճառները:
3. Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում առկա հոգեկան առողջության, հոգեբանական աջակցության և վերականգնողական կենտրոնների գործունեության առանձնահատկությունները և հասարակության հետ հաղորդակցային մոդելները:
4. Ընդգծել հոգեկան առողջության կենտրոններում աշխատող հանրային կապերի մասնագետների գործունեության առանձնահատկությունները, նրանցից ակնկալվող վերջնարդյունքները:

Հետազոտությունն իրականացվել է համեմատության, վերլուծության մեթոդներով, կատարվել է կոնտենտ վերլուծություն, հանրային և փորձագիտական հարցումներ:

Մեր կողմից իրականացրած հանրային հարցումների հետազոտության փուլում պարզ դարձավ, որ ՀՀ քաղաքացիներին ամենից հայտնի հոգեկան առողջության կենտրոնը «Ավան» փակ բաժնետիրական ընկերությունն է: «Ավան» հոգեկան առողջության կենտրոնն հիմնականում այցելում են ծնողների, բարեկամների դրդմամբ կամ էլ հարկադիր բուժման ցուցման առկայության դեպքում: Թեև կենտրոնում բուժումն անվճար է, ոչ ոք այստեղ ինքնակամ չի գալիս [2]: Փորձել ենք հասկանալ հոգեկան առողջության կենտրոնի մասին բացասական կարծիքների ձևավորման արտաքին պատճառները և առանձնացրել դրանցից երեքը՝ ԶԼՄ-ների հետ հետադարձ կապի պահպանության բացակայություն, հասարակության հետ հաղորդակցության ուղղահայաց մոդելի կիրառում, տեղեկատվությա տրամադրման սակավություն և սուղ միջոցներ:

Հետազոտության շրջանակներում հրապարակումները պայմանականորեն բաժանել ենք երեք խմբի՝

1. հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորող,
2. հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող,
3. չեզոք բնույթի նյութեր:

Աղյուսակ 1.

ՉԼՄ-երի անդրադարձի ընդհանուր քանակական պատկերը

Կայք	Բացասական վերաբերմունք ձևավորող	Դրական վերաբերմունք ձևավորող	Չեզոք փրպի
Hetq.am	1	0	3
Aravot.am	10	0	20
Azattyun.am	1	0	8
Hayk.Jamanak	2	0	3
168 Time	3	0	11
News.am	4	0	1
Tert.am	1	0	0
Hraparak.am	4	0	2
Armenpress.am	6	0	3
Pastinfo	2	0	1
24news.am	1	0	0
Panarama.am	1	0	1
A1+am	2	0	2
Factor.am	1	0	1
Llur.com	3	0	0

ՉԼՄ-ները հրապարակումներ պատրաստելիս մեծ ուշադրություն են դարձնում վերնագրային քաղաքականությանը: Հաճախ նյութի բովանդակությունը կարող է չհամապատասխանել վերնագրին, սակայն սա չի թուլացնում վերջինիս ազդեցությունը, քանի որ ընթերցողները կարող են վերնագրից այն կողմ չանցնել:

Իրականացված կոնտենտ անալիզը հնարավորություն է տալիս որոշել հոգեբանական ծառայություններից օգտվելու աճի տենդենցը: Վերլուծության համար ընտրվել են հետևյալ չափորոշիչները՝ ծառայությունների ցանկ, հասանելի մեթոդներ և դրանց գիտական ախտորոշման ծառայությունների առկայություն, մասնագետների մասին տեղեկատվություն, էթիկական սկզբունքներ:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2021-2022 թվականներին, քանի որ ավելի վաղ այն կանխվել է համաճարակի ժամանակ մեկուսացման պայմաններով, որոնք այս կամ այն կերպ ազդել են հաճախորդի հետ աշխատանքի որոշ ձևերի վերանայման վրա: Մինևույն ժամանակ, այս շրջանը նպաստեց հեռահաղորդակցության միջոցների լայն կիրառմանը և մասնագիտական մակարդակով փոխգործակցությանը: Այս հատկությունը բացահայտվել է հոգեբանական կենտրոնների պաշտոնական էջերում (ընդհանուր առմամբ տարբեր երկրների համար N=124) տարբեր լրացումներով, որոնք արվել են Covid-19-ի հետ կապված իրավիճակի ընթացքում և դրանից հետո: Համեմատության համար ահա համացանցային որոնման նախնական հատվածներից մեկը, այն է՝ «հոգեբանություն, ծառայություններ, կենտրոն» արտահայտությունները երեք լեզվով: Անգլերեն - մոտ 314,000,000 արդյունք (0,47 վայրկյան); հայերեն - մոտ


324000 արդյունք (0,48 վայրկյան); Ռուսերեն - մոտ 1,600,000 արդյունք (0,46 վայրկյան): Ընտրված բովանդակության միավորների համեմատությունը հուսալի է նույն որոնման ժամանակի (0,47±1) և մուտքագրված բառերի թարգմանությանը համապատասխանելու առումով: Հետազոտության ամենակարևոր նկատառումներից մեկն այն է, որ ամերիկացի հոգեբաններն ունեն պրակտիկայի պարտադիր լիցենզիա, որը համապատասխանում է Ազգային հոգեբանական կազմակերպության (APA) էթիկական սկզբունքներին [6]:

Այնուհետև իրականացվել է փորձագիտական հարցում ուղղված սոցցանցերում հոգեբանների և հոգեբանական կենտրոնների գործունեության արդյունավետությանը: Հարցմանը մասնակցել է 24 մասնակից՝ 2023 հունվար-ապրիլ ամիսների ընթացքում սոցիալական հարթակներում (մասնավորապես Instagram սոցիալական հարթակում) ակտիվ գործունեություն ծավալած 3 հոգեբանական կենտրոն և 21 առանձին) անկախ գործունեություն ծավալող մասնագետներ:

Նախապես կազմվել է 9 հարց, որոնց տրվել են բաց պատասխաններ: Հարցվողների մեծամասնությունը, որպես մասնագիտական հարթակ հիմնականում օգտագործում է Instagram, Facebook, Telegram, LinkedIn հավելվածները: Հիմնական կենտրոնացվածությունը Instagram, այնուհետև և Facebook հարթակներում է: Մեկ կոնկրետ հարթակի ընտրությունն (ըստ պատասխանների) այն է, որ յուրաքանչյուր սոցիալական կայքում տարբեր լսարաններ են, անհրաժեշտ է տեխնիկական տարբեր մոտեցումներ և ժամանակի սղության պատճառով կենտրոնանում են մեկ հարթակի վրա: Հասկանալու համար հանրային կարծիքի ձևավորման մի շարք առանձնահատկություններ, փորձ է արվել պարզաբանել նաև, թե հանրայնացումն ինչպիսի՞ ազդեցություն ունի հանրության մեջ հոգեբանի, հոգեբանական կենտրոնների, հոգեբանական աջակցության վերաբերյալ դիրքորոշումների ձևավորման գործընթացում:

Ըստ պատասխանների ամփոփ նկարագրի սոցիալական հարթակները հսկայական դաշտ են, որոնք հնարավորություն են տալիս հոգեբան մասնագետներին ստեղծել, ձևավորել, զարգացնել իրենց՝ որպես մասնագետ, անձնային բրենդը, տալիս են նաև ծառայությունների առաջխաղացման մեծ հնարավորություն: Հանրայնացումն ունի դրական ազդեցություն և մի քանի կարևոր նպատակներ. այն կատարում է հոգեկրթող գործառույթ, հնարավորություն է տալիս ստեղծել ճիշտ կարծիք, հստակ տարանջատել հոգեբան և հոգեբույժ մասնագետներին: Այս ամենին զուգահեռ բացասական կողմը նույնպես աճել է, բավականին շատ անորակ տեղեկատվություն է տարածվում համացանցում և չկա դաշտի վերահսկելիություն: Եթե ժամանակին սոցիալական իրազեկվածության բաց ունեինք, այժմ հանրայնացումը հնարավորություն է տալիս լրացնել այդ բացը: Շատ մասնագետներ չունենալով բավականաչափ գիտելիքներ, պատրաստավածություն, ներկայանում են որպես հոգեբան և այս կերպ կորչում, լղոզվում է պրոֆեսիոնալ հոգեբանի կերպարը, ինչն էլ տարածվում է ողջ ոլորտի վրա: Ինչպես նշում է մասնագետներից մեկը՝ «Մենք պատասխանատու ենք ամբողջ ոլորտի համար»: Մասնագետները նշում են, որ առաջնային հենց այս խնդիրների դեմ պայքարելու համար են ստեղծվել էջերը, որպեսզի կարողանան ներկայացնել գիտահեն և օգտակար տեղեկատվություն: Տեղեկատվական գործառույթն առավել հստակ պատկերացնելու համար պարզել ենք նաև՝

էջերն ունեն արդյոք PR, SMM մասնագետներ, և ո՞վ է զբաղվում վերջիններիս սոցիալական կայքերով:



Նկ. 1. SMM մասնագետների հետ համագործակցում

Մասնագիտական սոցիալական էջով զբաղվելը բավականին ժամանակ է պահանջում, միշտ չէ որ ասելիք ունես կամ հակառակը, ու դա պետք է կարողանալ հստակ դասավորել, ձևակերպել: Նման պահերին հասկանում ես, որ կա կոնկրետ ուղղվածության մասնագետի կարիք: Խնդիրը կայանում է նրանում, որ կան SMM տեխնիկական գիտելիքներով մասնագետներ, ովքեր չունեն հոգեբանական գիտելիքներ և արդյունքում ինֆորմատիվության, կոմպետենտության տեսանկյունից աշխատանքը թերի է արվում, այդ պատճառով էլ մասնագետներին նպատակահարմար է, որ իրենք անձամբ զբաղվեն մասնագիտական էջերի առաջխաղացմամբ: Այստեղ էլ մեկ այլ խնդիր է ծագում՝ էջերի վարումը ժամանակատար է, անհրաժեշտ է ստեղծել ֆոտո, վիդեոկոնտենտ, պահպանել էջի ակտիվությունը, ինչը, ժամանակի սղության պատճառով, ոչ միշտ է հաջողվում: Անդրադառնալով գովազդային ծառայություններից օգտվելուն մասնագետները նշում են, որ հիմնականում չեն օգտվում, որոշ մասնագետներ նախկինում օգտվել են կոնկրետ սոցիալական կայքի ներքին գովազդներից, որոնք օգնել են որոշակիորեն լայնացել հետևորդների շրջանակը: Սկսնակ մասնագետները դեռևս խուսափում են գովազդային ծառայություններից օգտվել:

Հետաքրքրական էր պարզել նաև հոգեբանական կենտրոնների կամ անհատ հոգեբանների համագործակցությունը հեռուստատեսության հետ: Հետազոտությանը մասնակիցներից շատերը տարբեր հեռուստահաղորդումների, փոդքասթների կողմից ստանում են հրավերներ և ինչպես իրենք են նշում՝ սա շատ մեծ, դրական ազդեցություն է ունենում: Հեռուստահաղորդումները հնարավորություն են տալիս նաև այս ոլորտով բարձրաձայնել, հանրայնացնել հոգեբանության, հոգեբան մասնագետների մասին: Հարցին՝ համագործակցում են այլ հոգեբանական կենտրոնների հետ, մասնագետների հիմնական մասն ասում է (20 մասնակից), որ միմյանց հետ համագործակցում են. դա դրսևորվում է ընդհանուր դասընթացների, սեմինարների կազմակերպմամբ, այցելուների ուղղորդմամբ: Համագործակցում են հոգեբանական կենտրոնների հետ, մի քանի մասնագետներ էլ նշում են, որ ապագայի համար ևս պլաններ են նախատեսվում՝ համատեղ դասընթացների կազմակերպում, վերապատրաստումների հնարավորություն: 3-ը նշել են, որ չեն համագործակցում:

Հաշվի առնելով վերապատրաստումների անհրաժեշտությունը մասնագիտական աճի տեսանկյունից, հետաքրքրվեցինք՝ մասնագետները մասնակցում են

գիտաժողովների, իրականացնում են աշխատանքներ նաև գիտակրթական: Մասնագետների ճնշող մեծամասնությունը (21 հոգի) նշում է գիտակրթական ոլորտի կարևորությունը: Որոշները դասավանդում են տարբեր համալսարաններում, ունեն ձեռնարկներ: Գրեթե բոլորն ունեն երկու և ավելի տպագիր հոդվածներ, այժմ էլ աշխատում են իրենց հոդվածների շուրջ: Հարցվողները համագործակցում են պետական համակարգի հետ լայնամասշտաբ ծրագրեր իրականացնելու համար ուղղված հասարակության հոգեկան առողջության կրթվածությանը: Համագորցակցումը հիմնականում ՄԱԿ-ի, ԵՄ-ի կողմից ներկայացվող ծրագրերի շրջանակներում է եղել: Կարճաժամկետ համագործակցություններ եղել են ՀՄԿ-ի հետ: Լայնամասշտաբ ծրագրեր իրականացվել են 2020 թ-ի պատերազմից հետո, որի ընթացքում աշխատել են պատերազմում տուժած անձանց, նրանց ընտանիքների, պատերազմի պատճառով տեղահանվածների հետ: Մասնագետները նշում են, որ պետական կառույցները քիչ են աշխատում այս ուղղությամբ, աշխատանքներ չեն տարվում, և սա մեծ խնդիր է ոլորտի զարգացման համար: Վերջում հարկ համարեցինք պարզել՝ անհրաժեշտ PR գործիքակազմի դեպքում հասարակության մոտ կբարձրանա հոգեբան մասնագետների հանդեպ վստահության մակարդակը: Հոգեբանական դաշտում անհրաժեշտ է յուրահատուկ գործիքակազմ, քանի որ դաշտը բավականին նուրբ է և գործ ունենք մարդու հոգեկան համակարգի հետ: Պետք է շատ զգույշ մոտենալ, որպեսզի և՛ կոմպետենտ լինեն, և՛ չվնասեն հասարակությանը,- նշում են մասնագետները: Նշվում է նաև, որ միանշանակ կա անհրաժեշտություն և այն կունենա դրական ազդեցություն, այժմ էլ արդեն այցելուները շատ իրազեկված են դիմում հոգեբանի, հետևում են հոգեբանների սոցիալական կայքերին, ծանոթանում են հոգեբանության հետ, անհրաժեշտության դեպքում փորձում են նաև հավելյալ տեղեկություն ստանալ և ըստ մասնագետների՝ այս միտումն ավելի շատ նկատվում է երիտասարդների շրջանում: Նոր սերնդի մոտ կարծես հոգեբանների հանդեպ վստահությունն ավելի շատ է, կարծրատիպերը՝ քիչ, և այստեղ ոչ միայն հայկական սոցիալական հարթակների կոնտենտի ազդեցությունն է, այլ նաև՝ օտարազգի մասնագետների, ինչն էլ օգնում է, որպեսզի կարողանան ավելի համընդհանուր պատկերացում կազմել: Հստակ վերահսկելիության դեպքում մարդիկ կստանան ադեկվատ, գիտահեն և հավաստի տեղեկատվություն, պատկերացում կկազմեն, թե ո՞վ է հոգեբանը, որո՞նք են նրա գործունեության սահմանները, որոնք՝ ոչ (հոգեբանը դեղեր չի նշանակում, հոգեբանը չի գոռում, չի մեղադրում, խորհուրդ չի տալիս և այլն): Մեկ մասնագետի սխալի դեպքում հիասթափությունն ուղղվում է ոչ թե կոնկրետ մասնագետին, այլ տարածվում բոլորի վրա, ինչն ունենում է իր բացասական ազդեցությունն ու պիտակավորվում ամբողջ դաշտը: Նկատելի է նաև, որ շատ մասնագետներ իրենց դրական և բացասական փորձով են կիսվում, ինֆյուլենսերներն են անդրադարձ կատարում, կիսվում իրենց փորձով, նշում են մասնագետների, խրախուսում են թերապիան, անձնային աճը և նմանատիպ մի շարք գործողություններ, որոնք կօգնեն հոգեկան առողջության պահպանմանը:

Ամփոփելով արդյունքները կարող ենք ասել, որ այսօր համացանցը և հեռուստատեսությունը մեծապես ազդում են մարդկության կյանքի, զարգացման գործընթացների վրա և դրանց ազդեցության մասնաբաժինը շատ մեծ է: Մեղիա հաղորդակցության գերակայության պայմաններում անխուսափելի են դառնում դրանց չտիրապետելը և ընդգծվում է հոգեբանի կողմից նոր գիտելիքների և հմտությունների

յուրացման կարևորությունը, որը թույլ կտա արդյունավետ կերպով ներկայացնել մասնագիտությունը, կատարել տեղեկատվական աշխատանք, բարձրաձայնել հոգեբանական աջակցության, հոգեբանական խնդիրների և մի շարք այլ գործոնների մասին տեղեկացվածությունը: Ուսումնասիրելով սոցիալական հարթակները և մի շարք մասնագիտական էջեր՝ կարող ենք նշել, որ վերջին մի քանի տարիների ընթացքում բավականին շատ ակտիվացել է հոգեբան մասնագետների գործունեությունն այս հարթակներում: Սակայն միայն հոգեբանական գիտելիքները բավարար չեն հանրային գործունեության ծավալելու համար: Ինչպես նշում են Parenting School Armenia ծնողավարության առաջին դպրոցը և Libra Psychological Support հոգեբանական աջակցության կենտրոնները, հոգեբաններն օգտագործում են սոցիալական մեդիան՝ տալու լայն հանրությանը և մասնագիտական համայնքին վստահելի, ճշգրիտ, գիտահեն տեղեկություններ հոգեկան առողջության մասին, դարձնելու հոգեբանությունը հասկանալի և հասանելի, հոգեկրթելու, իրականացնելու լուսավորչական աշխատանք և կառուցելու գրագետ հետևորդների համայնք՝ բաց, հասանելի և հավաստի տեղեկատվության հիման վրա: Հոգեբանները սոցիալական մեդիայի օգնությամբ նաև կրթում են երիտասարդ մասնագետներին, օգնում են մարդկանց պրակտիկ հուշումներով, նպաստում են հոգեկան առողջության կարևորության բարձրացմանը: Սոցիալական մեդիայի օգնությամբ հոգեբանները կառուցում և զարգացնում են իրենց մասնագիտական գործունեությունը, դառնում ավելի տեսանելի, ընդլայնում են իրենց ծառայությունները, ներգրավում ավելի մեծ թվով այցելուների: Բնականաբար, լրիվ նոր և մշտապես փոփոխվող հաղորդակցման ժամանակակից միջավայրում ակտիվ գործունեությունը պետք է հիմնված լինի մասնագիտական, էթիկական նորմերի վրա կամ առնվազն չհակասի դրանց (օրինակ՝ գաղտնիությունը, ինքնաներկայացումը, գիտահեն տեղեկատվության տրամադրումը, կրկնակի փոխհարաբերություններից խուսափելը, սահմանները պահելը և այլն):

Հանրայնացումը միանշանակ ունի և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն: Սոցիալական հարթակները հնարավորություն են տալիս հանրությանը տալ գիտահեն, ճշգրիտ, հասկանալի և հասանելի տեղեկություն հոգեբանության, հոգեկան առողջության, հոգեբանի մասին և այս ամենը նաև նպաստում է հոգեկան առողջության կարևորության բարձրացմանը: Սակայն մասնագետները նշում են նաև բացասական ազդեցության մասին. չկա վերահսկող համակարգ, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուրին ներկայանալ որպես հոգեբան և աշխատանք ծավալել, և սա էլ իր հերթին առաջ է քաշում բազում այլ խնդիրներ: Հետազոտության արդյունքները վերլուծելով, գալիս ենք նաև այն եզրահանգման, որ ունենք գրագետ և ճիշտ առաջխաղացման համար անհրաժեշտ մասնագետների պակաս: Մասնագետներն իրենք են հիմնականում զբաղվում SMM-ով, ինչը ժամանակատար է, սակայն չեն բացառում համապատասխան մասնագետների առկայության դեպքում օգտվել նրա ծառայություններից: Միայն SMM գիտելիքները դեռևս բավարար չեն գրագետ առաջխաղացման, հանրայնացման համար: Մասնագետները կարևորում են նաև հոգեբանական կրթության առկայությունը:

Ոլորտի արդյունավետ զարգացման համար կարևորվում է վերահսկող մարմնի առկայությունը և հանրային կապերի գործիքակազմի մշակումը, որոնք հնարավորություն կտան վերլուծել, հետազոտել մասնագիտական հարթակները, մշակել անհրաժեշտ և թիրախային ծրագրեր, ապահովել արդյունավետ

հաղորդակցում, ուսումնասիրել, գնահատել մասնագետների աշխատանքները և անհրաժեշտ վերամշակումներ իրականացնել:

Գրականություն

1. Ավետիսյան Բ., Գասպարյան Խ., Սկոկաուսկաս Ն., Չաուլազյան Ա, ԱՀԿ «Հոգեկան առողջության բացակներ» ուղեցույցի սկզբունքների կիրառումը Երևանի պետական բժշկական համալսարանի կրթական ծրագրերում, Արդի հոգեբանության գիտական հանդես, ԵՊՀ, Եր., No 16, 2020, էջ 23-30:
2. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ», <https://www.ombuds.am/images/files/7fc26e97e3c21aaaac56743c7b4aef7.pdf>: Դիտում՝ 16.07.2023.
3. Блэк С., Что это такое? Москва, Новости, 1990, 239 с.
4. Собиров А. А., Психическое здоровье, Бухарский государственный университет-Mental health Abdulaziz Abdurozикович Sobirov Bukhara State University -"Science and Education" Scientific Journal / ISSN 2181-0842 May 2022 / Volume 3 Issue 5.
5. Радченко Л.Е., Влияние информации на нравственное, психическое здоровье и воспитание подрастающего поколения // Материалы Афанасьевских чтений. 2016. №1 (14). URL: <https://cyberleninka.ru/article/n/vliyanie-informatsii-na-nravstvennoe-psiicheskoe-zdorovie-i-vozpitanie-podrastayuschego-pokoleniya>. Դիտում՝ 16.07.2023.
6. Babajanyan I., Comparative Analysis of Scientific and Applied Approaches in the Sphere of Psychological Services. Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, 14 1 (40), 2023. - 64–71 с. <https://doi.org/10.46991/BYSU:E/2023.14.1.064>. Դիտում՝ 16.07.2023.

Д.Ю. Саргсян, И.О. Бабаджанян, С.О. Григорян

РОЛЬ СВЯЗЕЙ С ОБЩЕСТВЕННОСТЬЮ В ПСИХОЛОГИЧЕСКИХ СЛУЖБАХ В КОНТЕКСТЕ ПРОБЛЕМ ПСИХИЧЕСКОГО ЗДОРОВЬЯ

Сохранение психического здоровья населения является важнейшей предпосылкой развития стабильного, безопасного и процветающего общества. Несмотря на то, что в последнее десятилетие все международные организации здравоохранения уделяют большое внимание охране психического здоровья населения, решение этих проблем сохраняет актуальность, и, в частности, в Республике Армения. Одной из основных причин является дефицит или отсутствие связи между профессиональными центрами в области психического здоровья и общественностью. Цель статьи - рассмотреть роль связей с общественностью в психологических службах, которые играют большую роль в формировании социальных установок и мнений о психологической помощи. Результаты исследования показали, что качество и знание содержания психологических услуг являются вопросами стратегии психологических центров, за которые несут ответственность отдельные психологи, исходя из принципов своей добродетельности.

Ключевые слова: психическое здоровье, научность, информированность, психологическая поддержка и служба.

D.Y. Sargsyan, I.H. Babajanyan, S.H. Grigoryan

THE ROLE OF PUBLIC RELATIONS ON PSYCHOLOGICAL SERVICES IN THE CONTEXT OF MENTAL HEALTH CARE

Preserving the mental health of the population is an essential prerequisite for the development of a stable, safe and prosperous society. Despite the fact that in the last decade all international health organizations have paid great attention to mental health, the development of this area is not so smooth, especially in RA. One of the main reasons is the lack of communication between mental health professional centers and the public. The purpose of the article is to consider the role of public relations in psychological services, which play a large role in shaping social attitudes and opinions about mental health care. The results of the study showed that the quality and knowledge-based of psychological services are issues of strategy of psychological centers, and individual psychologists are sole ones, who bear the responsibility, based on the principles of their virtue.

Keywords: mental health, science, awareness, psychological support, psychological services.

Սարգսյան Դիանա Յուրիկի - հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ (ԵՊՀ, ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)
Բաբաջանյան Իրինա Հովհաննեսի - ասպիրանտ (ԵՊՀ)
Գրիգորյան Սոնա Հովիկի - մագիստրանտ (ԵՊՀ)

Ներկայացման ամսաթիվը՝ 25.09.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 05.10.2023

Տ.Ի. Հայրապետյան

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացված են «Պետական և մունիցիպալ կառավարում» ուսումնական առարկայի դասավանդման ժամանակակից մանկավարժական տեսանկյունները, ուսուցման գործընթացի կազմակերպման հիմունքները և ուսուցման մեթոդական գործիքակազմը:

Առանցքային բառեր. պետական և մունիցիպալ կառավարում, պետություն, տեղական ինքնակառավարում, ուսուցման գործընթաց, ուսուցման մեթոդական գործիքակազմ:

Ցանկացած ժողովրդավարական պետության հիմնարար խնդիրն իր քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է [2]:

Անշուշտ գոյություն ունեն խնդիրներ, որոնք կարող են լուծվել բացառապես համապետական մակարդակով՝ կենտրոնացված միջոցների և պաշարների ընդգրկմամբ: Այսպես՝ երկրի անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովումը, միասնական դատաիրավական համակարգի ստեղծումը, քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական ճանաչումն ու երաշխավորումը, միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը կրթության, մշակույթի, գիտության, առողջապահության, սոցիալական ապահովության, իրավակարգի, արտաքին հարաբերությունների և այլ բնագավառներում:

Սակայն թվարկված խնդիրներից շատերի իրագործումը, բնակչության որոշակի կենսամակարդակի ապահովումը պետությունում իրականացվում են ոչ թե ընդհանրապես, այլ՝ տեղերում, քաղաքացիների բնակության վայրերում՝ համայնքներում: Հենց այստեղ է, որ ամենից առաջ պետք է պայմաններ ստեղծվեն պետության կողմից ճանաչված և երաշխավորված իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Այս իմաստով, մունիցիպալ իրավունքի ճյուղի համապարփակ ուսումնասիրությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի սովորողի համար նախ, որպես այս կամ այն համայնքի բնակիչ, երկրորդ, որպես ապագա պրակտիկ իրավաբան և երրորդ, այլ իրավաբանական դասընթացներից ստացած գիտելիքները լրացնելու և ամբողջացնելու տեսակետից:

Պետական կառավարումն իբրև նպատակամղված գործունեություն հանդես է գալիս որպես հասարակական կյանքի վերնաշենք և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միննույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն տեղեկատվական բնույթ [1]:

Կառավարման ընթացքում, սուբյեկտիվ գործոնը վերադրվում է օբյեկտիվ գործոններին, կառավարման ներքին տրամաբանությունը՝ կառավարվող օբյեկտի փոփոխության և գործունեության տրամաբանությանը: Այս դիալեկտիկայի էությունը կայանում է սուբյեկտի օբյեկտիվացման և օբյեկտի սուբյեկտիվացման մեջ:

Կառավարման օրենքներն, ի տարբերություն իրավական օրենքների, որոնցով բնորոշվում են հասարակական իրավահարաբերությունները, նկարագրում են ամբողջական պետական մեքենայի և դրա կառավարման մարմինների, կառավարող համակարգի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև առկա այն ընդհանուր փոխհարաբերությունները, որոնք ունենալով անհրաժեշտ, կրկնվող և էական բնույթ, տրվում են գիտատեսական մեկնության:

Պետական կառավարման օբյեկտիվ օրենքների համապատասխանելիությունն իրական կյանքին չափորոշվում են կառավարչական հարաբերություններում սուբյեկտի բազմազան գործողություններով դրսևորված այն էականորեն նշանակալի արդյունքներով, որոնք օժտված են պարբերական կրկնողությամբ:

Անդրադառնալով մունիցիպալ կառավարմանը հարկ ենք համարում նշել, որ մունիցիպալ կամ տարածքային կառավարումն իրականացվում է մարզերում՝ մարզպետների և միջոցով:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր սովորողները: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ դասախոսը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրավիճակ և ապահովի անհրաժեշտ պայմաններ:

Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական դրդապատճառներ, որոնք սովորողներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառների ի հայտ գալու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

Անմիջական կապը շրջապատող իրականության, սովորողի կյանքի ու կենսափորձի, հետաքրքրությունների ու երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը և բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի ինքնահաստատման և ինքնաարտահայտման համար:

Միաժամանակ, դասախոսի կողմից հմտորեն կիրառելու դեպքում, դրանք կարող են նպաստել ուսումնական դասընթացի վրա և բարենպաստ վերաբերմունք ձևավորել թեմայի ուսումնասիրության նկատմամբ:

Արդյունավետ ուսուցման կարևոր պայման է նաև սովորողների կողմից սեփական ուսումնական աշխատանքների ինքնագնահատումը:

Նախքան թեմայի ուսուցմանն անցնելը, անհրաժեշտ է պարզել թե ինչպիսի՞ն է նրանց պատրաստվածության մակարդակը: Իսկ դա պահանջում է դիագնոստիկ աշխատանք և թեմայի վերաբերյալ նրանց յուրացրած գիտելիքների գնահատում:

Այդ գործընթացը դրդում է սովորողներին մտածել նյութի շուրջ, վերանայել, ամրապնդել և վերաարժևորել ունեցած գիտելիքներն ու դրսևորել համապատասխան կարողություններ: Բացի դրանից, ժամանակակից դասավանդման արդյունավետության բարձրացումը ենթադրում է տարբեր մոտեցումների կիրառում:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի արդյունավետ ուսուցման նպատակով հարկավոր է գործածել բազմազան մեթոդներ: Ժամանակակից

մանկավարժության մոտեցումների համաձայն՝ մեթոդի ընտրության վրա ազդող գործոնները բազմաթիվ են: Դա կախված է, մասնավորապես, սովորողների տարիքային առանձնահատկություններից, ուսուցման նպատակներից, նյութի բովանդակությունից, առկա ռեսուրսներից և այլն:

«Սույն հոդվածում ներառված են մի շարք թեմաներ, որոնց արդյունավետ ուսուցումն արդի պայմաններում էապես կարևորվում է:

Մասնավորապես դիտարկվում են հետևյալ թեմաները.

1. Պետության և պետական կառավարման հիմնական բաղադրիչները:
2. Պետության կառավարման էությունը և բնույթը:
3. Պետական կառավարման առարկայական դաշտում սուբյեկտը և օբյեկտը:
4. Պետական կառավարումը որպես համակարգ:
5. Պետական կառավարման սկզբունքներն ու նպատակների ծառը:
6. Պետական կառավարման գործառույթների համակարգը, ձևերը, մեթոդներն ու միջոցները:
7. Պետական կառավարման տիպերը և մեթոդները:
8. Տեղական ինքնակառավարումը զարգացող ժողովրդավարություններում:
9. Համայնքների և պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունները ՀՀ – ում:
10. Տեղական ինքնակառավարման մարմինների դերը հանրային կառավարման համակարգում:

Հիշյալ թեմաների վերաբերյալ դասավանդողի շարադրանքը պետք է ունենա հետևյալ բովանդակությունը: Նման շարադրանքը, մեր փորձի արդյունքներով ապահովում է արդյունավետություն:

Պետական կառավարման համակարգային հատկանիշներից մեկը՝ ամբողջականությունը, ենթադրում է իշխանությունների տարանջատման կենտրոնախույս բաղադրիչի և պետական ծառայության ղեկավարման կենտրոնաձիգության հավասարակշռումը, հիերարխիկությունը՝ գործառույթների վերադասության հիմքի վրա բաշխվածությունն է, դինամիզմը ենթադրում է գործառույթների իրականացման վրա ծախսված ժամանակահատվածը, կառուցվածքայինը ենթադրում է պետական կառավարման իրականացումը՝ ըստ տարածքային բաժանման: Տարածքայնության հատկանիշի մեկ այլ օրինակ կարող է լինել տեղական ինքնակառավարման մեջ համահարթեցման սկզբունքի կիրարկումը, որի էությունը հանգում է պետության կողմից ՏԻՄ պարտադիր լիազորությունների իրականացման մասով տրամադրվող ֆինանսական միջոցների և տեղական բյուջեների համադրելիությանը: Կենտրոնացվածության աստիճանը ենթադրում է հորիզոնական կառավարման մեջ կառուցվածքային ստորաբաժանումների կենտրոնացված ղեկավարում: Գործառույթների տարանջատվածության և հստակության բաղադրիչը ենթադրում է համակարգի կառավարման ստորաբաժանումներին վերապահված դերակատարումների սահմանազատում:

Կառավարման արդյունավետության գնահատումն անհրաժեշտ է պետական քաղաքականության նպատակամղվածությունն ապահովելու համար: Երկրի տարբեր ոլորտներում (առողջապահություն, կրթություն, էներգետիկա և այլն) իրականացվող ծրագրերը հաճախ հիմնվում են միջազգայնորեն ընդունված օբյեկտիվ ցուցանիշների վրա:

Այսպիսով, արդյունավետության ընդհանուր չափանիշը կոնկրետանում և լրացվում է հասարակական կյանքի առանձին ոլորտների կառավարման արդյունավետությունը բնորոշելու համար կիրառվող յուրահատուկ չափորոշիչներով:

Եթե տնտեսության մեջ արդյունավետության մասնակի ցուցանիշները սովորաբար արտահայտում են առանձին որևէ ռեսուրսի օգտագործման արդյունավետությունը (հիմնական միջոցների, նյութերի, էներգիայի և այլն), ապա պետական կառավարման արդյունավետության մասնակի ցուցանիշները ընդգրկում են կառավարման ոլորտային քաղաքականություններով պայմանավորված ծախսերի և ձեռքբերված արդյունքների հարաբերակցությունը:

Այսինքն՝ պետության արդյունավետությունը, այս դեպքում, դիտարկվում է նպատակադրումների և պետության ներուժի համադրմամբ: Հարկ է նշել, որ պետական կառավարման արդյունավետության գնահատման համար տնտեսագիտական մոդելը ոչ միշտ է կիրառելի:

Չնայած տնտեսագիտական առումով մասնակի արդյունավետությունը այս դեպքում կլինի բարձր, սակայն նպատակադրման տեսանկյունից անվտանգության համակարգը կլինի խոցելի, հետևաբար և ոչ նպատակահարմար: Կառավարման ցանկացած խնդիր անհրաժեշտաբար ենթադրում է.

- նպատակի վեկտորի ընտրություն,
- կառավարվող օբյեկտի պարամետրերի ճանաչողություն,
- դրանց գերակայությունների պարզաբանում և կառավարման ենթակա պարամետրերի ու նրանց էտալոնային արժեքների ընտրություն,
- կառավարման ալգորիթմի և միջոցների ընտրություն:

Սահմանադրության ընդունումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունը վստահորեն կանգնեց նոր պետականության կերտման ճանապարհին, որի ընթացքում հասարակական բոլոր ոլորտներում իրականացվեցին լուրջ և ծավալուն բարեփոխումներ, որոնք չբացառեցին նաև հանրային կառավարման ոլորտը, որտեղ պետական կառավարմանը զուգահեռ սկսեց գործել նաև տեղական ինքնակառավարման համակարգը:

Պետական կառավարման համակարգի գործունեության ընթացքում որոշակի թերություններ կրում են թաքնված բնույթ, այդ պատճառով կառավարիչները պետք է իրենք գիտակցեն փոփոխության պահանջը և հավաստի փաստեր գտնեն՝ այդ պահանջը հաստատելու համար: Դրա համար առիթ կարող է հանդիսանալ համակարգի գործունեության պլանավորված և իրական ցուցանիշների միջև խզումը:

Նման խզում հայտնաբերելով՝ կառավարիչները ստեղծում են որոշման հրատապության տպավորություն, որպեսզի մարդիկ գիտակցեն փոփոխությունների անհրաժեշտությունը և համաձայնվեն դրա հետ:

Պետական կառավարման համակարգի համար հատուկ վտանգ է ներկայացնում արտաքին միջավայրի դանդաղ փոփոխությունը, քանի որ ղեկավարությունը կարող է բաց թողնել փոփոխություններին անհրաժեշտ արձագանք տալու ժամանակը:

Այսպիսով, փոփոխությունների կառավարումը վերաբերում է մարդկային հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներին: Փոփոխությունների կազմակերպական կառավարման սկզբունքներն ու մեթոդները կիրառվում են որպես փոփոխության գործիք՝ որոշակիացած բացառապես անհատի վրա:

Փոփոխությունների կառավարումը կենտրոնանում է նաև այն կարևոր պնդման վրա, որի համաձայն՝ պետական կառավարման համակարգում փոփոխությունների կառավարումն էապես ազդում է աշխատակազմի՝ թե՛ մարդկանց և թե՛ խմբերի վրա, հետևապես՝ նաև համակարգի կատարողականի արդյունավետության վրա:

Պետական կառավարման համակարգում փոփոխությունների կառավարման գործընթացը կարող է վերաբերել փոփոխությունների վերահսկողության գործընթացին, որտեղ պլանավորված կամ նախատեսված փոփոխությունները պաշտոնապես ներկայացված են և հաստատված:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ փոփոխությունների կառավարումը կարելի է բնորոշել որպես համակարգի գործառությանն ու զարգացմանն առնչվող փոփոխությունների անխուսափելիությամբ պայմանավորված կառավարման մեթոդների, սկզբունքների և գործիքակազմի համալիր իրականացում: Այն, որը ներառում է հայեցակարգային բնույթի այն դատողությունները, վարկածներն ու առաջարկությունները, որոնք ուղղված են համակարգի ներսում փոփոխությունների ախտորոշմանը, գնահատմանը, ինչպես նաև դրանց պլանավորմանն ու իրականացմանը:

Պետական կառավարման համակարգում փոփոխությունների կառավարումը ուղղված է համակարգի հետագա ռազմավարական զարգացմանը և կարող է նպաստել այն հանգամանքին, որ համակարգն ավելի արդյունավետ հարմարվի և արձագանքի ներքին և արտաքին միջավայրի ազդակներին ու տեղի ունեցող փոփոխություններին՝ այդպիսով կառավարելի դարձնելով դրանց ազդեցությունը իրենց գործունեության արդյունավետության վրա:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է յուրաքանչյուր դասախոսությանը հանգամանալից նախապատրաստվելը, որը ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը, ուսումնական տեքստի նախապատրաստումը, քննարկվող հարցերի շրջանակի որոշումը և գործընթացի նախագծումը: Թերևս, ամենակարևորը դասախոսության նպատակների որոշելն է: Նպատակին հասնելու ուղիների, մանկավարժական պայմանների, ուսուցման միջոցների ընտրությունը, ինչպես նաև նախնական պլանավորումը, դասի կառուցվածքի որոշումը անշուշտ դասի արդյունավետության համար էական նշանակություն ունեն: Պետք է փաստել, որ համակուրսեցիները շատ կարևոր դերակատարում ունեն դասընկերներին աջակցելու հարցում:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի մեջ ընդգրկված թեմաների դասավանդման գործընթացը կազմվում է հետևյալ հաջորդականությամբ.

1. Հստակեցվում է յուրաքանչյուր թեմայի ուսուցման նպատակը, ուսուցանվող նյութի կառուցվածքը, բովանդակությունը:
2. Իրականացվում են գործողություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր սովորողի և լսարանի քննարկվող հարցերի շրջանակը, հիմնական հասկացությունները, պահանջ-մունքները:

Հաճախ սովորողի ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նպատակով իրականացվում է թիմային աշխատանք, օգտագործվում են ուսանողների գիտելիքները, կարողությունները և ուսումնական բոլոր ջանքերը, բայց հաճախ

մոռացության է մատնվում ամենակարևորը՝ անձի կարծիքն իր կրթության կազմակերպման մասին:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի ուսուցումը կարելի է կազմակերպել ինտերակտիվ մեթոդով:

Ինտերակտիվ մեթոդը նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման գործընթացում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ: Նրա դերը ուսուցման գործընթացում վերափոխվում է գործընթացի կազմակերպչի, կառավարչի, սովորողների ուսումնական աջակցություն ցուցաբերողի, խորհրդատուի:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասախոսը նոր գիտելիքներ որոնելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարման [3]:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի ուսուցանումն իրականացվում է ԽԻԿ համակարգի միջոցով:

Այս համակարգը ոչ միայն սովորողի մտածողությունն է խթանում, այլև որոշակի հետաքրքրություն է մշակում կարդալու գործընթացի նկատմամբ: Համակարգն իրականացվում է երեք փուլով.

- խթանում.
- իմաստի ընկալում.
- կշռադատում:

Առաջին՝ խթանում փուլում անհատական որևէ առաջադրանք է տրվում կամ խմբային քննարկում է անցկացվում, որի ընթացքում նպատակ է դրվում վերհանելու սովորողների գիտելիքները, կարծիքները կամ անձնական փորձը այդ թեմայի շուրջ: Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

- նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները,
- քննարկման գործընթացին ներգրավել սովորողներին,
- նրանց մոտ ձևավորել գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Իմաստի ընկալման փուլում հաղորդվում է նոր նյութ: Կազմակերպվում է նոր նյութի ընթերցումը: Սովորողներն ընթերցում են հատված առ հատված, իրար հաջորդելով:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝ սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Իմաստի ընկալման փուլում կիրառվող մեթոդներից է «Խճանկարի» մեթոդը (աղ. 1): Այն համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց համակուրսեցիներին:

Այս մեթոդի կիրառման ժամանակ սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ լսարանի սեփականությունը:

Այսպիսով, եթե նյութն ուսումնասիրվում է հատվածաբար տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները:

Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի և սովորեցնողի դերում:

Աղյուսակ 1.

«Խճանկարի» մեթոդը

Փուլը	Նկարագրությունը
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում	Սովորողները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքագրում են տեղեկատվություն
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբերի սովորողները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը
Աշխատանք ուսումնական խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման
Ավարտական աշխատանք	Սովորողները անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից
Ամփոփում	Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների

Կշռադատումը սովորելու գործընթացի այն փուլն է, երբ սովորողները մտովի հետադարձ հայացք են գցում ու խորհում դասի ընթացքում հանդիպած գաղափարների և յուրացրած նյութի շուրջ, տալիս են հարցեր, անում մեկնաբանություններ, բանավիճում, նոր ձեռք բերված գիտելիքը օգտագործում են որևէ կերպ:

Կշռադատման փուլի կազմակերպման համար կան բազմաթիվ ու բազմազան տարբերակներ: Ընտրությունը կախված է դասավանդվող առարկայից, սովորողների կրթական մակարդակից, ժամանակից, նպատակահարմարությունից:

Կշռադատման փուլի նպատակներից են՝

- սովորողը նոր ստացած տեղեկատվությունը պետք է կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով,
- նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում:

Կշռադատման փուլի կարևոր բաղադրիչներից է ամփոփումը կամ անդրադարձը, երբ սովորողը վերհիշում է դասի ընթացքում իր կատարած աշխատանքը և փորձում հասկանալ, թե ի՞նչ արեց և ինչու՞: Սա շատ կարևոր է. յուրաքանչյուր սովորող պետք է հստակ իմանա, թե ի՞նչ նպատակով է դասախոսն իրեն առաջարկում այդպիսի գործունեություն ծավալել: Բացի դրանից՝ սովորողը հոգեբանորեն զգում է ուսումնական գործընթացում իր դերի կարևորությունը և անհրաժեշտությունը:

Հիշյալ մեթոդը շատ տարածված է: Այն հանդուրժողականություն, դիմացինին լսելու, ասածը հասկանալու կարողություններ է ձևավորում, նպաստում մտքերն

ագատ և անկաշկանդ արտահայտելուն, ինչպես նաև զարգացնում է սովորողների ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը:

Այսպիսով, ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է տարբեր փուլերի: Բնութագրելով յուրաքանչյուր փուլում դասախոսի անելիքը՝ այն նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Դասախոսի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Դասավանդման արդյունավետությունը բարձր կլինի, եթե ուսուցումը կազմակերպի համագործակցային փոքր խմբերով:

Փոքր խմբերով համագործակցային ուսուցման առավելություններից մեկն էլ այն է, որ դրական փոխկախվածությամբ խմբի անդամները, երբ համատեղ դժվարություն են հաղթահարում, ապա նա, ով որևէ նյութ է բացատրում ընկերոջը, դրանով իսկ զարգացնում է իր կարողությունները (մասնավորապես՝ հաղորդակցական կարողությունները), և բացի այդ՝ սովորեցնելով ինքն ավելի լավ է սովորում:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի ուսուցման գործընթացում կիրառելի են ուսուցման գրեթե բոլոր մեթոդները, որոնց ընտրությունը կախված է հիմնականում թեմայի բովանդակությունից, ուսուցման նպատակներից և սովորողների պատրաստվածության մակարդակից:

Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի տարիքային առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի պահանջները, այլև սովորողների ուսումնական կարողություններն ու ընդունակությունները:

«Պետական և մունիցիպալ կառավարում» թեմաների մի մասը կարող են ուսուցանվել նաև դասախոսությունների միջոցով:

Դասախոսությունը տեսություն, տեղեկատվություն, պատմություն, թեորեմաներ և այլն սովորեցնելու, փոխանցելու միջոց է:

Դասախոսությունը հիմնականում հաղորդակցման միակողմանի ձև է, որը թույլ չի տալիս մեծ լսարանի զգալի ընդգրկում դասագործընթացին: Այնուամենայնիվ՝ դասախոսությունը հաճախ ներկայացվում է նաև որպես ակտիվ ուսուցում: Շնորհալի բանախոսների դասախոսությունները կարող են մեծ խթան հանդիսանալ, ի վերջո, ակադեմիական կրթության մեջ դասախոսությունները գոյատևում են որպես արագ, մատչելի և արդյունավետ միջոց՝ մեծ լսարանին ներկայացնելու գիտության մեջ քննարկվող տարբեր խնդիրներ:

Դասախոսությունները ներկայացնում են բանավոր խոսքի հարատևությունը՝ համեմատելով տեքստային հաղորդակցությանը գրքերում և այլ աղբյուրներում:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի մեջ ներառված թեմաների որոշ մասը կարող են ուսուցանվել նաև ցուցադրման միջոցով: Ցուցադրումը դասավանդման ընթացքում օրինակների և փորձարկումների միջոցով իրականացվող գործընթաց է: Փաստեր ապացուցելիս՝ ցուցադրումը կարող է օգտագործվել վկայակոչված ապացույցների և կապված պատճառաբանվածության համադրությամբ:

Ցուցադրությունները նման են գրավոր պատմագրության և օրինակների՝ դրանք թույլ են տալիս սովորողներին անհատապես առնչվել ներկայացված տեղեկատվությանը: Փաստերի մտապահումը մեկուսի և անդեմ փորձառություն է, մինչդեռ նույն տեղեկատվությունը, որը հիմնավորվել է ցուցադրմամբ, դառնում է փաստարկված: Ցուցադրությունը օգնում է բարձրացնել սովորողների հետաքրքրվածությունը և ամրապնդում է հիշողությունը, որովհետև ապահովում է փաստերի և իրական ծրագրերի միջև կապը: Դասախոսությունները, մյուս կողմից, ավելի շատ միտված են փաստացի ներկայացմանը, քան կապակցված ուսուցմանը:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել նաև համագործակցության մեթոդի միջոցով: Համագործակցությունը թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին: Համագործակցությունը սովորողների և ուսուցանվող նյութի միջև անձնական կապ է ստեղծում՝ օգնելով սովորողներին մտածել ավելի անաչառ: Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են: Դասախոսները կարող են ներգրավել համագործակցությունը դասընթացի մեջ, որպեսզի գնահատեն սովորողի թիմում աշխատելու ունակությունները, ղեկավարման հմտությունները կամ ներկայացնելու ունակությունները:

Դասավանդման համագործակցային մեթոդի ամենատարածված ձևը լսարանային քննարկումներն են: Սա նաև դասը վարելու ժողովրդական եղանակ է, որտեղ յուրաքանչյուր սովորող ունի համագործակցելու և իր տեսակետը ներկայացնելու հավասար հնարավորություն:

Լսարանում կատարվող քննարկումը կարող է իրականացվել կամ դասախոսի կամ սովորողի կողմից: Քննարկմանը կարող է նաև հաջորդել ներկայացումը կամ ցուցադրությունը:

Լսարանային քննարկումները կարող են ընդլայնել սովորողի մտահորիզոնը, քննարկվող նյութին հաղորդել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել սովորողի հեռանկարները, ընդծել հակառակ տեսակետները, ամրապնդել գիտելիքները, և ուժեղացնել վստահությունը: Կախված դասընթացի թեմայից և ձևաչափից՝ իմաստալից և գրավիչ քննարկումների հնարավորությունները տարբեր են:

Լսարանային քննարկումների արդյունավետությունն ապահովվում են սովորողների հետ քննարկվող հարցերով, ստացված տեղեկատվությունն այլ ձևերով մեկնաբանելով, այնպիսի հարցերի օգտագործմամբ, որոնք զարգացնում են քննադատական մտածողությունը, օրինակ. «Կարո՞ղ ենք մեկ քայլ առաջ գնալ», «Ի՞նչ լուծումներ կառաջարկեք այս խնդրի համար», «Սա ի՞նչ առնչություն ունի մեր սովորածի հետ», «Որո՞նք են ... տարբերությունները», «Սա որևէ առնչություն ունի՞ ձեր անձնական փորձի հետ», «Ին՞չ եք կարծում, ինչի՞ պատճառով է ...»:

«Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի յուրացման ստուգումը իրականացվում է հարցման միջոցով՝ դասավանդման ընթացքում սովորողների դրսևորած ակտիվությամբ: Իրավիճակից կախված հարցումը կարող է տարբեր նպատակներ ունենալ: Այն հաշվի է առնում փորձը և հեշտացնում է թեմային անդրադարձ կատարելը: Հարցման նպատակն է սովորողներին թույլ տալ եզրակացություններ կատարել իրենց փորձի վերաբերյալ ու առաջընթաց կատարել փոփոխության և փոխակերպման միջոցով, ինչպես նաև օգնել նրանց օգտագործել իրենց փորձը: Գործընթացը ներառում է շրջափուլի գիտակցում, որով սովորողները

կարող են առաջնորդվել երբ բանավիճում են: Դասախոսները չպետք է չափից ավելի քննադատական մոտենան սովորողների պահվածքի պոռթկումներին: Հենց որ այդ փորձառությունը մոտենա ավարտին, սովորողները դուրս կգան նաև այս շրջափուլից և առաջ կշարժվեն:

Սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքների մակարդակը գնահատվում է միջանկյալ և ամփոփիչ ստուգարքի կամ քննության միջոցով:

Այսպիսով՝

- «Պետական և մունիցիպալ կառավարում» ուսումնական առարկայի նպատակն է օժանդակել տարբեր բուհ-երում վերոհիշյալ առարկան ուսումնասիրող սովորողներին համակարգված ձևով ստանալու համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև նպաստել քաղաքացիական և համայնքային ծառայողների հետագա պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացմանը, նախապատրաստել հանրային կառավարման բնագավառի նյութեր:
- Ներկայումս դասավանդման արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք մոտեցումների կիրառում: «Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի արդյունավետ ուսուցում իրականացնելու համար կարող են օգտագործվել ուսուցման բազմազան մեթոդներ՝ հաշվի առնելով ժամանակակից մանկավարժության մեթոդի ընտրության վրա ազդող գործոնները:
- «Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը:
- «Պետական և մունիցիպալ կառավարում» առարկայի ուսուցումը կարելի է կազմակերպել ինտերակտիվ մեթոդով:
- Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասախոսը նոր գիտելիքներ որոնելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Գրականություն

1. **Василенко И.А.**, Государственное и муниципальное управление, И.А. Василенко, М.: Юрайт, 2014. - С. 104.
2. **Чиркин В.Е.**, Государственное и муниципальное управление. 2003. - С. 121.
3. **Щуркова Н.Е.**, Педагогика. Воспитательная деятельность педагога. Учебное пособие для бакалавриата и магистратуры. М.: Юрайт, 2019. - С. 87.

Т.И. Айрапетян

МЕТОДИЧЕСКИЕ АСПЕКТЫ УЧЕБНОГО ПРЕДМЕТА ГОСУДАРСТВЕННОЕ И МУНИЦИПАЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ

В статье представлены современные педагогические аспекты учебного предмета «Государственное и муниципальное образование», основы организации учебного процесса и методический инструментарий обучения.

Ключевые слова: государственное и муниципальное управление, государство, местное самоуправление, учебный процесс, методический инструментарий обучения.

T.I. Hayrapetyan

THE METHODOLOGICAL VIEWPOINTS OF "STATE AND MUNICIPAL ADMINISTRATION MANAGEMENT" EDUCATIONAL SUBJECT

The article presents the modern pedagogical aspects of teaching the "State and Municipal Administration management" subject, the basics of organizing the teaching process and the methodological toolkit of teaching.

Key words: state and municipal administration, state, local self-government, teaching process, teaching methodological toolkit.

Հայրապետյան Տիգրան Իշխանի – տնտեսագիտության թեկնածու (ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ)

Ներկայացման ամսաթիվը՝ 15.09.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 26.09.2023

Լ.Ա. Մկրտչյան

ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎԱՐՍԵՐ, ԾՈՎԱԳՅՈՒՂ, ԾԱՂԿՈՒՆՔ ԵՎ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Սևանի տարածաշրջանը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնցից շատերն ունեն յուրահատուկ, գեղագիտական արժեք: Սակայն դրանք մարդու անուշադրության պատճառով հայտնվում են տարբեր աղետալի իրավիճակների ազդեցության: Հուշարձանների մեծ մասը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում:

Աղետալի հետևանքներ առաջացնող վրանգների ազդեցությունը հուշարձանների վրա քիչ է ուսումնասիրված, որի պատճառով դրանց ընդհանրապես ուշադրություն չի դարձվում: Սևան համայնքի շատ բնակավայրերում մեծ է նաև բնակչության անտարբերությունն ու անիրազեկվածությունը, որի պատճառով այն նույնիսկ չգիտի իր հարևանությամբ գտնվող եկեղեցիների մասին:

Առանցքային բառեր. պատմամշակութային արգելոց-թանգարան, պատմական միջավայր, պատմաճարտարապետական հուշարձան, խաչքար, բնական աղետալի երևույթ, ազդեցություն, աղետների ռիսկ:

Գեղամական համայնքը գտնվում է Սևանի տարածաշրջանում, Հրազդան գետի ձախ ափին, ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1828 թվականին: Գեղամական գյուղը նախկինում կոչվել է Շահրիգ: 1946 թվականին գյուղն անվանափոխվել է և մինչև այժմ կոչվում է Գեղամական: Նրա առաջին բնակիչները եղել են Թուրքմենչայի պայմանագրից հետո Պարսկաստանի Մակուի շրջանի Անձուկ գյուղից գաղթած 400 գաղթականներ: Գյուղի տարածքում կան VII դարում բնակության մասին վկայող հնագիտական տեղեկություններ: Գյուղի հարավարևմտյան մասում գտնվում է Սուրբ Հովհաննես եկեղեցին, արևմտյան կողմում՝ Սուրբ Աստվածածին մատուռը (14-15-րդ դդ) [1]: Եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում: 1906թ-ին եկեղեցուն կցվել է նախասրահը: Սակայն ներկայումս գտնվում է կիսաքանդ վիճակում, որի հարակից տարածքում կան բազմաթիվ ցրված խաչքարեր, որոնք թվագրվում են 9-11-րդ դարեր [2]: Եկեղեցին ենթարկվում է ձյան հալոցքային, անձրևաջրերի, քամու ներգործությանը: Այդ ազդեցությունների արդյունքում եկեղեցու քանդվելու գործընթացն անընդհատ շարունակվում է: Մեծ է նաև մարդկային գործոնի ազդեցությունը: Եկեղեցին ոչ միայն չի վերանորոգվում, այլև ամբողջ տարածքն անուշադրության է մատնված: Նույնիսկ ցրված, ընկած խաչքարերը չեն կանգնեցվում:

Գյուղում պահպանված է հին հայկական գերեզմանոց, բազմաթիվ խաչքարերով:

Գյուղամիջում է գտնվում Աբ. Խաչ մատուռը՝ կառուցված 12-13-րդ դարերում: Դրա մասին շատ տեղեկություններ չկան: Տարածքում ևս կան խաչքարեր: Գյուղի ներկայիս գերեզմանոցի տարածքում՝ բարձունքի վրա, կանգնեցված է Հայրենական Մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձան:

Ծաղկունք համայնքը գտնվում է Հրազդան գետի աջ ափին, Սևան քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 1850 մետր բարձրության վրա՝ փոված Փամբակի լեռների բազուկը կազմող Սուրբ Հովհաննես, Աբազանց դռ, Խաչիդռ սարերի և Թափիդռ բլրի ստորոտին [1]:

Ծաղկունք հնագույն բնակավայրը եղել է Վարաժնունիք, Ծաղկունք, Ծաղկունեաց (Ծաղկունիք), Ծաղկածոր (Դարաչիչակ - Զընջըլու) գավառի շուրջ 40 հնագույն բնակավայրերից մեկը, դեռևս մեր թվարկությունից առաջ 520թ., ունեցել է 45 տուն, ճանաչվել Վարաժնունիք մեծածավալ գավառի վարչական կենտրոն: Գյուղի տարածքն ընդհատումներով շուրջ 4 կմ երկարություն է ունեցել: Այդ մասին է վկայում այն փաստը, որ գյուղից դեպի արևելք ձգվող տարածքներում կան տնատեղեր, գերեզմաններ, խաչքարեր: «Բոստաններ» և «Կորոբել» հանդամասերում հայտնաբերել են զինվորական տարբեր տեսակի նշտարներ, սրեր, շեփորանման գործիքներ, կճուճներ, պուտուկներ, քասաներ, աղամաններ և այլ իրեր: Գյուղի տարածքում կան պահպանված բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ:

Ծաղկունք գյուղի մուտքի մոտ գտնվում է Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանախումբ, որը վերածվել է գեղեցիկ պուրակի:

Համալիրը կառուցվել է Գագիկ Ավագյանի նախագծով ու նախաձեռնությամբ՝ նվիրված 1941-1945 թթ. Մեծ Հայրենականում զոհված ծաղկունքցիների հիշատակին: Բազալտե կոփ արծվի թևերի հովանու ներքո, հաղթանակած հայրենի զինվորը ձախ ձեռքով սուրը խրել է հողի մեջ. Պատերազմին ասելով՝ ոչ և հայացքն ուղղել է դեպի աջ ձեռքում բռնած խաղաղության ջահին: Արծվի հայացքն ուղղված է դեպի արևելք՝ սպասելով արևի արարող ճառագայթներին և միաժամանակ պաշտպանելով հաղթանակած զինվորի թիկունքը՝ հայրենի հողը:

Կոթողից ներքև կառուցված «Պատմության անիվի հետագիծ» պատն իրենից ներկայացնում է աշխարհում տեղի ունեցած հասարակական-քաղաքական ուժերի բախումից, ֆաշիստական Գերմանիայի կողմից առաջ քաշած աշխարհը վերաբաժանելու հարցը և իր վայրենի, մարդակեր բնույթով փոխում է պատմության անիվի հետագիծը: Արծվամարմին զինվորի առջև կա 2 ցայտաղբյուր, որոնք բնութագրում են դրանց հոգիներից բխող պարզությունն ու զուլալությունը: Խորհրդանշող պատը շարված է 2 ճանապարհը բաժանող սահմանագծի վրա: Նախքան մուտքի աստիճաններով բարձրանալը մի պահ կանգ առնելով և նայելով արծվի գլխին, ձեր առջև կհառնի «Խաչի դոշ» և «Սև արոտ» բլուրների համադրումից ստացված լեռնային թևերով արծվի տեսք՝ թռչելիս: Ճակատամասում բազալտե սալիկի վրա փորագրված է՝ «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»:

Հուշարձանախմբից վեր՝ բարձր բլրի վրա վեր է բարձրանում նորակառույց Սբ. Սարգիս եկեղեցին, որը կառուցվել է համանուն մատուռի կողքին:

Սուրբ Սարգիս մատուռը թվագրվում է 7-19 դդ. ըստ ճարտարապետական վերլուծության և կատարման տեխնիկայի: Հատակագիծը խիստ խախտված է, այն հավանաբար եղել է եռախորան կենտրոնագմբեթ կառույց: Մուտքն արևմտյան կողմից է: Ներսում և արտաքուստ կան խաչքարեր, կառուցված է սրբատաշ գորշ բազալտից, մատուռի չափսերն են՝ 6.5x4.2մ: Ներսում և դրսում կան 10-15 դդ. խաչքարեր:

Մատուռը վերականգնվել է, և նրա կողքին 2006 թ. ավարտվել է նաև Սուրբ Սարգիս եկեղեցու կառուցումը՝ ճարտարապետ Վաչագան Թաղևոսյանի նախագծով և բարերար Արսեն Աղաջանյանի հովանավորությամբ: Եկեղեցու օձման արարողությունը տեղի է ունեցել 2006թ. հոկտեմբերի 7-ին: Մուտքի առաջ տեղադրված է զոհասեղան և ծակ քար, շրջակայքի գերեզմանները թվագրվում են 10-13 դդ.:

Գյուղի կենտրոնական մասում գտնվում է Սուրբ Հարություն եկեղեցին: Կառուցման մասին պատմական տեղեկություններ չեն պահպանվել: Սակայն, ըստ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ – ի տվյալների, եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում:

Արտաքուստ ուղղանկյուն հատակագծով եռանակ բազիլիկ շինություն է, արևելյան մասում կա կիսաշրջանաձև խորան, դրա կողմերում կան 2 ավանդատներ: Խորանն աղոթասրահից անջատված է բեմով, հյուսիսային պատի արևելյան մասում մկրտարանն է: 1921 թ. գյուղի ռմբակոծումից հետո եկեղեցին վերանորոգվել է և արևմտյան պատին (արտաքուստ) պառկած վիճակում ագուցված է (ջարված) երկու 13-րդ դարի խաչքար, իսկ հարավային պատին՝ մեկ խաչքար: Եկեղեցին ունեցել է գմբեթավոր զանգակատուն: Փլված եկեղեցին վերանորոգել են առանց զանգակատան: Շինանյութը բազալտից է: Ըստ ճարտարապետական հորինվածքի և շինարարական տեխնիկայի 19-րդ դարի գործ է: Եկեղեցու դիմաց կա 7 կանգուն խաչքար և մեկ տասնյակից ավելի գերեզմանաքար (10-19 դդ):

Ներկայումս եկեղեցին գտնվում է խարխուլված վիճակում: Եկեղեցու և հարակից տարածքի խաչքարերը ենթարկվում են ջրահոսքերի, ուժեղ քամիների, ձյան հալոցքային և անձրևաջրերի ներգործությանը: Թեև եկեղեցում մոնավառություն ներկայումս չի իրականացվում, սակայն փայտե սյուներն ու տանիքի ամրանները կարող են հրդեհի պատճառ դառնալ:

Ջրահոսքերի և քամու ազդեցությամբ հողաշերտը տեղատարվում է՝ պատճառ դառնալով խաչքարերի տեղաշարժմանը, երբեմն՝ ձևախախտմանը:

Գյուղի հարավային մասում գտնվում է Ծաղկեվանք մատուռը: Ըստ գյուղի բնակիչների մատուռի տեղում կառուցված է եղել գմբեթավոր եկեղեցի, սակայն 1604 թ. Շահ Աբասն ազգաբնակչությանը տեղահան անելու ժամանակ ավերել է: Հետագայում դրա տեղում կառուցվել է մատուռ: 1940 թ. մատուռը քանդել և խաչերն ու քարերը լցրել են գյուղի տակ կառուցվող դպրոցի պատերի հիմքը, իսկ տանիքը պատված է ազրոթիթեղով:

Ծաղկունք-Դմաշեն ճանապարհի աջ մասում գտնվում է գեղաքանդակ խաչքար, որը շրջապատից առանձնանում է իր խրոխտ տեսքով: Հարակից տարածքում կան 12-13-րդ դարերի այլ խաչքարեր, որոնց մի մասը կոտրված են:

Վարսեր գյուղը գտնվում է Սևան քաղաքից հարավ-արևմուտք՝ լեռնալանջի վրա: Նախկինում կոչվել է Չրոչրո, Չրրջրր, Չրչրր, Չրչու, Սութոքյան, Սուտուկույան, Վարսել, Վարսեր-Սուտուկյան անվանումներով:

Դեռևս մեր թվարկությունից առաջ այս տարածքում եղել է հին բնակատեղի: Մի քանի տասնամյակ առաջ Հրազդան գետը հոսել է այս գյուղի մատույցներով: Հորդառատ գետի ջրերն այստեղ հասնելով մեծ սահանքին՝ գահավիժել են բարձրաբերձ բարձունքից, զարնվել բազալտե ժայռերին և վերածվել ջրափոշու սպիտակ ամպի՝ շրջապատը լցնելով խոլ ու զարհուրելի դղրոյունով: Բնության այդ հրաշքն իր հազարամյա գոյության ընթացքում մի քանի անգամ տարբեր առումներով հիմք է ծառայել գյուղի անվանակոչման համար: Մեզ հասած մեկ այլ ավանդազրույցի համաձայն, արաբական տիրապետության ժամանակներում մի քանի արաբ զորականներ այստեղ հետապնդել են մի գեղեցիկ հայուհու: Վերջինս, խուսափելով հարբած զինվորներից՝ այլ բան չի գտնում նրանցից ազատվելու և իրեն նետում է գահավեժ անդունդը: Հարազատները նրան փնտրելիս ջրվեժի անմատչելի քարերի արանքում նկատում են նրա մազերը՝ Վարսերը... Կան գյուղի անվանակոչման մի քանի այլ տեսակետներ: Ըստ դրանցից մեկի, հավանական է, որ գյուղի անունն առաջացել է Վարսել բառից, որը նշանակում է ուժգնորեն հարվածելով՝ խփելով՝ թակով ծեծելով մտցնել (գետնի մեջ): Այստեղ ևս նկատի է առնվել ահռելի ուժով գետնի մեջ մխրճվող ջրի հարվածը: Տեղացիները ջրվեժն անվանել են Չոռ, որից էլ գյուղը անվանակոչվել է Չոչր:

Գյուղի տարածքում կան միջնադարյան որոշ հուշարձանների հետքեր: Դրանցից մեկը հին ջրանցքի մնացորդներն են, ինչը հնարավոր չեղավ նկարահանել՝ ձյան կուտակումների պատճառով [4]:

Աբ. Ստեփանոս կիսավեր եկեղեցին թվագրված է որպես 19-րդ դարի կառույց: Նրա պատերի մեջ ագուցված են 12-ից 14-րդ դարերի բարձրարվեստ խաչքարեր: Ըստ երևույթին, եկեղեցու տեղում հնում եղել է միջնադարյան եկեղեցական այլ կառույց, որի աստիճանավոր պատվանդանն է միայն պահպանվել:

Եվ, չնայած այն բանին, որ եկեղեցին անմիջապես բնակելի տների կողքին է գտնվում, այնուամենայնիվ տարածքը նույնիսկ բուսականությունից չի մաքրվում: Բացի բնական գործոններից, եկեղեցու քանդվելու գործում մեծ չափերի է հասնում նաև մարդկային գործոնը (երեխաների խաղալու հետ կապված, գոմաղբի կուտակումներ հարակից տարածքներում և այլն): Եկեղեցուն կից հին գերեզմանատանը կա մի քանի խաչքար, առանց արձանագրության, հարթ և օրորոցածև մի քանի տապանաքար:

«Ծաղկավանք» մատուռը կառուցվել է 16-րդ դարում, վերականգնվել՝ 1984 թ-ին, գտնվում է գյուղի արևմտյան եզրին՝ ձորափին [1]:

«Խաչեր» մատուռը գտնվում է ձորի արևելյան եզրին: Կառուցվել է 2009 թվականին, Վարսերի բնակիչներ Գեղամ և Վահագ Առաքելյանների ջանքերով: Կառուցողներն են՝ Սուրիկ Պողոսյանն ու Լյովա Գալստյանը: Մատուռում կան 10-11-րդ դարերի թվագրվող խաչքարեր, որոնք նաև ագուցված են մատուռի պատերի մեջ, որի համար ել մատուռը ստացել է «Խաչեր» անվարումը:

Ծովագյուղը գտնվում է Սևանա լճի ափին՝ Սևան քաղաքից 10 կմ հյուսիս-արևմուտք: Մինչև 1935 թ. կոչվել է Չիբուխլու: Ծովագյուղում և շրջակայքում պահպանվել են Քառատափ գյուղատեղին, եկեղեցի, ամրոցի ավերակներ (Ք.ա. առաջին հազարամյակ), գերեզմանոցներ, խաչքարեր:

Սևան-Դիլիջան ավտոմայրուղու աջ մասում, գյուղից 2 կմ դեպի արևմուտք, բարձունքի վրա գտնվում է 15-17 դդ-ի կառուցված Աստվածընկալ եկեղեցին: Այն մի քանի անգամ վերանորոգվել է: Վերականգնվել է 1950-1960-ական թվականներին՝ Մայր Սաթենիկի ջանքերով, ով եղել է եկեղեցու և՛ վերականգնողը, և՛ սպասավորը: Նա իր կյանքի ընթացքում բժշկել և փրկել է հազարավոր կյանքեր: Մայր Սաթենիկի աճյունը հուղարկավորված է եկեղեցու արևելյան պատի տակ:

Ներկայումս եկեղեցին գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում: Այն տարբերվում է իր ներքին հարդարանքներով: Խորանի երկու կողմերում գտնվում են երկու ավանդատները, որոնք միմյանց են միանում խորանի ետնաբեմի մասում: Այս տարածքում վերանորոգման կարիք կա:

Եկեղեցու անմիջապես կողքին կան խաչքարեր և աղբյուր, որի ջուրն անխնա հոսում է՝ վտանգելով ոչ միայն խաչքարերի, նաև եկեղեցու գոյությունը:

Գյուղից 1 կմ դեպի արևելք գտնվում է 13-18 դդ-ի «Ավզով աղբյուր» գյուղատեղին և 13-րդ դարի կառուցված մատուռը [1]: Գյուղատեղին ներկայումս գրեթե չի պահպանվել, իսկ մատուռը վերանորոգվել է 1973-75 թթ-ներին: Տարածքն անընդհատ գտնվում է ջրահոսքերի ազդեցությանը: Մատուռից կես մետր ներքև ճահճացած տարածք է, ինչն անդրադառնում է նաև մատուռի վրա: Այդ պատճառով, մատուռից մի փոքր հեռավորության վրա՝ ձախ կողմում, կառուցում են նոր մատուռ: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Աղբյուրի ջուրը տեղացիները դուլլերով և տարաներով տանում են խմելու համար:

Ծովագյուղի կենտրոնում կանգնեցված է Մուրացանի կիսանդրին: Տարածքը բարեկարգված է, և մաքրվում ու պահպանվում է համայնքապետարանի կողմից:

Այսպիսով, ինչպես նշեցինք, վերոնշյալ համայնքների սահմաններում կան բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնց մի մասը գտնվում է կիսավեր վիճակում: Հուշարձանների պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ են քայլեր ձեռնարկել, քանի որ դրանք խոցելի են նաև բնական վտանգավոր երևույթների տեսանկյունից: Հայկական հուշարձանների պահպանությունը հենց ՀՀ տարածքում շատ կարևոր է նաև այն տեսանկյունից, որ ներկա պայմաններում հայկական հետքերի պահպանումն ու հանրայնացումը դարձել է պարզապես անհրաժեշտություն:

Առաջարկվում է՝ եկեղեցին, գերեզմանոցը և հարակից տարածքները պահպանել, ամրացնել, հեռացնել ավելորդ խոնավությունը: Պատմամշակութային արժեքների մասին իրազեկել համայնքի բնակչությանը, երիտասարդների միջոցով կազմակերպել դրանց հարակից տարածքների հաճախակի մաքրումն ու պահպանությունը:

Վերանորոգել եկեղեցին՝ ներքին փայտե կառուցվածքները պատել հրակայուն նյութով: Հաշվառել և կազնեցնել խաչքարերը, հարակից տարածքում կատարել ծառատնկում:

Քանի որ քամու արագությունն այս բանուկ ճանապարհի վրա շատ մեծ է, որի պատճառով տեղի է ունենում հողաշերտերի կուտակում, խաչքարերի ծածկում, հողմահարում և այլ վնասներ, ուստի կարևորվում է նաև ծառատնկումը, այդ թվում ճանապարհաեզրերի ծառապատումը, ինչը կթուլացնի քամիների բացասական ազդեցությունը:

Անհրաժեշտ է նաև հուշարձանների պահպանության համապատասխան պատասխանատուի հսկողությամբ պահպանություն իրականացնել հատկապես հին հուշարձանների տարածքում՝ արգելելով մարդկային ոչ նպաստավոր գործունեությունը տվյալ տարածքում:

Գրականություն

1. **Հակոբյան Ս.**, Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության պատմական հանրագիտարան, հեղինակային հրատարակություն, Եր., 2015. – 376 - 383 էջեր:
2. «**Պատմամշակութային** արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տվյալներ:
3. www.sevan.am. Դիտում՝ 12.09.2023.
4. <https://hushardzan.am/archives/4972>. Դիտում՝ 11.09.2023.

Л.А. Мкртчян

ИСТОРИЧЕСКИЕ АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ В ВАРСЕРСКОЙ, ЦОВАГЮХСКОЙ, ЦАГКУНКСКОЙ И ГЕГАМАНСКОЙ ОБЩИНАХ СЕВАНСКОГО РАЙОНА И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ИХ СОХРАНЕНИЯ С ПОЗИЦИИ РИСКА БЕДСТВИЙ

Севанский регион богат историческими и архитектурными памятниками, многие из которых имеют уникальную эстетическую ценность. Однако из-за невнимательности человека они попадают под влияние различных катастрофических ситуаций. Большинство памятников в настоящее время находятся в полуразрушенном состоянии.

Влияние опасностей, вызывающих катастрофические последствия, на памятники мало изучено, поэтому им вообще не уделяется внимания. Во многих населенных пунктах севанской общины также высока безразличность и неосведомленность населения, из-за чего оно даже не знает о церквях по соседству.

Ключевые слова: историко-культурный заповедник-музей, историческая среда, историко-архитектурный памятник, хачкар, природно-катастрофическое явление, воздействие, опасность стихийного бедствия.

L.A. Mkrtchyan

HISTORICAL ARCHITECTURAL MONUMENTS IN VARSER, TSOVAGYUGH, TSAGKUNQ AND GEGHAMAVAN COMMUNITIES OF SEVAN REGION AND MAIN PROBLEMS OF THEIR PRESERVATION FROM THE POSITION OF DISASTER RISK

The region of Sevan is rich in historical and architectural monuments, many of which have a unique aesthetic value. However, due to human inattention, they come under the influence of various catastrophic situations. Most of the monuments are currently in a dilapidated condition.

The impact of hazards causing catastrophic consequences on monuments is little studied, which is why they are not paid attention at all. In many settlements of the Sevan community, the indifference and lack of awareness of the population is also high, due to which they do not even aware of the churches in their neighborhood.

Key words: historical and cultural reserve-museum, historical environment, historical-architectural monument, khachkar, natural catastrophic phenomenon, impact, disaster risk.

Մկրտչյան Լալա Արշալույսի – դասախոս (Գավառի պետական համալսարան)

Ներկայացման ամսաթիվը՝ 02.10.2023

Գրախոսման ամսաթիվը՝ 09.10.2023

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաթևոսյան Հ.Շ., Սարաֆյան Կ.Մ., Ղարիբյան Հ.Պ.
 ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՊԵՐԱՏԻՎ
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 5

Մացուռ Ջ., Գևորգյան Գ.Ս., Շիվակու Ք., Չիլինգարյան Ա.Ս.
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ
 ՄՇԱԿՈՒՄ 15

Պեպրոսյան Հ.Հ.
 ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 24

Մանասյան Մ.Գ., Գսպոյան Գ.Ս.
 ՍՅՈՒՆԻՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
 ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ..... 33

Բագիյան Վ.Ա., Բակունց Ս.Հ.
 ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ.
 ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ..... 44

Մանուկյան Գ.Թ.
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ
 ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ..... 52

Բուլանիկյան Վ.Ս., Տերտերյան Ա.Ա.
 ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
 ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 66

II. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Դավթյան Վ.Ս.
 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ
 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ..... 75

*Մարկոսյան Ա.Օ., Հունանյան Ս.Ա., Գասպարյան Գ.Հ., Զհանգիրյան Տ.Ա.,
 Բաղդասարյան Ս.Կ.*
 ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ՀՈՂԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ՎԻՃԱԿԸ ԵՎ
 ՀԱԿԱԷՐՈՋՈՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ..... 82

Սարուխանյան Ա.Ա., Բալջյան Պ.Հ.
 ԱԶԱՏԻ ԶՐԱՄԲԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 89

Ղարիբյան Հ.Պ., Գասպարյան Ա.Զ.
 ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԽԱՂԱՂ
 ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 96

Խոնդկարյան Վ.Ս.
 ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԻՍԿԱԲԱՆԱԿԱՆ
 ՄՈՏԵՑՈՒՄ..... 102

Սարաֆյան Կ.Մ.
 ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՂԱՔՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ
 ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 109

Ղազարյան Հ.Ս., Ղազարյան Հ.Ս.
 ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
 ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 116

III. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ղուկասյան Լ.Հ., Կարապետյան Մ.Ս.

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ..... 124

Ղարիբյան Ռ.Գ.

ՄՆԵԴԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ..... 130

Մինասյան Ա.Լ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԴԵՐԸ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ..... 138

Ավանեսյան Ա.Հ., Թադևոսյան Դ.Ռ.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐՐ..... 145

Պեպրոսյան Հ.Հ.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ..... 153

Նասիլյան Ի.Վ., Գրիգորյան Ա.Ա.

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 159

Սարգսյան Դ.Յու., Բաբաջանյան Ի.Հ., Գրիգորյան Ս.Հ.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 169

Հայրապետյան Տ.Ի.

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ..... 178

Մկրտչյան Լ.Ա.

ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎԱՐՍԵՐ, ԾՈՎԱԳՅՈՒՂ, ԾԱՂԿՈՒՆՔ ԵՎ ԳԵՂԱՄԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ..... 189

СОДЕРЖАНИЕ

I. УПРАВЛЕНИЕ И ЭКОНОМИКА

<i>Матевосян Г.Ш., Сарафян К.М., Карибян А.П.</i> ИНТЕРПРЕТАЦИЯ ТЕРМИНОВ В ПРОЦЕССЕ ОПЕРАТИВНОГО УПРАВЛЕНИЯ.....	5
<i>Мацуо Дж., Геворгян Г.С., Шиваку К., Чилингарян А.С.</i> РАЗРАБОТКА ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ДЛЯ ОЦЕНКИ ОПАСНОСТИ НАВОДНЕНИЙ В АРМЕНИИ.....	15
<i>Петросян Г.А.</i> ПРИОРИТЕТЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПОЛИТИКИ.....	24
<i>Манасян М.Г., Г.М. Гспоян</i> ОЦЕНКА ДЕМОГРАФИЧЕСКОЙ СИТУАЦИИ И РАССЕЛЕНИЯ СЮНИКА С ТОЧКИ ЗРЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ.....	33
<i>Багиян В.А., Бакунц С.Г.</i> УСТОЙЧИВОСТЬ К СТИХИЙНЫМ БЕДСТВИЯМ, ОРИЕНТИРОВАННАЯ НА ОБЩИНЕ: ВОЗМОЖНОСТИ И ВЫЗОВЫ.....	44
<i>Манукян Г.Т.</i> КОНТУРЫ БЕЗРАБОТИЦЫ В КРИЗИСНЫХ СИТУАЦИЯХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ....	52
<i>Буланикян В.С., Тертерян А.А.</i> АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОЙ И АРМЯНСКОЙ МЕТОДОЛОГИИ ОЦЕНКИ РИСКА БЕДСТВИЙ НА МЕСТНОМ УРОВНЕ.....	66

II. ТЕХНОЛОГИИ

<i>Давтян В.С.</i> ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ВОЗОБНОВЛЯЕМОЙ ЭНЕРГЕТИКИ В АРМЕНИИ: ВЫЗОВЫ ЭНЕРГЕТИЧЕСКОГО ПЕРЕХОДА.....	75
<i>Маркосян А.О., Унанян С.А., Гаспарян Г.А., Джангириян Т.А., Багдасарян С.К.</i> МЕЛИОРАТИВНОЕ СОСТОЯНИЕ КОРИЧНЕВЫХ ЛЕСНЫХ ПОЧВ И ЭФФЕКТИВНОСТЬ ПРИМЕНЕНИЯ КОМПЛЕКСНЫХ ПРОТИВОЭРОЗИОННЫХ МЕРОПРИЯТИЙ.....	82
<i>Саруханян А.А., Балджян П.О.</i> РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ ОБЩЕГО ТЕХНИЧЕСКОГО СОСТОЯНИЯ АЗАТСКОГО ВОДОХРАНИЛИЩА.....	89
<i>Карибян А.П., Гаспарян А.З.</i> ИСПОЛЬЗОВАНИЕ ЗАЩИТНЫХ СООРУЖЕНИЙ В МИРНОЕ ВРЕМЯ.....	96
<i>Хондкарян В.С.</i> РИСК-ОРИЕНТИРОВАННЫЙ ПОДХОД ПРИ ОБЕСПЕЧЕНИИ БЕЗОПАСНОСТИ ПЛОТИН.....	102
<i>Сарафян К.М.</i> ГЕОЛОГИЧЕСКАЯ ИНФОРМАЦИЯ О ГЕОЛОГИЧЕСКИХ ЯВЛЕНИЯХ, УГРОЖАЮЩИХ ГОРОДАМ.....	109
<i>Казарян А.С., Казарян А.С.</i> ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ПОЖАРОТУШЕНИЯ СОЛНЕЧНЫХ ЭЛЕКТРОСТАНЦИЙ.....	116

III. УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ И НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

<i>Гукасян Л.Г., Карапетян М.С.</i> НЕКОТОРЫЕ ОСНОВОПОЛОГАЮЩИЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ С МИГРАНТАМИ И БЕЖЕНЦАМИ.....	124
<i>Гарибян Р.Г.</i> ПРОФИЛАКТИКА ПИЩЕВЫХ ОТРАВЛЕНИЙ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ ШКОЛАХ КАК ВАЖНЫЙ ПОКАЗАТЕЛЬ КУЛЬТУРЫ БИОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ШКОЛЬНИКОВ.....	130
<i>Минасян А.Л.</i> РОЛЬ ПЕДАГОГА В АДАПТАЦИИ ДЕТЕЙ-БЕЖЕНЦЕВ.....	138
<i>Авансян А.Г., Тадевосян Д.Р.</i> ПРОВЕДЕНИЕ УЧЕБНОЙ ЭВАКУАЦИИ В ДОШКОЛЬНЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ, КАК ВАЖНЫЙ ЭЛЕМЕНТ ПОДГОТОВКИ ПО ГРАЖДАНСКОЙ ОБОРОНЕ.....	145
<i>Петросян Г.Г.</i> ИННОВАЦИОННЫЕ МЕТОДЫ ОБУЧЕНИЯ В ВУЗЕ.....	153
<i>Насилян И.В., Григорян А.А.</i> ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ КОНФЛИКТАМИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ.....	159
<i>Саргсян Д.Ю., Бабаджанян И.О., Григорян С.О.</i> РОЛЬ СВЯЗЕЙ С ОБЩЕСТВЕННОСТЬЮ В ПСИХОЛОГИЧЕСКИХ СЛУЖБАХ В КОНТЕКСТЕ ПРОБЛЕМ ПСИХИЧЕСКОГО ЗДОРОВЬЯ.....	169
<i>Айрапетян Т.И.</i> МЕТОДИЧЕСКИЕ АСПЕКТЫ УЧЕБНОГО ПРЕДМЕТА ГОСУДАРСТВЕННОЕ И МУНИЦИПАЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ.....	178
<i>Мкртчян Л.А.</i> ИСТОРИЧЕСКИЕ АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ В ВАРСЕРСКОЙ, ЦОВАГЮХСКОЙ, ЦАГКУНКСКОЙ И ГЕГАМАВАНСКОЙ ОБЩИНАХ СЕВАНСКОГО РАЙОНА И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ИХ СОХРАНЕНИЯ С ПОЗИЦИИ РИСКА БЕДСТВИЙ.....	189

CONTENTS

I. MANAGEMENT AND ECONOMICS

<i>Matevosyan H.Sh., Sarafyan K.M., Gharibyan H.P.</i> INTERPRETATION OF TERMS IN OPERATIVE MANAGEMENT PROCESS.....	5
<i>Matsuo J., Gevorgyan G.S., Shiwaku K., Chilingaryan A.S.</i> DEVELOPING FLOOD HAZARD ASSESSMENT SOFTWARE FOR ARMENIA.....	15
<i>Petrosyan H.H.</i> PRIORITIES OF EDUCATIONAL POLICY.....	24
<i>Manasyan M.G., G.M. Gspoyan</i> ASSESSMENT OF THE DEMOGRAPHIC SITUATION AND RESETTLEMENT OF SYUNIK FROM A NATIONAL SECURITY PERSPECTIVE.....	33
<i>Bagiyan V.A., Bakunts S.H.</i> COMMUNITY-BASED NATURAL DISASTER RESILIENCE: CHANCES AND CHALLENGES.....	44
<i>Manukyan G.T.</i> OUTLINES OF UNEMPLOYMENT IN CRISIS SITUATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA.....	52
<i>Bulanikyan V.S., Terteryan A.A.</i> ANALYSIS OF INTERNATIONAL AND ARMENIAN METHODOLOGY FOR LOCAL LEVEL DISASTER RISK ASSESSMENT.....	66

II. TECHNOLOGIES

<i>Davtyan V.S.</i> THE MAIN TRENDS IN RENEWABLE ENERGY DEVELOPMENT IN ARMENIA: CHALLENGES FOR ENERGY TRANSITION.....	75
<i>Markosyan A.O., Hunanyan S.A., Gasparyan G.H., Jhangiryan T.A., Baghdasaryan S.K.</i> THE MELIORATIVE CONDITION OF FOREST BROWN SOILS AND THE EFFECTIVENESS OF THE APPLICATION OF ANTI-EROSION COMPLEX MEASURES.....	82
<i>Sarukhanyan A.A., Baljyan P.H.</i> RESEARCH FINDINGS ON THE OVERALL TECHNICAL CONDITION OF AZAT RESERVOIR.....	89
<i>Gharibyan H.P., Gasparyan A.Z.</i> USE OF DEFENSE STRUCTURES IN PEACEFUL CONDITIONS.....	96
<i>Khondkaryan V.S.</i> RISK-BASED APPROACH TO DAM SAFETY.....	102
<i>Sarafyan K.M.</i> GEOLOGICAL INFORMATION ABOUT GEOLOGICAL PHENOMENA, THREATENING CITIES.....	109
<i>Ghazaryan H.S., Ghazaryan H.S.</i> FEATURES OF FIREFIGHTING ORGANIZATION OF SOLAR POWER PLANT.....	116

III. EDUCATIONAL-METHODOLOGICAL AND SCIENTIFIC-METHODOLOGICAL PROBLEMS

<i>Ghukasyan L.H., Karapetyan M.S.</i> SOME FUNDAMENTAL ISSUES OF SOCIAL WORK WITH MIGRANTS AND REFUGEES.....	124
--	-----

Gharibyan R.G.

PREVENTION OF FOOD POISONING IN PUBLIC EDUCATION SCHOOLS AS AN IMPORTANT COMPONENT OF THE CULTURE OF BIOLOGICAL SAFETY OF SCHOOLCHILD.....	130
<i>Minasyan A.L.</i>	
THE TEACHERS ROLE IN THE ADAPTATION OF REFUGEE CHILDREN.....	138
<i>Avanesyan A.H., Tadevosyan D.R.</i>	
CONDUCT OF EDUCATIONAL EVACUATION PRACTICAL DRILLS IN PRE-SCHOOL EDUCATIONAL INSTITUTIONS, AS AN IMPORTANT ELEMENT OF CIVIL DEFENSE PREPARATION.....	145
<i>Petrosyan H.H.</i>	
INNOVATIVE TEACHING METHODS IN HIGHER EDUCATIONAL INSTITUTION.....	153
<i>Nasilyan I.V., Grigroyan A.A.</i>	
FEATURES OF CONFLICT MANAGEMENT IN EMERGENCY SITUATIONS.....	159
<i>Sargsyan D.Y., Babajanyan I.H., Grigoryan S.H.</i>	
THE ROLE OF PUBLIC RELATIONS ON PSYCHOLOGICAL SERVICES IN THE CONTEXT OF MENTAL HEALTH CARE.....	169
<i>Hayrapetyan T.I.</i>	
THE METHODOLOGICAL VIEWPOINTS OF "STATE AND MUNICIPAL ADMINISTRATION MANAGEMENT" EDUCATIONAL SUBJECT.....	178
<i>Mkrtchyan L.A.</i>	
HISTORICAL ARCHITECTURAL MONUMENTS IN VARSER, TSOVAGYUGH, TSAGKUNQ AND GEGHAMAVAN COMMUNITIES OF SEVAN REGION AND MAIN PROBLEMS OF THEIR PRESERVATION FROM THE POSITION OF DISASTER RISK.....	189

A U T H O R S

1.	Matevosyan Hamlet Shmavon	Major general of RS (Crisis Management State Academy, MIA, RA) hmatevosyan21@gmail.com
2.	Gharibyan Haykandukht Papin	PhD of Technical Sciences, Associate professor (Crisis Management State Academy, MIA, RA) haykuhi-kar@mail.ru
3.	Gspoyan Grisha Mekhak	PhD of Geography Sciences, Associate professor (Crisis Management State Academy, MIA, RA) grishagspoyan@rambler.ru
4.	Bagiyan Valery Aleksandr	PhD of Biological Sciences, Associate professor (Crisis Management State Academy, MIA, RA) valbeg@mail.ru
5.	Tadevosyan Davit Rafayel	PhD of Technical Sciences, Associate professor (Crisis Management State Academy, MIA, RA) tadevosyan_davit@mail.ru
6.	Bakunts Satenik Hrachik	PhD of Agriculture Sciences, Associate professor (Crisis Management State Academy, MIA, RA) satenbakunc@yahoo.com
7.	Manasyan Maksim Garnik	Doctor of Geographical Science (Crisis Management State Academy, MIA, RA) mman@rambler.ru
8.	Petrosyan Hayk Hmayak	Doctor of Pedagogical Sciences, Professor (NAS RA International Scientific Educational Center, Brusov State University) hahapet@rambler.ru
9.	Davtyan Vahe Samvel	Doctor of Political Sciences, Professor (Russian-Armenian University, Brusov State University) vahedavtyan@yandex.ru
10.	Sarukhanyan Aristakes Aramayis	Doctor of Technical Sciences, Professor (NUACA) baljyan-1951@list.ru
11.	Baljyan Pargev Hovhannes	Doctor of Technical Sciences, Professor (NPUA) baljyan-1951@list.ru
12.	Markosyan Albert Ovkianos	Doctor of Agricultural Sciences (ANAU) markosyanalbert@mail.ru
13.	Hunanyan Surik Aleksandr	Doctor of Agricultural Sciences (ANAU) kroyan.samvel@mail.ru
14.	Gasparyan Gayane Harutyun	PhD of Agriculture Sciences (ANAU) gayanehgasparyan@gmail.com
15.	Jhangiryan Tatevik Artur	PhD of Agricultural Sciences, (ANAU) kroyan.samvel@mail.ru
16.	Baghdasaryan Sanasar Kolya	PhD of Agricultural Sciences, Researcher (Scientific Center of Soil Science, Agrochemistry and Melioration after H.Petrosyan, ANAU) sanasarbaghdasaryan1948@mail.ru
17.	Minasyan Anna Levon	PhD of Pedagogical Sciences, Associate professor (NAS RA International Scientific Educational Center, Brusov State University) anna7minasyan@mail.ru
18.	Gevorgyan Gevorg	Doctor of Physics, Yerevan State University

	Samvel	g_gevorg@yahoo.com
19.	Jun Matsuo	Dr. of Science, OYO International Cooperation shiwaku-koichi@oyonet.oyo.co.jp
20.	Koichi Shiwaku	PhD of Global Environment, Engineer (OYO International Corporation) shiwaku-koichi@oyonet.oyo.co.jp
21.	Khondkaryan Valeri Sergey	PhD of Geological-Minerological Sciences, Lecturer (Crisis Management State Academy, MIA, RA), expert (Regional Survey for Seismic Protection, MIA, RA) khondkaryan@yahoo.com
22.	Manukyan Grigor Tatul	PhD of Economic Sciences, Associate professor (CMSA MIA, RA; Institute of Economics after M. Kotanyan, NAS, RA, Researcher) manukyan5555@mail.ru
23.	Nasilyan Inga Valeri	PhD of Economic Sciences (Crisis Management State Academy, MIA, RA) inasilyan@mail.ru
24.	Gharibyan Ruzanna Gurgen	PhD of Pedagogical Sciences, Associate professor (Crisis Management State Academy, MIA RA) gharibyanruzanna343@gmail.com
25.	Sargsyan Diana Yurik	PhD of Psychological Sciences, Associate professor (YSU, Crisis Management State Academy, MIA RA) sargsyandiana82@gmail.com
26.	Petrosyan Hrayr Hayk	PhD of Pedagogical Sciences, Associate professor (Goris State University) pet.hrayr@gmail.com
27.	Ghukasyan Lusik Henrik	PhD of Pedagogical Sciences, Associate professor (Shirak State University) lusine60@mail.ru
28.	Karapetyan Manushak Seyrani	PhD of Pedagogical Sciences, Associate professor (Shirak State University) manushak_karapetyan@bk.ru
29.	Bulanikyan Vahe Sargis	PhD of Economic Sciences, Associate professor (ASUE, Amberd Research Center) terteryan.ani@gmail.com
30.	Hayrapetyan Tigran Ishkhan	PhD of Economic Sciences (Armbusiness Bank; Crisis Management State Academy, MIA, RA) tigran.hayrapetyan@armbusinessbank.am
31.	Gasparyan Arayik Zaven	Lecturer (Crisis Management State Academy, MIA, RA) doktorgasparyan33999@mail.ru
32.	Chilingaryan Armen Suren	PhD Candidate Doctor Programme in Climate Change and Sustainable Development Policy, UNDP Armenia
33.	Sarafyan Karapet Mesrop	Lecturer (Crisis Management State Academy, MIA, RA) sarafclub@yahoo.com
34.	Ghazaryan Hayk Samvel	Lieutenant colonel of RS, lecturer (Crisis Management State Academy, MIA, RA) hayk-ghazaryan-1982@mail.ru
35.	Ghazaryan Harutyun	Lieutenant colonel of RS, lecturer (Crisis Management State

	Samvel	Academy, MIS, RA) harutyun.ghazaryan.1980@mail.ru
36.	Mkrtchyan Lala Arshaluys	Lecturer (Gavar State University) mkrtchyan-lala@mail.ru
37.	Avanesyan Andranik Hayk	Lecturer (Crisis Management State Academy, MIA, RA) avanesyan-1965@bk.ru
38.	Terteryan Ani Arami	Assistant, applicant (ASUE, Emergency and Security Project Management Center R5) terteryan.ani@gmail.com
39.	Arsen Grigoryan Albert	Lieutenant colonel of Armed Force of the Ministry of Defense, RA grigoryanelen2013@mail.ru
40.	Babajanyan Irina Hovhannes	PhD student (YSU) sargsyandiana82@gmail.com
41.	Grigoryan Sona Hovik	Master (YSU) sargsyandiana82@gmail.com

ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով՝ ընդհանուր ծավալը մինչև 12 էջ (ցանկալի է վերջին էջն օգտագործել ամբողջությամբ):

Հոդվածը ներկայացնել գրախոսված:

Հոդվածը պատրաստվում է MS Word տեքստային խմբագրիչով:

Սահմանվել են էջերի հետևյալ չափանիշները և պահանջները:

Տեքստը բոլոր լեզուներով հավաքել Armenian Phonetic Unicod՝ GHEA Grapalat տառատեսակով, տառաչափը՝ 11, տողերի հեռավորությունը՝ 1.2, էջի ֆորմատը՝ A4 (210x297 մմ), աշխատանքային դաշտը՝ 165 x252 մմ, լուսանցքները. ձախից՝ 20 մմ, վերևից 20 մմ, աջից 20 մմ, ներքևից՝ 25 մմ:

Առաջին էջի վերին տողի մեջտեղում գլխատառերով և ստվերապատված, հոդվածի տեքստի լեզվով նշվում են՝ հանդեսի լրիվ անվանումը, տարեթիվը և հերթական համարը, փակագծում նաև ընդհանուր համարը (ամբողջ տողը՝ հաստ /bold/, 11 տառաչափով):

Մեկ տող ներքև, տողի մեջտեղում տրվում է հեղինակի (ների) **Ա.Հ. Ազգանունը (ները)** (փոքրատառ, bold, 11 տառաչափով): Մեկ տող ներքև, տողի մեջտեղում տրվում է հոդվածի վերնագիրը (գլխատառերով, bold, 12 տառաչափով), իսկ մեկ տող ներքև, հոդվածի տեքստի լեզվով՝ համառոտագիրը (аннотация), (որի մեջ պետք է ձևակերպվի հոդվածի նպատակը, արդյունքները և հիմնավորվի կատարված աշխատանքների անհրաժեշտությունը), 5-8 **առանցքային բառերով** (բոլորը՝ մինչև 15 տող ծավալով, շեղատառերով (*Italic*), 10 տառաչափով): Համառոտագրից մեկ տող ներքև, 11 տառաչափով տրվում է հոդվածի հիմնական տեքստը:

Պարբերությունները սկսել նոր տողից՝ 10 մմ ներսից:

Նկարները, գծանկարները և աղյուսակները տեղադրել տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո, նույն կամ հաջորդ էջում, պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում: Անվանումը և բացատրությունները տեղակայել նկարների տակը և աղյուսակների վրա (*Italic, bold*, 10 տառաչափով):

Հոդվածում չընդգրկել գունավոր նկարներ, գծանկարներ և այլ վիզուալ նյութեր:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տալ Microsoft Equation, *Italic*, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացնել առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները նաև համարակալել նույն տողի աջ անկյունում՝ (փակագծերի մեջ):

Հոդվածում օգտագործվող գրական աղբյուրները պետք է ունենան օգտագործման հերթականությանը կամ այբբենական դասավորությանը (ըստ լեզուների) համապատասխան համարակալում և տեքստում նշել՝ [1], [2],...տեքստով: Օգտագործված գրականության ցանկը ներկայացվում է նաև լատինատառ:

Հոդվածի վերջնամասից երկու տող ներքև, մեջտեղում նշվում է **Գրականություն** արտահայտությունը (փոքրատառ, bold, 11 տառաչափով) և ըստ ընդունված ստանդարտի, 10 տառաչափով տրվում է գրականության ցանկը, որում հեղինակի (ների) **Ազգանունը Ա.Հ.** - ն կամ **առաջին բառը ձևավորվում է bold**, 10 տառաչափով: Ցանկալի է գրականության ցանկում ընդգրկել մինչև 10 հրատարակում:

Գրականությունից հետո, երկու տող ներքև հոդվածի տեքստի հետ չհամընկնող երկու այլ լեզուներով նույն ձևով կրկնվում է հոդվածի գլխամասը՝ հեղինակի (ների) **Ա.Հ. Ազգանունը (ները), հոդվածի վերնագիրը** և համառոտագիրը:

Մեկ տող ներքև տրվում են հոդվածի հեղինակի (ների) Ազգանունը, Անունը, Հայրանունը, գիտ. աստիճանը, գիտ. կոչումը, կազմակերպության համառոտ անվանումը (փակագծերում), հեռախոսների համարները և էլեկտրոնային փոստի հասցեները:

Մեկ տող ներքև նշել հոդվածի ներկայացման ամսաթիվը, ամիսը և տարին:

Վերոնշյալ պահանջները բավարարելուց հետո Գիտական հանդեսի պատասխանատու քարտուղարին ներկայացնել գրախոսականը, հոդվածը A4 ֆորմատի վրա տպված մեկ օրինակ և հոդվածի էլեկտրոնային տարբերակը:

Չի թույլատրվում ներկայացնել նախկինում հրատարակված կամ տպագրության համար այլ հանդեսներ ուղարկված հոդվածներ:

Խորհրդի կողմից հրատարակման չերաշխավորելու դեպքում հոդվածը չի վերադարձվում:

Խմբագրական խորհուրդ

Հեռ. 060-69-10-00

E-mail: info@cmsa.am

cm.technology@cmsa.am

ТРЕБОВАНИЯ ПРЕДЪЯВЛЯЕМЫЕ К СТАТЬЯМ

Статьи могут быть представлены на армянском, русском и других иностранных языках. С общим объемом до 12 страниц (желательно последнюю страницу использовать полностью).

К статье представляется рецензия.

Статья готовится в редакторе MS Word.

Утверждены следующие критерии и требования.

Текст на всех языках набирается в Armenian Phonetic Unicod. Шрифт: GHEA Grapalat, размер шрифта: 11; межстрочный интервал: 1,2 строки; параметры страницы: А4 (210x297 мм.); рабочее поле: 165x252 мм.; пробелы: слева: 20 мм., справа: 20 мм., сверху: 20 мм., снизу: 25 мм.

На верхней строке первой страницы, посередине, на языке текста статьи, на отненном фоне пишется полное название журнала, год и очередной номер, а в скобках общий номер (вся строка курсивом полужир. (bold), размер шрифта 11).

Строкой ниже, посередине, даются инициалы и фамилия (ии) автора (ов) (прописными буквами, полужир. (bold), размер шрифта: 11). Посередине следующей строки дается заглавие статьи (заглавными буквами, полужир. (bold), размер шрифта: 12), а строкой ниже на языке статьи представляется краткая аннотация, в которой должны быть отражены цель и результаты статьи, обоснована необходимость проделанной работы, с 5-8 **ключевыми словами** (всего в объеме 15 строк, курсивом (*Italic*), размер шрифта: 10). Через строку после анотации представляется основной текст статьи (размер шрифта: 11). Абзацы начинаются с новой строки, с отступом в 10 мм.

Картинки, чертежи и таблицы размещаются в тексте, после соответствующей ссылки на той же, или на следующей странице, должны иметь заглавия и нумерацию. Заглавия и пояснения должны быть размещены под картинками и на таблицах (*Italic*, полужир. (bold), размер шрифта 10).

Формулы и математические выражения даются в Microsoft Equation, *Italic*, размер шрифта: 10. Формулы представляются на отдельных строках и посередине, а основные нумеруются на той же строке в правом углу (в скобках).

Используемая в статье литература должна иметь нумерацию, соответствующую очередности ее использования, или по алфавиту (согласно языкам) и отмечаться в тексте квадратными скобками: в виде [1], [2] ... и т.д. Список использованной литературы прествляется также латинскими буквами.

В конце статьи, двумя строками ниже, посередине пишется слово Литература (прописными буквами, полужир. (bold), размер шрифта: 11) и согласно принятым стандартам дается список литературы, в котором Фамилия (ии) и инициалы автора (ов) или первое слово даются полужир. (bold) (размер шрифта: 11). Желательно в списке литературы представить до 10 публикаций.

После литературы, двумя строками ниже на двух языках, отличных от языка текста повторяется заглавная часть статьи: инициалы и фамилия (ии) и автора (ов), название статьи и аннотация.

Строкой ниже даются Фамилия (ии) и инициалы, ученая степень, ученое звание автора (ов), краткое название организации (в скобках) и контактные телефоны, а также адреса электронной почты.

Строкой ниже отмечается дата представления статьи и дата ее рецензирования.

После приведения статьи в соответствие с вышеперечисленными требованиями ответственному секретарю Научного журнала высылается рецензия на статью, сама статья, распечатанная в формате А 4, в одном экземпляре и ее электронный вариант.

Не разрешается представлять опубликованные ранее статьи или статьи направленные ранее на публикацию.

Статья, отклонённая со стороны Редакционного совета, возврату не подлежит.

Խմբագրական խորհուրդ

Հեռ. 060-69-10-00

E-mail: info@cmsa.am

cm.technology@cmsa.am

REQUIREMENTS FOR ARTICLES

Articles can be submitted in Armenian, Russian and English with a total volume of up to 12 pages (it is desirable to use the last page in its entirety).

Submit a reviewed article.

The article is made with MS Word text editor.

The following criteria and requirements have been defined for the pages.

Compose the text in all languages Armenian Phonetic Unicod in GHEA Grapalat font, font size: 11, line spacing: 1.2, page format: A4 (210x297 mm), workspace: 165 x252 mm, margins. 20 mm from the left, 20 mm from the top, 20 mm from the right, 25 mm from the bottom.

The title of the article, the full name of the journal, the year and serial number, the total number in parentheses (whole line in bold /bold/, 11 fonts) should be written in the middle of the top line of the first page (IN CAPITAL LETTERS).

One line below, in the middle of the line is given the author(s)' A.H. Last name (s) (lower case, bold, 11 fonts). One line down, in the middle of the line, the title of the article is given (IN CAPITAL LETTERS, bold, 12 fonts), and one more line down, in the language of the text of the article, the annotation (in which the purpose of the article should be stated, as well as the results and corroboration of work's necessity), using 5-8 key words (all up to 15 lines in italics (*Italic*), 10 font size). Below one line of the summary, the main text of the article is given in 11 fonts.

Start the paragraphs with a new line, 10 mm inside.

Pictures, drawings and tables put in the text, after making a note about it, either on the same or next page, should have title explanations and in general. Write the name and descriptions under pictures and on tables (*Italic*, bold, 10 fonts).

Do not include color pictures, drawings, or other visual materials in the article.

For formulas and mathematical expressions use Microsoft Equation, *Italic*, 10 font size. Formulas should be submitted in a separate line and in the middle, and the main ones should be number in the right corner of the same line (in parentheses).

The literary sources used in the article should be numbered according to the order of use or alphabetical order (according to the languages) indicate this form in the text: [1], [2]. The literary sources should be also presented on Latin alphabet.

Two lines below the end of the article and in the middle the phrase Literature is mentioned (lower case, bold, 11 fonts) and according to the accepted standard, the list of literature is given (10 fonts), in which the Author (s) Last name A.H. or the first word is formed in bold, 10 fonts. It is recommended to include up to 10 publications in the list of literature.

After the literature list, two lines below, in two other languages that do not match the text of the article, the head of the article is repeated, in the same way also the author (s) A.H. Last name (s), article title and abstract.

One line below the author(s)' Last name, first name, patronymic, science degree and title, brief name of the organization (in parentheses) and telephone numbers and e-mails are written.

One line below indicate the date, month and year of submission of the article.

After satisfying the abovementioned requirements, submit the Review, in A4 format printed copy of the article and also the electronic version to the responsible secretary of the scientific journal.

Articles, previously published or submitted to other journals for publication, are not permitted.

If the publication is not guaranteed by the Council, the article will be not returned.

Խմբագրական խորհուրդ

Հեռ. 060-69-10-00

E-mail: info@cmsa.am

cm.technology@cmsa.am

